10884

491 99-8
S-45

0 - 98

20 AUG 2013
431.99-8
Տ-45
MAY 2010

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԴԱՍԱԳԻՐՔ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

428
224-Տէ

ԵՐՐՈՐԴ ԳԻՐՔ

Երրորդ տարւայ ուսուցման նիւթը Հայոց լեզուի դասաւանդութեան ժամանակ

ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԻՊ.

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1002
8936

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ ՄՆ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ, ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՓՈՂՈՑ № 12.

1907

10884

MAY

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Ներկայ տպագրութիւնը նախընթացի համեմատութեամբ հետեւեալ փոփոխութիւններն է կրել. ա, Բառերի բացատրութիւնները դրուել են ոչ թէ յօդուածների տակ, այլ երեսների վերջերում: բ, Առաջին բաժնից դուրս են ձգուել միքանի յօդուածներ, միքանիսների տեղ էլ դրուել են նորերը. գ, Երրորդ հատուածում աւելացել են նիւթեր թռչունների, ձկների, միջատների և բոյսերի կեանքից. դ, Չորրորդ հատուածը (Հայկական կեանքից և աւանդութիւններից) ամբողջապէս խմբագրուել է նորից:

Գրադարան

8936

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

Պատմողական յօդուածներ եւ նրանց համապատասխան չափաբերական գրութիւններ:

1. ՏԱՆԻՑ ԴԷՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Արամը մի ութ տարեկան տղայ էր: Ծնողներն ուղարկում էին նրան ուսումնարան: Մի առաւօտ, ուսումնարան գնալիս, նա միտքը փոխեց. չէր ուզում դասի գնալ. կամենում էր խաղալ: Օրը գեղեցիկ էր. արեգակը փայլում էր և տաքացնում. Թռչուններն անուշիկ երգում էին: Շուրջը նայեց Արամը, բայց մարդ չտեսաւ. կանաչ խոտի վրայ իւր հասակակիցներից ոչ-ոք չկար: Արամը մօտեցաւ մեղրաճանճին, որ թռչկոտում էր ծաղկից ծաղիկ:—«Սիրուն մեղու, ասաց մանուկը. եկ միքիչ խաղանք»:

—Չեմ կարող, պատասխանեց մեղուն, ես մեղր եմ ժողովում ծաղիկներից:

Արամը միքանի քայլ առաջ գնաց: Շունը ուրախ-ուրախ վազվզում էր հօտի շուրջը:

—«Շնիկ, եկ միքիչ խաղանք»:

—Ժամանակ չունիմ. ես պահպանում եմ իմ տիրոջ ապրանքը, որ գայլը չյափշտակէ կամ գողը չգողանայ:

Երեխան առաջ անցաւ և տեսաւ մի փոքրիկ թըռչուն: —«Սիրուն թռչուն, միքիչ խաղանք, ուրախանանք միասին»:

—Ես տխուր չեմ, որովհետև գործ եմ շինում. ես դեռ պէտք է մամուռ, խոտ, բուրդ հաւաքեմ և բոյն շինեմ իմ ապագայ ձագուկներիս համար:

Արամն սկսեց ձանձրանալ. ոչ-ոք չէր կամենում խաղալ նրա հետ: Նա մօտ վազեց առուակին, որ հոսում էր հովտի միջով, նայեց նրա կարկաչուն ալիքներին և ասաց.

—«Ինչպէս տեսնում եմ, միայն դու ես, որ գործ չունիս անելու. ուրեմն եկ միքիչ խաղանք ես և դու»:

Առուակն ուռցրեց մէջքը և բարկացած պատասխանեց.

—Ո՞վ չունի գործ, ծոյլ, ծոյլ տղայ. չե՞ս տեսնում, որ ես գիշեր ու ցերեկ աշխատում եմ: Ո՞վ է ջուր տալիս կենդանիներին ու բոյսերին. ո՞վ է լուանում կտաւիքը. ո՞վ է պտտացնում ջրաղացի անիւները. ո՞վ է հանգցնում հրդեհները, եթէ ոչ ես: Տեսնո՞ւմ ես՝ ես մի րոպէ էլ հանգստութիւն չունիմ. ուրեմն ձեռք վեր առ ինձանից և գնա գործիդ:

Արամն ամաչեց և շտապով գնաց ուսումնարան: *

Ուղղագրութիւն 1. վանկեցէք առաջին երկու նախադասութիւնների բառերը. ուր որ հարկաւոր է՝ ը աւելացրէք: Վանկի հիմքը ձայնաւոր տառն է. բաղաձայն տառերը, վանկելիս, կպչում են նախորդ կամ յաջորդ ձայնաւորին:

* Բառեր՝ հովիտ—լայն ձոր, долина. հօտ—ոչխարների խումբ, стадо. մեղու—մեղրաճանճ, пчела. մեղուանոց—ճանճանոց, пасѣка. մամուռ—мохъ. ապագայ—որ յետոյ պիտի գայ, будущій. յափշտակել—խլել, փախցնել, похитить. ձանձրանալ—տխրել, գործելու ցանկութիւնը կորցնել, скучать, томиться. առուակ—փոքրիկ առու, ручеекъ. հոսում էր—վազում էր, протекалъ. կարկաչուն—քչքչան, журчащій. կարկաչիւն—քչքչոց, журчаніе. ալիքներ—ջրի տարուբերուիլը, волны. կտաւիք—սպիտակեղէն, լուացք, бѣлье. հրդեհ—կրակ՝ սաստիկ բոցավառուած, пожаръ.

2. Տողադարձի ժամանակ միշտ պէտք է ամբողջ վանկ անցկացնել. ու տառը, եթէ մենակ է, առանձին վանկ է կազմում, իսկ եթէ մօտը ուրիշ ձայնաւոր ունի, կցւում է այդ ձայնաւորին և նրա հետ միասին մի վանկ է կազմում՝ մե-ղու, մե-ղուա-պան. ա-ռու, ա-ռուակ:

3. Վանկելիս, ուրեմն և տողադարձի ժամանակ, յ տառը իր մօտիկ ձայնաւորից չի կարելի բաժանել, Հայ-աս-տան և ոչ Հա-յաս-տան, որովհետև եթէ բաժանելու լինինք, նա կընկնի յաջորդ վանկի սկիզբը և, ըստ կանոնի, կըկարդացուի որպէս հ:

4. Գործողութիւն ցոյց տուող բառերում ցնել վերջաւորութիւնը միշտ վանկելու էք անբաժան՝ կար-դա-ցնել և ոչ կար-դաց-նել, բուս-ցնել, կանգնե-ցնել:

5. Ն և ր տառերը բառի վերջում հարևան բաղաձայնի հետ առանձին վանկ են կազմում՝ ձեռն—ձեռըն. ծունր—ծունըր:

2. ԹՌՉՆԻԿՆԵՐ

Շատ էի սիրում մանուկ հասակում
Ես թռչունների սիրուն ձագերին,
Եւ որսում էի նոցա մեր այգում
Կանաչ, ցօղապատ թըփերի միջին:

Ես հիւսում էի անխոնջ եռանդով
Փափուկ մամուռից քընքուշիկ բըներ.
Հոգս էի տանում կարեկից սրտով
Մերկ ճուտիկներին ցերեկ ու գիշեր:

Բայց ահա նոքա թևաւորուեցան
Եւ ազատ օդում ճախրել են ուզում.
Ես բաց եմ անում դուռն ու պատուհան,
Որ ուրախ թըռչեն, վըխտան թըփերում:

Թըռչում են նոքա, երգում, ճըլվըլում.
Անհուն ցընծութեամբ լըցւում է հոգիս։
Եւ նորից նոցա ես յետ եմ կանչում.
Նոքա գալիս են—ունկընդիր խօսքիս։*

Ուղղագրութիւն 6. «Ես սիրում էի թռչունի ձագերին՝ փոխանակ—«ձագեր» կամ «ձագերը»։ Ես մորթեցի մի հաւ. ես հաւ մորթեցի և ես մորթեցի հաւը, բայց ոչ՝ հաւին։—Մարդկանց յատուկ և հասարակ անունները, որոշեալ յօդով, հայցական հոլովում նման են լինում տրականին. Մնացած գոյական անունների հայցականը նման է ուղղականին։

7. Զափաբերական գրուածքների մէջ, վանկերի հաշիւը պահելու և ներդաշնակ կարդալու համար, ը ձայնաւորը սովորապէս գրւում է այնտեղ, ուր նա առանձին վանկ է կազմում՝ «քընքուշիկ բըներ». «որ ուրախ թըռչեն, վըխտան թըփերում»։

3. Ա Ր Մ Ի Ն Է

Արմինէն հինգ տարեկան մի աղջիկ էր, երբ մեքենան կտրեց նրա աջ թևը։ Մանկիկը շատ հեծեց, լաց եղաւ, շատ ցաւ քաշեց ու արցունք թափեց։ Բայց Աստուած խղճաց նրան. գտնուեցան բարի մարդիկ, սպեղանի շինեցին և վէրքը կապեցին։

* Բառեր՝ որս—հորս, охота. որսալ—հորս անել. ցօղ—շաղ, роса. ցօղապատ—ցօղով ծածկուած. հիւս—հիւսուածք, плетень. հիւս—ծամ, коса. հիւսել—ծամ անել, գործել, плесть, заплетать. հիւսն—դուրգար, плотникъ. անխոնջ—առանց յոգնելու. անխոնջ եռանդով—անհատնում, անսպառ եռանդով, неистощимою энергiею. ճախրել—պտըտել, թռչել օդի մէջ. ճախարակ—չարխ, ջահրայ, блокъ, прялка. ան-հուն—անտակ, անչափ. հուն—տակ, յատակ, ջրի ընթացքի տեղը, русло. կարեկից սրտով—ցաւակցելով, մեղքանալով. մերկ—տկլոր. վխտալ—եռալ, դժվըժալ, кишѣть. ունկն—ականջ. ունկնդիր—ուշադիր, ականջ դնող, լսող. ցնծութիւն—ուրախութիւն։

Անցան օրեր։ Արմինէն մեծացաւ։ Նա ամեն առաւօտ ուսումնարան էր գնում։ Որպէս ուշադիր մանուկ՝ նա ոչ միայն լաւ կարդում էր, այլև գեղեցիկ գրում էր ձախ ձեռքով։ Վարժապետները շատ էին սիրում նրան և պարգև ու նշան էին տալիս։

Մի օր թագաւորի ամուսինը, որ մի բարի կին էր, գիւղի միջից անցած ժամին, կանգ առաւ և գիւղապետին խնդրեց, որ մի փոքրիկ, բայց խելացի աշակերտ բերեն իւր առաջ։ Մարդ ղրկեցին, Արմինէին բերին վարժարանից։

Աղջիկը թևագուրկ, բայց ուրախ ու համարձակ եկաւ կանգնեց թագուհու առաջ։ Ազնիւ Տիկնոջ աչքերը լցուեցան. Նա գգուանքով առաւ նրան իւր գիրկը, համբուրեց և ասաց. «Աղջիկս, գոհ եմ, որ դու այդպէս լաւ գրում ես ու կարդում. դրա փոխարէն կամենում եմ վարձատրել քեզ. ասա, ի՞նչ տամ քեզ՝ մի նոր գիրք, հագուստ, թէ՞ խաղալիք. գուցէ դու կամենում ես, որ ես քեզ համար շաքարեղէն ուղարկեմ, կամ օղեր ու զարդեր ընծայեմ... Շիտակն ասա, մի՛ վախենար. ինչ որ խնդրես, պիտի տամ»։

Արմինէն, որի սիրտը լցուած էր ուրախութիւնից, բաց արաւ բերանը և խնդութեամբ կանչեց.—«Մի թև տուէք ինձ, Տիկին»։*

* Բառեր՝ Արմինէ—հայուհի, армянка. հեծել—հառաչել, մղկտալ, стонать. արցունք—արտասունք, слёзы. սպեղանի—ճար, դեղ, մահլամ, пластырь. վէրք—խոց, եարայ, рана. կանգ առաւ—իջաւ, վէր եկաւ, остановился. թևագուրկ—թևից, կռնից զըրկուած. աչքերը լցուեցան—արտասուեց. գգուել—փայփայել, գուրգուրել, ласкать. շիտակ—ուղիղ, ճշմարիտ. շիտակն ասա—ուղիղն ասա. շիտակ խօսք, շիտակ մարդ—ճշմարիտ խօսք, ազնիւ մարդ. խնդութեամբ—ուրախութեամբ. радостно. գիւղապետ—տանուտէր, старшина.

Ուղղագրութիւն 8. Արմենէ, Գայիանէ, Հռիփսիմէ. Արմենուհի, տիրուհի և Տիրուհի, Վարդուհի, աշակերտուհի. Պերճանոյշ, Հայկանոյշ, Սիրանոյշ. Սանդուխտ, Հայկանդուխտ։ Վերջաւոր մասնիկները՝ է, ուհի, անոյշ, դուխտ—միակ իգականակերտ մասնիկներն են Հայոց լեզուի մէջ։—Հայոց լեզուն առարկայի սեռը ցոյց տուող վերջաւորութիւններ չունի. գոյական անունների սեռը մեր լեզուի մէջ իմացւում է բառի ներքին նշանակութեամբ։

4. ՄԱՆԿԱՆԸ

Ուրախութիւն քեզ անպակաս,
Ո՛վ դու մանուկ սիրելի.
Ծլիս, ծաղկիս ու ծերանաս,
Տալով պտուղ արժանի։

Որպէս ծաղիկ, մանուկ, քաղցր ես,
Եւ շնորհագեղ որպէս օր.
Մանո՛ւկ-մանուկ, ինձ չըխաբես,
Միշտ կաց այդպէս լուսաւոր։

Նայի՛ր վերև, տե՛ս, ի՛նչ սիրուն
Այնտեղ, փայլում են աստղեր,
Ե՛ւ անթիւ են, և՛ շողշողուն,
Որպէս երկու քո աչեր։

Այնտեղ, հոգեակ, բնակւում է
Մեր սուրբ Հայրը երկնքի,
Նա է, որ մեզ ուղարկում է
Ե՛ւ կեանք, և՛ սէր, և՛ հոգի։*

---

* Բառեր՝ շնորհագեղ—շնորքով ու գեղեցիկ. ծիլ—շիւղ, отпрыскъ, побѣгъ. ծլիս-ծաղկիս—աճես ու զօրանաս։ Հայրը երկնքի—երկնաւոր Հայրը, Աստուած. և՛ կեանք, և՛ սէր, և՛ հոգի—կեանք էլ, սէր էլ, հոգի էլ։

Ուղղագրութիւն 9. «Որպէս երկու քո աչեր»։ Երկու աչք, երեք մշակ, չորս աշակերտ. երկու սիրուն աչեր, երեք աշխատաւոր մշակներ, չորս քաղցրաբարոյ աշակերտներ։ Թուական որոշողների մօտ որոշեալը միշտ գրւում է եզակի. բայց եթէ թուական որոշողից զատ առարկան ունի և մի այլ որոշող, ապա որոշեալը գործ է ածւում յոգնակի։

10. Երկնքի Հայր—երկնաւոր Հայր. քարի տուն—քարէ տուն. հիւսիսի բնակիչ—հիւսիսային բնակիչ։—Գոյական անունների սեռական հոլովը գործ է ածւում յարաբերական ածականի տեղ։

5. ՓՐԻԴՐԻԿՈՍ ԹԱԳԱՒՈՐԻ ՍՊԱՍԱՒՈՐԸ

Պրուսիայի Փրիդրիկոս թագաւորը իւր սենեակի մէջ սաստիկ զբաղուած էր. նա քաշեց զանգը, բայց սպասաւորը չերևեցաւ։ Թագաւորը վերկացաւ, դուռը բաց արաւ և տեսաւ, որ սպասաւորը տախտի վրայ ընկած՝ քնած է։ Մօտ գնաց, որ զարթեցնէ։ Այդ միջոցին աչքովը ընկաւ մի նամակ, որ սպասաւորի գրպանից կիսով չափ դուրս էր ընկած։ Թագաւորը մեղմօրէն դուրս հանեց թուղթը, որ իմանայ թէ մէջն ի՛նչ կայ գրած։ Նամակումն ասուած էր.

«Իմ անգին որդի, անչափ շնորհակալ եմ, որ այս անգամ էլ չուշացրիր ուղարկել ինձ քո ամսականի կէսը. դու քո ծնողասիրութեամբ քաղցրացնում ես մօրդ ծերութեան օրերը. հաստատ յոյս ունեցիր, որ Աստուած դրա փոխարէն պիտի օրհնէ քո կեանքը»։

Նամակը կարդալուց յետոյ, Թագաւորը ոսկով լցրեց մի քսակ և նամակի հետ դրեց սպասաւորի գրպանը. ապա դարձաւ իւր սենեակը և աւելի սաստիկ հնչեցրեց զանգակը։ Սպասաւորը զարթնեց ու ներս վազեց։

«Լաւ էիր քնել», նկատեց Թագաւորը։

Սպասաւորը կամենում էր իրան արդարացնել. շփոթ-

ման մէջ ձեռքը տարաւ գրպանը և անգիտակցաբար դուրս հանեց քսակը։ Ոսկիները տեսնելուն պէս՝ գոյնը թռաւ։

—Տէ՛ր արքայ, ասաց սպասաւորը, թագաւորի ոտները ընկնելով. չգիտեմ ով է դրել գրպանումս ոսկով լի՛քը քսակը. երևի մահս են կամենում։

«Բա՛րեկամ, պատասխանեց թագաւորը. Աստուած շատ անգամ իւր բարիքը հասցնում է մեզ, երբ մենք քնած ենք լինում։ Ա՛ռ այդ քսակը, ուղարկի՛ր մօրդ, ողջունի՛ր իմ կողմից և ասա, որ անհոգ լինի. այսուհետև ես պէտք է խնամք տանեմ նրան։ Իսկ դու, սիրելիս, վստա՛հ եղիր, որ ինձ մօտ բաղդաւոր պիտի լինիս»։*

Ուղղագրութիւն 11. մեղմօրէն, մարդկօրէն, քաջօրէն...
Արիապէս, մեծապէս, այսպէս, այդպէս, այնպէս...
Յովհաննէս, Վրդանէս, Արիստակէս...
Աբէլ, Նաթանայէլ, Իսրայէլ, Էմմանուէլ...
Գայէն, Ռուբէն, Բաբկէն, Սուրէն...
Գինևէտ, հացաւէտ, ծաղկաւէտ, մրգաւէտ...
Բարեղէն, փայտեղէն, հողեղէն, մսեղէն...
Հայերէն, տաճկերէն, ռուսերէն, պարսկերէն...
Թագընկէց, գահընկէց, պատուընկէց, շանթընկէց...
Ջրօրհնէք, տնօրհնէք, երբէք, բերէք, տարէք...

Վերոյիշեալ վերջայար մասնիկները գիտեցէք. նոքա միշտ և ամենայն տեղ է-ով պիտի գրուին։

6. «ՉԱՐԸԴ ՏԱՆԵՄ»

Իմ նանը, որդիք, մի շատ լաւ կին էր.
Ժամ ու պատարագ նա շատ կըսիրէր.

---

* Բառեր՝ սպաս—սուփ, ջրի կերակուր. սպաս—ծառայութիւն. սպասաւոր—ծառայ. գրպան—ջէպ, карманъ. անգիտակցաբար—առանց զգալու, безсознательно. արքայ—թագաւոր. չուշացրիր ուղարկել—ժամանակին ուղարկեցիր. մեղմօրէն զարթեցրեց—կամացուկ զարթեցրեց։

Թէ արթնանալուց, թէ քուն մտնելուց՝
Ինձ համար նա միշտ աղօթքներ կ'անէր.
Ինձ էլ աղօթքի իւր հետ կըտանէր։
Ու թէ պատահէր՝ հիւանդանայի,
Կամ անակնկալ փորձանքի գայի,
Նա, գորովալից ոգևորութեամբ,
Կրծքին փարելով, միշտ կըհարցնէր.
—«Ասա՛, զաւակս, ի՞նչըդ կըցաւի,
Ասա՛, դէ՛, նանը քո չարըդ տանի»։
Իմ խեղճ նանիկը իւր ամբողջ կեանքում
«Զարըս էր տանում», չէր հասկանում։
Ա՜խ, իմ մայրիկը, սիրուն մանուկներ,
Այնքան բարի էր, այնքան անձնուէր,
Որ վերջը, իրաւ, իմ «չարը տարաւ»,
Սիրած զաւակին որբ, մենակ թողաւ։*

Ուղղագրութիւն 12. «Կըսիրէր, կըտանէր, կ'անէր»—փոխանակ՝ սիրում էր, անում էր, տանում էր. կըցաւի—փոխանակ՝ ցաւում է։

13. «Թէ արթնանալուց, թէ քուն մտնելուց»—փոխանակ՝ արթնանալիս, քուն մտնելիս, կամ՝ արթնանալու, քուն մտնելու ժամին։

14. Բայի հետ կը մասնիկը գրւում է կից կամ անջատ. բարւոք է կից գրութիւնը, ինչպէս որ ձայնաւորով սկսուող բայերի հետ կից է գրւում (կ'ասեմ, կ'անեմ. ուրեմն և կըգրեմ, կըբերեմ)։

---

* Բառեր՝ անակընկալ—անսպասելի կերպով, неожиданно. փորձանք—փորձութիւն, անբախտութիւն, испытаніе, несчастный случай. կրծքին փարելով—կրծքին սեղմելով, գիրկն առնելով. անձնուէր—անձնանուէր, անձը նուիրած, գլուխը յետ դրած, преданный, самоотверженный. գորովալից—սիրալի, գուրգուրալի, умилительный.

«Զարըդ տանեմ, ցաւըդ տանեմ»—ամենայն չար բան, ամենայն ցաւ ու նեղութիւն, որ քեզ է վիճակուած, թող ինձ գայ, ինձ պատահի. թող ես տանջուիմ քո փոխանակ։

7. ՄԻ ՀՈԳԻ ԵՐԿՈՒ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ

Երուսաղէմ քաղաքի նստուածքը երբեմն մի մշակուած վարելահող էր և այն տեղը, ուր կառուցած է տաճարը, պատկանում էր երկու եղբօր, որոնցից մէկն ամուսնացած էր, միւսը՝ ամուրի։ Հնձի ժամանակ նրանք իրանց խուրձերը կապեցին և երկու հաւասար դէզ բարձրացնելով, թողին դաշտումը։

Գիշերը ամուրի եղբայրը մտածում էր·

—Եղբայրս կնոջ ու որդոց տէր է և նրանց պէտք է կերակրէ, ուստի իրաւացի չէր լինիլ, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինէին։ Գնամ, իմ բաժնից միքանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ։

Այս ասելով՝ նա գնաց և իւր մտածածը կատարեց։

Նոյն գիշերը միւս եղբայրն արթնանալով՝ իւր կնոջն ասաց·

—Եղբայրս ինձանից փոքր է և, ամուսնացած չլինելով, ոչ-ոք չունի, որ իրան օգնէ ու մխիթարէ. ուստի իրաւացի չէր լինիլ, որ նրա և իմ ունեցածը հաւասար լինէին։ Գնամ, իմ բաժնից միքանի խուրձ վեր առնեմ և ծածուկ աւելացնեմ նրա բաժնին. եղբայրս չի տեսնիլ և չի ընդդիմանալ ինձ։

Այս ասելով՝ նա էլ գնաց, իւր մտածածը կատարեց։

Հետևեալ առաւօտ եղբայրները դաշտ գնացին և շատ զարմացան. երկու դէզն էլ հաւասար էին և անփոփոխ։ Նրանցից ոչ մէկը չկարողացաւ իմանալ այս հրաշքի պատճառը։

Հետևեալ գիշերը դարձեալ նոյնպէս արին... Եւ այսպիսով նրանց դէզերը ոչ պակասում էին, ոչ աւելանում։

Վերջապէս մի գիշեր, այս գաղտնիքն իմանալու համար, երկուսն էլ արթուն մնացին և, երբ խուրձերը շալակած տանում էին միմեանց դէզի վրայ դնելու, յանկարծ իրար տեսան։

*Այդ պատճառով մարդիկ օրհնեցին այդ երկու եղբայրների սէրը և Աստուծու տաճարը այնտեղ շինեցին։**

Ուղղագրութիւն 15. *կնիկ, կնկայ, կնկանից. կնիկ, կնոջ, կնոջից. որդիք, որդոց. որդիներ, որդիների. չի տեսնիլ, չի դիմանալ—չի տեսնի, չի դիմանայ—չի տեսներ, չի դիմանար։ Աստուած, Աստուծոյ. Աստուած, Աստուծու, Աստուծուց։*

16. *Դէզ—դիզել. կէս—կիսել. վէճ—վիճել, գէշ—գիշատիչ. գէտ—գիտուն. գէր—գիրանալ. դէմք—դիմել. զէնք—զինուել. դէպք—դիպուած... Այն բոլոր բառերը, որոնց մէջ, ածանցուելիս, է հնչիւնը փոխւում է ի հնչիւնի, գրւում են է տառով։*

8. ԱՐԵՒ

Օր մ'արևին եկան ասին
Չորս տարերքը խմիասին.
«Թագաւոր, ապրած կենաս,
Դու երբ կ'ելնես երկնից դարբաս,
Ծով-ծով լուսիդ ոսկեծածան հեղեղատ
Կըծաւալի բոլոր աշխարհ յորդառատ.
Բայց ծանիր, տէր, երկրիս վըրայ շատ տեղեր
Դեռ կըպատէ Եգիպտական խոր գիշեր.

---

* *Բառեր՝ նստուածքը—շինուած տեղը. երբեմն—մի ժամանակ,* когда-то. *մշակ, մշակել, մշակուած*—работникъ, обработать, обработанный. *կառուցած էր—շինած էր. տաճար—աղօթատուն,* храмъ. *ամուրի—չամուսնացած,* холостой. *խուրձ—փունջ, կապուկ,* связка. *դէզ*—стогъ. *հրաշք—զարմանք,* чудо. *գաղտնիք—ծածուկ, անյայտ բան,* тайна, секретъ.

Զորօրինակ անտառախիտ սար ու ձոր
Մեծ ժայռերի խոռոչներ խոր
Վիրապ, այր և քարանձաւ...»
—«Մի՞թէ», ասաց։ Արևը շատ զարմացաւ.
Տեսնես՝ իսկոյն գահէն իջաւ փութալով,
Չորս-դին լուսոյ ճառագայթներ սփռելով.
Ուր որ երթար, ամեն մի տեղ
Իւր դիմացէն հոսէր-վազէր լոյս հեղեղ։
—«Ո՞ւր է, ասաց, մութն ու խաւար.
Չէ՞ որ լոյս է արար-աշխարհ»։
Եւ իրաւ որ՝
Տեսնաս այրեր, վիհեր բոլոր,
Վիրապ, խոռոչ, անտառներ խոր
Երևէին լուսաւոր։
Այսպէս և լոյս խելքի դիմաց
Պարզի որոշ ամեն մի հարց։*

Ուղղագրութիւն 17. երկնից՝ փոխանակ երկնքի, կըծաւալի—ծաւալւում է. կըպատէ—պատում է. հոսէր, վազէր—հոսում էր, վազում էր. երևէին—երևում էին. պարզի—պարզւում է... գրաբարձևեր են, շատ գործածական տաճկահայոց գրաւոր լեզուի մէջ։

18. Եգիպտոս—Եգիպտական. Հայաստան—Հայկական և այլ յատուկ գոյականներից ծագած ածական անունները գրւում են գլխատառով։

---

* Բառեր՝ օր մ'—օր մի, մի օր. չորս տարերքը—հողը, ջուրը, օդը, հուրը. երկնից դարբաս—երկնակամար. դարբաս—սրահ, հրապարակ. ոսկեծածան—ոսկեփայլ. ծանիր—ճանաչիր, գիտացիր. վիրապ—հոր, խոր փոս. այր, քարայր, քարանձաւ—гротъ, пещера. փութալով—շտապելով. չորս-դին—չորս կողմը. վիհ, վիհեր—փոս, փոսեր. խոռոչ—ճեղքուածք, խոր բացուածքներ ու դատարկ տեղեր ժայռերի մէջ։

9. ՀԱՑԸ

Ֆրանսիացոց թագաւորին յայտնում են, թէ նրա իշխաններից մինը ծեծել է մի երկրագործ գիւղացու։ Թագաւորը հրամայում է, որ յանցաւոր իշխանին ճաշի հրաւիրեն։ Ճաշի սեղանի վրայ թագաւորի հրամանով դարսում են բազմատեսակ կերակուրներ, բայց հաց չեն դնում։

Իշխանը գալիս է ճաշի։ Նա շատ է զարմանում, երբ տեսնում է, որ սեղանի վրայ հաց չկայ։ Այդ միջոցին թագաւորը ներս է մտնում և հարցնում է.

«Ի՞նչպէս է, իշխան, կերակուրները լա՞ւ են, հաւանո՞ւմ ես»։

—Սքանչելի են, տէր թագաւոր. պատասխանում է իշխանը. բայց ներեցէք, եթէ համարձակւում եմ նկատել. սեղանի վրայ հաց չկայ, իսկ դա ամենագլխաւորն է, առանց որի չի կարելի ապրել։

«Ուղիղ է ասածդ, վշտացած նկատում է թագաւորը, և քանի որ ապրելու համար հաց է պէտք, ուրեմն իմացիր լաւ վարուել այն մարդկանց հետ, որոնց շնորհիւ հաց ենք ուտում ես և դու»։*

Ուղղագրութիւն 19. հրամայել, հրաւիրել, հարկ, համար. յայտնել, յանցաւոր, յարգ, յամառ։—Հ և յ տառերը բառի սկզբում կարդացւում են միապէս—միևնոյն հնչիւնն ունին։

20. Բառի մէջը յ կարդացւում է որպէս ամփոփ ի կամ որպէս ռուսաց Й—յայտնել—յաիտնել, հրամայել—հրամաիել...

---

* Բառեր՝ յայտնել—իմաց անել, տեղեկացնել объявлять, сообщать. երկրագործ—հողագործ, վարուցանք անող, земледѣлецъ. յանցաւոր—մեղաւոր, виновный. հրաւիրել—կանչել, մեծարելու, приглашать. սքանչելի,—շատ լաւ, հիանալի, дивный, восхитительный. նկատել—տեսել, դիտել, замѣтить.

10. ՀԱՄՈՅԻ ԵՐԳԸ

Անձ ծագեց կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը.
Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,
Առաջ տարէք արօրը։

Վարը վարենք, ակօս փորենք,
Խոր ակօսներ հողի մէջ.
Սերմը ցանենք, որ հունձ հընձենք,
Ցորեն դիզենք կալի մէջ։

Կըգայ ձմեռ, մենք վախ չունինք,
Ուրախ կ'անցնի մեր օրը.
Ուտելու միշտ պաշար ունինք,
Երբ լիք լինի մեր հորը։

Դէհ, քաշեցէք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը.
Թող որ չասեն մեր դըրացիք՝
Ծոյլ են Հայի եզները։*

Ուղղագրութիւն 21. դէհ, ահ, վայ, ասմ, էյ... ձայնարկութիւնները բաժանւում են նախադասութեան միւս անդամներից ստորակէտով։

22. Ծագեց, ծագեցաւ, խօսեց, խօսեցաւ. պատմուեց, պատժուեցաւ. հագաւ, հագնուեց, հագնուեցաւ. տեսաւ, տեսնուեց, տեսնուեցաւ. պառկիլ, պառկեցի, պառկեցայ. զարթիլ, զարթեցի, զարթեցայ. զարթնիլ, զարթնեցի... (բայերի տարբեր գործածութիւններ)։

---

* Բառեր՝ կարմիր արև—գեղեցիկ արև, պայծառ արև. ակօս—արօրի քանդած ծիրը, борозда. պաշար—պարէն, запасъ, провизія. դրացի—հարևան, сосѣдъ.

11. ԲԱՐԵԽԻՂՃ ԽԱՓՇԻԿԸ

Մի հնդկացի խափշիկ ծխախոտ խնդրեց հարևանից։

Հարևանը ժլատ մարդ չէր, ձեռքը գրպանը տարաւ և դուրս հանեց մի բուռը ծխախոտ։ Միւս առաւօտը հընդկացին վարձեալ եկաւ հարևանի մօտ և տուաւ նրան մի հատ արծաթի դրամ, որ գտել էր ծխախոտի մէջ։

«Ինչու չպահեցիր այդ դրամը քեզ մօտ, ասաց այնտեղ պատահող սպիտակադէմ մարդը. քեզ ծխախոտ տուողը դրամն էլ է տուել»։

Խափշիկը ձեռքը դնելով սրտի վրայ՝ ասաց.

—Այս տեղումս երկու մարդ կայ՝ մինը բարի, միւսը չար։ Բարի մարդն ինձ ասաց. «Այդ փողը քոնը չէ, ուրեմն տար, տիրոջը տուր»։ Իսկ չար մարդն ասաց. «Երբ տուել են քեզ այդ փողը, ուրեմն նա քոնն է»։ Բարին վրայ բերեց. «Ջէ, միմիայն ծխախոտն է քոնը և ոչ փողը»։ Չարը նորից ասաց. «Իզուր ես նեղութիւն քաշում. գնա, դրանով օղի առ, խմիր»։ Ես չգիտէի, թէ ինչ անեմ և պառկեցայ քնելու։ Բայց բարի և չար մարդիկ ամբողջ գիշեր դադար չէին տալիս ինձ և կռւում էին։ Առաւօտեան ես զարթեցայ և յետ բերի փողը։

12. Ա Ւ Ե Տ Ա Ր Ա Ն

Ամեն անգամ երբ թերթում եմ
Ես էջերը Սուրբ-Գրքի,
Միշտ վշտացած մտածում եմ՝
Ո՞ւր է սէրը մարդերի,
Որ Փրկիչը սուրբ կոտկով
Մարդկութեանը աւանդեց,

ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
Москва, Мясники
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Խաչի վըրայ Իւր արիւնով
Գիր կենդանի դրոշմեց։
Մարդիկ վաղուց մոռացել են
Խաչ ու քարոզ կենդանի,
Աւետարանն ուրացել են,
Էլ Սուրբ-Գիրքը գին չունի.
Ամենայն գիրք միշտ կարդում են,
Սիրոյ գիրքը չըկամին.
Ո՞ւր, չըգիտեմ, որոնում են
Բախտը իրանց խեղճ կեանքին։*

Ուղղագրութիւն 22. Ուր է սէրը մարդերի՝ փոխանակ—մարդկանց. մարդ, մարդու, մարդուց. մարդիկ, մարդկանց, մարդկանցից։

Գիր կենդանի՝ փոխանակ—կենդանի գիր, մի գիր, մի գրուածք, որ միշտ կենդանի կըմնայ։ «Սիրոյ գիրքը չըկամին»՝ փոխանակ—չեն կամենում կարդալ այն գիրքը, որ սէր է քարոզում, չեն կամենում կարդալ Աւետարանը։ Սէր, սիրոյ, սիրուց։ Յոգնակի չունի։

13. ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՊՏՈՒՂԸ

Երեք մարդ՝ միասին ճանապարհորդելիս, գանձ գըտան և բաժանեցին իրանց մէջ։ Նրանք պէտք է շարունակէին ճանապարհը. բայց որովհետև ուտելու պաշարը վերջացել էր, իրանց փոքրահասակ ընկերին ուղարկեցին քաղաք՝ ուտելիք գնելու։ Սա գնաց և ճանապարհին մտածում էր. «Ես այժմ հարուստ եմ, բայց աւելի հարուստ կըլինիմ, եթէ կարողանամ ընկերներիս բաժինն էլ ձեռք գցել։ Եւ այս դժուար չէ. կըթունաւորեմ այն ուտելիքը, որ պիտի գնեմ, իսկ իմ մասին կ'ասեմ, թէ ճաշել եմ քաղաքում. ընկերներս առանց կասկածելու կ'ուտեն թունաւորուած կերակուրը և կըմեռնեն»։

Միւս ընկերներն էլ ուրիշ կերպ էին մտածում.

«Ինչո՞ւ պէտք է մենք անպատճառ բաժին տանք այն պատանի մարդուն. մի՞թէ չենք կարող գործ դնել մեր սուր դանակները, որ մեր հարստութիւնն աւելի կատարեալ լինի. ուրեմն գայ թէ չէ՝ սպանենք նրան»։

Պատանին բերաւ թունաւորուած կերակուրը։ Ընկերներն սպանեցին նրան, իրանք էլ մեռան թոյնի ներգործութիւնից։ Գանձը մնաց անտէր։*

Ուղղագրութիւն 23. Ճանապարհորդելիս—ճանապարհորդելու ժամանակ, երբ ճանապարհ էին գնում։—«Գնալիս, գալիս, կարդալիս, գրելիս, ուտելիս»... ապառնի դերբայի մի առանձին ձևը, որ վարւում է որպէս ժամանակական մակբայ։

24. «Գայ թէ չէ, տեսնես թէ չէ, լսես թէ չէ»—երբոր գայ, հէնց որ գայ—երկրորդական նախադասութիւններ են ժամանակական մակբայի փոխարէն՝ գալուն պէս, տեսնելուն պէս...

25. Թունաւորած, թունաւորուած, գրած, գրուած. սպանած, սպանուած... Անցած դերբայի ներգործական և կրաւորական ձևերը անխտիր գործ են ածւում միմեանց փոխարէն. «պատանին բերաւ թունաւորուած կերակուրը (իրեն ձեռքով թունաւորուած), կամ՝ թունաւորած կերակուրը» (որ ինքը թունաւորել էր)։

---

* Բառեր՝ թերթ, թերթել—листъ, перелистывать. էջ—թերթի մի երեսը, страница. Սուրբ-Գիրքը—Աւետարանը, կտակ—մեռնողի կամքը, ցանկութիւնը, պատուէրը, завѣщаніе. աւանդ—պահ տուածը, կտակածը, завѣтъ, наслѣдіе. աւանդութիւն—преданіе. աւանդել—передавать. դրոշմ—կնիք, печать, клеймо. դրոշմել—կնքել, запечатать.

* Բառեր՝ գանձ—փող, խազինայ. գանձել—ժողովել, փող հաւաքել. թունաւորել—թոյն խառնել հետը, թոյն տալ մէկին, отравить. գնել—առնել, купить. պատանի—юноша. պատանի մարդուն—ջահել մարդուն։

14. ԳԻՒՂԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿ

Գեղջուկ ծերուկն իր մշակը հետն առած՝
Իրիկուան դէմ տուն էր գալիս դաշտերից.
Մի արջ ելաւ ծերի դիմացը յանկարծ,
Երբ անցնում էր մութ անտառի նա միջից:
Ծերուկն էլ՝ «ուհ-վա՜յ» կանչելը չըկարաց.
Արջը նըրան տակը կոխեց ու գոռաց,
Նստեց վըրան, շուռ-մուռ տըւեց, քաշքըշեց,
Ամէն կողմից զարհուրելի կրծոտեց:
Խեղճ ծերուկի բանը վատ էր, ի՞նչ անէր.
«Մըրտո՛յ եղբայր, հասի՛ր, հասի՛ր», կանչում էր:

Մըրտոն կացինը առաւ՝
Կայծակի պէս մօտ վազեց,
Արջի գլխին մոլեգին
Կացնի բերնով հարուածեց,
Յետոյ հանեց դաշոյնը,
Կըռնատակից ներս ցըցեց
Եւ ահռելի գազանի
Թոքն ու սիրտը խոցոտեց:

Արջը օռնաց ու վայր ընկաւ կիսամեռ.
Արիւնի մէջ տապալուելով հեծում էր:

Փորձանքը անցաւ:
Ծերուկն ոտք՝ ելաւ
Ու խեղճ Մըրտոյին
Քըֆրել սկսաւ:

Մեր քաջ Մըրտոն ապշեցաւ,
Դարձաւ, ծերուկին ասաւ.

—«Ինչո՞ւ կըքըֆրես դու ինձ, մա՛հտեսի»:
—«Ինչո՞ւ կըքըֆրեմ, ա՜յ յիմար, քեզի՞.
Իմ սիրտս այրւում է. դու ուրախացիր.
Ձե՞ս տեմնում՝ արջի մորթը փըչացրիր»:*

Ուղղագրութիւն 26. Մրտոյ, Մրտոյի, Մրտոյից, Մրտոն. քահանայ, քահանայի, քահանայից, քահանան... ոյ և այ վերջացած գոյականները, դիմորոշ յօդ առնելիս, յ տառը կորցնում են:

Ոտք՝ ելաւ՝ փոխանակ ոտքի ելաւ:

Գրեցէք այս առակը արձակ ձեւով:

15. ՀՕՐ ԽՐԱՏԸ

Մի հայր հինգ որդի ունէր: Նա միշտ խրատում էր նրանց, որ սիրով ու համերաշխ ապրեն: Բայց որդիքը հօր պատուէրը չէին կատարում: Մի անգամ հայրը կանչեց բոլոր որդիներին և, մի ցախաւել ձեռքին, մօտեցաւ ամենից մեծին: «Կոտրի՛ր, որդի, այս ցախաւելը», ասաց հայրը:

Որդին չարչարուեց, բայց չկարողացաւ կոտրել:

Հայրը դիմեց երկրորդ որդուն, բայց նա էլ չկարողացաւ կոտրել: Միւս եղբայրներն էլ չարչարուեցան, բայց չկարողացան:

Հայրը քանդեց ցախաւելի կապերը և ամեն մի ճիպոտ առանձին տուեց եղբայրներին: Նրանք կոտրատեցին—մանրեցին ճիպոտները:

Հայրն ասաց. «Դուք էլ, որդիք, նման էք այդ ցախա-

* Բառեր՝ գեղջուկ—գիւղացի. մշակ—բանուոր. մոլեգին—կատաղի կերպով. հարուածել—զարկել, խփել. դաշոյն—խանչալ, КИНЖАЛЪ. ահռելի—զարհուրելի. տապալուելով—գլորուելով. հեծում էր—տանջւում էր, տնքում էր, СТОНАЛЪ. քֆրել—նախատել, հայհոյել:

ւելին․ եթէ համերաշխ լինէք և սիրով ապրէք, ձեզ ոչ ոք չի կարող վնասել, իսկ եթէ բաժանուէք և առանձին-առանձին գործէք, ամենքը ձեզ կըյաղթեն, կ'ոչնչացնեն»։*

Ուղղագրութիւն 27. Կանչեց բոլոր որդիներին՝ փոխանակ—որդոցը․ որդի, որդու, որդիք, որդոց։ Քանդեց ցախաւելի կապերը՝ փոխանակ—բացեց, յետ արաւ, լուծեց։

28. Ուտէր, առէր, խօսէր, երգէր․ կ'ուտէր, կ'առէր, կ'երգէր․ կ'առէք, կըբերէք, կըխօսէք, կ'երգէք, կ'ուտէք։—Բայերի մէջ էր և էք վերջաւորութիւնները միշտ է-ով են գրւում։

16. ԿԱՊԻԿ ԵՒ ԱԿՆՈՑ

Կապիկի մէկը ծերացել, աչքի ոյժը պակսել էր․
Բայց մարդկանցից լըսել էր,
Թէ այդ չարիքն ունի ճար․
Ճարն էր՝ ակնոց դընել աչքին անպատճառ։
Այս որ լսում, հինգ-վեց ակնոց է գընում,
Այս կողմ, այն կողմ դարձընում․
Մէկը առնում, գլխի վըրայ է դնում,
Յետոյ իջեցնում, պոչի վրայ հագցընում,
Հոտոտում է ու լիզում է ապակին,
Բայց ակնոցից շահ չի տեսնում իր աչքին։
«Գետինն անցնի, գոռում է նա զայրագին․
Խենթ է, ով որ լըսէ մարդկանց ասածին․
Ահա ինչ որ գովեստ արին ակնոցի,
Սուտ է եղած․ ես էլ, խենթըս, հաւատացի»։

* Բառեր՝ համերաշխ—համաձայն, միաբան․ պատուէր—խրատ, наставленіе. ցախաւել—ցախից կապած աւել․ դիմել—обращаться. առանձին—ջոկ-ջոկ․ յաղթել—զօր անել, побѣдить, побѣждать.

Կապիկն վշտացած սրտի խոր ցաւով
Ակնոցը ուժգին տալիս է քարով
Եւ փշուր-փշուր
Անում ինչպէս ջուր։*

Ուղղագրութիւն 28. Գովեստ արին ակնոցի (տրական հ.)։
Գովեցին ակնոցը (հայցական հոլով)։
Որդին պատիւ տուեց հօրը (տրական)։
Որդին պատուեց հօրը (հայցական)։
Արձակ գրեցէք այս առակը ձեր տետրակների մէջ։

17. ՔԱՄԻՆ ԵՒ ԱՐԵՒԸ

Մի անգամ արեգակն ու հիւսիսային ժանտ քամին վէճ բաց արին, թէ նրանցից որն է ուժեղ։ Երկար վիճեցին նրանք․ վերջապէս վճռեցին, որ իրանց ոյժը փորձեն այն ճանապարհորդի վրայ, որ նոյն ժամին մօտից անցնում էր։ «Նայիր՝ թէ ինչպէս կ'ընկնեմ նրա վրայ, ասաց քամին, և մի ակնթարթում կըխլեմ նրա վերարկուն»։ Այս որ ասաց, սկսեց փչել՝ ինչքան ոյժը կարում էր․ բայց որքան շատ էր աշխատում քամին, այնքան աւելի պինդ էր փաթաթւում ճանապարհորդը վերարկուի մէջ։ Նա, ի հարկէ, դժգոհում էր վատ եղանակից, բայց միենոյն ժամանակ աւելի շտապում էր առաջ գնալ։ Քամին բարկացաւ, կատաղեցաւ և թափեց խեղճ ճանապարհորդի վրայ անձրև ու ձիւն։ Նզովելով քամուն՝ ճանապարհորդը

* Բառեր՝ չարիք—վատութիւն, վնաս, зло. ճար—դեղ, հնար․ գնում է—առնում է, покупаетъ. առնում է—վերցնում է, беретъ. գետինն անցնի—գետինը մտնի․ անցնի—անցկենայ, հեռանայ․ խենթ—յիմար․ զայրագին—բարկացած, гнѣвно. գովեստ արին ակնոցի—ակնոցը գովեցին․ ուժգին—սաստկութեամբ։

վերարկուի թևերը հագաւ, վերևից էլ գօտին կապեց։ Հիմա հասկացաւ քամին, որ էլ չի կարող նրա վերարկուն խլել։ Արեգակը՝ տեսնելով իւր հակառակորդի անզօրութիւնը, ժպտաց, դուրս նայեց ամպերի յետքից, ջերմացրեց, ցամաքացրեց երկիրը, դրա հետ միասին և խղճուկ, սառած ճանապարհորդին։ Արեգակի ճառագայթներով տաքացած, նա քաջալերուեց, օրհնեց արեգակը, հանեց վերարկուն, ծալեց ու կապեց թամբին։ «Տեսնո՞ւմ ես, ասաց այն ժամանակ հեզիկ արևը բարկացկոտ քամուն. քաղցրութեամբ ու բարութեամբ աւելի բան կարելի է անել, քան թէ բարկութեամբ»։*

Ուղղագրութիւն 29. Քամի, քամոտ. ոյժ, ուժեղ. զօր, զօրեղ, անզօր. միտք, մտաւոր, անմիտ. հեզ, հեզիկ. գիր, գրաւոր անգիր։

Բառերը սկզբից կամ վերջից աննշան մասնիկներ են առնում և իրանց նախնական նշանակութիւնը փոխում են, ածանցւում են (նախադիր և ածանցական բառեր)։ Բառի այն մասը, որ ածանցուելիս անփոփոխ է մնում, կոչւում է արմատ։ Արմատի վերջից կցուած մասնիկը կոչւում է վերջաւորութիւն (վերջայր մասնիկ). արմատի առաջից կցուած մասնիկը կոչւում է նախայար մասնիկ։

* Բառեր՝ հիւսիսային քամի—հիւսիսից փչող քամի, сѣверный. ժանտ—չար, զէշ. վճռեցին—որոշեցին, порѣшили. ոյժ—զօր, сила. ուժեղ—զօրեղ, сильный. ակնթարթ—աչքը ճպելու միջոց, мгновеніе. խլել—պոկել, сорвать. խլել—отнимать. վերարկու—վերևի հագնելիք, пальто. դժգոհում էր—տրտնջում էր, ропталъ. նզովելով—անիծելով, проклиная. ժպիտ—улыбка. ջերմացրեց—տաքացրեց, согрѣлъ. քաջալերուեց—սիրտ առաւ, ободрился. հեզիկ—խոնարհ, кроткій. բարկացկոտ—сердитый.

18. * * *

Կանաչ տերևով ծառը ծածկըւեց
Եւ կոկոններով քնքուշ հագնըւեց.
Կենսատու յօղով մարգարտանման
Ուռճանում էր նա շրնչովը գարնան։
Բայց նըրա դալար շիւղերին մօտիկ
Թաքնըւեց դաժան ծեր-սառնամանիք։
—«Է՛յ, տո՛ւր ինձ, ասաց, մանուկ կոկոններ.
Ձեզ տալ, տես, զօրով ինքըս կըխլեմ...»։
«Ա՛խ, թո՛ղ տուր հանգիստ դու իմ բողբոջներ,
Գոնէ բացուէին նըրա ծաղիկներ...»,
Սառնամանիքին ծառը շշընջաց
Եւ ողջ էութեամբ արմատից դողաց։

Եւ ահա կամաց-կամաց բացուեցան
Անուշ բուրմունքով քնքուշ կոկոններ,
Եւ արեգակից ջերմ փայփայուեցան.
Իսկ թռչունների անհոգ երամներ
Հընչեցին ուրախ անուշիկ երգեր։
Յանկարծ ծառի մօտ թըռաւ չար քամին.
—«Է՛յ, տո՛ւր ինձ, ասաց, սիրուն ծաղիկներ,
Կըյափշտակեմ, թէ չէ, այս ժամին...»,
«Ա՛խ, խընայի՛ր ինձ և մի արգելիր
Իմ ծաղիկներին պտղատու լինել...»,
Կատաղի քամուն ծառը շշընջաց
Եւ սարսափելով վախից դողդողաց։

Բայց ահա՛ մատաղ պտուղներին խակ
Ջերմութիւն տըւեց ամռան արեգակ,
Եւ ծառը զուգուեց հասուն մըրգերով։
Մօտեցաւ նըրան յուշիկ քայլերով

Մատղաշ պատանին՝ տապիցը նեղուած.
—«Ա՛խ, տո՛ւր ինձ, տատ, անուշիկ մրգեր.
Զօրով չեմ խլել երախայրիքներ»։
«Ա՛ռ քեզ, պատանի, առ իմ ճըղներ
Քեզ են ըսպասում վաղուց անհամբեր,
Որ գաս, հեշտացնես նըրանց անուշ բեռ»։
Եւ ծառը սիրով նըրան ողջունեց
Ու խոնարհելով ճըղները կախեց։*

Ուղղագրութիւն 30. Կանաչ տերևով ծառը ծած-կը-ւեց, հագ-նը-ւեց. փոխանակ ծած-կուե-ցաւ, հագ-նուե-ցաւ։ Բանաստեղծութիւնների մէջ „ու" տառը եթէ պէտք է առանձին վանկ կազմի, ածանցւում է ւ-ի և իրանից առաջ առնում է ը տառը։

31. Նախայար մասնիկների թիւը սահմանափակ է՝ չտալ, չբերք, անմիտ, տգեղ, ակամայ, առարկայ, արտագրել, բաղաձայն, բացառիկ, գերընական, դերասան, ենթակայ, հակառակ, համաձայն, մակբայ, յարատև, ներհակ, շաղկապ, վերստուգել, տարբեր, տրամադիր, պարագայ, ստորագրել, վերագրել, փոխադրել։

19. ՆՐԲԱՄԻՏ ՋՈՒԼՀԱԿԸ

Մի Թագաւոր նստած էր իր գահի վրայ։ Հեռաւոր երկրից մի դեսպան եկաւ և, առանց խօսելու, Թագաւորի

---

* Բառեր՝ քնքուշ—փափկիկ, нѣжный (о). կենսատու—կեանք տուող. ցօղ—շաղ, роса. մարգարիտ—жемчугъ. ուռճանում էր—լցւում, հասունանում էր. դաժան—անողորմ, չար. սառնամանիք—սաստիկ ցուրտ, морозъ. մանուկ կոկոններ—ջահէլ, նորաբոյս կոկոններ. բողբոջ—ծիլ, ոստիկ, побѣгъ, отростокъ. շշնջաց—փսփսաց, шепнулъ. անհոգ—беззаботный. երամ—թռչունների խումբը; стая. մատղաշ—ջահէլ. հասուն—հասած. յուշիկ քայլերով—հանդարտիկ, մեղմիկ քայլերով. տապ—շոգ, տաքութիւն. երախայրիք—առաջին պտուղները. հեշտացնել—թեթևացնել։

գահի շուրջը մի կլոր գիծ քաշեց ու լուռ ու մունջ մի կողմը քաշուեց—նստեց։

Թագաւորը այս մարդու արարմունքից ոչինչ չհասկացաւ. կանչեց իր իշխաններին. Նրանք էլ մի բան չհասկացան։ Թագաւորը շատ վատ դրութեան մէջ էր։ Նրա համար մեծ ամօթ էր, որ իւր տէրութեան մէջ մի խելօք մարդ չէր գտնւում դեսպանի արածը հասկանալու համար։ Թագաւորը սաստիկ նեղացած՝ յայտնեց ամենքին, որ եթէ նրան պատասխան տուող չգտնուի, էլ ոչ-ոքի կենդանի չի թողնիլ։

Թագաւորի կողմից խնդրակներ ման եկան ամեն կողմ, և վերջը մի տան մէջ գտան մի ջուլհակ (ոստայնանկ)։ Տեսնում են, որ այն մարդը մի տեղ նստած՝ միաժամանակ երեք գործ է շինում.—հա՛մ իւր կտաւն է գործում, հա՛մ երկու երեխայի օրօրոց է օրօրում, համ էլ տանիքի վրայ ցորեն է փռել ու մօտը մի ճիպոտ տնկել. երբ ինքը իր կտաւի թելերը շարժում է՝ կտաւը գործւում է, օրօրոցները օրօրւում են, այն ճիպոտի շարժուելուց էլ տանիքի ծտերն են փախչում, ցորենից հեռանում։

Նրանք այս բանի վրայ շատ են զարմանում։ Յետոյ նրան պատմում են, թէ հեռաւոր երկրից մի մարդ եկաւ, Թագաւորի գահի շուրջը մի գիծ քաշեց, բայց ոչ ոք չկարողացաւ իմանալ, թէ դրանով ինչ էր ուզում ասել։ «Վեր կաց, գնանք. եթէ դու նրա միտքն իմանաս, Թագաւորը քեզ մեծ պարգևներ կըտայ»։

Ջուլհակը միքիչ մտածում է, յետոյ առնում է երկու վէգ ու մի վառեկ և գնում է հետները։ Հասնելով Թագաւորի մօտ, վէգերը հանում է և ձգում դեսպանի առաջը։ Դեսպանը գրպանից մի բուռը կորեկ է հանում ու շաղ տալիս գետնին։ Ջուլհակը բաց է թողնում վառեկը, որ իսկոյն սկսում է կտցահարել կորեկը։

Այս բանը տեսնելով՝ դեսպանը տրեխները հագնում է ու սուսուփուս դուրս գնում:

Թագաւորը ջուլհակին հարցնում է, թէ այդ ինչ արիր: Ջուլհակը պատասխանում է. «Այդ մարդը եկել էր ասելու, թէ մեր թագաւորը գալիս է քեզ հետ պատերազմելու, քո երկիրն տիրելու. խոնարհւում ես, թէ կըռուով ես ուզում պատասխանել: Ես նրա առաջը վեգեր ձգելով՝ հասկացրի, թէ դուք մեզ համար երեխաներ էք. գնացէք, վեգի խաղացէք. դուք ով, մեզ հետ կռուողն ով: Նա իր շաղ տուած կորեկով ուզեց հասկացնել, թէ մեր զօրքերն անթիւ, անհամար են. դուք ինչ կարող էք անել: Եւ երբ ես բաց թողի վառիկս, որ նրա բոլոր կորեկը կերաւ, դրանով պատասխանեցի, թէ մեր մի մարդը ձեր հազար մարդուն կըջարդէ. գնա, պատմիր քո թագաւորին»:

Թագաւորը, այս բացատրութիւնը լսելով, մեծամեծ պարգևներ տուեց ջուլհակին և ուզեց նրան վեզիրի պաշտօն տալ: Բայց ջուլհակը պարգևների մի մասովը բաւականացաւ և թագաւորին ասաց. «Ո՛չ, թագաւոր, թող որ ես ջուլհակ մնամ. միայն այս եմ խնդրում քեզանից. չմոռանաս, որ հասարակ արհեստաւորի մէջ էլ կըգտնուի այնպիսին, որ նեղ օրում քեզ պէտք կըգայ: Վեզիրներիդ ինչ պատիւ ուզում ես՝ տուր, միայն ջուլհակին ու կօշկակարին էլ մարդու տեղ դիր»:*

* Բառեր՝ նրբամիտ—սրամիտ, խելօք, человѣкъ съ тонкимъ умомъ. ջուլհակ—ոստայնանկ, ткачъ. գահ—պատուաւոր աթոռ, тронъ. դեսպան—թագաւորի կողմից ուղարկուած մարդ, посолъ. արարմունք—արածը, գործքը, поступокъ. խնդրակներ—կանչողներ, зватаи. կտաւ—քաթան, холстъ. տանիք—կտուր, վեզիր—նախարար, մինիստր. պաշտօն—должность.

Ուղղագրութիւն 32. Թողնել, փոխանակ՝ թողուլ կամ թողել: Հեռաւոր երկրից մի մարդ եկաւ, մի գիծ քաշեց—փոխանակ՝ մի մարդ է եկել, մի գիծ է քաշել...

33. Դիտեցէք վերջաւորները՝ շրջան, վազկան, սողուն, թըռչուն. նախատինք, բաժինք. զարմացումն, ողբումն. գոչիւն, մռնչիւն. կորոյ, կապոյ. պահարան, տեսարան. ծառաստան, բուրաստան, Հայաստան, Ռուսաստան (ստան—աշխարհ).

20. ՆԱՄՈՒՍ ՈՒ ՂԵՅՐԱԹ

Դեռ թոթովախօս մի մանուկ էի
Եւ եօթ տարեկան անգամ չըկայի,
Երբ ինձ աւանդեց հայրս իմ անուս՝
Մի սրբազան խօսք—և դա էր՝ «նամուս»:

Դըպրոցի շէմքին դեռ ոտ չըդըրած,
Դեռ նոր էի գիրք ես ձեռքըս առած,
Երբ մօրս համբոյր թըրջեց իմ ճակատ
Ու պատուիրեց ինձ անել միշտ «ղէյրաթ»:

Բայց կարճ մնացի ուսումնարանում.
Աղքատի բաղդը, դէ, ինչ է լինում...
Հօրս պատուէրով սովրեցի արհեստ,
Սիրեցի նըրա վաստակը համեստ:

Եւ այն օրից յետ,
Երբ ընկերացայ մուրճ ու սալի հետ,
Քըրտինքը դէմքէս ծորում է կաթ-կաթ
Ու ինձ յիշեցնում նամուս ու ղէյրաթ:*

* Բառեր՝ նամուս—պատիւ, честь. ղէյրաթ—խնայողութիւն, бережлиность. թոթովախօս—նոր խօսել սկսած, лепетунъ. անուս—տգէտ, կարդալ չիմացող, неграмотный. մուրճ—չաքուճ, молотъ. սալ—զնդան, наковальня. ծորում է—ծըլում է, сочится. ծորակ—кранъ.

Ուղղագրութիւն 34. Դիտեցէք հետեւեալ բառերի վերջաւորները և նոցա նշանակութիւնը որոշեցէք. դպրոց, դպրանոց, աղքատանոց, հնձանոց, տասնանոց, կապոց, պահոց. որսորդ, ճամբորդ. պահապան, այգեպան. արքունի, ծերունի. մատանի, հովանի, լեզուանի. դեղնուց, սպիտակուց. հագուստ, պահեստ, պահուստ. ծնունդ, խառնուրդ։

21. ՎԵՀԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Մի շատ հարուստ մարդ, ծերութեան օրերում, ցանկացաւ իւր ունեցած կայքը բաժանել երեք որդոց մէջ։ Իւրաքանչիւրին իւր մասը տալուց յետոյ՝ նա ասաց. «Մնում է էլի մի շատ թանկագին գոհար. ես այն կըտամ ձեզանից նրան, ով մի վեհանձնութիւն կ'անէ։ Իսկ դորա համար ես ձեզ երեք ամիս ժամանակ եմ տալիս»։

Շուտով որդիքը ցրուեցին. նրանք ման եկան զանազան քաղաքներ և երբ հօր ուզածը կատարեցին, կրկին վերադարձան տուն։ Նրանք սկսեցին պատմել հօրը իրանց արած վեհանձնութիւնները։

Անդրանիկ որդին ասաց.

—Իմ ճանապարհորդութեան ժամանակ մի օտարական յանձնեց ինձ իւր բոլոր հարստութիւնը, և թէպէտ նա ինձանից ոչինչ ստացական չառաւ, բայց ես կրկին հաւատարմութեամբ վերադարձրի նրան իւր գոյքը։

—Որդեակ, պատասխանեց հայրը. դու արել ես այն՝ ինչ որ պէտք է անէիր, և այն մարդը, որ ուրիշ տեսակ կըվարուէր, խաբեբայ կըլինէր. ազնիւ լինելը մարդուս համար մի պարտականութիւն է։ Քո արածի մէջ վեհանձնութիւն չկայ։

Յետոյ խօսեց միջնակ որդին.

—Իմ ճանապարհորդութեան միջոցին մէկ օր ես անց էի կենում մի լճի եզերքով. մի փոքրիկ երեխայ ջուրն

ընկաւ։ Ես իսկոյն օգնութեան հասայ և, չխնայելով իմ կեանքը, ազատեցի նրան։

—Շնորհաւորում եմ, ասաց հայրը. բայց դարձեալ այդ գործի մէջ վեհանձնութիւն չկայ։ Քո արածը կարեկցութիւն է, բարեգործութիւն է, բայց ո՛չ վեհանձնութիւն։

Վերջապէս խօսեց կրտսեր որդին։

—Մի օր ես իմ թշնամուն տեսայ խոր քնած մի անդունդի ծայրին։ Ամենաթեթև շարժողութիւնն անգամ կարող էր նրան անդունդը գլորել. բայց ես նրան զարթեցրի մեղմաբար և ազատեցի վտանգից։

—Ո՜հ, զաւակս, աղաղակեց բարի ծերունին. գոհարը քոնն է։ Ո՜րպիսի վեհանձնութիւն՝ լաւութիւն անել հակառակորդին, մահից ազատել թշնամուն։ *

Ուղղագրութիւն՝ 34. Ցրուեցին, փոխանակ ցրիւ եկան, ներգործական՝ ցրել—ցրիւ տալ. կրաւորական՝ ցրուիլ. չէզոք՝ ցրիւ գալ։ Չխնայելով իմ կեանքը—կեանքս վտանգի ենթարկելով...

35. Զարթեցրի մեղմաբար. քաջաբար, արիաբար. ուժգին, լալագին. ուղղակի, յանկարծակի—մակբայակերտ վերջաւոր մասնիկներ են։

36. Նկատեցէք թէ ինչ նշանակութիւն են տալիս հետեւեալ բառերին վերջաւոր մասնիկները՝ երկնային, դաշտային, [illegible]արևելեան, արևմտեան, հայկական, գիւղական. քարէ, քարեայ, քարեղէն, աղի, պղնձի, արծաթի, ընկուզենի, խողենի (միս), գառնենի (միս և մորթ)։

---

* *Բառեր՝ վեհանձնութիւն—մեծահոգութիւն,* великодушіе. *կայք—կալուածք,* имущество. *գոհար—բրիլեանտ, թանկագին քար. անդրանիկ—առաջնածինը, առաջին որդին. օտարական—ուրիշ երկրացի,* чужестранецъ. *ստացական—անդորրագիր,* квитанція. *գոյք—հարստութիւն,* богатство. *եզերք—ջրի ափը, զրաղը. կարեկցել—մեղքանալ, խղճալ. կրտսեր որդին—ամենից փոքր որդին. անդունդ—վիհ, խորխորատ,* пропасть, бездна. *աղաղակեց—բարձրաձայն կանչեց,* воскликнулъ.

22. ՄԱՐԴԸ ԵՒ ՀՐԷՇԸ

(Հէքեաթ)

Ա.

Շատ տարի առաջ՝ հին ժամանակը,
Երբ հրաշքներով լի էր աշխարհքը,
Իւր ամուսինով և զաւակներով
Ապրում էր մի մարդ իւր առուտուրով։
Ուրախ ու զւարթ էր նըրա կեանքը,
Պատճառ՝ միշտ ոսկով լի էր քսակը·
Բայց յանկարծ բախտը երես դարձրեց,
Եւ մեր խեղճ մարդը բոլորն կորցրեց՝
Ուրախ կեանք, և՛ փառք, և՛ հարստութիւն,
Եւ նըրանց հետ էլ քաղցր առողջութիւն.
Ընկաւ անկողին, խիստ հիւանդացաւ,
Ոյժ և զօրութիւն նրանից հեռացաւ.
Չէր կարողանում ոտի վրայ կանգնել,
Մինչև որ նըրան իւր կինը չօգնէր։

Դժբախտ-տարաբախտ նըրա խեղճ կինը
Ստիպուեց կերակրել այժմ իւր տունը.
Գիշեր ու ցերեկ պէտք է աշխատէր,
Որ իւր որդիքը սովից ազատէր։
Ամիս ամսի վրայ այսպէս անցկացաւ,
Վերջապէս կինը իսպառ ձանձրացաւ։
«Ի՞նչ ես վայր ընկել, ասում էր մարդուն,
Գլխիս ցաւ դառել, խըլել ես իմ քուն.

Մինչև ե՞րբ պէտք է այսպէս չարչարուեմ,
Կեանքս մաշելով ես քեզ կերակրեմ.
Վե՛ր կաց, մարդ ես, գնա՛, գլուխդ քա՛րին տուր,
Եւ որդոցդ համար ճարէ կերակուր»։
Պատասխան տուեց խեղճ հիւանդ մարդը.
—Բաւական է ինձ իմ դառը վիշտը.
Քանի ունէի, ե՞րբ բան խնայեցի.
Առողջ ժամանակ ե՞րբ ծոյլ մընացի.
Իսկ այժմ աղքատ եմ և մարմնով տըկար.
Աղճա՛, մի՛ տանջիր դու ինձ անդադար։
Բայց կինը երկար էլ չհամբերեց
Եւ հիւանդ մարդուն տանից դուրս արեց.
«Գընա՛, ուր կ՚ուզես, գլխիցս հեռացի՛ր.
Դու իմ խեղճ անձը լաւ չարչարեցիր.
Հիմա ինչքան էլ լաց ու աղաչես,
Էլ տուն չեմ թողնիլ, քանի աղքատ ես»։
—Լա՛ւ, ասաց մարդը ձայնով տըխրագին,
Կ՚երթամ, կըկորչեմ, ո՛վ դու անգութ կին.
Կտոր հաց, գոնեա՛, տուր, հետըս անեմ,
Որ ճանապարհին քաղցած չըմեռնեմ։

Բ

Կինը դուրս բերեց, տուեց երկու հաց.
Եւ մեր խեղճ մարդը հեռացաւ, գընաց,
Իւր չար բախտիցը գանգատ անելով,
Թողեց իւր տունը անհաստատ քայլով։
Ինքն էլ չըգիտէր, թէ ուր էր գնում.
Միայն միշտ առաջ քայլում էր տըրտում։
Վերջը դադրելով՝ մի քարի վըրայ
Նըստեց, որ սակաւ մի հանգըստանայ։

Այնտեղ նկատեց՝ որ ճանապարհին,
Նրանից ոչ հեռու ընկած էր գետնին
Մի մազից հիւսած երկար սև պարան,
Որ նա վեր առաւ, ասելով այս բան.
«Սա ինքնըստինքեան մի չնչին բան է,
Բայց խեղճիս համար շատ թանկագին է»։
Այսպէս ասելով պարանն փաթաթեց
Եւ իբրև թանգ բան ծոցումը պահեց։
Յետոյ, սակաւ ինչ հացով ու ջրով
Իւր տկար մարմնին զօրութիւն տալով,
Նորից վեր կացաւ, կամացուկ քայլով
Առաջ ընթացաւ նոյն ճանապարհով։

Այսպիսով անցաւ նա բաւական տեղ,
Մինչև որ հասաւ մի աղքատիկ գեղ,
Ուր անց կենալիս՝ տեսաւ շատ հաւեր։
Հաւերից մինը հանդարտ նստած էր
Կիտած աղբի վրայ ու ձու էր ածում.
Եւ մեր խեղճ մարդը դըրեց իւր մտքում,
Որ բռնէ նրան ու հետը տանէ,
Միքանի շահով քաղաքում ծախէ։
Ահա այդ մտքով նա կամաց-կամաց,
Ձու ածող հաւին զգոյշ մօտ գնաց,
Բայց հէնց այն կողմը իւր ձեռքը մեկնեց՝
Վեր թռաւ հաւը և մէկ ձու թողեց։
Թողած ձուն իսկոյն վեր առաւ մարդը,
Դըրեց գըրպանը, օրհնեց իւր բախտը.
—Է՛հ, փառք Աստուծոյ, ասաց ինքնիրան,
Այս մէկ հաւի ձուն, սա էլ է մէկ բան։

Էլի առաջ գնաց մի կարճ ժամանակ,
Վերջապէս տեսաւ մի փոքրիկ գետակ,
Որ դուրս էր բղխում մօտիկ անտառից,
Մերթ հանդարտ գնալով, մերթ փրփրալից։
Յոգնած, վաստակած մեր մեղաւորը
Շատ ուրախացաւ, երբ տեսաւ ջուրը.
Իսկոյն մօտ գընաց, որ պարզ ցուրտ ջըրով
Փոքր ինչ հովանայ, մէջ լողանալով։
Ջրի աւազոտ ափերի վըրայ
Նըստոտած էին միքանի կըրիայ.
Մօտեցող մարդուն երբ նըրանք տեսան,
Ըշտապ վազեցին, ջուրը թափուեցան։
Միւսների նըման շուտ հասնել ջըրին
Չըյաջողուեցաւ նըրանցից մէկին։
Մարդը մօտ գնաց, վեր առաւ նըրան,
Իւր գըրպանի մէջ տըւեց բնակարան.
Ինքն էլ լողացաւ, հագաւ շորերը,
Եւ յետոյ գնաց դէպի անտառը,
Որ շատ հեռու չէր, և մի ժամի մէջ
Արդէն գընում էր խիտ անտառի մէջ։

Գ

Շատ գընաց, թէ քիչ, վերջապէս նստեց
Մի աղբիւրի մօտ և շատ մտածեց,
Թէ ինչպէս անէ, որ իւր խղճալի,
Անբախտ դրութիւնն ուղղէ մի կերպի։
Յանկարծ դըղըրդաց բոլոր անտառը,
Թընդաց, որոտաց հովիտ ու լեառը,
Եւ հանդէպ լեռան սև ու մութ այրից
Դուրս եկաւ մի հրէշ, որ հին դարերից

Բնակւում էր այնտեղ և սպանում, լափում,
Ով այրի մօտով անցնել չէր վախում...
Ահա այդ հրէշը դուրս եկաւ այրից
Եւ խեղճ մարդու վրայ գոռաց հեռուից.
«Բարո՜վ քեզ, բարո՜վ, դու համեղ կտոր,
Որին կ՚ընդունէ իմ պատուական փոր.
Արդէն կըլինի մի ամբողջ ամիս,
Որ ես չեմ կերել մարդու անոյշ միս»:

—Այդ ի՜նչ խօսքեր են, զարշելի՜ գազան...
Դու յանդըգնում ես ասել ինձ այդ բան.
Ապա այդտեղ կա՛ց և դու կըտեսնես՝
Ո՛ւր կըշըպըրտեմ մարմինդ երկու կէս:
Ասաց և անվախ մօտ գնաց հրէշին
Եւ խիստ բարկացած նայեց երեսին:

«Ոչ-ոք մինչև այժմ—գոչեց գազանը—
Չէ համարձակուել ասել այդ բանը
Ինձ, որի ձեռքից դեռ մինչև այսօր
Ազատ չէ մնացել ոչ մէկ մեղաւոր:
Բայց որովհետև մեծ-մեծ բըրդում ես,
Արի մեր ոյժը փորձենք դու և ես.
Ե՛կ, զօտեմարտենք, և ով որ յաղթուի,
Թո՛ղ նա յաղթողին կերակուր լինի»:

—Թէպէտ այդ բանում ես քեզ կըյաղթեմ,
Եւ մինչև վիզըդ գետին կըխըրեմ,
Բայց քեզ կարող եմ ես աւելի
Հասարակ կերպով յաղթել, զա՛րշելի:

«Լա՛ւ, համաձայն եմ, ցո՛յց տուր շընորքդ
Եւ իսկոյնևեթ կատարիր խօսքըդ»:

—Ի՞նչ ես ըշտապում, ասաց նրան մարդը,
Երեք բան կ՚անեմ, թէ կ՚անես հատը,
Ես այն ժամանակ քեզնից յաղթուած եմ.
Իսկ եթէ չանես, գլուխըդ կըջարդեմ.
Մէկ մազ ես հանեմ, մէկը դո՛ւ հանէ,
Չափենք ու տեսնենք՝ ում մազն երկայն է:
Եւ ո՛վ աւելի երկայն մազ ունի,
Թո՛ղ նա մեր մէջը յաղթողը լինի:

Թէ որ կարենաս ինձպէս չոր քարից
Գոյն-գոյն ջուր քամել, դու յաղթել ես ինձ:

Եւ ում մարմնի վրայ մեծ միջատ լինի,
Թո՛ղ որ նա միւսի գլուխը ջարդի:

«Լա՛ւ», ասաց հրէշը ու մի մազ հանեց
Եւ ուրախ-ուրախ մարդուն դէմ արեց:
—Ա՞յդ է—ասաց սա—և հանեց ծոցից
Գըտած պարանը հիւսած սև մազից:

Հրէշըն երբ տեսաւ հիւսած պարանը,
Ահից, զարմանքից բաց մնաց բերանը.
Բայց իսկոյնևեթ նորից սիրտ առաւ
Եւ խիստ կատաղած մի քար վեր առաւ
Ու երկու ձեռքով այնպէս պինդ սեղմեց,
Որ աւազի պէս նըրան փըշըրտեց:

Մարդն էլ իւր կողմից մէկ քար վերցրեց
Ու հրէշից ծածուկ գրպանից հանեց
Հաւից խլած ձուն, և հէնց որ սեղմեց,
Իսկոյն երկու գոյն հիւթը դուրս ծորեց։

«Այդ երկու փորձով—կանչեց հրէշը—
Դու ինձ յաղթեցիր. ցոյց տուր ուրիշը»։

Մարդը դուրս հանեց գրպանից կրիան՝
—Ահա միջատըս, ասաց, գո՛րշ գագան.
Ցո՛յց տուր ինձ իսկոյն սրա հատը, տեսնեմ,
Թէ չէ գլուխդ երկու կէս կ՚անեմ...
Ո՞ւր ես փախչում, էյ. չէ՛, կա՛ց, գո՛րշելի,
Կա՛ց, որ ընդունես մահ սարսափելի...
Բայց լա՛ւ իմացիր, ուր կ՚ուզէ գնաս,
Երբէք ինձանից չես մնալ անվնաս։

Դ

Իրաւ որ հրէշը, սաստիկ զարմացած
Մարդու արարքից, իսկոյն փախաւ-գնաց։

Սա էլ այն կ՚ուզէր. ուրախ մտաւ այրը,
Անցաւ մի ծայրից մինչև միւս ծայրը.
Տեսաւ լի արկղեր ոսկով, արծաթով,
Գոյն-գոյն ակներով, մարգարիտներով.
Ախոռների մէջ սիրուն ձիաներ
Պատրաստ էին նրա տանել հարուստ բեռ։
Նա էլ ժամանակ զուր չկորցրեց,
Գըտած գանձերը ձիերին բարձեց,

Դուրս եկաւ այրից, փառք տուեց Աստծուն
Եւ պատրաստւում էր դառնալ դէպի տուն,
Երբ յանկարծ տեսաւ հեռուից հրէշին
Վազելիս դէպ՚ այր, մի աղուէս ուսին։

Ե

Բայց թո՛ղ դեռ պատմեմ, թէ ինչպէս եղաւ,
Որ հրէշը յանկարծ կրկին յետ դառաւ։

Մարդուց փախչելով՝ կարճ միջոցի մէջ
Հասաւ հևալով մինչ անտառի վերջ,
Ուր մի կաղ աղուէս պատահեց նրան
Ու գլուխ տալով ասաց նա այս բան.
«Բա՛րով քեզ, բա՛րով, իշխան ահաւոր,
Դու մեր անտառի հզօր թագաւոր.
Բայց ինչի՞, ասա՛, այդպէս տրտում ես.
Խնդրում եմ վիշտըդ ծառայիդ յայտնես.
Գուցէ կարող եմ մէկ բանով պէտք գալ
Եւ քո տրտմութեան շուտով վախճան տալ»։

Հրէշը կարճ կերպով, միքանի խօսքով
Պատմեց աղուէսին, թէ ինչ փորձանքով
Ստիպուած է փախչել, թողնել տուն ու տեղ,
Յաղթուած մի մարդուց իրանից զօրեղ։

«Այդ ինչ եմ լսում, կանչեց աղուէսը.
Թոյլ, անզօր մարդուց ո՞նց պիտ՝ քեզ պէսը
Փախչի, վախենայ, թողնէ տունը, գնայ.
Ասա՝ ինչ կ՚առէ, ով այդ իմանայ։
Հաւատա ինձ, տէր, նա քեզ խաբել է,
Իւր հնարքներով աչքըդ կապել է.

Ե՛կ, դու ինձ լսիր, իսկոյն յետ դարձիր,
Ձեռք ընկած որսը զուր մի՛ կորցնիր։
Քանի դեռ ուշ չէ, շո՛ւտ արա, գընանք.
Գիտեմ՝ պատուական ընթրիք կ՚ունենանք։
Շատ ցանկանում եմ մարդու միս ուտել,
Պատճառ՝ այս օրս մարդիկ են կարել»։

Աղուէսի խօսքերն հրէշը լսելով՝
Իսկոյն յետ դարձաւ, արագ քայլերով
Վազեց դէպի այր։ Բայց ճանապարհին
Աղուէսն ետ մնաց ու խընդրեց հրէշին
Որ ետ չթողնէ իւր կաղ ծառային՝
Շատ ծանր բեռ չէ, շալակէ ուսին։
Այսպէս շալակած—ինչպէս փոքր առաջ
Արդէն ասացի—հրէշը քաջ-քաջ
Եւ արագաքայլ դէպ՛ այրն էր վազում,
Ուր մարդը կանգնած նրան էր սպասում։

Սա մէկ րոպէում իւր կտրուկ խելքով
Արդէն որոշեց, թէ ինչ հընարքով
Այս երկրորդ անգամ ազատուի հրէշից,
Եւ այս պատճառով գոչեց հեռուից.
—Ա՛յ դու խաբեբայ, անպիտան աղուէս,
Այսօր ինձանից անշուշտ մահ կ՚առնես.
Հաւանոցումս որ քեզ բռնեցի,
Այն պայմանով միայն կեանքըդ խնայեցի,
Որ դու ինձ համար երկու հրէշ բերես.
Դու էլ խոստացար. այժմ՝ սեւերես,
Այսքան սպասեցի, միայն մէ՛կն ես բերում.
Դա առանց քեզ էլ ինձ էր պատկանում։

Հրէշն երբ լսեց մարդու խօսքերը,
Բիզ-բիզ կանգնեցան նըրա մազերը.
«Խորամա՛նկ աղուէս, որոտաց, մեռի՛ր.
Դու միայն այն մտքով ինձ այստեղ բերիր,
Որ երկրորդ անգամ սրա ձեռը մատնես,
Որից մի անգամ հազիւ պրծայ ես»։
Ասաց ու բռնեց աղուէսի ոտից
Եւ սաստիկ ուժով նետեց իրանից,
Իսկ ինքը փախաւ։ Մարդը ազատուեց,
Ծունկ չոքեց իսկոյն, Տիրոջ փառք տըւեց,
Յետոյ վեր կացաւ այնպէս ուրախ-զուարթ,
Կարծես թէ երբէք չէր ցաւել մի մատ։
Բարձած ձիաններն դըրած գանձերով
Իրարու կապեց և ուրախ սրտով
Հեծաւ նժոյգ ձին ու կամաց-կամաց
Առաջ քըշելով դէպի տուն գնաց։

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Նկարագրական յօդուածներ եւ նրանց համապատասխան չափաբերական գրութիւններ*):

23. ԳԱՐՆԱՆ ՍԿԻԶԲԸ

Զատկից յետոյ Արարատեան նահանգում ով լինի, աչքին մի նոր բան կ'երևի. բոլորը ծառ ու տունկ է. կանաչները նոր դուրս եկած, ցնծքին են տալիս այգիների ափերումը. ուռի ծառերը՝ բաց արած իրանց լեզուակ տերևները, գարնան մեղմ քամուց խշխշալով՝ իրար են դիպչում, հէնց իմանաս իրար բարևում են. պտղատու ծառերն իրանց կարգին՝ որը կոկոնել է, կարծես շարած մարգարիտ լինի, որն էլ ծաղկել է եօթանասուն տարեկան ալևորի նման: Մանուշակն՝ ու յասմիկը իրանց անուշ հոտերով քաղցր քուն են բերում այգու մէջ զբօսնողին. մանուշակը պստիկ հարսի կամ համեստ աղջկայ նման գլուխը կախ է գցել, մտել է խոտերի տակը, որ մի՛ գուցէ երևալը հպար-

*) Բոլոր յօդուածների համար ուսուցիչը պէտք է պատրաստէ ուղղագրական և քերականական վարժութիւններ, ընդարձակելով և լրացնելով այն գիտելիքները, որոնք առաջ են բերուած նախընթաց հատուածի մէջ. աշակերտներն էլ, նախ ուսուցչի ղեկավարութեամբ և ապա ինքնուրոյն կերպով՝ պիտի կազմեն այն բառերի ցուցակը, որոնց առաջին անգամ են հանդիպում ուսանելի նիւթի մէջ:—Այս ամենը պիտի կազմի գրաւոր աշխատութիւնների մի անհրաժեշտ մասը:

տութիւն համարում. իսկ յասմիկը, իւր թփի վրայից ճիթ-ճիթ կախ ընկած ու հոտով աշխարհքը լցրած, հէնց իմանաս թէ կանչում է անց կացողին, որ առանց իրան ու իւր պարկեշտ քրոջը տեսութիւն գալու, անց չկենայ, չգնայ: Վարդն էլ ձմեռուան մերկութիւնից դուրս եկած՝ հագել է կանաչ-ատլաս շորեր և իւր ոսկէ կոճակի նման կոկոններովը իմաց է տալիս, թէ ես ուղարկել եմ ինձանից առաջ իմ քոյր մանուշակին, որ ձեզ ուրախացնէ, մինչև որ ես էլ կըգամ իմ մէկէլ ընկեր ծաղիկների հետ:

Այսպէս ամեն բան իրանց կարգին ընկած՝ մեծ ուրախութիւն էին բերում մարդու վրայ Կարմիր կիրակի օրուան առաջին շաբաթ օրը: Սարեակներն էլ՝ ծառի ճղներին կանգնած, կարմիր արեգակի դիմացը, հազար ու մի տեսակ ճլվլացնում էին ու իրանք ածում, իրանք պարում:

24. ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

Քեզ ողջո՛յն գուարթուն, առուգահասակ գարուն,
Քեզ ողջոյն բիւր անբուն տալիս է Հայոց Տուն:

Անուշաւանի սօսիք տերևով,
Ծըառերն ծառից իրանց ճըռուողով
Օրհնում են գալըդ, երկնքի դեսպան,
Դու ես մեր կեանքի պաշար ու պաշտպան:

Երբ հեզիկ մօտեցար Մասիսի սարերին,
Բքածին ամպերը տարագիր գընացին.
Հին լեռը բացեց իւր թաւոտ կուրծքը.
Քեզ կանաչ դիպայ սփռեց հովիտը.
Սիրահար սոխակը իւր վարդի յետքից
Վազեց Արարատ՝ շինել իւր բունը…

Շատ երկար Հայաստան քո գալուն սպասեց,
Ծաղկեցաւ նա այսօր, շատ լացեց, արտասուեց…

25. ՍԱՐ ԳՆԱԼԸ

Երբ գարունը բացւում է, հայ գիւղացիք սարն են տանում տաւարը: Աղբիւրների գլխին, ծաղիկների մէջ վրաններ են անկում և տաւարը ներս անում այս անմահական դրախտը: Առաւօտը, երբ անկողնիցդ վեր ես կենում, հազար սարի ծայրին ամպն ու ծուխը միմեանց հետ խառնուած՝ երկինք են բարձրանում ու ցօղը անձրևի հետ նստում է մարդկանց շորերի ու երեսների վրայ: Կանայք կթի տաւարի հետ են՝ կաթն են ժողովում, իւղ ու պանիր շինում. տղամարդիկ տաւարն արօտ են քշում, կամ բուրդն ու գործուածքը, իւղն ու պանիրն են տանում փողոց, ծախում, իրանց տան պակասութիւնը լրացնում:

Էլ ինչ ասել կուզէ, որ հարս ու աղջիկ այստեղ կուչ ու ձիգ անելով չեն ման գալիս կամ երեսները կալնում, ինչպէս տանը: Այստեղ մէկ ընտանիքի պէս են և ում օբէն (վրանը) մտնես, ամենքը առողջ, ուրախ ու զուարթ են. այն օդի ու ջրի մէջ, այն ծաղկի ու կանաչի հոտն ու համն առնողի հոգին ու գոյնը ինչ կըլինի ապա: Երբ սարումը հիւր է պատահում, էլ շաբաթով ու ամսով չեն թողում, որ հեռանայ. աղբիւրների քչքչոցը, ջրերի խշշոցը, ծառերի սըւըւոցը, թռչունների ծլվլոցը, հովուի սրինգը, գառան, ոչխարների ու տաւարի բառաչը՝ այս բոլորը կարծես քեզ ասում են. «Դրախտ ես ուզում, այստեղ կայ, այսպէս կայ. սիրտդ անմեղ, միտքդ խաղաղ»:

26. ԳԱՐՈՒՆ

Ո՜հ, ինչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչես, հովիկ,
Ծաղկանց վըրայ գուրգուրալով՝
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց
Գնա, անցիր սրտէս ի բաց:

Ո՜հ, ինչ ազու և սրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ.
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա, երգէ սրտէս ի բաց:

Ո՜հ, ինչ մրմունջ հանես, վտակ
Ականակիտ և հանդարտիկ.
Քո հայելուդ մէջ անապակ
Նայեն զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վտակ իմ հայրենեաց,
Գնա, հոսէ սրտէս ի բաց…:

27. ԴԱՇՏՈՒՄԸ

Ո՜րքան հիանալի է լայնատարած դաշտը. ինչ հրաշալի ընդարձակութիւն, ինչ բազմադիմի տեսարաններ ես նշմարում չորս կողմդ: Ահա հարուստ վարելահողերը—արտերը՝ աշխատասէր գիւղացու քրտինքի վաստակով փարթամացած, տատանում են իրանց պտղալից հասկերը:

Ցորենի, գարու, հաճարի, վուշի արտերը՝ օրօրուելով, քաղցր ժպիտը երեսին, ողջունում են միմեանց. մեղմ զեփիւռը խաղում է նրանց վրայ և երկրագործը՝ կանգնած մօտակայ թումբի գլխին, զուարճանում է, տեսնելով իւր արտերի հէրանց գնալը*): Արեգակի ճառագայթները փողփողում են նրանց վրայ:

Բայց ահա մի մութ ստուեր երկչոտութեամբ սահեց արտերի երեսով. դա մի կտոր ամպ էր, որ զովարար ողջոյն մատուցանելով արտերին, եկել էր իմանալու, թէ արդեօք ծարաւ չե՞ն նրանք և իրանց ծաղկած հասկերի դատարկ պտղամանները լցնելու համար կարօտ չե՞ն իւր օգնութեանը: Գիւղացին ձեռքերը տարածեց. «Ա՛ստուած իմ, դարձեալ մի առատ անձրև, և այնուհետև ես կարող եմ անվրդով ննջել յերեկուան տաժանելի աշխատանքից յետոյ»: Աստուած լսեց բարի գիւղացու ջերմ աղաչանքը և մեղմ անձրևը, երեկոյից մինչև առաւօտ, ջրեց ամբողջ դաշտերը:

Գիւղացին ուրախացաւ. այժմ նա հաց կ՚ունենայ իւր ընտանիքի և դարման իւր անասունների համար: Այդ անասուններն էլ շատ են հարկաւոր նրան: Դրանց կաթը նա ուտում է, դրանցով հերկում է երկիրը, մինչև անգամ դրանց աղբը հողը պարարտացնում է: Վարուցանքի համար հիւթալի սևահող է հարկաւոր. դատարկ աւազի կամ կաւի վրայ հացաբոյս չի բուսնիլ: Կան այնպիսի տեղեր, ուր ի հնուց բոյսերի և կենդանիների մնացորդների փտելուց սևահող է գոյացել. այդպիսի տեղերում գիւղացին համարձակ սերմ է ձգում. բայց կան և այնպիսի նիհար տափեր, ուր հարկաւոր է արուեստական կերպով հողը

*) Արտերի ալիքանման տատանումը քամու առաջ կոչւում է հէրանց գնալ:

պարարտացնել՝ ամեն տեսակ կենդանիների աղբ ածելով, որովհետև աղբից սև հող է գոյանում:

28. ՎԱՐԴԻ ՈՍՏ

Ասա դու ինձ, ոստըդ վարդի,
Ո՞ւր ես ծըլել, ո՞ւր ծաղկել,
Ո՞ր հովիտի կամ ո՞ր դաշտի
Զարդարանք ես դու եղել:

Արդեօք եղե՞լ ես Եդեմում,
Եւ ջրե՞լ է քեզ Եփրատ,
Կամ սնուցե՞լ է իւր ծոցում
Քեզ ծերունին Արարատ:

Ո՞ր անգութի ձեռն է քաղել
Քեզ քո թըփից մայրենական,
Կամ ո՞ր անգութն է քեզ տընկել
Այս աշխարհում պանդըխտական:

Կամ թէ այն թուփ, քո օթևան,
Թառամեցա՞ւ քեզ համանման,
Թէ՞ ստխակները քաղցրաձայն
Մխիթարում են միշտ նրան:

Բայց դու չունիս մըխիթարիչ,
Ո՛վ թագուհիդ ծաղիկների,
Զունիս դու քեզ սիրոյ երգիչ՝
Թառամում ես երկրիցդ հեռի:

29. ԱՆՏԱՌԸ ԵՒ ՆՐԱ ՕԳՈՒՏՆԵՐԸ

Մտնենք այս ընդարձակ անտառը. այստեղ մենք կըտեսնենք շատ ու բազմատեսակ ծառեր՝ հացի, բոխի, թխկի, հաճարի, սօսի, լորենի, կաղնի եայլն։ Սակաւ չեն նաև վայրենի պտղատու ծառերը՝ տանձին, խնձորին, զկռին, հոնին։ Անտառում բուսնում են նաև շատ թփեր, բանջարեղէններ, խոտեր և անտառային ծաղիկներ։ Անտառից մարդս մեծամեծ օգուտներ է քաղում։ Բացի նրանից, որ այնտեղ արածում է նրա տաւարը և իր վառելափայտն այնտեղից է ստանում, անտառը մի մեծ և անփոխարինելի օգուտ ևս ունի՝ ծառերը մաքրում են օդը։ Բացի դրանից անտառն արգելում է ջրի շուտ ցամաքելուն և օդի խոնաւութեան մէջ հաւասարակշռութիւն է պահպանում։

Գարնանը, երբ ձիւները հալւում են, ջուրը բոյսերի արմատների և մամուռի մէջ պահուելով, արագ չէ սահում, այլ նրա մեծագոյն մասը մեղմ հալուելուց և դանդաղ ընթացքից հողի տակ մանելով՝ շուտով չէ շոգիանում։ Թէ որքան մեծ նշանակութիւն ունի անտառը, երևում է նրանից, որ երբ որևէ լեռան վրայից անտառն անխնայ կտրատում են, ամբողջ պտղաբեր նահանգներ մերկ անապատ են դառնում. օդը զրկւում է իր նախկին փափկութիւնից, իսկ ձիւնից և անձրևներից գոյացած հեղեղները կատաղաբար ծածկում ու աւերում են դաշտերը։ Անտառների անհաշիւ կտրատելուց մեր երկրի շատ արգաւանդ սարեր և դրախտանման դաշտեր կորցրել են իրանց նախկին գեղեցկութիւնն ու փարթամութիւնը և ամայի անապատի ձև են ստացել։

30. *⁎*

Երբ-որ ճնշում է քո սիրտը մի վիշտ,
Մի վիշտ հոգեմաշ, ծանըր և յամառ,
Ապա մարդկանցից խուսափի՛ր դու միշտ,
Ուղղի՛ր քո գնացքը դէպի մութ անտառ։

Անտառն ու ժայռերն էլ են ընդունակ
Նոյնպէս բառերով վիշտ արտայայտել.
Չէ՞ որ շատ անգամ մըրրիկն ու կայծակ
Նրանց կուրծքն ու սիրտն են պատառոտել։

Նըրանք մարդկանց պէս չեն խօսիլ քեզ հետ,
Որ լոկ բառերով տան մխիթարանք,
Այլ ցաւակցելով՝ քո գանգատներին
Ձայնակից կըլինի նըրանց արձագանք։

31. ԵՐԱՇՏ

Գարունը քանի գնաց, տաքացաւ. մայիսի կիսին կ՚ասէիր օգոստոս ամիսը լինէր… Այն այգիները, որոնք մի քիչ ջըրդելի են, էլի կանաչի ծեղ երևում է նրանց մէջ. իսկ ինչ ներքի այգիների դրութիւնն է, Աստուած հեռու տանի,—կ՚ասես թէ ամայի անապատ լինին. կանաչ տեղ երազումդ չես տեսնիլ։ Աշտարակի որ փողոցովն անց ես կենում, ամենի բերանիցն էլ լսում ես, թէ այս տարի մենք ունեցած-չունեցածներս պիտի վաճառենք, եթէ մի քանի օր էլ այսպէս գնայ։ «Աստուած մեր մեղքը մեր երեսովն է տալիս. չորային լինելը բաւական չէ, թըրթուրն էլ մի կողմիցն է ծառերը սունգ անում. խնձորենիքը, ծիրանիքն ու շլորենիքը կ՚ասես թէ մի-մի քըդի

տաղաւար լինին, այնպէս են բռնուել Թրթուրի ձեռից։ Տնաշէններ, մեր քրիստոնէութիւնը վերացել է, հաւատներս բոլորովին պակասել. ամենայն տարի այս ժամանակ սուրբ Գէորգի մասունքը երկու անգամ բերած էինք լինում, այս տարի սուրբն էլ ենք մտքից գցել, Աստուածն էլ հետը։ Այս մեր կոտորուած երեխայքն էլ Նուրին գոնէ չեն ման ածում, որ գուցէ Աստուծու սիրտը քաղցրանայ, մի լիս ու ճար անի մեզ»։

Այսպէս խօսում էին իրար հետ միքանի մարդ, Ծանճապանենց դռանը կանգնած, երբ-որ Գարեգինը շտապելով անց էր կենում այնտեղից։ «Կանգնիր, կանգնիր, կանչեց նրանցից մինը. Գարեգին վարժապետ, ախար էս ինչ պատուհաս է. գրի սև ու սպիտակը դուք էք հասկանում. ինչ է ասում գիրն էս տարուան համար՝ անձրև պիտի գա՞յ, թէ չէ՝ ձեռքներս լուանանք, յոյսներս կտրենք, ետ նստենք»։

—«Ի հարկէ չի գալ, ասաց Գարեգինը. մի տեղ որ ջերմեռանդութիւն չլինի, սուրբերի պատիւը վերանայ, Աստուածը մոռացուի, Թափօր չլինի, այնտեղից Աստուած չի հեռանա՛լ։ Վաղը ականջներդ ձէնի պահեցէք, պատրա՛ստ կացէք, առաւօտեան զանգակի ձայնը որ լսէք, դո՛ւրս եկէք, որ սուրբ Գէորգի մասունքը պէտք է բերենք. գուցէ մի փարատութիւն ընկնի»։

Միւս օրը՝ արևը մի փոքր բարձրանալուց յետոյ, զանգակները քաշեցին։ Տիրացուները հագան ժամաշապիկները, ո՛րը Քշոցը վեր առաւ, ո՛րը խաչվառը, որն էլ մոմերը բռնած՝ առաջ ընկան։ Գարեգինն էլ՝ նրանց կարգի գցելուց յետոյ, շարականը խորտեց, տարաւ. տէրտէրներն էլ շուրջառները ժամհարի կռնատակը տուած՝ գնացին դէպի Մողնու ուխտատեղին։

Ժողովուրդն էլ մեծ ու փոքր, մայր ու մանուկ, բոլորը տէրտէրների յետևից մասունքի առաջը դուրս եկան։

Վանահայր վարդապետը, երբ-որ ժողովրդի կամքն իմացաւ, փառաւորուի ինքը, իսկոյն պատրաստուեց, գնաց ժամի դռները բաց արեց, մասունքները խորանից հանեց, տէրտէրների հետ ինքն էլ շուրջառաւորուած, ամենքը մի-մի մասունք վեր կալած, շարական ասելով, խաչ ու խաչվառով, մեծ հանդէսով եկան դէպի Աշտարակ։ Հէնց որ գիւղին մօտեցան, ջերմեռանդ ժողովուրդը, որ այդտեղ սպասում էր, գլուխները բաց, արտասուքն աչքերին, Թափուեցին առաջը։ Կանայք ու մարդիկ, ձեռները երկինք բարձրացրած, աղաղակում էին. «Ո՛վ սուրբ Գէորգ, քո զօրութիւնին մատաղ, մեր տէրն ու պահապանը դու ես, այս տաք ջրին մի հով ջուր ածա՛, մեր լաց ու աղաղակը լսի՛ր, մեր երեխաներին խղճա՛»։ Այնուհետև հոգևորական դասը, բոլոր ժողովրդի հետ՝ գիւղի չորս կողմը Թափօր տալուց յետոյ, սուրբ Գէորգի աջը տարան եկեղեցի և սեղանի վրայ բազմեցրին։

Երեք օր սուրբ Գէորգը մնաց Աշտարակ։ Երեք օրից յետոյ՝ սուրբ Գէորգի մասունքը ինչ հանդէսով որ բերել էին, նոյն հանդէսով ետ տարան։

Այն իրիկունը, երբ սուրբ Գէորգի մասունքը տարան, մի փոքրիկ ամպ Արագածի գագաթից վեր կացաւ, դէպի Մասիսը գնաց։ Ամպը քիչ-քիչ շատացաւ, երկնքի երեսը Թղպեց ու կէս ժամից յետոյ մի այնպիսի անձրև եկաւ, որ աշխարհ շինեց ցեխ ու ցալթլախ. երեք օր միմեանց վրայ չկտրուեց անձրևը. այգիներն էլ կշտացան, տաւարի արօտն էլ լաւացաւ, քարքարոտ տեղերն անգամ մէկ Թիզ կանաչեցին, բոխն էլ դուրս եկաւ, արտերն էլ իրանց կարգին յառաջ եկան։ Թրթուրը հօ՝ այնպէս փչացաւ, որ նշանն էլ չէիր գտնիլ։ Ամեն մարդու բերանից փառք ու շնորհակալութիւն էր լինում Աստուծուն. ամենքն ուրախ էին, ամենքի սիրտը տեղն էր ընկել։

32. Ե՛Կ, ԳԱՐՆԱ՛Ն ԱՆՁՐԵՒ...

Ե՛կ, գարնա՛ն անձրև, թափուի՛ր յորդառատ
Ցրտացած երկրի սառ կրծքի վրայ.
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշէ ազատ,
Թո՛ղ նրա կրծքին ջերմ կեանքը եռայ։

Երկա՛ր նա տանջուեց դառնաշունչ ձմրան
Ցուրտ կապանքներում, քեզ ըսպասելով.
Նա շա՛տ համբերեց, կենսատու գարնան
Քաղցր կարօտը ջերմ փայփայելով։

Թափուի՛ր, ո՛վ անձրև, ինչպէս մարգարիտ,
Ինչպէս երկնառաք ցօղը կենսաբեր,
Ոռոգի՛ր դաշտեր, անտառ ու հովիտ,
Կանաչով պատի՛ր լեռներ ու ձորեր։

Թո՛ղ յորդանալով աղբիւր ու գետակ,
Սառցէ շղթաներ անահ խորտակեն,
Դուրս գան ափերից, վազեն համարձակ,
Ազատ խոխոջան, ազատ կարկաջեն։

Թո՛ղ քեզ լոյս-արև ժպտայ սիրավառ
Եւ որպէս երկնից հաշտութեան նշա՛ն
Քո կաթիլներում փայլուն ու պայծառ
Նա սիրով կապէ կարմիր ծիածան...

Ե՛կ, գարնա՛ն անձրև, թափուի՛ր յորդառատ
Ցրտացած երկրի սառ կրծքի վրայ.
Թո՛ղ նորից երկիրն շունչ քաշէ ազատ,
Թո՛ղ նրա կրծքին ջերմ կեանքը եռայ։

33. Ա Մ Պ

Յուլիսի տօթային օրերից մէկն էր։ Արեգակը անխնայ կերպով այրում էր։ Հրաբորբոք օրը անտանելի էր։ Ամեն առարկայի վրայ տիրում էր թմրութիւն և տաղտկութիւն։ Թռչունները լռել էին. ծառերը ցած էին թողել իրանց ոստերը. թառամել էին սիրուն խոտերը և կպել էին գետնին։ Այլևս լսելի չէր լինում դաշտային ծաղիկների ուրախ շշունջը. նրանք խոնարհեցրել էին իրանց գլուխները և կամաց-կամաց մեռնում էին ծարաւից։ Կովերը, ձիերը, այծերը հազիւ հազ շարժւում էին։ Չորս կողմում ամեն ինչ լուռ էր, ոչ մի ձայն չէր լսւում...

Մի կողմում, օդի ջերմութեամբ լցուած տարածութեան վրայ, երևում էին խրճիթներ. այնտեղ մարդիկ տըխրութեամբ նայում էին դէպի ժլատ երկինքը, որ նրանց անձրև չէր տալիս։ Այդ սգաւոր գիւղերի մէջ այլևս չէն լսւում ո՛չ ծիծաղ, ո՛չ կատակներ և ոչ ուրախ երգեր։ Մինչև անգամ երեխաները, թուլացած օրուայ տապից, մոռացել էին իրանց խաղը, սուս էին կացել և թափուել էին մարագներում...

Երաշտութիւնը սարսափելի դժբախտութիւն է շինականի համար, որ ապրում է միայն դաշտային դառն աշխատանքով։ Երաշտութի՛ւն — դա մի դանդաղ մահ է հազարաւորների համար, մահ աղէտալի և սովատանջ։ Նա աղքատացնում է մինչև անգամ նրանց, որոնց մօտ փոքրիշատէ պահպանուել է ուտեստի հին պաշարից... Շինականները հասկանում են այդ և տրտմութեամբ են նայում երկնքին։

Ամբողջ երկու ամիս նրանք ողորմութեան են սպասում երկնքից,— բայց դեռ ոչ մի կաթիլ անձրև չկայ...

Այրուեց խոտը. այրուեցան անտառները. նիհարացան, լղարեցին տաւարները։ Մարդիկ յուսահատուած թափառում են որպէս ուրուականներ...

Արդէն միքանի անգամ բարի քահանան սուրբ մասունքներ, խաչ ու պատկեր իւր հետ առնելով՝ հանդաստան կատարեց անտառների և դաշտերի շուրջը, Աստուծուց անձրև խնդրելով։ Շինականների ջերմեռանդ բազմութիւնը հաստատ հաւատով և արտասուախառն աղօթքներով շրջապատել էր նրան։ Զօրաւոր է հաւատը այդ խեղճ ու համբերող մարդկանց մէջ։

Ահա բաց-կապտագոյն երկնքի վրայ երևաց ամպի մի փոքրիկ թափանցիկ պատառ։ Նա նմանում է մի սպիտակ թաշկինակի, որ հազիւ է նշմարւում։ Նա կամաց լողում է, կարծես վախենալիս լինի... Տառապեալ շինականները տեսան նրան և նրանց վշտալի սրտերում ծագեց յոյսի մի պայծառ նշոյլ... Մօտ է փրկութիւնը սովատանջ մահից... Բայց փոքրիկ է ամպիկը, գուցէ մի բոպէից յետոյ կորչի երկնքի անսահման կապուտակութեան մէջ... Ո՛չ, նա չի դաւաճանիլ. նա կըցօղէ երկիրը բարեբեր անձրևով։

Սպիտակ ամպիկը մեղմ սիրով նայում է անբախտ գիւղերի վրայ, տխուր խրճիթների վրայ, և հետզհետէ աճում է, հաւաքում է իւր ուժերը, որ փրկէ սովատանջներին։

—Իզուր ես աշխատում, փաղաքշելով ասում է նրան արեգակի կիզող ճառագայթը. թո՛ղ նրանք տանջուեն, դու ինչո՞ւ ես հոգ տանում նրանց կեանքի համար։ Դու կանգնած բարձրում, փայլում ես ոսկու մէջ, իսկ նրանք այնտեղ, ներքևում, թաւալւում են փոշիների մէջ։ Քեզ ինչ պէտք են նրանք։ Դու կ՛ոչնչանաս, կըմեռնես, նրանց ազատելով։ Մի՞թէ աւելի լաւ չէ քեզ համար՝ լողալ երկնքի

կապուտակութեան մէջ, խաղալ մեզ հետ, սլանալ հողմերի թևերի վրայ և զուարճանալ կեանքով։

Իսկ սպիտակ ամպիկը դէմքը խոժոռեց և դժգոհութեամբ երեսը շուռ տուեց արեգակի ուրախ ճառագայթներից։ Նա սկսեց աճել և մթին գոյն ստանալ։ Վերջապէս բոլորովին ծածկեց արեգակի շողշողուն ճառագայթները և ականջ չդրեց նրանց ձանձրալի խրատին՝ թէ կըմեռնես կ՛ոչնչանաս... ինչո՞ւ ես դու հոգ տանում ուրիշների համար, մտածի՛ր միայն քո մասին... ապրի՛ր միայն քեզ համար...

Ամպը ականջ չդրեց իւր օդային բարեկամին և շուտով այնքան աճեց, որ դարձաւ ահագին սև մէգ, որ սիրալիր կերպով ցած էր իջնում թշուառացած դաշտերի և տխուր ծառերի վրայ։ Լսելի եղաւ խուլ դղրդիւն, որ հետզհետէ սաստկանալով, սկսեց որոտման մի հարուածը միւսի ետևից աւելի բարձրաձայն տարածել նիհար անտառների, հեռաւոր լեռների մէջ և, օձի նման գալարուելով, նշմարուեց կայծակը... մի անգա՛մ ևս, մի անգա՛մ ևս... Տեղաց առատ զովացուցիչ անձրև։ Երկար հեղւում էր նա, ոռոգելով ամէն մի արմատը տոչորուած խոտերի, տխուր խնձորենու, համբերատար ընկուզենու, սգաւո՛ր ուռենու, և նրանք ագահութեամբ ծծում էին նրա զովացուցիչ կաթիլները... Ծառերն սկսեցին ազատ շունչ առնել. խոտերը կանաչ գոյն ստացան. ծաղիկները վեր բարձրացրին իրանց գլխիկները. թռչուններն սկսեցին ծլվլալ. երեխաները դուրս թափուեցան դէպի փողոցները և սկսեցին վազող վտակներից լճակներ կազմել։ Կեանք ստացան գիւղերն ու դաշտերը։

Ամպը, կատարելով իւր բարի գործերը, ճշմարիտ է, մեռաւ, ցած թափուելով փրկարար անձրևի ձևով, բայց նա մեռաւ հաճելի մահով։ Նրա կեանքն սպառւում էր

ժպտալով, երբ նայում էր զուարթացած ծառերին, պայծառ խոտաբոյսերին, ուրախ ծաղիկներին։ Եւ նա, կորչելով երկնքի ընդարձակ տարածութեան վրայ, զգում էր, որ մեռնում է ոչ առանց օգուտ բերելու. կանանչ խոտը, յարութիւն առած բնութիւնը, շինականների ուրախ դէմքերը — նրա գործերն էին։

Այնուհետեւ ամպը բարակ շերտով սկսեց առաջ լողալ. Թռչունների ուրախ ձայները, ծաղիկների ու դաշտային խոտաբոյսերի սօսափման անուշ մեղեդին առաջնորդում էին նրան, մինչեւ նա աննկատելի կերպով անհետացաւ երկնքի անսահման կապուտակութեան մէջ։ Նա կորաւ այնտեղ, վերեւում, իսկ կաթիլների ձեւով սկսեց ապրել այստեղ, ներքեւում, ամեն մի թուփի, բոյսի, ամեն մի փոքրիկ կենդանու մէջ...

34. ԱՄՊԵՐ

Հայոց երկնքով ամպեր են վազում
Խիստ քամու ձեռից.
Սեւ-սեւ ամպերը սարերի նման
Անցնում վերերից։
«Կացէ՛ք, ո՜վ ամպեր, ինչո՞ւ էք փախչում,
Անձրեւ չէք թափում.
Մեր ծարաւ արտեր օրեր են համրում
Ու ձեզ սպասում։
Քամի՛, դու՛ քամի, խղճա՛ արտերին,
Թո՛ղ այդ ամպերին,
Կանգնեն ու թափեն անձրեւի շիթեր,
Ջրեն մեր արտեր։

Քամին հանդարտեց, մեղմ անձրեւ թափուեց,
Արտերը ջրեց.
Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց
Ու հասկեր բռնեց։
Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց,
Խնդաց ու ասաց.
«Փա՜ռք Քեզ, ո՜վ Աստուած, որ տուիր մեզ հաց.
Չենք մնալ քաղցած»։

35. ԱՄԱՌԸ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Ա

Ճաշուայ շոգն անց էր կացել։ Սար ու ձոր գլուխները նորից բարձրացրել էին, որ փոքր շունչ առնեն։ Արեգակը Մասիսի քամակից աչքը հանդարտ բաց էր արել, մունջ-մունջ Երեւանու բերդին էր մտիկ տալիս եւ ուզում էր, որ կամաց-կամաց մայր-մտնի։

Թանձր խաւարը, սեւ մառախուղը եկել, բոլոր դաշտերի, ձորերի երեսը բռնել, օդը ծանրացրել էր։

Թռչունը տեղից չէր ուզում շարժուել, հաւը բնից գլուխը հանել։ Ամեն տեղից ոտքը խաղաղուել, ամեն տեղից ձայն ու ձոր լռուել, պապանձուել էր։

Ջուր ջրողը առուի վրայ էր թեք ընկել, քնած մնացել, վարուցանք անողը՝ ճհանդումը, այգեպանը իւր ծառի տակին՝ շուաքումը քունն մտել, հանգստացել։ Մարդ, կին, մանուկ գիւղերումն էլ չէին երեւում։

Հօտաղներն իրանց գութանի լծկանը բաց էին թողել, լուծը յետ արել, ու մէկ առուերի տակ գութանը մէկ կողմը, եզները միւս, ջրերի ափին վէր էին թափուել, քաղցը քուն մտել։ Նախիրը մէկ դաշտում, ոչխարի հօտը

միւս, շուաք տեղը նստել, ծնօտ ծնօտի էին քսում, փընչացնում, արօճ անում։ Հովիւն էլ, գլուխը մէկ քարի վրայ դրած, ննջել, աչքը կպցրել էր, որ շոքը քաշուի թէ չէ՝ վեր կենայ, հօտը իրիկնահովին մէկ լաւ խոտաւէտ տեղ տանի, արածացնի։

Արթուն շների մէկը այս ցցի վրայ, մէկը միւս թմբի ծայրին, կամ հովուի ոտի տակին՝ գլուխը դրել, նօթերը կխտել, մարաղ է մտել, որ թէ գող, գայլ, գազան սիրտ անեն, մօտենան, մէկէն-իմէկ վրայ թռչի, պատառ-պատառ անի, իւր տիրոջ ոչխարները պահի։ Մէկ կանաչ խոտ, մէկ դալար թուփ կամ մէկ ծաղիկ ո՛չ մէկ տեղ չէր երեւում, որ մարդ հոտն առնի, կամ երեսին մտիկ տայ, սիրտը բացուի ու իւր ճանապարհի երկարութիւնը մոռանայ... Այսպէս էր սար ու ձոր, դաշտ ու հանդ չորացել, խանձուել, պապանձուել։ Միմիայն խոտերի ցօղուններն ու թփերի սուր-սուր ծայրերն էին այստեղ-այնտեղ ցից-ցից գլուխնին բարձրացրել, տխուր, տրտում, մոլորուած, պաշարուած կանգնել, մնացել։

Սեւ-սեւ գիշակեր ագռաւները կամ վախլուկ տուղաշներն էին հէնց մենակ մնացել, որոնք այստեղ մէկ քարափի ծայրի, մէկ բուրջի գլխի, կամ թէ չէ՝ ճանապարհի միջում իրար գլխի հաւաքուել, նստոտել, կամ պտոյտ էին գալիս, իրար կտցահարում, իրար թեւերից քաշում, որ մէկի գտած որսը ձեռից խլեն, բաժին անեն։

Օձ, կարիճ, մողէս, բզէզ ու ինչ կերպ գազան ասես՝ մորեխ, մժեղ, հանդէս էին բաց արել. ո՛րը մէկ թփի տակից, ո՛րը մէկ քարափի գլխից, ո՛րը խոտերի միջին՝ կամաց-կամաց ժաժ գալով, պոչ ու գլուխ իրանց քաշելով, կամ ծլունգ լինելով, էլ յետ սուս անելով, կամ գետնի, ապառաժի վրայ սողալով, փշտացնելով, շուացնելով, փըշշացնելով, ծվվալով, ծղրտալով, ոտն էին ելել, ուզում

էին իրանց արեւի ձէնն ածեն, ո՛րն էլ իւր բնի առաջին արեւկող անելով, գլխները հանել, մունջ-մունջ ականջ էին դրել, սուր-սուր աչքները ցցել, պլլացել, այս կամ այն կողմն էին մտիկ տալիս, որ ոտքը խաղաղուելիս՝ դուրս գան, միքիչ շունչ քաշեն, իրանց կերը ճանկեն, էլ ետ իրանց բունը մտնեն, էլ ետ գնան քնեն, հանգստանան։

Բացի պատածակի արանքից կամ քարի ծայրից էլ մէկ անճար բու, գլուխը վէր թողած, քիթ ու պռունկ կխտած, ծանրացած, գետնին էր նայում, իւր սեւ օրը ողբում։ Հաւի թշնամի ուրուրն էլ՝ թեւերը փռած, ճանկերը սրելով, բացուխուփ անելով, կտուցը սրբելով կամ կուրծքը քըջըջելով, երկնքի երեսին, գլուխը կրծքի տակին քաշ գցած, սուր աչքերն այս կողմն այն կողմն էր գցում, պտըտում, պատրաստւում, որ մէկէն-իմէկ, ական թօթափել, վայր վազի հաւի լպոր ճուտերի գլխին, որոնք մօր թեւերի տակին կամ մօր գլուխը քորելով, թեւը քաշելով, ծվծվալով, կտկտալով, կամ կտուց կտցի տալով, մօր կուրխտալուն, ծլվլալուն ականջ դնելով, սուսուփուս նըստում էին իրար հետ, կամ քջուջ էին անում...

Բ

Այսպէս մեռել-լռել էր բնութիւնը ու ոչ մէկ շփլթու մէկ տեղից չէր լսւում։ Միմիայն հեռու տեղից մէկ բարակ քամի երբեմն-երբեմն փչում, ծառի տերեւները սըլսլացնում, ժաժ էր գցում ու գոլ-գոլ մարդի երեսին, բերնին քնքուշ ձեռը քսում, շուտով անց կենում ու փշերի, խոտերի, քարափների, ձորերի մէջը մտնում։

Ինչպէս ծխի մէջ խրուած՝ հեռու տեղից դաշտի գիւղերը, հանդերը, փոսերը մթնած, լռուած, ինչպէս սեւ ամպի կտորներ կամ այրուած, խանձուած տեղեր, այստե-

ղից, այնտեղից սևին էին տալիս ու խառնիխուռն երևում։

Արաքսը, ինչպէս մէկ նետ օձ կամ արծաթի գօտի, արևմտեան կողմիցը, ձորերի միջիցը իւր սուր, լուսափայլ ճակատն ու գլուխը բաց էր արել ու մրմունջ, լուռ, հանդարտ գալիս՝ Մասիսի փէշին միքիչ խփում, շփում էր ու էլի խեթ-խեթ նայելով, նրան սպառնալիք տալով, ձէնըձոր անելով, գլուխը պտըտելով, գնում, Զանգու ու Գառնի գետերը իւր ծոցն առնում և խաղալով, խայտալով, վըշվշտալով՝ հեռանում քոյրերի հետ ու պռունկ պռունկի, լանջ լանջի, քամակ քամակի տուած, իրար գլխի, երեսի ձեռ քսելով, փաղաքշելով, հանաք անելով, աչքերը խփում, նզզում ու Շարուրի տափարակ ծոցումը ծեծուած, ջարդուած քուն մտնում։

Այս տխուր հրապարակի չորեքշուրջը՝ աչքդ որ բաց չես անում, մէկ էլ ես տեսնում, որ երբեմն երկինքն ամպակալած՝ ուզում է որ սար ու ձոր ոտնատակ տայ, Արագածի, Մասիսի ու միւս սարերի գլխին բամբաչի, գետին խցկի, որ համարձակւում են իրանց գագաթն այնպէս բարձր վեր քաշել, որ բոլոր ամպերը վերևը ոտը բռնելու տեղ չունենալով, իրանց երկինք մօրիցը խռոված, վէր են գալիս ու նրանց գլխին քուլայ-քուլայ դիզւում ու այնպէս իրար վրայ նստում, որ շատը, տեղ չունենալով, միւսներին քռինչ է տալիս, բոթբոթում, դուրս է գցում ու նրանց տեղը բռնում։

36. ԾԱՌ ԵՒ ԱԳՌԱՒ

Լայն և արձակ դաշտերուն խոր
Բարձրացել էր մի ծառ խոշոր,
Որուն ոստեր վարսագեղ
Տարածուէին չորս դին շըքեղ.

Կ'ապրէր քաշուած, առանձին,
Կ'աճէր, մեծնար օրէ-օր
Կանանչելով նորէնոր։
Տեսնաս մի օր
Կռկռալէն սևկընկուղ
Ագռաւ մ'եկաւ առտու կանուխ,
Եւ թառելով ծառին վերև,
Զորս դին տեսաւ միայն տերև։
—«Ծմ՛ռ, ծմ՛ռ, ասաց, խղճամ ըզքեզ,
Քեզ նման ծառ տեսած չեմ ես.
Ո՛չ մի պտուղ գեղեցիկ,
Ո՛չ քաղցրահոտ մի ծաղիկ.
Առաւօտէ մինչ իրիկուն դու կ'երերաս քո օդտին,
Աշխարհք մէկ դին, դու միւս դին»։
Դեռ ագռաւին կըծու խօսքեր
Վերջացած չէր,
Ճամբորդ մ'եկաւ ծեր, գըթոտ,
Յոգնած նստաւ ծառին մօտ.
Արձակելով հագագ մի խոր
Սրբեց ճակատն իւր քըրտնաթոր.
«Մեանիմ զօրքիդ, կ'ասէր, Ա՛ստուած,
Որ խոնարհիս առ մեզ 'ի ցած.
Այս լայնածիր դաշտերուս խոր
Բուսուցել ես ծառ մի խոշոր,
Որուն զով-զով ըստուերին տակ
Ճամբորդն հանգչի, Քեզ տալով փառք»։
Ջերմ մաղթանքներ ալևորին
Շատ դուր եկաւ ծառի սըրտին.
«Ա՛գռաւ, ասաց, կծու խօսքիդ 'ի փոխան,
Ա՛ռ ծերուկէն պատասխան.
Տես որ ծառն իսկ ամուրի

Կարող է տալ պըտուղ բարի
Ամէն տարի»։

37. ԿԱՐԿՈՒՏ

Անցել էր գարուն, ամառ էր մտել, բիւր անթիւ բարիք գիւղացուն բերել. կանաչ արտերի ցորենն ու գարին, կորեկն ու հաճար ուռել ու լցուել, ոսկեգոյն ներկուել, և այգիների խնձորն ու տանձը, դամբուլն ու ծիրան հասել, կարմրել, ծառերը բռնել. իսկ սեխաստանի սեխն ու ձմերուկ, դդումն ու գազար փորերն ուռցրել, մէջքի համ առել...

Գետը պարզուել էր, խոտը երկարել, հօտեր, նախիրներ դաշտերը փռուել. ծառերի գլխին և կամ արտերում թռչունք բուն դրել, ձագուկներ հանել...

Սողում էր օձը խոտերի միջին. մեղուն թռչկոտում ծաղկից դէպ՚ ծաղիկ. կրիան էլ վիզը հանած պատեանից, քաշւում, քաշկըրտւում թփերի տակին...

Պայծառ էր օրը. պայծառ էր երկինք. ուրախ են թռչունք, անասունք, մարդիկ...

Բայց այն ի՞նչ ամպ է, որ սարի գլխից գալով, գալիս է ու իրան յետքից, կարծես շղթայած, քաշում է բերում մեծ ու սև ամպեր՝ ամեն տեղ փռում...

Մի րոպէ ևս, խորին մթութիւն ամեն ինչ պատեց. որոտաց երկինք, երկիր դղրդաց. փայլակն ու կայծակ իրարու խառնած, մարդկանց սրտերը ահ ու դող գցեց։ Մռընչաց քամին, շարժուեցին ծառեր. կաթեց, կաթկաթեց, յորդ անձրև թափուեց. անձրևի ետքից սառցէ գընդակներ, չըը՜խք ու չըը՜խք, երկիր գլորուեց։ Թափւում է, թափւում, սար ու ձոր ծածկւում. ո՛չ դաշտ հարցնում, ո՛չ այգի ասում։

«Ա՜խ, կարկո՛ւտ, կարկո՛ւտ, կանչում են մարդիկ...
Այս ի՞նչ պատիժ է, խնայէ՛, երկինք»...

Ծերը ծնկաչոք, արտասուքն աչքին, Աստուած է կանչում խնայել երկրին. պառաւը հանած երկթէ կասկարան բակն է շպրտում ու նզով կարդում. հարս ու աղջիկներ, պատի տակ շարուած, սուր դանակներով կարկուտ են կտրում՝ երկնքին նայում. իսկ նրանց մօտը մշակ երկրագործ յուսահատ կանգնած, ձեռը իւր ծոցում, ա՛խ-ա՛խ է քաշում, գլուխը շարժում...

Բայց հանդերի մէջ այս ի՞նչ շփոթ է ու իրարանցում... Հօտը ցրուել է, նախիրը փախել, ձիերը խրտնել, դէս ու դէն ընկել. թռչունքը թռել, բունի մէջ պահուել, հովիւ, հորթարած, փայտահատ, կովարած, ամենքն էլ իրանց գործերը թողած՝ թփերի տակին մնացել են սառած..

Դադարեց կարկուտ, որոտը լռեց. ամպերի ճեղքից արևը նայեց. երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ, բայց տխուր փայլ էր, որ նա ստացաւ։

Այգեպանն վազեց իւր այգին մտաւ, դէս ու դէն նայեց, մնաց քարացած.—ծառեր տերևթափ, ճիւղեր կոտրատուած, բոլոր պտուղներ կարկտահար եղած։—«Վա՜յ իմ աշխատանք, ափսո՛ս իմ այգի», ասաց հեռացաւ, աչքերը լցուած...

Արտատէրն գնաց, իր արտը հասաւ։ Թուլացան ոտներ, սևացան աչեր, երբ տեսաւ հասկը ջարդուած, փշըրուած, հողին հաւասար, անգութ հեղեղից աւազով ծածկուած. «Կորա՜ւ իմ յոյսը, փչացաւ իմ արտ», ասաց ու գնաց սիրտը մորմոքուած...

Դրսում մնացած թռչունքն էլ թռան, գտան իրանց բուն. բայց ա՜խ, ի՞նչ տեսան. բունը աւերուած, ձագուկ-

ներն ընկած, չորսից միայն մէկն ողջ էր մնացած. իսկ այն միւսները թափուած ցեխի մէջ, անշունչ ընկել են, աչքները փակել՝ ո՛րի գլուխը, ո՛րի թեւը կարկտից ջարդուել։

Ծըլվըլաց թռչունը, սըգաց իւր ձագուկ,
Դէս ու դէն ընկաւ՝ արեց ողբ ու սուգ...
Այսպէս ամէն տեղ, որ մի ժամ առաջ
Տիրում էր յոյս, կեանք, ցնծութիւն անբաւ,
Այժմ յաջորդեց, կարկտի շնորհիւ,
Յուսահատութիւն, տառապանք ու ցաւ...

38. ԱՂՕԹՔ

«Տէր, եթէ շրթունս իմ բանաս՝
Բերանն իմ երգեսցէ զօրհնութիւնս քո»։

Գիշեր ու ցերեկ, Տէր, Քո սուրբ անուան
Մենք պիտի լինինք յաւէտ փառաբան.
Թէ արեւ ծագէ,—քարոզ Քո փառաց,
Թէ գիշեր հասնի,—պարգեւ ողորմած.
Մենք խոնարհ հոգով Քո մեծ բարութեան,
Կանգնած ենք՝ պատրաստ լինել սրբաբան։

Բայց մարդիկ վաղուց, մոռցած Քո խրատ,
Դահիճ են դարձել եղբարցն հարազատ.
Ուրացած անմահ խօսքըդ մարդասէր,
Հզօրն աշխարհին դարձել է արդ տէր.
Եւ փոքրը չունի այլեւս բերան՝
Կարդալ սաղմոսը Քո օրհներգութեան։

Ընդունիր արդ, Տէր, մեր խունկն աղօթից,
Տո՛ւր մեզ վայելել խոստացած բախտից՝

Թէ վաստակեալներն ու բեռնաւորներ
Պիտի գտնեն հանգիստ երկնանուէր.
Եւ բա՛ց մեր շրթունք, Տէր Ադոնայի,
Երգել օրհնութիւնն Քո անբաւ փառքի։

39. ԱՅԳԵԿՈՒԹ

Ցերեկը գիշերին յաղթելով՝ ցրիւ տուեց նրա թանձր մութը. մարդկանց քունը փախաւ-գնաց աշխարհի տակը. Սուրբ-Խաչի մեռելոցին, երկուշաբթի օրը, արեւը դեռ նոր էր իւր գլուխը հանել, որ հինգ-վեց հարիւր հոգի կարբեցիք ու հանավանքցիք, կթոցները շալակներին, մի երկու ցամաք հաց միջին, մտեցան Աշտարակի այգիները։ Աշտարակցիք այսօր մի մարդ են ուղարկում բանուորներ բռնելու։ Դեռ արեւը նոր էր բարձրացել, որ այնքան բանուորներից մէկը չմնաց. բոլորը ցրուեցան այգիները։ Քաղն սկսուեց։ Խաղողի տեսակները՝ իծապտուկը, քիշմիշին, ասկեարին, միսխալին, կոթռունջը, եզնաչքը, ճիլալը, նզանդարին, մէկ խօսքով՝ ինչքան պատուական խաղողներ կային, բոլորը թմթլում էին, բոլորը քաղող էին կանչում։ Կեանքը եռում էր այգիներում։ Քաղող քաղողի, ուտող ուտողի, տանող տանողի էր։ Աղքատների, չունեւորների աչքն էլ լիքն է այդ օրերը։ Սրանից յետոյ, մինչեւ այգեկութի վերջը, ինչ որ այգետէրերի դրութիւնն է, Աստուած ո՛չ չհանց տայ. մարդ որքան էլ հարուստ լինի, հագին այնպիսի ցնցոտի կըլինի, որ ծըլաքներն ուռենու տերեւի պէս երկար-երկար քաշ ընկած կըլինին. բոլորը պատառոտուել են խաղողի թփերի մատներիցը կամ տաշտակներիցը։ Կանայք, որոնք տանն են քնում, առաւօտանց շտապելով իրանց բանը կըպրծնեն ու՝ դէպի այգին. մէկ խօսքով՝ մի մաքուր շոր չես գտնիլ,

որ շիրտ եղած, կուպը դարձած չլինի։ Հէնց որ քաղից պրծան, բոլոր խաղողը ջոկջըկեցին. պահունին տուն տարան՝ կախան անելու, իսկ մնացածը հնձանը հաւաքեցին։ Քաղը վերջանալուց յետոյ խաղողատէրերը և նրա վարձուորները ոտները հանեցին, խտակ լուացին, Աստուծու անունը տուին, մտան առագաստի մէջն ու խաղողը տրորեցին. տրորելուց յետոյ դիրք դրին, ժողովեցին և վրան տախտակներ շարեցին, որ քամուի։

Մարդու սիրտ փառաւորւում է, երբ որ քաղցուն, աշտարակցու սրտի ուրախութիւնը, նրա տարեկան ապրուստը, առու է լինում առագաստի միջով ու թափւում տաքարը։ Աշտարակցու սրտին զանգի ձայնից քաղցր է թւում այն գլնգլնգոցը, որ լսւում է տաքարից՝ քաղցուն նրա մէջը լցուելիս. բայց մանաւանդ որքան մեծ է լինում նրա ուրախութիւնը, երբ որ, մին էլ ես տեսնում, տաքարը շրթունքներից հետ լցւում և քաղցուն եկած տեղից յետ է դառնում, առագաստումը լճանում, խմաց տալով իւր տիրոջը, թէ ինձ կրէր, պրծիր, կարասներդ լցրու։ Քանի ու քանի փառք և գոհութիւն է վեր ուղղում մարդ այդ ժամանակ դէպի Արարիչը։

40. ԱՇՈՒՆՔ

Աշունքացաւ։ Արարատեան դաշտի կանաչ այգիները, որոնք մարդու սիրտ ուրախացնում էին իրանց գեղեցիկ տեսքով ու անուշ հոտով, Աստուծուց փռած կանաչ խալիչաներով, հազար տեսակ ծաղիկներով, հիմա այն դրութեան էին, որ մարդու սիրտ չէր տալիս, որ նրանց վրայ նայէ. խաղողի թփերը, որ մի օր գլուխ գլխի կպցրած՝ իրանց սաթի նման ողկոյզներով մարդիս բերանի ջուրը բերում էին ու նրա երեսին ծիծաղում, հիմա մեռած

մարդկանց գերեզմանների նման հողի կոյտերով էին ծածկուած։ Ծառերը, որ մի թեթև քամուց իրանց տերևներով տարուբերւում ու մարդու տխրած սիրտն էլ բաց էին անում, հիմա մերկացած, մի տերև էլ չես գտնիլ վրաները — չոր-չոր չոփերն են երևում միայն բիզ-բիզ։ Ջրերի ափերը, որ բազմերանգ խոտերի և ծաղիկների շատութիւնով մարդու ախորժակը բաց էին անում, հիմա հէնց իմանաս թէ ութ օրէն մեռած մարդու երես են դարձել։ Ամէն բան էլ փոխուած՝ մի տխուր տեսարան է ներկայացնում։

Բայց գործի տէր մարդիկ նոր են սկսում ուրախանալ, այգու բաներից պրծել են ու դադարել. ունեցող-չունեցողն էլ հիմա տանիցը մաքուր հագնուած է դուրս գալիս։ Մարդ չկայ, որ իրան կարողութեան չափ գինի չունենայ։ Ով որ հոգս ունի, ծախում է գինին ու իրան տունը նորում, ձմեռուայ պատրաստութիւնը տեսնում։ Մի գիւղացի իւր ցորենի աւելորդը, միւսը իւր գինու ու արաղի մի մասը, երրորդը իւր ձեռատունկ ծառաստանի կորուածքը՝ ամեն մարդ իւր առատութիւնից մի բաժին վաճառում, իրանց միւս պակասութիւնները ծածկում են։ Ում հասած աղջիկ կամ տղայ ունի, շտապում է հարսանիք անել։ Գիւղացու ուրախութիւնները, մեծ մասամբ, աշնան սկզբներումն են լինում։

41. ՁՄԵՌ

Բարիկենդան էր։ Ձիւնն եկել, դիզուել, սար ու ձոր բռնել էր։ Պարզըկայ գիշերն այնպէս էր գետինը սառցրել, որ ամեն մէկ ոտը կոխելիս՝ հազար տեղից տրաք-տրաքում, ճրճրում, ճաքճրքում էր և մարդու մարմինը սըսըռացնում, ձայն տալիս։ Ամեն մէկ ծառի ճղներից, ամեն մէկ տան

բաշխից՝ հազար տեսակ սառուցի լուլայ, հազար տեսակ ձիւնի քուլայ՝ կախ էին եղել ու բիզ-բիզ իրար վրայ սառել։ Հէնց գիտես սար ու ձոր կամ նոր էր ծաղկել, կամ նոր ծերացել՝ մահուան դուռն ընկել։ Թռչուն, գազան, անասուն, սողուն՝ որը փէտացել, այստեղ-այնտեղ վայր էր ընկել, որն էլ վաղուց, ամսով առաջ, բունը մտել՝ ձայնը կտրել, պաշարը վայելում, գարնան գալուն էր սպասում։ Գետերի, առուների երեսը սառուցը մէկ գազ եկել, հաստացել, իրար վրայ դիզուել և այնպէս էր ջրի, աղբիւրի բերնին հուպ տուել, որ մօտերին կանգնողը միմիայն նրանց խուլ ձայնն էր լսում, որ սառուցի տակին տխուր-տրտում քչքչում էր ու էլ յետ այստեղ, այնտեղ կամաց-կամաց ձայնը կտրում, պապանձւում, սառչում։

Արեգակն այս առաւօտ որ քնատեղիցն ու աղօթարանիցը գլուխը չբարձրացրեց ու աչքը աշխարհի վրայ չգցեց, շողքը (ճառագայթները) սարերի գագաթին, դաշտերի գլխին այնպէս էր փայլում, պսպղում ու սառցի, ձնի հետ խաղում, ծիծաղում, կանաչ ու կարմրին տալիս՝ որ հէնց իմանաս ադամանդ, զմրուխտ, եաղութ ու հազար տեսակ անգին քարեր լինէին՝ դաշտերի, սարերի գլխին, երեսին, կրծքին փռած։ Սարերի սառը բուքը, ձորերի դառնաշունչ քամին այնպէս էր հրապարակ բաց արել, գոռում, փչում, հոսան անում, ձիւնի թեփը իրար գլխով տալիս, որ ճանապարհորդի քիթ ու պռունգը կպցնում, ճաքացնում, երեսը պատռում, գլխին հազար անգամ խըփում, աչք ու բերան լցնում, շատին էլ կամ ձորերը գցում, խեղդում կամ ձնումը թաղում, շունչը կտրում, կամ ոտ ու գլուխ փէտացած, ճանապարհից խռկում, սար ու ձոր գցում, խեղդում կամ քարէքար էր տալիս։

42. ԻՄ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

Տունը, ուր ես բնակւում եմ, մի բարձր և երկար շինութիւն է։ Նա շատ նոր չէ և գտնւում է Շուշի քաղաքի մի հեռացած ծայրում, բաժանուած միւս տներից մեծ ու խոր ձորով, որ սկսւում է նրա հիւսիսային կողքից։ Այդ ձորը շատ մռայլ տեսք ունի։ Գարնանային հեղեղները տարէցտարի քանդում, խորացնում են նրան. դարիվայրը, որ սկսւում է տան պատերի մօտից, աւելի և աւելի ուղղաձիգ է դառնում։

Իմ վարձած երկու սենեակների առջև կայ մի փոքրիկ դատիկոն։ Այդտեղից երևում է մեծ բլուրը, որի դարիվայր լանջերի վրայ խիտ կուտակուած են տները։ Բայց միշտ իմ ուշադրութիւնը ամենից շատ գրաւում է մեր տան ներքին յարկը։ Այդտեղ ամեն անգամ աչքիս երևում է սևացած մռայլ պատը մի փոքրիկ պատուհանով և նոյնպիսի դռնով, որ բացւում է դէպի ձորը։ Սկզբում ես կարծում էի, թէ այդտեղ նկուղ է, ուր պահւում են անպէտք բաներ։ Բայց շուտով իմացայ, որ դա բնակարան է մի փոքրիկ ընտանիքի՝ մի այրի մօր և մի փոքրիկ աղջկայ։ Վերջինիս շատ անգամ էի տեսնում շէմքում նստած, գլուխը ցած գցած, մենակ խաղալիս։ Նրա անունը Հեղինէ էր...

Բարձր, երկար տան միւս սենեակներում կենում են միքանի ուրիշ տընկիցներ։ Ահա դրանք էին իմ հարևանները։

Ձմեռն է։

Տխուր ու ցուրտ օրերը անփոփոխ յաջորդում են միմեանց։

Ձիւնն ու ցեխը բոլորովին արգելում են տանից դուրս

գալ։ Տաք վառարանը թմրացնում է անդամներդ, իսկ ձմերային երկար գիշերները բոլորովին ծուլացնում են մենակ մարդուն, որ սովոր է անփոփոխ ընկերութիւն վարել մի կոյտ գրքերի և մի գրչի հետ միայն։ Ձմեռը իւր սառը կնիքը դրել է այդ մշտական ընկերների վրայ։

Տաղտկալի միանմանութիւնը մաշում է ինձ։ Ի՜նչ կլինէր դրութիւնս, եթէ հարևան սենեակում չապրէր մի բազմամարդ ընտանիք, բաղկացած գլխաւորապէս փոքրիկ արարածներից։ Մի պատ միայն բաժանում է ինձ նրանցից,—բարակ պատ, որ սակայն չէ կարողանում անջատել իմ հոգին այն ուրախ, անհոգ և մշտածիծաղ կեանքից, որ նրա միւս կողմումն է տիրում։ Լուսաբացին այնտեղ արդէն ոտքի է լինում կանգնած այդ աղմկալից աշխոյժ կեանքը, որ լռում է միայն ձմերային գիշերուայ կէսին։ Անընդհատ լսւում են ծիծաղի, ուրախութեան, ոտինների ձայներ, լսւում են մանկական երգի կցկտուր, խառնիխուռն հնչիւններ. երբեմն լինում է և պար։ Ծիծաղում է ընտանիքի մայրը, ծիծաղում են երեխաները, ուրախութեան ձայներ է արձակում խուլումունջ փոքրիկ տղան։ Ուրախութիւնը սրտի գործ է, անպատճառ լեզու չի հարկաւոր նրան արտայայտելու համար։

Այդ կենդանի աղաղակների ժամանակ գործել չի կարելի, և ես լուռ նստում եմ և ականջ դնում. լսում եմ պատի քամակին տիրող իրարանցումը, որ հոգում է օրուայ ապրուստը և հէնց այդ պատճառով զուարթարար, հրապուրիչ է ինձ համար։ Լսում եմ և ինքս էլ ուրախանում, մինչև անգամ սկսում եմ երգել։ Բայց լինում է ժամանակ, երբ երգեցողութիւնը խանգարում են ծանր ու զգոյշ քայլերը, որոնք անցնում են սենեակիս մօտով։ Ընտանիքի հայրն է դա, որ գալիս է տուն ծանր աշխատանքից հանգստանալու։ Եւ յոգնած անդամներին ուրիշ հանգստու-

թիւն չկայ, բացի այդ աղմուկով լիքը սենեակը։ Երջանիկ մարդ։

Երեկոն մօտենում է։ Մոխրագոյն ամպերի տակ հետզհետէ հաստատւում է խաւարը։ Ես դուրս եմ գալիս դստիկոն՝ ծառայիս կանչելու համար։ Ձիւնի առատ տարափը թափւում է մեծ եռանդով. ձորը արդէն մթնել է, աւելի ևս տգեղացնելով իւր կերպարանքը։ Կիսամթութեան մէջ ես նկատում եմ մի մարդկային պատկեր, մի ուրուական, որ ձորի խորութիւնից բարձրանում է նեղ զառիվեր շաւղով, որ դեռ նշմարելի է ձիւնի մէջ։ Նրա մարմինը խոնարհուած է մի ծանրոցի տակ, քայլերը դողդոջուն. Նա քաշ է տալիս իւր անհագին ասիական կօշիկները, միևնոյն ժամանակ ոյժ է գործ դնում յետևից եկողի համար էլ, որ կպած է նրա կանացի հագուստի փէշից։ Ծառայիս մոռանում եմ, ուշադրութիւնով նայում եմ այդ պատկերին, որ նոյնինքն աղքատութիւնն է։ Ահա նա բոլորովին դուրս եկաւ ձորից և կանգնած է փոքրիկ դռան առաջ։ Դա ներքին յարկի բնակչուհին է, այն միայնակ կինը։ Գլխի վրայ կրում է լուացքի անհագին կապոցը. իսկ նրա յետևից եկողը աղջիկն է՝ Հեղինէն։ Փոքրիկ արարածը լռիկ-մնջիկ հեկեկում է. նրա գլուխն ու դէմքը փաթաթած են ցնցոտիներով. նա հիւանդ է։

Խեղճ...

Նրա համար պառկելու մի տաք անկիւն չկայ... ո՜չ մի տեղ...

43. ՍԱՌՆԱՄԱՆԻՔ

Ջրմեռն է, ձրմեռ, սիրո՜ւն երեխէք,
Ջրմեռն է, և դուք դողում, մրսում էք.
Բայց դուք մենակ չէք. ես էլ եմ մրսում,
Ես էլ եմ ձեզ պէս դողում, սարսռում։

Եւ գիտէ՞ք արդեօք ինչ է ձմեռը,
Այդ պատկառելի համարուած ծերը։
Ո՜հ, մի՛ հարցնէք, ես սարսափում եմ,
Երբ դըրա արարք մէկ-մէկ յիշում եմ.
Այդ անիրաւը, ուր ոտք է դնում,
Մահ է տարածում ամէն կողմերում.
Երեսին առած ծերունու դիմակ,
Մեզնից ծածկում է բուն դէմքն այլանդակ։
Շատ ժամանակ չէ ինչ որ դա եկաւ,
Եւ դուք լաւ տեսաք, թէ ինչե՛ր արաւ.
Դըրա երկիւղից գետը քար կտրեց,
Բռչքըռչան առուն լըռեց, պապանձուեց,
Դալար բոյսերը թըռան, փէտացան,
Նախշուն հաւքերը թըռան, հեռացան.
Բայց էլի շատին իր ճանկը գըցեց,
Բուք, բորան արաւ, բոլորին խեղդեց,
Սիրուն վարդենու թուփը չորցըրեց,
Սոխակի լեզուն տակից կըտրեց...
Ջըրաղաց չըկայ—ջուրը սառել է.
Ճանապարհ չըկայ—ձիւնը կապել է։
Թէ մարդ, թէ տաւար միակերպ քաղցած,
Ողբում-լալիս են, մահուան դուռն ընկած։

Օրը կարճացել, գիշերն երկարել,
Լոյսը նուաճուել, խաւարն է տիրել,
Երկինքն ամպապատ, գետինքը սառած,
Գարունը հեռու, ցուրտը կատաղած...
Այսպէս է ահա՛ սոսկալի ձըմռան
Ալիքով ծածկած պատկերը դաժան...

Ցուրտ է, սաստիկ ցուրտ, սիրո՛ւն երեխէք.
Եթէ ինձ նման դուք էլ մըրսում էք,

Եկէ՛ք՝ միասին մի հնար գըտնենք,
Ձըմրան ճանկերից մեր գլուխն ազատենք.
Ես իմ բազմամեայ հասակիս փորձով,
Դուք ձեր մանկական անարատ մտքով,
Եթէ կամենանք, խելք-խելքի կըտանք
Եւ, ինչից ասես, կըրակ կըստանանք—
Կրակ լուսատու, պայծառ, անըստուեր,
Որ տաքացընէ սառնեղէն սըրտեր,
Որ կենդանացնէ զօսացած ձեռներ,
Որ հալեցընէ սառցապատ լեռներ...

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

(Կենդանական աշխարհից)

---

44. ՄԱՐԴՈՒ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Մի անգամ մարդու մարմնի անդամները վիճեցին միմեանց հետ և վճռեցին այլևս չծառայել իրար։ Ոտներն ասացին՝ ինչո՞ւ մենք պէտք է կրենք մեզ վրայ ամբողջ մարմինը. թող նա իրան համար ուրիշ ոտներ շինի և ման գայ, որքան կամենում է։ Ձեռները նոյնպէս ասացին՝ մենք այլևս չենք կամենում ուրիշների համար ծառայի պաշտօն վարել, շինեցէք ձեզ համար ուրիշ ձեռներ և թող նրանք գործեն։ Բերանը փընթփընթաց՝ հապա ես յիմար եմ, ինչ է, որ ոչինչ օգուտ չունենալով՝ ստամոքսի համար սկսեմ կերակուր ծամել, որ նա յետոյ, պարոնի նման ձգուած, մարսէ նրան. չէ, թող իրան համար ուրիշ բերան գտնէ. Ես այսուհետև էլ չեմ կամենում նրան ծառայել։ Աչքերն ևս շատ էին զարմանում, որ իրանք պէտք է նայեն ամբողջ մարմնին և շարունակ հսկողութիւն անեն։

Այսպէս խօսեցան միմեանց հետ մարդու մարմնի բոլոր անդամները և վճռեցին այլևս միմեանց չծառայել։ Բայց գիտէք ինչ պատահեց։ Որովհետև ոտները չէին կամենում ման գալ, ձեռները դադարեցին գործ շինելուց, բերանն էլ չէր ուտում և աչքերը փակուեցան, ապա ամ-

բողջ մարմինը, անսնունդ և անշարժ մնալով, սկսեց թուլանալ, նիհարել և փոքր էր մնացել, որ մեռնէր։ Բոլոր անդամները, որոնցից կազմուած էր մարմինը, ծանրացան և աւելի վատթար վիճակի մէջ կ'ընկնէին, եթէ չհասկանային, թէ որքան անմիտ է իրանց վարմունքը։

—«Ո՛չ, վատ է այս տեսակ ապրելը», մտածեցին նրանք, հաշտուեցան և սկսեցին ըստ առաջնոյն միասին և միաբան գործել։ Այնուհետև ամբողջ մարմինն էլ ուղղուեց, նորոգուեց և առողջ, ուժեղ դիրք ընդունեց։

45. ԿԱՐԱՊԸ, ԶՈՒԿԸ ԵՒ ԽԵՉԱՓԱՐԸ

Երբ ընկերաց մէջ միութիւն չըկայ,
Ոչ երբէք նըրանց գործն առաջ կ'երթայ.
Գործ էլ մի՛ կոչիր դու այն աշխատանք,
Այլ անտանելի վիշտ ու չարչարանք։

Մի օր Կարապը, Զուկն ու Խեչափար,—
Չեմ գիտում ինչպէս-որ գտան իրար,—
Մի բեռնաբարձ սայլ տանիլ կ'ուզէին,
Երեքը մէկէն լծուեցան սայլին.
Երեքն էլ արիւն-քրտինք են մտնում,
Սակայն իւր տեղից սայլը չէ շարժւում։
«Զարմանք, ասում են նըրանք մէկ մէկու.
Չըգիտենք ինչու
Չենք կարողանում շարժել այս սայլը.
Ո՛չ ճամբան է վատ, ո՛չ ծանըր բեռը»։
Հապա չես ասի՝
Կարապն ըսկսեց դէպի վեր քաշել,
Խեչափարը յետույետ,
Զուկն իւր կողմից դէպի գետ։

Ծուռը ծով էր, կամ թէ ծուխ էր իրաւունք,
Այն թողունք.
Բայց բանն այս է որ
Հէնց մինչև այսօր
Սայլն այնտեղ է բեռնովը.
Այսպէս կ'ասէ Կրիլովը։

46. Ա Ր Ա Մ Ը

(Արտաքին զգայարանք)

Արամը շատ շուտ զարթնեց, բացեց իւր աչքերի վարագոյրները՝ երկար ու թուխ արտևանունքը. Նրա յետևից շարժուեցին, բարձրացան աչքի ծածկոցները—շարժական կոպերը։ Արեգակի ճառագայթները ներս մտան սենեակը, լուսաւորեցին պատուհանում դրած ծաղկամանը և պատի վրայ կախած փոքրիկ գանգրաւոր մանուկի պատկերը, որոնց վրայից արտափայլելով՝ ընկան Արամի փոքրիկ աչերի ոսպի վրայ, անցան ջրային մասի միջով և պատկերացան ցանցաթաղանթի վրայ։ Այնտեղ նեարդային մոխրագոյն թելերը յափշտակեցին նրանց և հաղորդեցին գլխի ուղեղին, որի միջնորդութեամբ իսկոյն ամենայն բան իմացաւ տանուտէրը—հոգին։

«Ա՜, արդէն լուսացել է և ինչպէս գեղեցիկ առաւօտ է», ասաց Արամը և իսկոյն վեր թռաւ անկողնուց։ Նա ձեռներով շփեց իւր գեղեցիկ, դուրս ցցուած ճակատը և արագապէս սկսեց հագնուիլ։ Հագնուելուց յետոյ նա շտապով ձեռներն ու երեսը սառը ջրով լուացաւ և մաքուր երես-սրբիչով սրբեց։ Արամը սառը ջրի շօշափումից աւելի ևս զուարթացաւ, կենդանացաւ։

Այդ րոպէին էր, որ օդի արագ հոսանքը ներս մտաւ

նրա ականջը, ցնցեց խողովակի առաջը կապող թմբկամաշկը և նրա յետևից շարժուեցին երեք փոքրիկ ոսկրները՝ մուրճը, սալը և ասպանդակը։ Այս փոքրիկ շփոթութիւնը ականջի հեղանիւթին շարժողութիւն պատճառեց, որի միջի քնքուշ նեարդը՝ այդ շարժողութիւնից գրգռուելով, յանձնեց դրա տպաւորութիւնը ուղեղին։ Արամը եռանդագին կոչեց. «Ա՜խ, ինչպէս քաղցր է երգում մեր պարտէզում թռչնակը»։

Արամը մօտեցաւ լուսամուտին, գլուխը դուրս հանեց դէպի պարտէզ և կամենում էր զուարճանալ թռչունի գեղեցիկ երգով. բայց այդ րոպէին ծաղկային անուշահոտ փոշիով լիքը օդը, ներս մտնելով նրա մաքուր քթածակերից, շօշափեց այնտեղ տարածուած լորձային մաշկը։ Ծաղկի փոշիները գրգռեցին նրա մէջ ճիւղաւորուած նեարդերը, իսկ սրանք այդ տպաւորութիւնը հաղորդեցին մայր ուղեղին և իմացրին նրան, թէ ինչ է պատահում իւր շուրջը։ Լեզուի նեարդերը շարժուեցին և Արամը ուրախագին բացականչեց. «Ի՞նչ գեղեցիկ անուշահոտութիւն է բարձրանում մեր պարտէզի ծաղիկներից»։

Արամը կամենում էր դուրս գնալ պարտէզ, փունջ կապել այդ անուշահոտ ծաղիկներից. բայց այդ րոպէին օդը մերձակայ սենեակից մօտեցրեց նրա շրթունքներին և լեզուին սուրճից, սերից և պատրաստի նախաճաշիկից բարձրացած խոնաւութիւնը։ Նրա բերանում առատ լորձունք գոյացաւ. բերանի և լեզուի ծծիկների նեարդերը յափշտակեցին այդ խոնաւութիւնը, հաղորդեցին գլխի ուղեղային գանգուածին և տանուտէրը—հոգին, կարծես, ասաց Արամին. «Նախաճաշիկը պատրաստ է, իսկ դու ուտելու ցանկութիւն ունիս»։ Արամը ուրախ մտաւ սեղանատուն, վազեց, ողջունեց իր մօրը. Նրա ձեռների նեարդերը շարժուեցին և ահա նա մատներով շօշափեց, թէ

որքան փափուկ է այն հացը, որ նա վերցրեց և սկսեց ախորժակով ուտել։ Նախաճաշելուց յետոյ նա զուարթագին խաղում ու վազվզում էր պարտէզում և ծաղիկների տեսքով ու նրանց անուշահոտութեամբ զմայլում էր։

47. Գ Ա Ր Ե Գ Ի Ն Ը

(Գլուխ)

Գարեգինը երբ ծնուեց, շատ փոքր էր և թոյլ, ինչպէս առհասարակ թոյլ են լինում բոլոր նորածինները. նրա գլուխը այս ու այն կողմն էր տատանւում, որովհետև դեռ ոսկորներ չունէր։ Գլխի աճառները (ղըրճ-ղըրճուկները) իրանց ասեղնաւոր ծայրերով դեռ չէին միաւորուել միմեանց հետ։ Սկզբումը Գարեգինը միայն ճչում էր, իսկ փոքր ժամանակից յետոյ աւելի բարձրաձայն էր ցանկութիւն յայտնում ուտելու. նա այնպէս գոռում ու լաց էր լինում, որ կարծես ողջ տունը իրանն է. միևնոյն բանը նա անում էր, երբ անհանգիստ էր պառկած լինում, կամ երբ նրա բարակ ու կարմիր մաշկը փոքր ինչ ցուրտ էր զգում։ Նրա բերանի, լեզուի ու շնչափողի կապերը դեռ այնքան ամրացած չէին, որ կարողանային շրջապատողներին հասկանալի ձայնով արտայայտել նրա զգացմունքները։ Գլխի ուղեղն էլ դեռ այնքան ամրացած չէր. առհասարակ նրա գլուխը դեռ կանոնաւորուած չէր, այդ պատճառով էլ չէր կարողանում նրան գործ ածել, ինչպէս իրան պէտք էր և յարմար։ Գարեգնի բերանում դեռ ատամներ չկային. շրթունքները ձգւում էին դէպի ամենայն բան, որ մերձենում էր նրանց։

Բայց սակաւ առ սակաւ նրա վերին անշարժ ծնօտի

և ստորին շարժական ծնօտի վրայ լնդերքն սկսեցին ուռչել ու կարմրել և նրանց տակից դուրս երևեցան առաջին երկու կտրող ատամները, որոնք սպիտակ էին և գեղեցիկ։ Այն ժամանակ Գարեգինը աւելի էր աշխատում ամեն բան բերանը կոխել, որովհետև նրա լնդերքը սաստիկ քոր էին գալիս։ Գարեգնի մարմնի մէջ այդ ժամանակ շատ ֆոսֆոր ու կիր էր ժողովուել. նրա աճառներն սկսել էին պնդանալ, ոսկոր դառնալ. հոգին ևս սկսել էր իր առաջին գործողութիւնները։ Գարեգինն սկսեց ճանաչել հօրը, մօրը, ժպտալ նրանց երեսին... Բայց միևնոյն ժամանակ նա այժմ աւելի էր հիւանդանում, նիհարանում, գոռում, լաց լինում։ Այն սպիտակ ոսկորները, որոնք իրանց արմատից ծլում-շարւում էին նրա ծնօտի վրայ, ինչպէս երևում է, շատ էին անհանգիստ անում նրան։

Գարեգինը փոքր առ փոքր մեծանում էր։ Աստիճանաբար նրա գլուխը կանոնաւորուեց, կլորացաւ. դուրս ցցուած ճակատից սկսած դէպի բարձր՝ գագաթը, ծոծրակը և քունքերի մի մասը գանգրաւոր մազերով ծածկուեցին, որոնց արմատները գլխի մաշկի մէջ եղած մածուցիկ հիւթը ծծելով՝ ամրապէս հիմնաւորուեցին։ Այսպէս փոքր առ փոքր նրա երկու ծնօտների վրայ ատամներ դուրս եկան, որոնց երեսները ծածկուած էին մաքուր և սպիտակ էմալով (արծնապակի)։ Գարեգինն էլ այն մանուկը չէր. նրա դէմքն աւելի խոհուն կերպարանք էր ստացել։ Նրա փափլիկ, վարդագոյն շրթունքներն այժմ պարզ արտասանում էին ոչ թէ անկապ բառեր, այլ ամբողջ պարբերութիւններ։ Այժմ ոչ թէ նա չորեքթաթ էր անում, կամ առաջուայ պէս կարասիներից բռնելով էր ման գալիս, այլ ազատ ու համարձակ թռչկոտում էր ու խաղում։

Ահա Գարեգինը նստած է սեղանի մօտ և պատրաս-

տում է իւր դասերը. Նա այժմ գիտէ, որ թէև ինքը շատ մեծ չէ, բայց մարդ է, որովհետև այնպիսի հոգի և այնպիսի մարմին ունի, ինչպէս միւս մարդիկը։ Նա գիտէ և այն, որ իւր գլուխը բաղկանում է միքանի մասերից, որոնցից առաջին մասը կոչւում է դէմք, վերին մասը — գագաթ, յետին մասը — ծոծրակ, իսկ կողմնային մասերը — քունքեր։ Դէմքն ունի ճակատ, յօնքեր, աչքեր, քիթ, այտեր, թշեր, բերան և ծնօտ. վերջինս բաղկացած է վերին և ստորին ծամելիքից, որոնց վրայ շարուած են սպիտակ ատամներ։ Ատամների թիւը (չափահասներինը) 32 է։ Ատամները բաժանւում են՝ առաջնատամների, որոնք կտրող էլ են կոչւում. Նրանց աջ և ձախ կողմումը գտընւում են ժանիքները, իսկ ժանիքներից յետոյ — սեղանատամները, իւրաքանչիւր ծնօտի վրայ հինգ-հինգ ամեն մի կողմից։ Առաջնատամներով կտրում են ուտելիքը, ժանիքներով նրան բռնում կամ պատառոտում են, իսկ սեղանատամներով մանրացնում են նրան, որպէս երկանով, ուստի դրանք աղօրիք էլ են կոչւում։

Այս բոլոր բաներն այժմ Գարեգինը լաւ և գիտակցաբար իմանում, հասկանում է, նոյնիսկ կարող է հաղորդել ուրիշներին. բայց երբ նա աւելի կըմեծանայ և իւր կըրթութեան վրայ հիմնաւորապէս ուշք կըդարձնէ և երբ նրա վերջին սեղանատամներն էլ դուրս կըգան, որոնք կոչւում են հասունութեան ատամներ, այն ժամանակ նա շատ բան կըգիտենայ և աւելի հիմնաւորապէս։

48. Մ Ա Ն Ո Ւ Կ Ի Ն

Ինչո՞ւ այդպէս ամբողջ օրը
Զարչարւում ես, անչափ տանջւում,
Միթէ քեզ էլ մթնոլորտը
Ծանր է գալիս, ծանր է ազդում։

Դու մանո՜ւկ ես. դեռ քեզ շատ օր
Խոստանում է քո արևը.
Դու դեռ ժպտա՛, խաղա՛ անհոգ
Եւ հեզ ընկի՛ր մօրդ գիրկը,
Ու թոթովի՛ր մի երգ սիրուն
Քո մանկական անուշ ձայնով,
Ու միշտ յիշի՛ր դու այն անուն,
Որ պաշտում է քեզ իւր սիրով։
Մայրդ է, որ օր ու գիշեր
Անթարթ աչքով քեզ է հսկում,
Եւ կարդալով շատ աղօթքներ,
Երկար օրեր է միշտ խնդրում։
Խաղա՛, մա՛նուկ, թըրթռալով,
Քնի՛ր, զարթի՛ր սիրահեզիկ.
Մայրըդ կ'երգէ քեզ փարելով,
Որ շատ ապրիս դու երջանիկ։

55. Ա Ր Շ Ա Ւ Ի Ր Ը

(Ներքին գործարաններ)

Արշաւիրը առաւօտեան վաղ վեր կացաւ, մի բաժակ կաթ խմեց, հետն էլ մի կտոր հաց կերաւ ու գնաց ուսումնարան։ Նա վեր էր առել իւր պայուսակը, որի մէջ դրած էին նրա գրքերն ու միւս դասական իրեղէնները, և մտածում էր այդ օրուան դասերի վրայ. իսկ հացը, որ նա կերել էր, այդ րոպէին ճանապարհորդում էր նրա մարմնի մէջ։ Ատամները լաւ ծամել էին նրան, լորձունի բշտիկները նուրբ լորձունով պատել, իսկ փափուկ լեզուն շտապով ներս էր մղել որկորի մէջ։ Ճանապարհին նա քիչ մնաց որ ընկնէր շնչափողը, բայց փոքրիկ մսեայ

խցանը—կատիկը ծածկեց նրա անցքը և ծամած պատառը սահելով գլորուեց դէպի ցած և ընկաւ այն մսեայ պարկի մէջ, որ ստամոքս է կոչւում։ Այդտեղ տաք էր ու մութը և որ կողմը դառնում էր, ամեն կողմից նրան շրջապատում էր ստամոքսային տհաճելի հիւթը, որ կողքից պատրաստում է կարծր փայծախը։ Բայց նրան չէր վիճակուած երկար ժամանակ շրջել այնտեղ, որովհետև իւր ընկեր կաթի հետ ստամոքսային հիւթի մէջ լուծուելով՝ դարձաւ մի տեսակ թանձր խիւս։ Խիւսը ստամոքսի ստորին դռնով ցած իջաւ. այդտեղ նրա հետ խառնուեցին լեղիի կաթիլներ և աւելի կերպարանափոխուած՝ աղիքներով առաջ գնացին։ Այդ ուղին առաջ լայն անցք էր. փոքր առ փոքր նա նեղանում ու նեղանում էր և հէնց ինքը հիւթն էլ աստիճանաբար փոխւում էր։ Այդ նեղ անցքերից անցնելիս՝ նա կարմիր զգեստ էր հագել և իբրև արիւն այլևայլ երակներով վազում էր դէպի մարմնի ամեն կողմերը։ Արիւնը որքան հեռանում էր, այնքան իւր պիտանի մասերով սնուցելով մարմնի այլևայլ մասերը, ինքն ստանում էր նրանց անպէտք հիւթերը և նրա կաթիլներն աստիճանաբար մգանում էին։ Կարծր ոսկորներին մօտենալով՝ նա իւր դեղին գիճութիւնից նրանց էլ իրանց սնունդը տուեց—ֆօսֆոր և կիր։ Եւ ահա նա բոլորովին մգացած, ամբողջ մարմինը ման եկած, ուղեղի մեծագործութիւններին և շարունակ սեղմուող ու բացուող մկնամսերի գործունէութեանը ականատես լինելուց յետոյ, վերջապէս թափւում է այն աւազանը, որ երկու մուտք ունի և երկու ելք, և որին մարդիկ սիրտ են անուանում։

Սիրտը ձևով տանձի նման է։ Կաթիլ առ կաթիլ վերևից ու ներքևից ներս են մտնում ու դուրս են գալիս այդ մսեղէն պարկից արեան կաթիլները և նրա դռնակներն ուրիշ գործ չունին, բացի փակուելն ու բացուելը։ Սիր-

տը մսեղէն միջնապատով բաժանւում է երկու հաւասար մասերի՝ աջակողմեան և ձախակողմեան, որոնցից իւրաքանչիւրը նոյնպէս երկու բաժանմունք ունի՝ վերին և ստորին։ Անմաքուր արեան կաթիլները թափւում են սրտի աջակողմեան վերնասենեակը և, հրելով ու բանալով փոքրիկ դռնակը, մտնում են աջակողմեան սրտախորշը։ Բայց սիրտը անմաքուր արիւն չի սիրում, ուստի մկնամսերի անդադար սեղմուելով մի այլ ճանապարհով հալածում է նրան դէպի այն ընդարձակ թևերը, որոնք կազմուած են բազմաթիւ բշտիկներից։ Մարդիկ դրանց թոքեր են անուանում։ Այդտեղ կաթիլները հանդիպում են օդին, որով լցւում ու դատարկւում են թոքերը։ Օդը քթի և բերանի խոռոչներից արագապէս մտնելով, անցնում է դէպի թոքերի բշտիկները, շուտափոյթ նայում է նորեկ հիւրերին, որոնք փաթաթուած են մուգ վերարկուի մէջ, մօտենում է նրանց և նրա այրող ոյժը—թթուածինը յափշտակում է արիւնի մուգ ծածկոցը և դրա փոխարէն տալիս է նրան վարդագոյն զգեստ. այդ րոպէին սեղմւում են թոքերի բշտիկները և օդը արագապէս դուրս թռչելով միևնոյն ճանապարհով՝ տանում է իւր հետ արեան անպէտք մասը—ածխային թթուն։ Արեան մաքուր վարդագոյն կաթիլները, թողնելով թոքերը, նորից վերադառնում են դէպի սիրտը, բայց այժմ մտնում են նրա ձախակողմեան մասը—նախ վերին բաժանմունքը, ապա ստորին և այնտեղից դուրս գալով՝ դարձեալ սկսում են իրանց վաղեմի ճանապարհորդութիւնը։ Այդպիսով նրանք տալիս են Արշաւիրին կեանք, ոյժ և առողջութիւն։

Արշաւիրն ուսումնարանում աշխատում էր առանց իմանալու, թէ ինչ բաներ են կատարւում իւր ներսը. նա մինչև անգամ մոռացել էր, թէ ինքը հաց ու կաթն է կերել։

56. ՀԵՏԱՔՐՔԻՐ

«Բարի՛ եկար, հազա՛ր բարի, բարեկամ,
Ո՞ւր էիր՝ տեսնամ»։
—«Թագարանից է գալըս.
Չորս ժամ եղաւ մնդալըս։
Ամենայն կողմ պտըտեցի, պըրպտացի,
Բոլորը տեսայ, ոչինչ չըթողի։
Աշխարհումս ինչե՜ր են եղել,
Իրաւ խելքից, մըտքից վեր.
Ո՛ր կողմ նայես՝ արմանք-զարմանք, հրաշալիք.
Ո՛րն էլ գիտես՝ մէկը միւսից գեղեցիկ.
Ի՜նչ գազաններ, ի՜նչ թռչուններ,
Թիթեռնիկներ, բըզէզներ,
Ի՜նչ զատիկներ, ի՜նչ կերպ ճանճեր,
Որքա՜ն ոսկի եզնակներ՝
Ո՛րը կանաչ՝ զմրուխտի պէս,
Ո՛րը կարմիր՝ բուստի պէս.
Հապա մանրիկ բոռոռնե՜րը, հաւատա՛,
Գընդասեղի գլխիցն էլ շատ փոքրը կայ»։

«Հապա փըղի՞ն ինչ ասիր,
Ի՜նչ ահագին վիթխարի,
Հարկաւ մաքով կարծեցիր,
Թէ մի լեռ է սոսկալի»։

—Մի՞թէ փիղը այնտեղ էր»։
«Այնտեղ էր. ինչ, չըտեսա՞ր»։

—«Ափսո՜ս, ինչ ասեմ, ա՛ղպէր,
Փիղն աչքովս չի ընկել»։

57. ՀՐԱՇԱԼԻ ՏՆԱԿ

Ես մի հրաշալի տուն եմ ճանաչում, որի մէջ ամեն բան կարգաւորուած է և չունի ոչինչ պակասութիւն։ Նա ունի կանոնաւոր աղօրիք, ունի խոհանոց, ուր գիշեր-ցերեկ տաք կերակուր է պատրաստւում։ Տունը շատ մուտքեր և անցքեր ունի, որոնցով արիաջան ծառաները կրում են տաք կերակուրը դէպի նրա ամենայն անկիւնները։ Տունը մի հմուտ տնտես ունի. նա այնքան աշխատասէր է, որ գիշեր ու ցերեկ մի րոպէ չի հանգստանում. անդադար թրխկ-թրխկացնելով՝ նա իւր առոյգ և արագաշարժ ծառաներին մղում է այլևայլ կողմեր, ուր որ հարկաւոր է տանում կամ կերակուր, կամ ըմպելիք, կամ ջերմութիւն և կամ որևէ անկիւնը նորոգելու համար նոր նիւթ։ Տունն ունի ընդարձակ դահլիճ, ուր մաքուր օդը ազատ ներս է մտնում. ունի նոյնպէս երկու պայծառ լուսամուտներ շարժական փեղկերով։ Գիշերն այդ փեղկերը փակւում են, իսկ ցերեկը բացւում։ Տան մէջ ապրում է անտեսանելի տանտիկինը։ Թէև նրան չի կարելի տեսնել, բայց նա ամեն բան գիտէ և ամենի՛ն բարեկարգողը և կենդանացնողը նա է։ Նրա համար է հոգում տնտեսը, նրա համար են գործում փոքրիկ ծառաները. նա ինքն է նայում պայծառ լուսամուտներից. նա է բանում և փակում նրանց։ Գիշեր և ցերեկ քնել չգիտէ նա. նրա աչքերը—միտքը շատ հեռու են տեսնում։ Եթէ տանտիկինը դուրս է գնում տանից, այնուհետև ամբողջ տունը խոր քնով ծածկւում, թուլանում ու լռում է. տնտեսը դադարում է գործելուց, ծառաները կաշկանդւում են անցքերում և ամբողջ տունը խոր լռութեան մէջ մնալով՝ սառչում է և քայքայւում։ Բայց ո՞ւր է գնում տանտիկինը։ Նա գնում է այնտեղ,

որտեղից եկած էր. նա գնում է երկինքը։ Երկրի վրայ նա ժամանակաւոր հիւր էր. հեռացաւ հիւրը և նրա բնակարանը—մարմինը դրեցին մի այնպիսի արկղի մէջ, ուր ոչ կարելի է կանգնել, ոչ շարժուել և ոչ ուտել։ Արկղն էլ ամփոփեցին հողի մէջ և տունը քայքայուելով հող դարձաւ։

58. ԵՐԳԻՉՆԵՐ

Երեք երգիչ շնորհեց երկինք մեր երկրին,
Որ վշտերի և հիացման տաղերով
Նոքա այրեն և բորբոքեն մեր հոգին,
Մեր սրտերը յուզեն խօսուն լարերով։

Մէկը մատղաշ պատանի էր սիրավառ.
Նա մրտախոհ թափառում էր դաշտերում.
Նա երգում էր՝ սիրոյն ձօնած իւր քընար,
Մեզ ցընորքի վառ եդեմն էր նըկարում։

Միւսը առոյգ, հասուն այր-մարդ, քաջի պէս,
Իր քաջ երգերն ամբոխին էր նա երգում.
Շուկաներում միշտ բաց արած մեծ հանդէս,
Նա ամբոխին նոր կեանքի էր պատրաստում։

Իսկ երրորդը—ալեհրած մի ծերուկ.
Ջերմ հաւատով սուրբ տաճարն էր յաճախում.
Այնտեղ, ուր միշտ ջերմ ծխում են խունկ, կընդրուկ,
Նա իր երգով մեր սրտերն էր ըսփոփում։

Եւ վէճ բացուեց, անվերջ մի վէճ մարդկանցում,
Թէ երեքից որն է, իրաւ, մեծ տաղանդ,
Վիճում էին՝ արդեօք նոցա երգերում
Չի՞ զգացւում անհաւասար ոյժ ու խանդ...

Օ՜, ոչ... նոքա երգիչներ են համազօր,
Երեքն էլ մեծ, հանճարաւոր ընտրեալներ,
Միայն ունին երեք ուրոյն ձիրք ու շնորհ՝
Դիւթել, կըրթել և ըսփոփել մեր սրտեր...

59. ԿԱՊԻԿԻ ԵՂԲԱՅՐԸ

Փոքրիկ կապիկի մայրը վախճանուեցաւ և նա բոլորովին որբ մնաց։ Տխրադէմ նստած էր նա ծառի վրայ և իւր սև օրն էր լալիս։ Կապիկը գեղեցիկ չէր. նրա դէմքը փոքր էր և կնճռոտ, բուրդը վտիտ և ունէր չորս երկար ձեռներ։ Նա դեռ ևս չէր կարողանում մէկ ծառից միւսը ցատկել և նրանց վրայ բարձր ու ցածր անել՝ կերակուր ճարելու համար... Ինչպէս երևում է, նրան վիճակուած էր քաղցածութիւնից մեռնել, ինչպէս կըմեռնէր մի փոքրիկ մանուկ, եթէ մօր մահից յետոյ բոլորովին անտէրունչ մնար։ Ուրեմն ով պիտի հոգար մեր կապիկի համար։ Նրա ցեղակիցներն ապրում էին խմբերով, որոնց մէջ էր և նրա մեծ եղբայրը. սա ամբողջ խմբի մէջ ամենաճարպիկ խեղկատակներից մէկն էր և միքանի տարի շարունակ արդէն շատ աւերումներ էր անում անտառում։ Եթէ մի տեղ կռիւ պատահէր, պէտք է հաստատ իմանայիք, որ կռուողներից մինը նա էր։ Եթէ կապիկները ժողովուէին արշաւելու և կործանելու գիւղացիների սիմինդրի արտերը կամ ապատակելու նրանց այգիները, անպատճառ մեր կապիկի եղբայրն այս արշաւողներից առաջինը կըլինէր։ Այդ խեղկատակը տեսաւ իւր եղբօրը և բարձրացաւ դէպի նա։ Կարելի էր կարծել, թէ կամենում է փորձանք բերել նրա գլխին, կամենում է ցնցել ու վայր գլորել նրան ծառից։ Բայց ոչ։ Նա նստեց եղբօր կողքին և քնքշաբար բռնեց նրա ձեռքից։ Մանուկն սկսեց փարիլ նրանով և իւր առա-

ջին ձեռներով փաթաթուեց նրա պարանոցով, իսկ յետին ձեռները պատ տուեց մէջքին. նա մեծ կապիկի հետ վարւում էր ինչպէս իւր մօր հետ, իսկ վերջինս խնամում էր նրան իբրև ծնող. իւր կենդանի բեռը գրկած՝ նա թռչում էր մի ծառից միւսը, միջատներ էր որսում և կերակրում նրան. ջոկում էր նրա համար ամենահիւթալի պտուղներ. նրա հետ և յատկապէս նրա համար որոնում էր թռչունների բներ և հանում էր նրանց միջի ձուաները։

Երբ փոքրիկ կապիկը սակաւ ինչ մեծացաւ և ուժեղացաւ, այն ժամանակ նրա դաստիարակը ցոյց տուեց, թէ ինչպէս պէտք է ցատկել և վեր ելնել ծառը. սա սովորեցրեց նրան այն ամեն ճարպիկութիւնները, որ պիտի իմանայ իւրաքանչիւր կապիկ, եթէ կամենում է կուշտ լինել և չընկնել փորձանքի մէջ։

Մի անգամ փոքրիկ կապիկը ծարաւեց և եղբայրը տարաւ նրան սառն աղբիւրի մօտ։ Յանկարծ թփերի տակից բարձրաձայն հաչելով դուրս վազեց որսի շունը։ Բոլոր կապիկները, որոնք այնտեղ ներկայ էին, շուտափոյթ փախան այլևայլ կողմեր և թռչունների պէս թառ կացան ծառերի վրայ։ Միայն փոքրիկ կապիկը չկարողացաւ վեր բարձրանալ ծառը։ Երկիւղի առաջին րոպէին՝ նա ցատկեց մի բարձր քարի գլուխ և ամբողջ մարմնով դողում էր. իսկ չար շունը քարի մօտից կատաղաբար հաչում էր նրա վրայ։ Ահա հեռուից երևաց և որսորդը։ Խեղճ կապիկն անշուշտ կըկորչէր, եթէ եղբայրը նրան չփրկէր։ Երբ սա նկատեց, որ իւր սանիկը վտանգի մէջ է, իսկոյն յետ դարձաւ և համարձակ ընթացաւ դէպի քարը. յետոյ զայրացած նայեց շանը և այնպէս սպառնագին կրճտացրեց ատամները, որ նա չհամարձակուեց յարձակուել կապիկի վրայ։ Այսպիսով նա հասաւ իւր որդեգրին, գրկեց նրան և բարձրացաւ ծառը։ Որսորդը, զթաշարժուած նրա անձնանուիրութիւնից, չարձակեց հրացանը և այսպիսով փոքրիկ կապիկը մահից ազատուեցաւ։

60. ԿԱՊԻԿՆԵՐ

Ուրիշներից թէ խելքով առնես քեզ մի օրինակ,
Զարմանք չէ որ մեծ օգուտ շահիս ամեն ժամանակ.
Բայց թէ հետևիս մէկին կուրօրէն,
Վայ ու թուք ու մուր լսիր ամենէն.
Այս բանիս հաստատութիւն
Ա՛ռ քեզ ահա նոր պատմութիւն։

Ով որ կապիկ տեսած ունի՝ նա գիտէ,
Թ՚է այս վոխտ կենդանին
Ուրիշներին տընազ տալ շատ կըսիրէ,
Կ՚ուզէ նմանն անել ամեն տեսածին։

Աֆրիկէի մէջ կապիկը խիստ շատ է ու ցեղ-ցեղ,
Մի օր մի մեծ ծառի վըրայ ժողովւեցան միատեղ.
Ո՛րը վերևից, ո՛րը ներքևից,
Ո՛րն էլ ճղների տակից ու գլխից
Ծըկըրակում էր աչքը տնկած ու նայում,
Թ՚է որսորդի մէկն ինչ կերպով
Գետնի երեսին մի ցանց փըռելով,
Ինքը նորա մէջն էր գլորւում
Տակըն էր մտնում, վերև բարձրանում։

Ամեն կապիկ մօտինին հըրում, նըշան էր տալիս,
Եւ ասես թէ ականջին այսպէս լինէր ասելիս.
«Սըրա՛ն նայիր, եղբայրիկ, ի՛նչ է անում ժամերով,
Ի՛նչպէս ելնում-մտնում է ծամըռուելով, յոգնելով,

Մերթ պառկում է, երկարում և մերթ կըծիկ է դառնում,
Այնպէս որ ո՛չ ոտքերը և ոչ ձեռքն է երևում.
Մենք դըրանից, եղբայր, ինչո՞վ ենք պակաս,
Այդ արհեստը չունինք, սակայն ի՞նչ վընաս.
Եկէք, մենք էլ փորձ փորձենք,
Գուցէ իրանից անցնենք.
Նա հերիք խաղաց իւր ուզածին պէս,
Տեսնենք՝ երբ կ'երթայ—հեռացածին պէս...»։
Մէկէլ տեսնես իրօք ելաւ, մէկ կողմ գընաց որսորդը,
Այնտեղ թողեց իւր ցանցերով թակարդը։

«Շուտ անենք, ասին կապիկք իրարու.
Րոպէն չըկորցնենք, երթանք փորձելու»։
Իսկոյն ծառից վայր թափուեցան խևերը,
Ցանցի վըրայ շարուեցան նոր հիւրերը՝
Տակը մըտան, վըրան ելան,
Կըծկըւեցան, գըլորուեցան։

Կապիկների կանչ ու ճիչը աշխարհ բռնեց խնդալուց։
Բայց ի՞նչ փորձանք՝ թակարդի մէջ բըռնըւել են շատ վաղուց.
Չեն իմանում, ինչպէս ազատուին՝
Տակից դուրս գալու հընարը չունին։
Որսորդն էլ այդ էր կամենում.
Շուտով պարկեր է վեր առնում,
Գալիս՝ հիւրերին մօտենում։
Ո՞ւր փախչէին, ի՞նչ անէին,
Նըրա ձեռին գերի էին։
Բռնեց ամենքին,
Ծախեց թանկագին։

61. ՈՉԽԱՐ

Ոչխարը մի հանդարտ և անվրդով կենդանի է։ Բնութիւնը նրան պաշտպանուելու զէնք չի տուել, այս պատճառով նա մի թեթև որս է իւր բոլոր թշնամիների համար։ Ընտանի ոչխարներն իրանց վայրենի ցեղակիցների ճարպիկութեան և անվեհերութեան հետքն անգամ չեն պահել։ Ոչխարը մարդուս հետ միասին տարուել է աշխարհիս ամենայն մասերը, բայց սառը կամ տաք երկիրներ տանելը նրան ոչինչ օգուտ չի տուել։ Այսպիսով թէև բաւականաչափ փոխուել է ոչխարի արտաքին տեսքը, բայց ամենայն տեղ նա մնացել է նոյն անբաղդ ոչխարը։

Ոչխարի արտաքինը գեղեցկութիւնից զուրկ չէ. մարմնի և անդամների մեծութիւնը համապատասխան են. գլուխը տգեղ չէ, իսկ բարակ ոտները կոկ են և սիրուն։ Բայց ոչխարի կերպարանքը չունի արտայայտութիւն. աչքերն անիմաստ և անորոշ են նայում. ամենայն վտանգ նրան շփոթութեան, անգիտակցութեան և կաշկանդման մէջ է գցում, և ոչխարը կամ անմտաբար իւր տեղը կանգնած է մնում, կամ առանց մտածելու առաջ է վազում։ Նա փախչում է միամտաբար, գլուխը վեր բարձրացրած, առանց չորս կողմը դիտելու, առանց յետ նայելու. իսկ սա վատ նշան է թէ կենդանիների և թէ մարդկանց համար։ Հրդեհը, հրացանաձգութիւնը, որոտումն ու կայծակը բոլորովին շփոթում են նրան։

Ոչխարը սեփական կամք չունի. նա կատարելապէս ենթարկւում է առաջնորդողին՝ արու ոչխարին, հօտը պաշտպանող շանը, երկարամազ այծին և հովուի սրնգին։ Եթէ ոչխարների առաջնորդողը փարախից դուրս գայ և ցատկէ մի տեղով, միւս բոլոր ոչխարները, անգիտակցա-

բար նրան հետևելով, կըցատկեն. եթէ նա նեղ շաւղից ջուրը գլորուի, շատերը՝ նրան հետևելով, կըգլորուեն նոյն ջրի մէջ. Նրանք այդ ժամանակ ոչինչ չեն կամենում, բայց հետևում են իրանց առաջնորդողին, որովհետև սեփական կամք չունեն։

Ոչխարների մայինը համարեա միաձև է և անմիտ։ Ձին խրխնջում է համարձակ, ուժեղ և խելացի. նոյն եռանդով բառաչում է և եզը. իսկ ոչխարը մայում է անվստահ, երկչոտ, համարեա երեխայաբար։ Բայց չնայելով այս բանին, մայրը ճանաչում է իւր գառան ձայնը, իսկ գառը որոշում է իւր մօր մայինը հազարաւոր ձայների մէջ և երկուսն էլ անխափան գտնում են միմեանց։ Թըշնամու ձեռքն ընկնելով՝ ոչխարն անմռունչ տանում է ամենատեսակ տանջանքներ. նա հազիւ է ընդդիմանում, երբ մսագործը դաշոյնը նրա կոկորդն է կոխում։—Ոչխարին բարկացնելն էլ դժուար է. արու ոչխարն է միայն մի աննշան բարկութիւն արտայայտում։ Մինչև անգամ մայրական սէրը նրա սառնասրտութիւնը չի վրդովում. բոլոր կենդանիների մէջ միայն ոչխարն է, որ թողնում է յափշտակել-տանել իւր մայող գառը, առանց արտայայտելու ո՛չ գրկանք ու ցաւ, ո՛չ տխրութիւն ու խռովութիւն։

Բայց չնայելով այս անմեղ կենդանու բոլոր մտաւոր անընդունակութիւններին, նա է, համարեա, ամենաօգտակարը բոլոր ընտանի կենդանիներից։ Ոչխարը ամբողջովին մարդուս օգտին է ծառայում։ Նրա երկար և փափուկ բրդից պատրաստում են թէ նուրբ և թէ հաստ մահուդներ, որ մարդու ամենալաւ հագուստն է։ Նրա մորթուց տաք մուշտակներ են կարում. նրա ճարպից պատրաստած մոմերը մենք վառում ենք. դմակը իւղի տեղ ենք գործածում։ Նրա կաշուից կօշիկների համար պա-

տուական ապրանք է պատրաստւում. միսը համեղ կերակուր է. կաթնից շինում են իւղ և պանիր։

62. Ձ Ի

Ձին խելացի կենդանի է։ Մարդս նրանից շատ օգուտներ է ստանում։ Դուք նրան ամենայն տեղ կըտեսնէք՝ դաշտերում, երբ նա քաշում է արօրը.—ճանապարհներում, երբ նա ամենայն ջանք գործ է դնում, որ դառիվայրի տակից վերև հանէ բեռնած սայլը.—ախոռում, երբ նա ախորժակով ուտում է գարին.—արօտատեղերում, երբ ազատ արածում է ջոկի մէջ։ Բարի, չարքաշ, գեղեցիկ կենդանի է ձին։ Ապա մտաբերեցէք, թէ ինչ առանձնութիւններ էք նկատել նրանում։—Նրա գլուխը երկայն է, բայց գեղեցիկ. դնչի ծայրը դուրս ցցուած է, ականջները մանր են և դէպի վեր են նայում. երբ մի օտարոտի ձայն է լսում, կամ երբ քայլերից կամ ձայնից ճանաչում է իւր տիրոջը, նա խլըշում—վեր է ցցում ականջները։ Ճակատի վրայ ձին մի մազէ փունջ ունի. իսկ նրա գեղեցիկ ու խոշոր աչքերը որքան իմացականութիւն են արտայայտում։

Ուշադրութեամբ դիտեցէք և ձիու ատամները. առաջից նա ունի թիականման կտրողներ, որոնք վեց-վեց են իւրաքանչիւր ծնօտի վրայ. սրանցով է նա կծում-կտրում խոտը. իսկ յետին կողմումը նա ունի վեց-վեց հաստ ատամներ վերևից և ներքևից, որոնք ձիու սեղանատամներն են և այնպէս լայն են ու խորդուբորդ, որ կ'ասես աղօրիք լինին։ Եւ իսկ որ՝ ձին սրանցով աղում-մանրացնում է խոտը, դարմանը, գարին, որ յետոյ ստամոքսի համար դժուար չլինի նրանց մարսելը։

Ձիու պարանոցը կորանում է ինչպէս կարապինը. պարանոցի վրայ նա երկար բաշ ունի։ Նրա կուրծքը լայն

է ու դուրս ընկած, իսկ ամբողջ մարմինը կլորաւուն, երկարաձև. մէջքին նստելու տեղը տափակ է։ Եւ ինչպիսի վսեմ, գեղեցկատեսիլ ձիանք են լինում. նրանք արշաւում են այնպիսի թեթեւութեամբ, որ շատ անգամ մարդ չի նկատում, թէ ինչպէս են փոխում իրանց բարակ ու երկար ոտները։ Ձիու յետին ոտներն աւելի ուժեղ են. ում որ նա քացի է տալիս, շատ անգամ հէնց տեղն և տեղը անշնչանում է. գայլերն էլ են վախենում ձիու այդ հարուածից։ Ձին ամեն մի ոտի վրայ սմբակ ունի. սա միևնոյն է, ինչ որ մեր եղունգը, այնպէս որ եթէ կտրես նրա ծայրերից, ամենևին ցաւ չի զգալ։ Էլ հարկաւոր չէ յիշել ձիու գեղեցիկ երկայնամազ պոչը, որով նա զանազանւում է միւս միասմբակ կենդանիներից։

63. ԷՇՆ ՈՒ ՍՈԽԱԿԸ

Բացուել էր գարունն, սար ու ձոր ծաղկել,
Անուշ հոտն ու հովն ամեն տեղ բռնել.
Ամեն աշխարհից, հեռու տեղերից
Փախած թռչուններն իրանց բներից
Եկան ողջունել գալուստը գարնան,
Մայր ու ձագ նստած թըփերի վըրան։
  Պարկեշտ սոխակն էլ իւր այրուած սրտի,
Իւր սիրուն վարդի սէրն ու իւր մաքի
Կարօտն ու աշխոյժ բերան բերելով
Խոր ձորում նստած, վըշտերը լալով,
Նայում էր ջրին, իւր վարդի թփին,
Սպասում էր որ՝ բացուի սիրելին։
Բայց վարդն անիրաւ մընացել էր փակ.
Սոխակի սիրտը դարձել էր կըրակ։

Այս դառն րոպէին սատանի քամին
Որտեղից հանեց մեր կորած իշին.
Քունըն էր հատել, թէ կերը պակսել,
Գայլն էր յետ ածել, թէ տէրը դընքսել,
    Ականջներն խըլշած,
    Սարն-իվեր ընկած,
Վազեց ու հասաւ, դունչը վրայ բերեց,
Անմեղ վարդի թուփն ու կոկոնն բռնեց,
Փշրեց ու ջարդեց, արաւ կտոր-կտոր
    Ու ինքն վայր-ի՛ձոր
    Գլուխն առաւ գնաց։

Սոխակն այս բանը որ տեսաւ՝
    Եկաւ
    Վարդի վրայ կանգնեց,
    Իւր սուգն սկսեց.
«Աննմա՛ն իմ վարդ, ցանկալի՛ հոգոյս,
Սրտիս բերկրանքի ապաւէն ու յոյս,
Ինչի՞ դառն օրհաս հանեց քեզ աշխարհ,
Երբ ոչ-ոք գինըդ պէտք է չիմանար.
Երկինքն է տեղըդ, ինչի՞ ես մնում
Իշի կերակուր այս փըշի միջում.
Քանի փուշ ու էշ երկրից չեն պակաս,
Մտածում եմ որ՝ անտէր կըմնաս.
Կա՛մ այրիր դու ինձ, որ մի օր պըծնեմ,
Կամ թե՛ առ, թռչենք, երեսից մեռնեմ»։

  —Իմ սիրուն սոխակ, մի՛ այդքան ցաւիր,
  Կա՛ց մեր միջումը, քո վա՛րդը գովիր.
  Էշն աղբի մէջ է առել իւր ծնունդ,
  Նըրա հոտովն էլ առնում է սնունդ,

Քեզ ծառ ու ծաղիկ, քեզ վարդ, մանուշակ
Պարգևել է Տէրն, իմ ազնիւ սոխակ։

64. Փ Ի Ղ

Փիղը ցամաքային կենդանիներից ամենամեծը և ամենաուժեղն է և հեշտ է ընտելանում։ Նա 4—5 արշին բարձրութիւն և 6—8 արշին երկարութիւն ունի. մարմնի ծանրութիւնը 160 փթից աւելի է։ Փղի կաշին այնքան հաստ և կարծր է, որ հրացանի գնդակով անգամ դժուար է ծակել։ Նրա գլուխը մեծ է և փոքր ինչ երկայն. աչքերը մանր են և իմաստալի, ականջները լայն և կախ ընկած։ Փիղը վերին ծնօտի վրայ միայն երկու առաջնատամներ ունի. սեղանատամների թիւը զանազան է՝ մէկից մինչև երեք իւրաքանչիւր ծնօտի վրայ։ Ժանիքը երկու են, որոնցից իւրաքանչիւրը մինչև մէկ սաժէն երկայնութիւն է ունենում։ Բայց սրանք իսկապէս ժանիք չեն, այլ արու փղի երկարացած ատամները, որոնք շատ թանգ են և վաճառւում են *փղոսկր* անունով։ Իսկական ժանիքներ փղերը չունին, որպէս և միւս խոտաճարակ կենդանիները, և սրանով նրանք զանազանւում են իրանց ցեղակից *ամենակեր* խոզից։ Փղի ոտները հաստ են և իւրաքանչիւրի վրայ կայ հինգ կճղակ։ Սակայն նրա մարմնի ամենահետաքրքրական մասը *կնճիթն* է, որ նրա քթի շարունակութիւնն է և չափազանց շարժական։ Կնճիթը մի սաժէնից աւելի երկարութիւն ունի և ընդունակ է սեղմուելու, կարճանալու, երբ ինքը կամենայ։ Կնճիթը նրա համար մի այնպիսի գործածական և կարևոր անդամ է, ինչպէս մեզ համար մեր ձեռքը։ Նրանով փիղը կարող է վերցնել գետնից թէ ամենամեծ և թէ ամենափոքր բաներ. փիղը իւր կերակուրը նրանով է տանում բերանը,

նրանով կարող է պարանի կապը լուծել, փակած դուռը բանալ և կրկին փակել, շիշերի խցանները դուրս հանել և այլն։ Բացի այդ յատկութիւններից, կնճիթը սաստիկ ուժեղ է և նրա մի հարուածով փիղը հեշտութեամբ կարող է մարդ սպանել։ Նրանով մինչև հինգ փութ ծանրութիւն բարձրացնում է գետնից. իսկ իւր մէջքի վրայ 50—100 փութ ծանրութիւն կարող է տանել։ Փիղը վեց ձիու ոյժ ունի։ Երբ փիղը գնում է սովորական ընթացքով, ձին սրընթաց միայն կարողանում է նրա՛ յետևից հասնել. բայց փղերը կարող են նաև արշաւել և լաւ են լողում։ Փղերը բնակւում են մեծամեծ խմբերով, երբեմն մինչև 400 հատ միասին։ Նրանք տաք կլիմայի կենդանիներ են։ Փղերը չափազանց երկարակեաց են և ապրում են մինչև 200 տարի։ Նրանք կերակրւում են բոյսերով, ուստի շատ անգամ մեծ վնասներ են տալիս այն դաշտերին, ուր բրինձ է լինում ցանած։ Ընտանի փղերի պահելը մեծ ծախս է պահանջում. միջին թւով նրան օրական փութ ու կէս բրինձ են տալիս և այդքան էլ խոտ կամ տերև։

Ընտանեցրած փղերին մարդիկ գործ են դնում զանազան բաների համար, օրինակ՝ բեռն են կրում, նրանցով որսի են գնում. իսկ Հնդկաստանում նրանց վրայ բարձում, ման են ածում զօրքի թնդանօթները։ Հին ժամանակ փղերին պատերազմների ժամանակ ևս գործ էին ածում։ Փղերին սայլերում չեն լծում, այլ առհասարակ նրանց մէջքի վրայ փոքրիկ տուն են շինում և մէջը նստած՝ ճանապարհորդում են։ Նրանց քշելու համար գլխին նստում է փղապանը և սուր մուրճով գլխին խփում է, որ երթայ։ Փղապանի բոլոր իրաւացի պահանջները փիղը խոնարհաբար կատարում է և առանց բարկութեան կրում է արժանի պատիժը, բայց անիրաւացի և խիստ վարմունքի համար սաստիկ վրէժխնդիր է լինում։ Մի ճանապարհորդ

պատմում է, թէ մի անգամ փղապանը՝ փղի վրայ նստած, կոկոսի պինդ ընկոյզները իւր հաճոյքի համար կոտրում էր և ուտում։ Կենդանին համբերութեամբ տանում էր սաստիկ ցաւը, բայց միևնոյն օրը փողոցից անցնելիս, փիղը կանգնում է կոկոսի ընկոյզի կոյտի մօտ, կնճիթով վեր է առնում նրանցից մինը և այնպէս զարկում է նրանով իւր քշողի գլխին, որ նա մեռած վայր է ընկնում։

65. ԱՌԻՒԾ ԵՒ ՎԱԳՐ

Առիւծը, որին իւր վսեմ տեսքի, սաստիկ ոյժի և զարհուրելի ձայնի համար գազանների թագաւոր են կոչում, սովորապէս մութ դեղին գոյն ունի. Նրա մարմնի երկարութիւնը մօտ երեք արշին է, իսկ բարձրութիւնը— արշինուկէս։ Նրա ձէտը երկար է, ծայրը փնջամազ. պարանոցի վրայ ունի երկար, թաւամազ բաշ։ Էգ առիւծը բաշ չունի։ Առիւծը բնակւում է Աֆրիկայում և հարաւային Ասիայում։ Ամենամեծ առիւծները Պարսկաստանումն են լինում։ Առիւծը միևնոյն ժամանակ վեհանձն է. նա, ինչպէս ասում են, միայն քաղցած և բարկացած ժամանակն է մարդու վրայ յարձակւում. իսկ միւս կենդանիների վրայ յարձակւում է ոչ միայն քաղցած, այլև կուշտ ժամանակը։ Առիւծի ոյժը ցոյց տալու համար բաւական է ասել, որ թաթի մի հարուածով նա կարող է ձիու ողնաշարը կոտրել և եզանը գրկած փախցնել, ինչպէս գայլը փախցնում է գառանը։ Նա առաջ է գալիս մեծապանծ և և իւր որսի վրայ յարձակուելիս՝ չորս սաժէնաչափ ցատկումներ է անում։ Ահա թէ ինչ է պատճառը, որ երբ անապատի մէջ, կէս գիշերին, առիւծի մռնչիւնը ամպի նման որոտում է, բոլոր կենդանիները, նաև վագրը, շտապում են թագնուիլ։

Վագրը կենդանիներից ամենազարհուրելին և ամենաչարն է։ Նա ունի դեղնակարմիր գոյն, սև շերտերով։ Վագրը առիւծից քիչ փոքր է, բայց չափազանց ճարպիկ է և արագաշարժ. Նա ահագին ցատկումներ է անում և յարձակւում է ամենատեսակ կենդանիների վրայ, առանց զանազանելու և մարդուն, ոչ միայն իւր քաղցած, այլև կուշտ ժամանակը։ Ուժի կողմից վագրը պակաս է առիւծից, բայց յանդգնութեան կողմից նրանից գերազանց է։

66. ՎԱՆԻ ԿԱՏՈՒՆ

1. Շատերն են լսել Վանի կատուի մասին, բայց քչերն են տեսել և շատ քչերն են ուսումնասիրել նրան։ Այդ կատուն շատ սիրուն է, բրդոտ, գեղեցիկ, կլոր գլխով ու փայլուն, սիրուն աչքերով. Նրա բուրդը փռւում է մինչև ոտները և մարդս ախորժանքով է շոյում այդ խիտ, մետաքսանման մազերը։ Իմ հօրաքոյրը մի այդպիսի կատու ունէր և այդ կատուն մի օր երկու ձագ բերաւ։

2. Մենք նրան գտանք պառկած և ձագերին իւր գրկի մէջ ամփոփած։ Շատ սիրուն էին այդ ձագերը, բայց այդ օրը նրանք չէին շարժւում և մայրը լիզում էր նրանց։ Ես կամեցայ խաղալ նրանց հետ, հեռացրի մօրը և ձեռքս առայ միայն երկու խեղդած կատուի ձագեր... Որքա՜ն ցաւեցինք... Մայրը մօտեցաւ ձագերին, լիզեց, շարժեց նրանց և երբ տեսաւ, որ չէին շարժւում, մի քայլ հեռու գնաց, մեզ նայեց։ Մենք շոյեցինք նրան։ Նա կրկին մօտեցաւ, լիզեց իւր ձագերին և ես նկատեցի կատուի աչքերում արտասուքի կաթիլներ... Խե՜ղճ ձագուկներ. արու կատուն էր խեղդել նրանց։ Մայրը հանդարտութիւնով մեզ նայեց և, դուրս գալով, անհետացաւ։

Հօրաքրոջս մանուկները մի փոս փորեցին և ձագուկները թաղեցին։

3. Այդ օրը կատուն չերևաց այլևս. ես շատ փընտռեցի, բայց չգտայ։ Միւս օրը առաւօտեան նկատեցի, որ մի մոխրագոյն, գզգզուած կատու կանգնել է այնտեղ, որտեղ թաղեցին խեղդուած ձագուկները։ Զա՛ր, անգո՛ւթ կատու։ — Դա ձագուկների խեղդողն էր։ Աչքս դարձրի և միքանի քայլ հեռու, ծառի տակը, կծկուած տեսայ ձագերի մօրը, որ սարսափելի աչքերով արուին էր նայում։ Արուն նկատեց այդ, երկու ոտին գործեց և յետ փախաւ։ Էգը վազեց նրա յետևից և երկուսն էլ անհետացան։ Ես յետ դարձայ, բայց լսելով կատուների մլաւոցը, բարձր նայեցի և տեսայ, որ արուն ու էգը, միմեանց դէմ կանգնած, մլաւում էին՝ — խօսում էին։ Նրանք առաջ մեղմօրէն էին մլաւում. երևի էգը հաշիւ էր պահանջում արուից նրա արած անգթութեան համար։ Արուն արդարանալ աշխատեց։ — «Ո՛չ, գոռաց էգը կատաղի մլաւունով. դու անգո՛ւթ ես», ասում էր այդ մլաւոցը։ — «Էլ չեմ անիլ», գոչում էր արուն յանցաւորի ձայնով և պոչը շարժելով... Էգը մեղմացաւ, մլաւուններն էլ մեղմացան և երկուսն էլ ցած իջնելով՝ բաժանուեցին։

4. Շատ տխուր էր փիսօն իւր ձագուկներից զրկուելու համար և երբէք հաց չէր ուտում։ Ես խնդրեցի մեր դըրացուն և նա տուաւ ինձ իւր կատուի ձագերից մէկը, որին ես դրի մեր կատուի առջևը։ Նա նայեց ձագուկին տխուր աչքերով, միքանի րոպէ մտածեց և յետոյ, գրեթէ ակամայ, բերնով վերցրեց նրան և, տանելով իւր բնակարանը, սկսեց թոյլ-թոյլ լիզել նրան. նա թէև հասկացել էր, որ իւր ձագուկը չէ այդ, բայց որդեգրեց նրան։

Մեր փիսոյի կաթը կտրուել էր և մենք ձագուկին ոչխարի կաթն էինք տալիս։

5. Հօրաքրոջս մօտ նստած, մի կիւրակէ օր, խօսում էինք, երբ նրա որդին իմաց տուաւ, որ արուն կրկին ձագուկին խեղդել է։ Մենք դուրս վազեցինք և մտանք կատուի մօտ... Փիսօն այս անգամ լաց չէր լինում. նա կատաղի աչքերով չորս կողմը նայեց և դուրս թռաւ սենեակից։ Այս անգամ անգութ արուն ուղղակի ձագուկի գլուխը բաժանել էր մարմնից։ Մենք դուրս գնացինք սենեակից և այնտեղ մի սարսափելի տեսարան ներկայացաւ մեր առջև։ Մեր փիսօն բռնել էր արուի կոկորդից և խփում էր նրան պատէպատ, խռպոտ մռնչիւններ արձակելով... մի կատարեալ փոքրիկ առիւծ էր դարձել... Զա՛ր արուն ոտներով աշխատում էր վիրաւորել մեր փիսօյին, բայց նա սաստիկ արագութիւնով նրան պատէպատ խփեց, մինչև որ արուն շունչը փչեց. յետոյ էգը թող տուաւ նրան, մի բաւականութիւն արտայայտող աչքերով մեզ նայեց և իւր սուր ճանկերը կրկին մխեց արուի կոկորդի մէջ. ապա յետ քաշուելով՝ կանգնեց և սկսեց նայել, թէ ինչպէս արուն կրում էր իւր արժանի պատիժը...

67. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ

Շունը հաչում է. գայլը ոռնում է. էշը զռում է. ձին խրխնջում է. ոչխարը մայում է. կովը բառաչում է. փիղը զոչում է. խոզը խռնչում է. արջը մռթմռթում է. առիւծը մռնչում է. եղնիկը խորդում է. աղուէսը ղօղանջում է. վագրը խռնչում է. կատուն մլաւում է. գորտը կռնչում է. ագռաւը կռռում է. արծիւը կառաչում է. աքաղաղը երգում է. սիրամարգը ճչում է. հաւը կարկաչում է. սագը ռնգում է. օձը սուլում է. աղաւնին մնչում է. տատրակը զուրզուրում է. թութակը խօսում է. ճընճղուկը ճռուողում է. բուն աղաղակում է. սոխակը ղայլայ-

—լում է. ճանճը բզզում է. միայն մարդն է, որ իր միտքը յայտնում է խօսքերով։

68. ԹՌՉՈՒՆՆԵՐ

Ա.

Կենդանածինները մի անգամ են ծնւում, իսկ թռչունների համար կարելի է ասել, որ ծնւում են երկու անգամ՝ առաջ—իբրև ձու, իսկ յետոյ—ձուից։ Օրինակ՝ հաւը ձու է ածում. եթէ ձուերը թողնենք և վեր չառնենք, նա նրանց վրայ թուխս կընստի ամբողջ երեք շաբաթ և ձագեր կըհանի։ Հաւի բնական ջերմութիւնից ձուի դեղնուցի մէջ զարգանում է սաղմը, կերակրւում է դեղնուցով և սպիտակուցով, միայն այս կերակուրը ոչ թէ բերանով է մտնում մարմնի մէջ, այլ այն շիւղովը, որ դեղնուցից ձգւում է դէպի նրա փորը. յետոյ մեծանալով՝ նա ներսից կտրում է ձուի կեղևը և դուրս գալիս իբրև դեղնագոյն, փափկափետուր վառեկ և դուրս գալուն պէս սկսում է վազվզել և իր համար կերակուր որոնել։ Ձուի կեղևը կազմւում է այն կրային մասերից, որ կուլ է տալիս թռչունը մանրիկ քարերի, սերմնահատերի և այլ կերակուրների հետ։ Այդ կեղևն առժամանակ պահպանում է քնքուշ սաղմը, իր մէջը եղած ծակոտիներով օդ է մատակարարում նրան, և նա շունչ է առնում։ Փորձի համար մոմով պատիր ձուն այնպէս, որ ծակոտիները լցուեն, ծածկուեն, և սաղմը կըսատկի, կ՚ոչնչանայ։

Հաւը չորքոտանիների նման թոքերով է շունչ առնում. նա ևս նրանց պէս ստամոքս ունի, ուր մտնում է կերակուրը, միայն թէ ատամ չունի։ Նրա փոքրիկ գլուխն ունի եղջերային կտուց, որի վերին մասը խողովակի նմանու-

թիւն ունի։ Կտուցով նա հողը քրքրում է—քջուջ է անում, կտցահարում է սերմեր, որդեր, ծառերի պտուղներ... բայց չէ ծամում։ Ուրեմն նա ինչպէս է մարսում ամենայն ամուր կերակուր։

Հաւի ստամոքսը սաստիկ ուժեղ է, այնպէս որ նա անվնաս կուլ է տալիս մինչև անգամ մանր քարեր։ Բացի դրանից կերակուրը ստամոքսը մտնելուց առաջ փափկում է քարճիկի (կտնարքի) մէջ։ Հաւի ռունգները կտուցի կողքերումն են, իսկ աչքերը ոչ թէ ճակատի վրայ, այլ գլխի այս ու այն կողմումը, այնպէս որ նա երկու աչքով միանգամից միևնոյն առարկան չի կարող տեսնել. Նրանք փոքր են և իւրաքանչիւրի անկիւնում մի տեսակ կոպ կայ—թոթափողական թաղանթ, որ ցանկացած ժամանակ առաջ է գալիս և ծածկում է աչքը։ Ականջը ծածկուած է գլխի մէջ (ականջի արտաքին մասը չունի)։ Գլխի վրայ նա ունի կարմիր կատար (աքաղաղինը առաւել մեծ), իսկ ներքևից, կտուցի տակը, երկու կարմիր մաշթերթիկ։ Հաւի պարանոցը երկար է և փետրապատ, մարմինը կոնաձև, որպէս իր ձուն—կրծքի կողմը հաստ, իսկ պոչի կողմը բարակ։

Բ

ԸՆՏԱՆԻ ԹՌՉՈՒՆՆԵՐԻՆ պատկանում են՝ հաւերը, սագերը, բադերը, աղաւնիները, հնդկահաւերը։ Բայց կան և վայրի հաւեր, սագեր, բադեր, աղաւնիներ։ Օրինակ՝ միևնոյն հաւի տեսակներն են գշխոյահաւը, փայտմորիկը, կաքաւը, լորամարգը, որոնք ազատ ապրում են անտառներում ու սարերում։ Մարդս շատ վաղուց ընտելացրել, բազմացրել է ընտանի թռչունները միևնոյն վայրի թռչուններից։ Սովորապէս տանը ապրելով և իրանց համար պատրաստի կերակուր ունենալով, նրանք, կարծես, մոռացել են թռչելը։

Թռչուններն ընդհանրապէս թռչում են իրանց համար կերակուր որոնելու. այս նպատակով վայրի թռչունները երբեմն ճանապարհորդում են հազարաւոր մղոններ։ Այդպիսի թռչունների կրծոսկրը ամուր է և ունի ուժեղ մրկնակներ, որոնցով նրանք շարժում են իրանց թևերը։ Այդ թևերն ամուր են ու երկար. մարմնի ոսկորներից շատերը դատարկ են՝ այսինքն ոսկրուղեղ չունին։ Այս բոլորն օգնում է թռչունին հեշտութեամբ թռչելու։ Առհասարակ թռչունները մեզանից արագ են շունչ առնում և առաւելապէս շատ օդ են ներշնչում. այդ է պատճառը որ նրանցից ամենափոքրերն անգամ այնպիսի ուժեղ ձայն ունին. այդ է պատճառը նմանապէս, որ նրանք կարողանում են թռչել հողմի դէմ և շնչասպառ չեն լինում։

Կաթնասուն կենդանիներին միմեանցից զանազանում են ատամներին և թաթերին նայելով, իսկ թռչունները զանազանւում են կտուցի և ոտների կազմութեամբ։ Օրինակ՝ բադին նայելով, իսկոյն երևում է, որ նա ջրային թռչուն է. նրա ամբողջ մարմինը տափակ դիրք ունի, իսկ կուրծքը դուրս է ընկած. ոտները պոչին աւելի մօտ են. այդ ամենն այնպէս է յարմարեցրած, որ նա կարողանայ աւելի ազատ լողալ։ Նայեցէք նրա ոտներին և դուք կըտեսնէք, որ մատները միացած են իրար հետ լողացողական թաղանթով. Ջրի մէջ իւր ոտները դէպի առաջ շարժելիս, նա սեղմում է մատները, որ հեշտութեամբ կտրէ ջուրը, իսկ յետ վարելիս—բաց է անում, տարածում իբրև լայն թիակներ։ Նրա կտուցը, որի եզերքին փշանման եղջրատամներ են շարուած, շրջապատուած է զգայուն շօշափողական մաշկով, այդ պատճառով որսը չէ ազատւում նրանից, եթէ նոյնիսկ ջուրը պղտոր է լինում։ Երբ նա դուրս է գալիս, ջրի կաթիլները նրա վրայից սկսում են սահել, որովհետև նա իւր փետուրները իւղոտում է։ Իւղը

նրա պոչի մօտ եղած մի առանձին պարկի մէջ է գտընւում։ Սագը և կարապը նոյնպէս ջրային թռչուններ են։

Կտցարը, կռունկը, արագիլը բնակւում են ճահիճների վրայ։ Իբրև սկզբնապատկեր ճահճային թռչունների՝ վեր առնենք ճկունկուլը։ Ջկնկուլը, որ մի արշինից աւելի բարձրութիւն ունի, արտաքուստ այնպէս ծիծաղաշարժ է, կարծես սապատաւոր պառաւ լինի. հանգիստ կանգնած է նա մէկ ոտքի վրայ որևիցէ ճահճի մօտ, գլուխը մի կողմը թագցրած։ Բայց ահա յանկարծ նա մեկնում է իւր ծիգ պարանոցը և իւր երկար, սուր կտուցով արագապէս բռնում է մի գորտ, ողջամբ կուլ է տալիս ու նորից կանգնում նոյն հանգստութեամբ, կարծես թէ ոչինչ չէ պատահել։ Նրա ոտները շատ երկայն են և ունին մեծ-մեծ մատներ, սուր-սուր, երկար եղունգներով, իսկ միջին մատն աւելի լայն է և ատամնաւորուած։ Ջկնկուլի մերկ ոտներն այնպէս են կազմուած, որ նա կարողանայ ման գալ ճահիճներում և դուրս քաշել նրա միջից ամեն տեսակ ճիճուներ, խխունջներ, գորտեր... Երկար ոտներ ունենալուց յետոյ, հարկաւ պէտք էր և երկար պարանոց։ Ճահճային թռչունները թշնամի են օձերին, որոնց սպանում ու կլանում են պատահածին պէս։

Փայտփորը*), ընդհակառակն, մագլցող թռչուն է։ Նա ունի կարճ ոտներ՝ դէպի դուրս հակուած պճղակներով, որոնց վրայի չորս մատներից երկուսը դէպի առաջ է ուղղուած, իսկ երկուսը դէպի յետ։ Մատների վրայ կան

*) Ծառածակի, ծառակտակուտ։

ծուռ-ծուռ, սուր եղունգներ։ Այդպիսի ոտների օգնութամբ նա մագլցում է ծառերի բնափայտի վրայով և արագ-արագ պտույտ է գալիս նրա շուրջը։ Մէկէլ ես տեսնում՝ նա կանգնում է, ամուր կպչում ոտներով, պոչն էլ ցածից դիմհար տալիս և սկսում է եռանդագին ծակել ծառի կեղևը իր քառանկիւնաձև ամուր կտուցով։ Այսպիսով փայտփորը հալածում, դուրս է անում այն վնասակար որդերը, որոնք բույն դրած են լինում փայտի մէջ։ Միմեանց յետևից յաջորդող հարուածից վախենալով՝ որդերը դուրս են սողում կեղևի տակից և թռչունը, որ արագ-արագ պտոյտ էր կազմում բնափայտի շուրջը, ուտում է նրանց։ Երբեմն պատահում է, որ որդերը վախենալով՝ աւելի խորն են մտնում. այն ժամանակ փայտափորը իր երկար և սուր լեզուն ներս է տանում կեղևի տակ և նրանց դուրս հանում այնտեղից։ Փայտփորներն անտառներին վնաս չեն. նրանք միայն փտած և չորացած ծառերն են ծակում։ Ընդհակառակն նրանք օգտակար են և պահպանում են ծառերը վնասակար միջատներից։ Շատ տեսակ փայտփորներ կան։

Դուք ամենքդ էլ լաւ էք ճանաչում ճնճղուկներին (ծտեր), որոնք ունին կլոր գլուխ և հաստ կտուց. գիտէք որ նրանք հաւերի պէս չեն կարող քայլել գետնի վրայ, այլ ոստոստում են և ծլվլալով ցատկոտում։ Նրանք մարդկային բնակարանների մօտ են իրանց համար բնակութեան տեղ ընտրում. խոտից բույն են շինում և նրանց մէջը փափկացնում են փետուրներով և աղուամազով։ Նրանք դաշտերում ուտում են շատ ցորեն, գարի և այլ հացահատիկներ, այդ պատճառով մարդիկ մի անգամ մտածեցին բոլորովին ջնջել նրանց, բայց տեսան որ՝ ուր չկան ծտեր, այնտեղ շատ անգամ որդերից փչանում է բոլոր հունձը։

Ճնճղուկների տեսակին են պատկանում արտուտները, սարեակները, ղնձանիկները, քնարիկները, տոխակները և ուրիշ երգող թռչուններ։ Սրանց թւում պէտք է համարել նաև ծիծեռնակը, որ իր բարակ և թոյլ ոտներով հազիւ է կարողանում ման գալ, բայց, դրա փոխարէն, թռչելում շատ վարպետ է։ Նայեցէք, թէ նա որպիսի երկար սրածայր թևեր և եղանաձև պոչ ունի։

Ծիծեռնակը գարնանն է մեզ մօտ գալիս տաք երկրներից և մի որևէ ծածկոցի տակ իր համար կաւից բոյն է հիւսում. այդ բնի մէջ ձու է ածում, ձագեր է հանում ու մեծացնում։ Այդ ժամանակ նա կոտորում է անհամար միջատներ, որ իր ձագերին կերակրէ։ Այս կողմից ծիծեռնակը ամենաօգտակար թռչունն է մեզ համար։

Փոքրիկ թռչուններից շատ բարձր, օդի մէջ, թռչում են մեծամեծ յափշտակողները—շահէնը, բազէն և արծիւը։ Դրանք ամենքն էլ ունին սուր-սուր կտուցներ, ուժեղ թևեր, սրատես աչեր, որոնցով նկատում են առարկան ահագին հեռաւորութիւնից, և պինդ, մանգաղաձև եղունգներ (ճանկեր, ճիրաններ)։ Բազէները և արծիւները մրրկի նման նետւում են իրանց որսի վրայ, ճանկերով պատառոտում են և ուտում ոսկորների և փետուրների հետ միասին, կերածի ամուր մասերն էլ, որոնք չեն մարսւում ստամոքսում, բերանից դուրս են ործկում։ Բազէն դեռ այնչափ մեծ չէ, իսկ արծիւը, երբ իր թևերը տարածում է, մի սաժէն լայնութիւն և մի արշինից աւելի երկարութիւն է ունենում։

Բազէն իր գեղեցիկ թռիչքով ամենին գերազանցում է. նա սլաքի նման վեր է բարձրանում և այնտեղ, իր թևերը տարածած, օդային ովկիանոսում ազատ լողում է։ Թռչելիս նա արագապէս յափշտակում է վայրի աղաւ-

նիներ, բադեր, կաքաւներ, բայց երբ նրանք խմբով են լինում, սովորապէս չէ յարձակւում։ Բազէները փոքրուց բռնուելով՝ ընտելանում են իրանց տիրոջը և վարժւում են որսորդութեան։ Արծիւը, բացի թռչուններից, որսում է նոյնպէս գառներ, ուլեր, ճագարներ, նապաստակներ, կատուներ... բայց, բարեբաղդաբար, մարդկային բնակութեան շատ հազիւ է մօտենում։ Գիւղացիների համար յափշտակող թռչուններից ամենավնասակարը ցինն է (ուրուրը)։

Գիշերային յափշտակող թռչուններից յայտնի են բոցփետուրը և բուն։ Սրանք ցերեկը ծառերի խոռոչներում կամ աւերակ շինութիւնների ճեղքուածներում նստած են մնում, իսկ գիշերը դուրս գալով՝ որսում են թռչուններ, մկներ և ուրիշ մանր կենդանիներ։ Բոցփետուրը թանձր մազով ծածկուած է, իսկ ականջակոթերի մազերն աւելի երկար են. Նրա մեծ-մեծ փայլուն աչերը ոչ թէ գլխի այս ու այն կողմն են դասաւորուած, այլ առաջին կողմը, որոնք նոյնպէս շրջապատուած են երկար մազերով։ Նրա աչքերի խոշոր բիբերը չեն կարող տանել ցերեկուայ լոյսը. իսկ գիշերային ամենանուաղ լոյսն անգամ բաւական է, որ նա առարկաները որոշ տեսնէ։ Նա ունի անախորժ և թափանցիկ ձայն։ Տգեղ կազմուածքը և գիշերային շարունակ միաձև կոչիւնը վատ գաղափար են տուել խեղճ թռչունի մասին, այնպէս որ նրա անունը պարսաւանքի առարկայ է դարձել։ Տգէտ մարդիկ մանաւանդ վախենում են նրանից և նրա կոչիւնը մի չարագուշակ մարգարէութեան տեղ են ընդունում. մինչդեռ բուն մի անվնաս թռչուն է և միանգամայն անտեղի է նրան արհամարհել և նրանից վախենալ։ Առհասարակ թռչունները մեզ աւելի օգուտ են տալիս, քան թէ վնաս։

69. ԳԵՂԱՐՔՈՒՆԻ ՋՈՒԿԸ

Գուցէ դուք ամենքդ տեսած լինիք գեղարքունին, բայց հազիւ թէ ձեզանից մէկը ուշադրութեամբ քննած լինի նրան։ Գեղարքունին, մեր ծանօթ կենդանիների նման, ունի ողնաշար, գանգ և կողեր, բայց նրա մարմինն այն յարմարութեամբ է կազմուած, որ կարողանայ ջրի մէջ ապրել։ Ամբողջ մարմինը ձիգ է, իսկ պոչի կողմից աւելի սուր. սա պատած է թեփերով, որոնք կլորիկ բլթակների նման ցրուած են նրա վրայ. կաշին արտադրում է լորձիւն, որ պահպանում է մարմինը ջրի վնասակար ներգործութիւնից։ Գեղարքունին ոտների կամ ձեռների փոխանակ ունի լողացողական փետուրներ, լողնակներ, որոնք կազմուած են մանր եղջերանիւթ մազերից և միացած են թաղանթով։ Լողնակները ութ հատ են, որոնց չորսը կենտ-կենտ, իսկ մնացածները զոյգ-զոյգ։ Մի զոյգը զետեղուած է կրծքի վրայ (գլխի այս և այն կողմը, շնչառութեան քիմխտի մօտ), իսկ միւս զոյգը—փորի վրայ։ Կրծքի լողնակները ծառայում են նրան իբրև ձեռներ, իսկ փորինը—իբրև ոտներ. թէ մինը և թէ միւսը գեղարքունին գործ է դնում ջրի մէջ բարձր ու ցածր անելու համար։ Անզոյգ լողնակների օգնութեամբ ձուկն ընթանում է հորիզոնական ուղղութեամբ ջրի մակերևոյթի հետ. այս բանին աւելի օգնում է պոչի կիսալուսնկաձև լողնակը (ագին). պոչը աջ ու ձախ շարժելով, ձուկը շատ արագ է լողում։ Բացի պոչի լողնակից՝ միւս անզոյգ լողնակները գտնւում են բնի վրայ՝ թիկունքի կողմից։ Գեղարքունու գլուխը միաւորւում է բնի հետ առանց պարանոցի, գլխի երկու կողմը գտնւում են նրա երկու մեծ-մեծ, դուրս ընկած աչքերը, որոնք չունին կոպեր. ռունգներն առաջին կողմից են.

Նրա ականջները արտաքուստ չեն նշմարւում, բայց կարող էք հաւատացած լինել, որ նա ունի լսողութեան զգայարանք, որովհետև շատ լաւ է լսում. շրթունքները մաշկապատ են և կորթնարդ. բերանում, ծամելիքների վրայ, մանր ատամներ կան, որոնք ոչ թէ կերակուր ծամելու, այլ նրան որսալու համար են։ Գեղարքունին կերակրւում է ջրային բզէզներով, որդերով, ճիճուներով և այլն. Նա ունի կարճ և կոշտ լեզու։ Գեղարքունին բոլոր ձկների նման ջրումն է ապրում և շունչ է առնում շնչառութեան ականջներով—քիմուխտներով, որոնք գտնւում են գլխի երկու կողմերում, ականջափակի տակը. բարձրացրէք այդ ականջափակերը և դուք կը նկատէք նրա տակը կամարաձև ոսկրներ, որոնց վրայ տարածուած են կարմիր, լորձունոտ արիւնաբեր երակներ, որոնք փոցխի նման ատամնաւորւում են նրանց վրայ։ Կամարաձև ոսկրները չորս-չորս են իւրաքանչիւր կողմում։ Ջուրը մտնում է ձկան բերանը, անցնում է այդ ոսկրային ծալքերի միջից և իւր մէջ եղած օդը նրան մատակարարելով՝ մաքրում է այնտեղ ժողոված անմաքուր արիւնը, իսկ ինքը դուրս է գալիս ականջափակի տակից. շնչառութեան ժամանակ ականջափակերը շարունակ բաց ու խուփ են անում։ Ձուկն էլ, գորտի նման, սառն արիւն ունի։ Եթէ նրա փորը ճղէք, դուք այնտեղ կը գտնէք ստամոքս, աղիքներ, լողացողական փամփուշտ, իսկ մարիների փորում—մեծաքանակ ձկնկիթ։ Լողացողական փամփուշտն օգնում է ձկանը բարձր ու ցածր անելիս. օդով լցնելով նրան, գեղարքունին թեթևանում է և իւր զոյգ լողնակների օգնութեամբ բարձրանում է. իսկ օդը դուրս մղելով՝ նա ծանրանում է և խորասուզւում։

Ձկները ձկնկիթներով են բազմանում։ Մարին այդ ձկնկիթները մեծ թւով քարերի և բոյսերի վրայ կափու-

ցանելուց յետոյ, այլևս չէ հոգում նրանց մասին։ Այս ձուերի մեծ մասը կերակուր է լինում միւս մեծամեծ ձկներին, իսկ մնացած մասից ձկնաձագեր են գոյանում, որոնք իրանց մանկական հասակում նոյնպէս ազատ չեն մեծամեծ ձկների հետամտութիւնից։ Եթէ ձկների բազմանալն այսպիսի նշանաւոր վտանգների ենթարկուած չլինէր, նրանք անչափ կըշատանային, որովհետև մի ձուկը հազարաւոր ձկնկիթ կարող է ածել մի տարումը։

Հայաստանի ջրերը շատ գովական և քաղցրահամ ձկներ ունին, որոնցից միքանիսը յիշենք։ Գեղամայ լիճը լի է ազգի-ազգի ձկներով՝ իշխանը, պախտակը, գեղարքունին, կողակը Արարատեան նահանգի իւրաքանչիւր հային ծանօթ են. Նրանցից իշխանը, որ իւր մէջքին կարմրագոյն բծեր ունի, ամենագովականն է. Նրա միսը նոյնպէս կարմրագոյն է և անչափ համեղ, որի համար և արժանապէս կրում է իշխան անունը։ Հայաստանի մի ուրիշ լիճ հռչակուած է մի տեսակ մանր, կաթնահամ ձկներով, որոնք տառեխ են կոչւում և որոնց աղ դրած ծախւում են թէ Վասպուրականի և թէ այլ նահանգներում։

70. Հ Օ Տ

Ոչխարների հօտ, ձիաների ջոկ, եզների անդեայ, խոզերի երամակ, այծերի հօրան, գայլերի ու շների վոհմակ, թռչունների պար կամ երամ, ագռաւների ջոլիր, կռունկների տարմ, ձկների վտառ, աստղերի հոյլ, ծաղիկների բոյլ, խոտերի դէզ, յարդի և կրակի շեղջ։

71. Մ Ե Ղ Ո Ւ

Ներս մտէք մեղուատուն, ուշադրութեամբ նայեցէք այդ մանր գեռուններին, որոնք այնպիսի քաղցր մեղր են պատրաստում ձեզ համար և դուք նրանց մէջ կը գտնէք

շատ օրինակելի գործողութիւններ ու յատկութիւններ։ Մեղրագործ մեղուներն իրանց օթևանները շինում են կամ դուրսը, գոգաւոր ծառերի ու ժայռերի ճեղքերում, կամ մարդու ձեռքով յատկապէս դրանց համար պատրաստած փեթակներում։ Իւրաքանչիւր փեթակում լինում են մինչև քսան հազար աշխատաւոր մանր մեղուներ, 1600 որձամեղուներ, որոնք աւելի խոշոր են, և մի հատ մայր մեղու կամ թագուհի։

Հետևենք աշխատաւոր կամ մշակ մեղուներին, ուշադիր լինելով նրանց հրաշալի գործողութեանը։ Ահա նրանցից մինը դուրս է սողում փեթակից, իւր թևերն ուղղելով ու բզզալով թռչում գնում է ծաղկապատ դաշտը և ցած գալով մերթ այս, մերթ այն ծաղկի վրայ, իւր փոքրիկ կնճիթը ներս է մտցնում ծաղկի բաժակի մէջ ու շարժում է իւր խաւոտ ոտները։ Նրա վերին ծնօտը երկար է և ծայրը լայն՝ երբև թիակ. դրանով մեղուն մոմը ճմլում է, երբ որ կամենում է իւր փեթակը սարքել. իսկ ստորին ծնօտը երկար է և սուր, որ և ստորին սրաձև շրթունքի հետ մի փոքրիկ կնճիթ է ձևացնում։ Այս կնճիթով մեղուն դուրս է ծծում ծաղիկների մէջ եղած քաղցր հիւթը, որ նրա ստամոքսի առաջին մասում ժողովուելով՝ մեղր է դառնում։ Նրա յետին ոտները ևս շատ յարմարութեամբ են կազմուած. ոլոքի վրայ կայ մի փոքրիկ խորութիւն, որ պնակ է կոչւում. իսկ թաթը կազմուած է հինգ մասնիկներից, որոնցից առաջինը շատ մեծ է, խաւոտ և վրձնաձև։ Ծաղկի փոշին փոշիանօթից քսւում է նրա ամբողջ մարմնին. իւր թաթերի վրձիններով նա այդ ծաղկափոշին թափ է տալիս և ժողովում է ոլոքի պնակում։ Բաւականաչափ պաշար ժողովելով՝ բանուորը վերադառնում է տուն։ Այստեղ մի ուրիշ մեղու նրա ոտներից պոկում է այդ ըլթակները, կուլ է տալիս նրանց և նրա ստամոքսում նրանցից մոմ է

պատրաստւում։ Մոմը բարակ թերթիկներով դուրս է ծորում նրա կրծքից, որոնց մեղուն իւր թաթիկներով պոկում է և բերանում ծամելով՝ բճիճներ է շինում։ Բնի յետին մասում մշակ մեղուն ունի խայթոց, որով ծակում է իւր հակառակորդի կաշին և թափում է նրա մէջ թունաւոր հիւթ։

Ահա թէ որքան կենսական յարմարութիւններ ունի այս փոքրիկ կենդանին, որ բացի հիւթից և փոշուց, բոյսերից ժողովում է նաև խէժ։ Այս բոլորը հարկաւոր է նրան նախ՝ իւր տնակը—փեթակը կարգի գնելու, և երկրորդ՝ թէ իրան և թէ ձագերին կերակրելու։ Փեթակների մէջ ճիշտ ընկերական գործունէութիւն է թագաւորում. իւրաքանչիւրը գիտէ իւր տեղը և իւր գործը և չէ խանգարում միւսին։ Աշխատաւորներն ամենից առաջ մոմից շինում են մեղրահացեր—եռանկիւնի և բազմանկիւնի բճիճներ։ Նրանք դուրս են ծորում մոմը, ծամում են նրան և շինում են մինը միւսի յետևից կանոնաւոր վեցանկիւնի չէչեր (բճիճներ առանց մեղրի)։ Չէչերը կամ բճիճները երեք տեսակ են լինում՝ մանր ծակոտիներով—աշխատաւոր մեղուների համար, առաւել մեծերը—որձամեղուների համար, իսկ ամենամեծը և կլորը—թագուհու համար, որ միւս մեղուներից զանազանւում է իւր մեծ և երկայն փորով։ Ուր որ հարկաւոր է, բճիճներն ամրացնում են փեթակի առաստաղի վրայ առանձին կապերով, որ շինում են ակնամոմից—խէժից։

Աշխատաւոր մեղուների երկրորդ հոգսն այն է, որ բճիճների դատարկ ծակոտիները մեղրով լցնեն և պահպանեն թագուհուն ու հոգան նրա ձագերի մասին։ Մայրը՝ յղանալով որձամեղուներից, սկսում է ձու ածել։ Այն ժամանակ աշխատաւորները նրան եռանդագին ծառայում են և պաշտպանում ամենատեսակ վտանգներից։ Մայրը ման է գալիս բճիճների վրայ և շատ լաւ գիտէ, թէ ուր ինչ

ձու պէտք է ածել և նրանցից՝ որը աշխատաւորների, որը որձամեղուների և որը ապագայ թագուհիների համար է պատրաստուած. այդ իմանալով՝ նա իւրաքանչիւրի մէջ այնպիսի ձու է ածում, որպիսին հարկաւոր է (թագուհին ամառուայ ընթացքում 30—40 հազար ձու է ածում)։ Միքանի օրից յետոյ ձուածներից ծնւում են փոքրիկ որդեր։ Այդ ժամանակ աշխատաւորները անդադար որոնում են նրանց և դուրս են ծորում իրանց բերանից մեղրի կաթիլներ ու կերակրում են որդերին։ Տասն օրից յետոյ նրանք փաթաթւում են ոստայնի մէջ—պատենաւորւում են. աշխատաւորներն իսկոյն ծակոտիների բերանները մոմում են, որ նրանց հանգստութիւնը ոչնչով չխանգարուի։ Տասն օր և անցած, պատենաւորներից գոյանում են մեղուներ, որոնք ծակելով մոմեղէն տանիքը, դուրս են գալիս ծակոտիներից։ Այստեղ և աշխատաւորներն անգործ չեն. նրանք օգնում են փոքրիկներին, կերակրում են, մինչև որ ուշքի գան, և մաքրում են ծակոտիները՝ նորից ձու ածելու համար։

Նոր թագուհու դուրս գալու ժամանակ՝ փեթակի մէջ զարհուրելի խառնակութիւն է ընկնում. աշխատաւորներն արգելք են դնում նոր թագուհու դուրս գալուն, մինչև հինը փեթակումն է, և ակնդէտ նայում են հին թագուհու յետևից. իսկ սա ամենայն կերպով աշխատում է ծակել նորի բնակարանի դուռը և խեղդել իւր հակառակորդին, որ կարողանայ առաջուան պէս միահեծան թագաւորել։

Աշխատաւորները, որոնք մինչև այդ րոպէն կուրօրէն կատարում էին նրա բոլոր ակնարկութիւնները, նախազգալով այդ չար մտադրութիւնը՝ վազվզում են, խռնւում են նրա շուրջը, ամենայն սովորական զբաղմունք ընդհատւում է, իսկ նոր թագուհին՝ աւելի գայրացած, բզզում է իւր բանտի մէջ։ Գործը վերջանում է նրանով, որ մեծ

մայրը, չհամբերելով այս ամեն անհանգստութեանն ու ճնշմանը, վեր է առնում իւր նորածին զաւակների մի մասը և դուրս գալիս փեթակից։ Այս դուրս գալը կոչւում է ճագ տալ։ Դուրս եկած խումբը միքանի րոպէ պտըտում է մեղուպատան առաջ և ապա ցած է գալիս այնտեղ, ուր իջնում է մայրը։ Նրանք սովորաբար ծառի ճիւղի վրայ են կախւում. մէկը վայր է գալիս, նրանից կախւում է միւսը, երրորդը, չորրորդը... այնպէս որ բոլոր մեղուների խումբը մի ողկոյզաձև մարմին է կազմում։ Մեղուապանը նրանց բոլորին թափ է տալիս կօղի մէջ և դնում է նոր փեթակում։ Եթէ մեղուապանն ուշանում է, նրանք դիմում են դէպի անտառները՝ մի բնակարան գտնելու։ Բաւական է որ մեղուապանը ճանաչէ և բռնէ թագուհուն ու գցէ կօղի մէջ,—բոլոր միւսները, նրան հետևելով, ներս կըմտնեն։ Միևնոյն փեթակը տարէնը (ամառը) երեք-չորս անգամ կարող է ձագ տալ։

Հին փեթակում մնացած մեղուները, իրանց մօր դուրս գալուց յետոյ, փականքից արձակւում են նոր թագուհուն և սովորական աշխատութիւնները նորից սկսւում են։ Հին թագուհուն այլևս ներս չեն թողնիլ, եթէ նա աշխատէ անգամ վերադառնալ իւր նախկին բնակարանը։ Բայց պատահում է, որ նոր թագուհին դուրս է գալիս իւր խուցից առաջ, քան թէ կըհեռանար հինը. այդ ժամանակ բանը երկուսի մէջ կռուով է վերջանում։

72. ՇԵՐԱՄ

Գեղեցիկ ժապաւէնները, սիրուն, բազմերանգ թաշկինակները, հիանալի ու շողշողուն հանդերձները շինուած են մետաքսից։ Իսկ ինչի՞ց է գոյանում մետաքսը և կամ ո՞վ է շինում նրան։—Մետաքսը շինում է շերամը (աբրէ-

շումի որդը), որին մարդիկ պահպանում են այդ բանի համար մեծ խնամքով ու հոգացողութեամբ։ Շերամը գոյանում է գնդասեղի գլխի չափ մանր սերմից կամ ձուից, որ գարնան սկզբին, երբ թթան ծառն սկսում է կանաչել, դնում են արևումը։ Արեգակը իւր ջեռուցիչ ճառագայթներով տաքացնում է այդ ձուն և նրանից գոյանում է մի փոքրիկ որդն, այնքան փոքրիկ, որ կարողանում է մի գնդասեղի գլխի չափ ձուի մէջ պառկել։ Պառկելուց, վերջապէս, ձանձրանում է որդը․ նա կամենում է իւր նեղ խցիկից լոյս աշխարհ դուրս գալ։ Բայց ինչպէս ճեղքէ պինդ կեղևը։ Սրա համար բնութիւնը տուել է նրան երկու սուր ատամներ, որոնցով նա կծում է իւր բանտի պատը։ Երկար աշխատելուց յետոյ, վերջապէս, ծակում է և լոյս աշխարհ է դուրս գալիս։ Որդը ուրախութեամբ պարզում է իւր մարմինը թթենու տերևի վրայ և ծծում է անուշ հիւթը։ Ծանրատար աշխատանքից յետոյ՝ նրա ախորժակը բացւում է։ Նրա գլխի վրայ կան դուրս ընկած աչքեր, որոնցով կարող է իւր կերակուրը տեսնել․ իսկ փորի վրայ ունի 16 ոտք, որոնցով կարող է սողալ թթան նորափթիթ և քնքուշ տերևների վրայ։ Այս տերևները նրա և՛ նախաճաշն են, և՛ ճաշը, և՛ ընթրիքը․ գիշեր ու ցերեկ նրա բանն ու գործը այնուհետև միայն ուտելն է։ Վերջապէս որդն այնքան է ուտում, այնքան հաստանում, որ կաշին նեղ է գալիս նրան, ուստի դադարում է ուտելուց, վայր է ընկնում անշարժ, նիհարանում է և կարծես պատրաստւում սատկելու։ Բայց պահողներն իմանում են սրա պատճառը․ նրանք ասում են, որ շերամն առաջին քունը մտաւ․ երևի նա նորից պէտք է զարթնի։ Արդարև, այդ միջոցին նրա վերևի կաշին, որ արդէն չորացել էր, ճեղքւում է և որդը միքանի անգամ շուռումուռ գալով՝ հանում, դէն է ձգում իւր հին շորը, որ նրա համար շատ նեղ էր և փո-

խարէնը հագնում է մի նոր շոր, որ հնի տակին արդէն պատրաստուած էր առաջինից աւելի սիրուն և լայն։

Շերամը հագնելով այդ նոր հանդերձը, կրկին սկսում է անդադար ուտել գիշեր ու ցերեկ, մինչև որ ստուարանալով՝ կաշին կրկին նեղ է գալիս նրան։ Կրկին փոխում է նա իւր կաշին, փոխում է երրորդ ու չորրորդ անգամ և իւրաքանչիւր անգամին նոր հանդերձ է հագնում, որ հնից աւելի պայծառ և աւելի լայն է լինում։

Վեց կամ եօթը շաբաթից յետոյ փոքրիկ շերամը, որ գնդասեղի գլխի մեծութիւն ունեցող ձուից դուրս եկաւ, մի մատի չափ թրթուր է դառնում, որ թթան տերևներից ապագայ աշխատանքի համար իւր մէջ մեծ նիւթ է ժողովել։ Այս նիւթից նա պատրաստում է մի նուրբ թել և նրա մի ծայրը ճախի վրայ պնդացնելով՝ սկսում է զարմանալի շարժողութիւններ անել․ մանուման և պտոյտ-պտոյտ գալով՝ նա արձակում է իւր ստորին շրթունքից նուրբ թելեր, որոնց փաթաթում է իւր շուրջն այնպէս, ինչպէս մենք փաթաթում ենք թելի կծիկը, միայն այն զանազանութեամբ, որ մենք կծիկը դրսիցն ենք փաթաթում, իսկ թրթուրը ներսիցը, այսինքն նա առաջ կծկում է նրա արտաքին մասը, ապա ներքինը, այնպէս որ կենդանին ինքն իւր համար, կարծես, մի բանտ է շինում, կամաց-կամաց ներսից հաստացնելով նրա պատերը։

Եօթը կամ ութ օր աշխատում է նա առանց իւր թելը կտրելու և այդ թելից դեղին կամ սպիտակ գոյնով, վառեկի փոքրիկ ձուի չափ, մի սիրուն կծիկ է ոլորում, որ ասւում է խոզակ կամ բոժոժ։ Խոզակի արտաքին մասը բաղկացած է բազմաթիւ պնդացած և միմեանցից կպած թելերից, սակայն նրա տակի թելերը շատ նուրբ են և այնքան երկայն, որ մանուկը մի քառորդ ժամ պիտի վազէ, որ թելի երկայնութեան չափ տարածութիւն անց կենայ։

Խոզակի մէջ շերամը իւր համար մի փոքրիկ սենեակ է շինում և, շատ աշխատելուց յետոյ, պառկում է այնտեղ դադրած և անզօրացած։

Վեց շաբաթ ուտում էր նա անդադար, չորս անգամ փոխելով իւր հանդերձը, ութ օր կծկում ու ոլորում էր իւր նուրբ թելը, իսկ այժմ ժամանակ է հանգստանալու։ Վերջին անգամ նա փոխում է իւր բանուորի հագուստը։ Նա այլևս 16 ոտի հարկաւորութիւն չունի, որովհետև ուրիշ տեղ վազելու չէ և միջոց էլ չունի. հարկաւոր չեն նոյնպէս ատամները, որոնք այնքան տերևներ կծեցին։ Եւ ահա այդ բոլորը խաւոտ կաշուի հետ պնդանում և խոզակի պինդ մաշկն են կազմում, որի մէջ գտնուող որդը մնում է անշարժ և կարծես մեռած է։ Բայց խոզակի պինդ մաշկի տակին բոլորովին մի նոր բան է գոյանում. 14 օր անցած՝ խոզակի միջի պինդ մաշկը պատառւում է և նրանից դուրս է գալիս մի թիթեռ։ Նրա գլխի վրայ երևում են երկու մեծ աչքեր և չորս թևեր, որոնցով նա օդի մէջ թռչում է, իսկ վեց ոտները հարկաւոր են ծաղիկների վրայ նստելու համար։

Ամեն բանից երևում է, որ այս փոքրիկ միջատը նշանակուած է արեգակի ճառագայթների տակ, օդի մէջ, թռչելու համար։ Բայց նա ինչպէս կարողացաւ դուրս գալ իւր բանտից, որի մէջ ինքն իրան բանտարկել էր։ Նրա անզօր ոտները չէին կարող խոզակի հազարաւոր թելերը քանդել, առաջուայ ատամները չունէր, որ կարողանար կծել, նուրբ լեզուակը, որ այժմ ունի, պէտք կըլինի միայն նրա համար, որ ծաղկաբաժակի միջի հիւթը ծծէ։ Էլ տարակոյս չկայ, որ նա խաւար բանտի մէջ կ'ոչնչանար, եթէ Արարիչը նրան մի ուրիշ հնարք տուած չլինէր. թրթուրն իւր սեպհական հիւթից բոժոժ է պատրաստում, բայց նա ունի նաև մի ուրիշ հիւթ, որի միքանի կաթիլը բաւական

է, որ կարողանայ բոժոժի թելերը կտրատել և մի նոր դուռը բանալ ու դուրս թռչել։

Մարդս հնարք է գտել օգուտ քաղելու շերամի աշխատանքից, ուստի միայն միքանի թիթեռների է թողնում, որ դուրս գան իրանց խաւար բանտից, որովհետև բոժոժից դուրս գալիս՝ նրանք կտրատում են նրա թելերը, փչացնում են մետաքսը։ Այդ միքանիսներին էլ դուրս են թողնում այն պատճառով, որ կրկին ձու ածեն ապագայ սերունդի համար։ Միւս խոզակների միջի որդերին՝ դեռ չդուրս եկած, խեղդում են տաք հնոցի կամ տաք ջրի մէջ ածելով. այնուհետև խոզակի նուրբ թելը յետ են տալիս, ներկում են զանազան գոյներով և գործում են գեղեցիկ մետաքսեղէններ, թաշկինակներ, ժապաւէններ...

73. ԽԵՑԵՄՈՐԹԸ ԵՒ ԱՐԾԻՒԸ

Սառըջրեայ ժայռի վրայ, ծովեզերքի մօտ, նստած էր մի հսկայական խեցեմորթ։ Նրա երկու փեղկերը մեծութեամբ հաւասար են մի-մի լուացուելու կոնքի, իսկ երբեմն աւելի ևս մեծ են։ Նա այնպէս ծանր է, որ մինչև անգամ չափահաս մարդը կըդժուարանայ տանել նրան գոնէ մի փոքր տարածութիւն։ Չնայելով իւր ահագին մեծութեանը, այս խեցեմորթը, ըստ երևոյթին, ամենախաղաղ արարածն է աշխարհիս երեսին։ Նա անշարժ ու հանգիստ նստած է ժայռի վրայ. ժամանակ-առժամանակ բաց ու խուփ է անում իւր փեղկերը և ջուր է խմում. իսկ ջրի հետ նա կուլ է տալիս բազմաթիւ մանր, հազիւ նշմարելի, ջրային կենդանիներ. սա է նրա մշտական կերակուրը։

Ծովի ջուրն ամենայն օր յետ է քաշւում—տեղի է տալիս (տեղատւութիւն)։ Խեցեմորթն այն ժամանակ մնում է իւր նախկին տեղը, ժայռի վրայ և նրա հետ միասին դուրս է երևում ջրի տակից։ Խեցեմորթի մէջ խխունջ է

ապրում։ Նա փակում է փեղկերը և համբերութեամբ սպասում է այն ժամին, երբ ջուրը վեց ժամից յետոյ նորից կըծածկէ իրան։

Նոյն ծովի մօտ ապրում էր և մի արծիւ։ Նա իրան համար բուն էր շինել ծովեզերեայ ժայռի վրայ։ Շատ անգամ արծիւը ևս ամբողջ ժամերով նստում էր այնտեղ. նա անհամբերութեամբ սպասում էր, թէ չի՞ երևալ արդեօք որևէ ձուկը կամ ուրիշ ծովային կենդանի ջրի մակերևոյթի վրայ, ճարպիկաբար բռնում էր որսը իւր երկար ճանկերով, պատառ-պատառ գիշատում էր և ուտում։

Մի անգամ այս արծիւը նստել էր նոյն տեղի հանդէպ, ուր պառկած էր հսկայական խեցեմորթը։ Սա բաց էր արել իւր փեղկերը, ինչպէս աշակերտը իւր գիրքը։ Տեղատուութեան ժամանակը մօտեցաւ, ջուրն սկսեց յետ քաշուիլ։ Խեցեմորթի փեղկերի վերին կողերը երևացին ջրի տակից և նա արդէն կամենում էր ծածկել իւր խուփերը, երբ յանկարծ քաղցած արծիւը նկատեց նրան։ Կայծակի արագութեամբ ցած նետուեց նա և իւր երկար ճանկերը կոխեց բացուած փեղկերի մէջ, որ դուրս քաշի նրանց միջի պարարտ կենդանուն։ Բայց խեցեմորթը, երբ զգաց կոպիտ ու անկոչ հիւրի ներկայութիւնը, իսկոյն սաստկութեամբ փականեց իւր ծանր փեղկերը և սեղմեց նրանց մէջ արծուի ճանկերը։ Արծիւը շատ ուշ հասկացաւ սխալը. հսկայամարմին խեցեմորթը նրա համար շատ ծանր էր. նա չկարողացաւ վեր բարձրացնել նրան։ Խեցեմորթը նրանից ուժեղ հանդիսացաւ, այնպէս որ արծիւը մինչև անգամ իւր թաթերը չկարողացաւ հանել հուպ տուած փեղկերի միջից։ Իզուր էր ճչում նա և թևերը թափէթափ տալիս. խեցեմորթը նրա ոտները պինդ էր բռնել։ Վեց ժամից յետոյ ջուրը նորից բարձրացաւ (մակընթացութիւն) և խեղդեց յափըշտակողին։ Միայն այն ժամանակ, երբ արծիւը դադա-

րել էր շարժուելուց, խեցեմորթն արձակեց յափշտակողի ոտները։

74. ԲՈՅՍԵՐԻ ՄԱՍԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԲԵՂՄՆԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ուշխուշով նայեցէք և տեսէք, թէ ինչ կըգտնէք բոյսերի մէջ։ Վերցնենք, օրինակ՝ պարտէզի խաչխաշը։ Դուրս փորեցէք նրան հողից և դուք կըտեսնէք, որ նա իւր սպիտակաւուն արմատներով մտած է հողի մէջ, յետոյ վեր է բարձրանում նրա կլոր ցօղունը, որի վրայ լինում են երկար, ատամնաւոր տերևներ, իսկ գագաթը վերջանում է խոշոր ծաղիկներով, որոնք նստած են լինում երկայն երախակալի վրայ։ Բոյսը դիտելիս՝ դուք պէտք է նկատէք, թէ ո՞րպիսի են նրա արմատները և ինչ կայ արմատի մօտ. ո՞րպիսի է ցօղունը, ոստերը եւ տերևները, ո՞րպիսի է ծաղիկը։

Ա

Արմատով բոյսը սնանում է, հողի միջից դուրս ծծելով իրան հարկաւոր հիւթը։ Ծառերի արմատները մեծ-մեծ են և ամուր, նրանք երբեմն շատ խորն են մտնում հողի մէջ.—խոտերինը աւելի քնքուշ են և բարակ։ Գազարի, շաղգամի, բողկի, ճակնդեղի արմատը սաստիկ ստուարանում է, մսակալում և նրան իբրև պտուղ գործ են ածում կերակրի մէջ. բայց սա իսկապէս պտուղ չէ, այլ հաստացած արմատ։

Խոտաբոյսերից ոմանք ամառը բուսնում են, իսկ աշնանը միանգամայն մեռնում, ինչպէս ցորենը, գարին. միւսների ստորերկրեայ ցօղունը մնում է, որից միւս տարի բոյս է դուրս գալիս։ Այս իսկ պատճառով բոյսերը կոչւում են միամեայ, երկամեայ, եւ բազմամեայ։ Բազմամեայ բոյսերի ստորերկրեայ ցօղունը, որ ծածկուած է թեփանման տերևներով և տալիս է ստորերկրեայ կոկոններ և արմատիկներ, կոչւում է հիմնարմատ։ Արմատից պէտք է զանազանել կոճղէզը, օրինակ՝ սոխինը և սխտորինը, որ բաղկացած է միմեանց վրայ դասաւորուած մսալի տերևներից. արմատները թելերի նման կախուած կըգտնէք նրանց տակը։ Կլորիկ կարտոֆիլը, որ տեսնում էք կարտոֆլաբոյսի տակը, նոյնպէս

ստորերկրեայ ցօղունների վրայ է աճում և արմատը չէ. դա նոյնպէս ստորերկրեայ կոկոն է, որի բոլոր մասերը միախառնուած են։

Բ

Ծառերի և թփերի ցօղունը լինում է հաստ, պինդ, ամուր միջուկով, և կոչւում է բուն։ Խոտաբոյսերի ցօղունը փափուկ է, դիւրաբեկ, երբեմն էլ մէջը դատարկ (ծղօտ, եղէգն)։ Ցօղունը հաստանում է այն տեղերում, ուր որ նրան կպած են տերևները. այս հաստացած տեղերը կոչւում են կապեր, իսկ մի կապից մինչև միւս կապը—կապամէջ։ Կան բոյսեր, որոնք միայն ստորերկրեայ ցօղուն ունին և այդ ցօղուններից ուղղակի աճում են տերևներ ու ծաղիկներ։ (Օրինակ՝ մանուշակ, գառնալեզու, եղակ, անտառաշուշան, հողմածաղիկ և այլն—այս բոյսերի թէ ծաղիկները և թէ տերևները դուք կը տեսնէք ուղղակի հողի տակից բարձրացած, առանց յայտնի ցօղունի)։ Բայց այս ստորերկրեայ ցօղունի կապամէջերն այնքան մանր են, որ նկատելը շատ դժուար է։

Գ

Տերևները լինում են անկոթ (աներախակալ)—նստած տերևներ, կամ կոթով. երբեմն նրանք ընդգրկում են ցօղունը։ Տերևների վրայ նշմարւում են երակներ, որոնք թելի նման կամ մէկ ուղղութեամբ են ձգւում, կամ մի գլխաւոր երակից այս ու այն կողմն են ճիւղաւորւում. երբեմն մինչև անգամ ցանցանման միմեանց հետ են խառնւում։ Դուք պէտք է նկատէք նաև, թէ ձևի կողմից որպիսի են տերևները՝ կլոր, երկարաւուն, ատամնաւոր, թէ՞ դուրս կտրտուած եզերքով,—պարզ թէ՞ բաղադրեալ, այն է՝ բաղկացած միքանի զոյգ կամ անզոյգ տերևներից, օրինակ՝ սիսեռը, գազարը, հացի ծառը...։

Դ

Ցօղունը տալիս է կոկոններ, որոնք կամ ցօղունի վրայ եղած ծաղիկներիցն են բուսնում, կամ նոյնիսկ գագաթից։ Բացէք մի այդպիսի կոկոն և դուք նրանում կը տեսնէք նոր ցօղունի սկսուածքը

տերևների հետ։ Դա տերևաբեր կոկոն է։ Բայց կայ կոկոն, որ միայն ծաղիկ է արտադրում։ Ծաղիկը բոյսի ամենանշանաւոր մասն է։ Դիտեցէք գէթ խաշխաշի ծաղիկը։ Նրա տակը դուք կը տեսնէք երկու կանաչ տերևիկներ. դրանք կազմում են ծաղկի բաժակը. նրանց հետևում են մեծամեծ վարդագոյն թերթիկներ, որոնց ստորին մասը մուգ մանուշակագոյն է. սա ծաղկի պսակն է իւր չորս թերթիկներով։ Պսակը ծաղկի մէջ պահպանում է բազմաթիւ բարակ ծիլեր, որոնք կոչւում են առէջքներ. իւրաքանչիւր առէջքում դուք կը նշմարէք բարակ թելանման ծիլ, իսկ նրա ծայրին դեղին փոշիանօթ (ծաղկափոշիով լիքը)։ Առէջքների մէջտեղը դրուած է ծաղկի հաստ կնիքը, որ ունենում է իւր վրայ տարածուած կնճիթ, տանիքի պէս։

Ե

Ի՞նչ բանի է ծառայում ծաղիկը. մի՞թէ նա միայն մեզ զուարճացնելու համար է սահմանուած։ Ո՛չ, ծաղկի բաժակն ու պսակը գեղեցկութեան համար չեն ստեղծուած, այլ նրա համար, որ ծածկեն ու պահպանեն ծաղկի նշանաւոր մասերը—առէջքներն ու կնիքը։ Կնիքի մէջ է պատսպարուած բոյսի սաղմը, բայց որպէսզի նրանից, որպէս ծուից, սերմ կամ պտուղ գոյանայ, անհրաժեշտ է առէջքների ծաղկափոշին։ Երբ առէջքները հասնում են, նրանց փոշիանօթները բացւում ու ճերմակ ծաղկափոշին տարածւում է օդի մէջ։ Բաւական է, որ այդ փոշեհատիկներից գէթ միքանիսն ընկնեն կնիքի կնճիթի մէջ. հէնց փոշեհատիկը ցած է իջնում մածուցիկ կնճիթի վրայ թէ չէ, իսկոյն նրանից դուրս է աճում մի բարակիկ թել, որ սիւնակի միջով ձգւում է դէպի ներս և հասնելով մասուրի մէջ զետեղուած սաղմին, կենդանացնում է նրան։ Եթէ ծաղկի կնիքի կնճթին առէջքի փոշուց չնստի, նա պտուղ չի կարող արտադրել։ Բեղմնաւորուելուց յետոյ՝ ծաղկի պսակը, առէջքները և մինչև իսկ կնիքի սիւնն ու կնճիթը այլևս հարկաւոր չեն, ուստի և չորանում են, իսկ կնիքը (մասուրը) օրէցօր մեծանում ու հասունանում է և տալիս է այնպիսի սերմն, որ հողի մէջ ընկնելով՝ նոր բոյս է արտադրում։ Թէ ինչպէս են զետեղուած սերմերը մասուրների մէջ, դուք շատ լաւ կարող էք տեսնել խաշխաշի, լոբու պատիճների և միւս բոլոր պտուղների մէջ։

Ջ

Պտուղ։ Բոյսը ծաղիկ է տալիս, որ պտուղ արտադրէ։ Պտուղը լինում է սերմահատ, կորիզ կամ բնակ բազմաթիւ սերմերով (խաշխաշ, թութ...). սիսեռը տալիս է սիսեռահատեր—միաբնակ, երկարաւուն պտուղներ, ուր սերմերը զետեղուած են բնակի մէկ կողմը. ընդհակառակն՝ պատիճների մէջ մենք գտնում ենք երկարբնակ պտուղներ, որոնք միմեանցից բաժանուած են առանձին միջնապատով, իսկ իրանք զետեղուած են միջնապատի այս ու այն կողմը։ Ընկուզենու վրայ լինում են ընկոյզներ—սերմ, ամփոփուած ամուր կճեպի մէջ։ Կեռասի, ծիրանի, սալորի, դեղձի պտուղներն ունենում են կորիզներ։ Ելակի, մորու, թթենու նոյնիսկ որջը, որի վրայ գտնւում է ծաղկի կնիքը, փափկում, պտուղ է դառնում. բայց իսկապէս պտուղը սա չէ, այլ այն մանրիկ սերմերն են, որոնք լողում են դրա մէջ։ Խնձորենու և տանձենու մասուրներն էլ ծաղկի որջի հետ խառնուելով խնձոր ու տանձ են դառնում, որոնց մէջ, առանձին խորշերում, զետեղուած են նրանց սերմերը։

Սերմերը տարածւում են ամենուրեք։ Նրանց կոցահաբում—ուտում են թռչունները և յետոյ հեռու թռչելով, առաւելապէս իրանց տարագնացութեան ժամանակ, արտաթորում են նրանց՝ շատ անգամ բոլորովին անմարս։ Բացի սրանից նրանց հեշտութեամբ քշում տանում է քամին. այս բանին օժանդակում են այն թեւուկները, որոնք լինում են շատ բոյսերի վրայ։ Միքանիսների սերմերը զգեստաւորուած են բամբականման աղուամազով. սրանք են թռչկան սերմերը, որոնց քամին տարածում է ամեն կողմեր։ Այսպէս ահա բոյսի ամենագլխաւոր մասը պտուղն է (սերմը)։ Պտուղ արտադրելու համար անհրաժեշտ են կնիքն ու առէջքները. հետևաբար՝ բաժակը և պսակի թերթիկները կարող են և չլինել։ Այն ծաղիկները, որոնք գեղեցիկ պսակ չունին, աչքի չեն զարնում. բայց դրանք գտնւում են ամենաօգտակար բոյսերի վրայ։ Ցորենի և գարու հասկերի ծաղկածածկոցի (բաժակի) փոխանակ ծառայում են երկարաձև կանաչ թեփուկներ։ Յետ բաց արէք այդ թեփուկները և դուք կըգտնէք երեք փոքրիկ ծաղիկներ, որոնք նոյնպէս ծածկուած կըլինին աւելի նուրբ թեփուկներով. նրանց

տակից դուրս կ'երևան երեք երկար առէջքներ՝ բարակ ծիլերով ու խոշոր փոշխանօթներով, նաև մազոտ, երկճեղքուած կնիք։

Է

Միատնակ և երկատնակ բոյսեր։ Բոյսերը, որոնց առէջքները և պտղամանները (թէև առանձին ծաղիկների մէջ) մէկ ծառի վրայ են, կոչւում են միատնակ բոյսեր, բայց կան և այնպիսիները, որոնց առէջքաւոր, կամ ինչպէս նրանց անուանում են՝ արական ծաղիկները մի ծառի վրայ են, իսկ պտղամանաւոր կամ իգական ծաղիկները միւս ծառի վրայ։ Այդպէս է, օրինակ՝ ուռենին։ Դուք, երևի, շատ անգամ տեսած կըլինիք ուռենու խաւոտ ճիւղերը իգական ծաղիկներով, երբ պտուղները (սերմերը) արդէն հասունացած են լինում։ Այդտեղ դուք կըտեսնէք անհամար պայթուած պտղամաններ և իւրաքանչիւր պտղամանի միջից, կարծես, դուրս են նայում սերմերը, որոնք զարդարուած են բրդոտ գանգրամազով։ Այսպիսի զառնուկաւոր ճղներ չեն ունենում արական ծաղիկներ ունեցող ուռենիները։ Այս տեսակ ծառերը կոչւում են երկատնակ։

Ուրեմն ծաղկափոշին առէջքներից ինչպէս է ընկնում պտղամանների մէջ, երբ նրանք ոչ թէ միևնոյն ծաղկի, այլև միևնոյն ծառի վրայ չեն։ Իգական ծաղիկներին այս փոշին հասցնում են՝ քամին և միջատները, առաւելապէս մեղուները. երբ նրանք ցած են իջնում առէջքաւոր ծաղիկների վրայ, որ դուրս ծծեն նրանց միջի մեղրահիւթը, փոշին առատութեամբ կպչում է նրանց ոտներին և այդ փոշին իրանց հետ առած՝ նրանք թռչում են դէպի այն բոյսերը, որոնք ունին միայն պտղամանաւոր ծաղիկներ։ Առանց թիթեռների, բզէզների և մեղուների գուցէ չաճէին շատ խոտեր ու ծառեր։

ՀԱՏՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Հայկական կեանքից եւ աւանդութիւններից

---

75. ԸՆՏԱՆԻՔ

I.

Իմ մանկութիւնից շատ փոքր բան կարող եմ գրել, որովհետեւ նա անցաւ այնքան շուտ և այնքան դարտակ կերպով, որ շատը ես ինքս չեմ յիշում։

Բայց երբ մտաբերում եմ անցեալը, իմ տխուր և յիմարութիւններով լի անցեալը, կրկին զարթնում են վաղեմի յիշողութիւնները, և ինչպէս մթին խաւարի միջից, նկարվում է իմ առջև մանկութիւնը իր անմեղ-երեխայական կերպարանքով։

Ահա մինը միւսի ետևից երևան են գալիս ծանօթ պատկերները։

Ես տեսնում եմ հայրենի տնակը իր հին, ժամանակի աւերմունքից մաշուած պարիսպներով։ Դեռ նոյն տերևախիտ ծառերը հովանաւորում են նրան իրանց հսկայական ճիւղերով, դեռ նոյն ճնճղուկները երգում են ոստերի վրայ․ ինձ թւում է, որպէս թէ ծանօթ լինէին նրանց խորամանկ երեսիկները։

Կարծես, շատ ժամանակ չէ անցել, կարծես, հէնց երէկ լինէր այդ,—ես տեսնում եմ իմ պառաւ տատին, նստած իր սովորական տեղում, մեր խրճթի դռան հանդէպ։ Դարձեալ նոյն ընկուզենին պատսպարում է ալևոր գլուխը

ամառնային արեգակի կրակոտ ճառագայթներից։ Նա նստած է, որպէս միշտ, լուռ և մտախոհ կերպով։ Նրա ծնկների վրայ մրափում է իր մտերիմը՝ անագին մազոտ կատուն, երևի, քաղցր երազներ է տեսնում։

Սիրելի տատ, և այս րոպէիս քո երեսի մոյգ-դեղնագոյն խորշոմների մէջ ես տեսնում եմ նոյն բարութիւնը, որպէս առաջ, և այժմ քո լի գթով աչքերը նայում են իմ վրայ վաղեմի սիրով։ Ինձ թւում է, որպէս թէ դեռ լսում եմ քո իմաստալից խրատները.—Ֆարհատ, որդի, բաց գլխով մութի մէջ ման չգաս, չարքերը կըզարկեն գլխիդ... յօրանջելու ժամանակ երեսիդ խաչ հան, որ սատանան չմտնէ փորդ... գիշերը մաստաք չծամես, մեռելները կընեղանան...—Այսպիսի շատ խրատներ տալիս էիր դու ինձ. զգուշացնում էիր, որ աւերակների մէջ չմտնեմ... զգուշացնում էիր, որ գերեզմանատան մօտից մենակ չանցնեմ... ու սև կատուի հետ չխաղամ...

Տատս կոչւում էր Շուշան։ Նա ժառանգել էր իր մօր անունը։ Թէ քանի տարեկան էր,—ես հիմայ էլ չգիտեմ։ Բայց նա ականատես էր եղած այնպիսի անցքերի, որոնց վրայից դարեր էին սահել։ Այսուամենայնիւ, նա բոլորովին չէր կորցրել իր ժրութիւնը։ Կրտեսնէիր, մի անվաստակելի մեքենայի պէս, առաւօտից մինչև երեկոյ, անդադար շարժման մէջ էր։ Նրա ամենատես աչքերը ամեն բանի վրայ կընայէին և ամեն բան կըդիտէին։ Նրա անհանգիստ լեզուն ամեն բանի մասին հարցմունքներ կ'անէր և անվերջ հաշիւ ու համարներ կըպահանջէր։ Մինչև մահ նա չթողեց ձեռքից իր կառավարութեան գաւազանը՝ —անագին փայտեայ շերեփը, որով նա ընթրիքի և ճաշի ժամանակ կերակուր էր բաժանում։ Մինչև նրա մահը մեր տան թէ մեծը և թէ փոքրը ամենայն խոնարհութեամբ հպատակվում էին նրա հեղինակութեանը։

Տատս շատ աշխատասէր կին էր։ Ես դեռ յիշում եմ, թէ որպէս գիշերի մեծ մասը, նստած այծի մորթի վրայ, դնում էր իր առջև մանելու մեքենան, և ոսկրացած ձեռքով, պտոյտ տալով ճախարակի թևքը, բամբակից թել էր պատրաստում։ Ինձ թւում է, թէ դեռ զարկում է իմ ականջներին պառաւի դողդոջուն մեղեդին իր տխուր, մելամաղձական հնչիւններով. ինձ թւում է, թէ դեռ լսում եմ նրա նահապետական մեքենայի խուլ ճռճռոցը։

Մեր գիւղում տատս համարվում էր խելացի պառաւներից մէկը, իսկ իր տան մէջ նրա իմաստութիւնը հասնում էր անսխալականութեան։ Ճշմարիտն ասած, ես էլ փոքր ժամանակս հիացած էի նրա իմաստութիւնով։ Նա ամեն բան գիտէր։ Նա գիտէր, թէ ինչ նշանակութիւն ունին այս և այն երազները։ Նա գիտէր, թէ ինչ խորհուրդ ունին, երբ մարդու մարմնի այս և այն մասերը «խաղում են»։ Նա հասկանում էր կաչաղակի լեզուն, և բացատրում էր, թէ ինչ լաւ խաբարներ է բերում նա, երբ մեր պատի վրայ նստած, կըչկըչում է։ Նա լսել չէր կարող բուի չարագուշակ ձայնը, և պատուիրում էր ինձ՝ քարով սպանել նրան, երբ կը նստէր մեր պատի վրայ։

Այո, տատս շատ բան էր իմանում։ Նա պատմում էր ինձ, թէ ինչպէս կըհասնի աշխարհի վերջը. կամ երբ կը յայտնվի Նեռը։ Նա ասում էր, թէ անիծեալ Նեռը կըգայ, մի ահագին էշի վրայ նստած, թէ նրա աւանակի ականջները այնքան երկար կըլինեն, որ մի ականջի ծայրը կըհասնի մինչև արևմուտք, իսկ միւսինը մինչև արևելք։ Նա ասում էր, թէ այն ժամանակ կըյայտնվին «աջուջ-մաջուջները», թէ դրանք այնքան փոքրիկ թզուկներ են, որ իմ կօշիկները կարող էին նրանց համար բնակարաններ լինել։

Բայց ես աւելի սիրում էի տատիս հէքիաթները։

Ես դեռ յիշում եմ մի քանի հէքիաթներ, որ գիշեր-

ները պատմում էր նա։ Երբեմն, միանգամ սկսած հէքիաթը վերջացնում էր մի ամբողջ շաբաթուայ ընթացքում։ Ա՜խ, ինչպէս լաւ պատմում էր նա։ Ես բոլորը հասկանում էի և միշտ ուրախութեամբ էի լսում։ Բայց երբ պատմում էր դևերի, սատանաների, կրողների և դժոխքի մասին,— ես սարսափում էի, և աւելի շատ էի վախենում, երբ խօսում էր մեռելների մասին։

Իսկ երբ տատս մեռաւ, նրանից չէի վախենում։ Նա խիստ հանգիստ կերպով պառկած էր դագաղի մէջ, կարծես, քնած լինէր։ Նրա դէմքը էլի այնպէս բարի էր, որպէս առաջ։ Ես մտածում էի, թէ նա հրեշտակների մօտ կըգնայ, նրա համար որ, ինձ երբէք չէր ծեծում։ Երբ նրան թաղեցին, ես շատ լաց եղայ։ Մայրս ասում էր, թէ նա մի օր գերեզմանից կըվերկենայ. ես ուրախանում էի։

II.

Իմ մօրը կոչում էին Նիգար։ Դուք տեսե՞լ էք դեռ նոր բացված մի ծաղիկ, որ թառամել էր իր կոկոնի մէջ, —այդ իմ մայրն էր։ Խե՜ղճ կնիկ, ես երբէք չեմ կարող մոռանալ քո միշտ տխուր և գունաթափ դէմքը։ Ինչո՞ւ դու ուրախ լինել կարող չէիր… Ինչո՞ւ այնպէս սպանված էին քո գեղեցիկ աչքերը, որոնցից արտասուքը շատ քիչ էր պակասում…

Մայրս մի բարձրահասակ կին էր, նիհար և թոյլ կազմուածքով։ Ոտքի վրայ նա միշտ հիւանդ էր, բայց երբէք չէր պառկում։ «Ո՞վ պիտի պահէ իմ երեխաներին», պատասխանում էր նա, երբ նրան ասում էին, թէ պէտք է փոքր ինչ հանգստանալ, թէ պէտք է փոքր ինչ կազդուրել սպառված ուժերը։ Ամբողջ օրը դադարում չունէր. նա էր թխում մեր տան հացը, նա էր եփում կերակուր-

ները, նա էր լուանում մեր շորերը, նա էր կարում և կարկատում մեր հագուստը։ Բայց տնային հոգսերը չէին, որ մաշում էին նրան.—Նրա ցաւը սրտից էր... Ես այն ժամանակ չէի հասկանում, բայց հիմայ հասկանում եմ...

Մեր գիւղում գովասանված էր մօրս վարպետութիւնը կարելու և ձևելու մէջ, բայց շատ քիչ էին վճարում նրա աշխատութիւնների համար։ Շաբաթական մի քանի շահի հազիւ էր վաստակում և նրանցով ապրում էինք։ Տատիս մեռնելէն յետոյ տան հոգսը բոլորովին մնաց մօրս վրայ։ Քոյրերս, Մարիամը և Մագթաղը, դեռ փոքրիկներ էին. դրանք աւելի խանգարում էին մօրս, քան թէ օգնում էին։

Մարիամը և Մագթաղը երկուորեակներ էին, այնքան նման միմեանց, որ ես շատ անգամ սխալվում էի մինը միւսից որոշել։ Մայրս նրանց ճանաչելու համար կարել էր զանազան գոյներով գդակներ, Մարիամինը կանաչ գոյնով, իսկ Մագթաղինը կարմիր։ Ես դեռ յիշում եմ այն անմեղ կռիւները, որ ծագում էին այդ երկու հրեշտակների մէջ իրանց գդակների մասին։ Պատճառները շատ ծիծաղելի էին. օրինակ, երբ Մարիամին սիրում էին, Մագթաղը խլում էր նրա գդակը, դնում էր իր գլխին, որ ինքն էլ Մարիամ դառնայ և նրան էլ սիրեն։

Ես շատ անհանգիստ երեխայ էի, բայց դարձեալ մայրս ինձ չէր ծեծում, որովհետև նրա մի հատիկ տղան էի։ Մօրս սէրը հասնում էր մինչև այն թուլութեանը, որ շատ անգամ ներում էր իմ անկարգութիւնները։ Կըպատահէր՝ վաղ-առաւօտեան, ամենևին երեսս չլուացած ու մազերս չսանդրած, տունից դուրս կըգայի, և ամբողջ օրը կըխաղայի, կըթափառէի դատարկաշրջիկ երեխաների հետ։ Մայրս մասամբ գոհ էր լինում, երբ ես տանը չէի գտնվում, նրա համար որ, եթէ տանը մնայի, անպատճառ կամ մի բան կըկոտրէի, կամ մի բան կը-

վիթէի, և եթէ ոչինչ չլինէր, կըսկսէի քոյրերիս ծեծել։ Խեղճ երեխաներ, ինչպէս համբերում էին չար եղբօր կոպտութիւններին։ Կարծես, նրանք զգում էին, թէ իրանք աղջիկներ էին, իսկ ես—տղայ. կարծես, մտածում էին, թէ ես շատ բանով բարձր էի նրանցից, ուրեմն, իրաւունք ունէի տանջելու։ Եւ այսպէս, մանկութիւնից պատրաստվում էին լինել տղամարդի ստրուկներ... Ո՞վ մտցրեց նրանց մէջ այդ զգացմունքը։

III.

Իմ հօրս յիշում եմ որպէս մի երազ։ Այսքանը միտքս է գալիս, որ նա մի չոր ու ցամաք մարդ էր, մօրս նման բարձր հասակով, և դէպի ցած կռացած մէջքով։ Նրա գլուխը պատած էր, տարաժամ ալեորած, սպիտակ մազերով։ Երեսուն և վեց տարեկան տղամարդ էր նա, բայց վաղահաս ծերութիւնը բոլորովին փոխել էր նրա երիտասարդական դէմքը։

Մեր տանը խիստ սակաւ էի տեսնում հօրս։ Նա, որպէս սովորաբար ասում են, դաշտի մարդ էր. տարուայ երեք եղանակներում՝—գարուն, ամառ և աշուն—նա մշակում էր իր հողերը և փոքրիկ այգին, իսկ ձմեռը իր ջուլհակի հորի մէջ կտաւ էր գործում։ Բայց դարձեալ մնում էր միշտ աղքատ։ Հայրս շռայլ մարդ չէր. ոչ արաղ էր խմում, ոչ ծխում էր և ոչ էլ լաւ ուտում կամ հագնվում էր։ Ես դեռ չեմ մոռացել նրա բազմամեայ հողաթափները, որոնք սաէպ կարկատվելուց այնքան ծանրացել էին, որ հազիւ կարելի էր շարժել։ Նրա մորթէ գդակը բոլորովին կորցրել էր իր մազերը։ Էլ ինչո՞վ պէտք էր բացատրել այդ խնայող և աշխատասէր մարդու դառն աղքատութեան պատճառները։

Լինում էր, շատ անգամ տանը հաց չունէինք ուտելու․ քոյրերս լաց էին լինում սովից։ Եւ ահա, գիշերային տարաժամ պահուն յայտնվում էին հարկապահանջները։ Սկսում էին դուռը զարկել։ Կըկոտրէին, եթէ իսկոյն չբաց անէինք։ Ներս էին թափվում մի խումբ կատաղի ֆէրրաշներ։ Բոլորովին դժոխք էր դառնում այն ժամանակ մեր տունը։ Ամենքս սարսափում էինք։ Հայրս մեռելի գոյն էր ստանում, իսկ մայրս երկիւղից սկսում էր դողալ։ Ես և քոյրերս փախչում էինք ու մտնում մեր քնաշորերի մէջ․ թէև երբէք քնել կարող չէինք, բայց սուս էինք կենում։

Ֆէրրաշները հօրս բռնում էին ու կապում մեր խրճթի սեան վրայ, այնքան պինդ, որ շարժվել կարող չէր, կարծես ամբողջ մարմնով մեխած լինէր սեան հետ։ Նրա մօտ դիզվում էր մի ահագին խուրձ դալար ճիպոտների․ սկսում էին ծեծել հօրս։ Նա մռմռում էր, աղաղակում էր, աղաչանք էր անում,—բայց ով էր նրա ձայնը լսողը…

Ֆէրրաշները հարկ էին պահանջում։ Եւ եթէ մի փոքր ուշանում էր, սկսում էին հօրս մերկ ոտների տակ կրակ լցնել․ այդ բաւական չէր, նրա մարմինը այրում էին տաքացրած շամփուրներով։ Այդ սոսկալի տանջանքների ժամանակ, ինչ որ իմ մօր դրութիւնն էր, Աստուած ազատէ․ ես անկարող եմ նկարագրել։ Նա բոլորովին գժվում էր։ Նա կտրում էր իր գլխի և պարանոցի զարդերից ամենաթանկագինը և տալիս էր ֆէրրաշներին։ Նա աղաչում էր, պաղատում էր, որ չծեծեն հօրս, որ չսպանեն նրան, որ սպասեն մինչև առաւօտ, մինչև լոյսը ծագի, որ հայրս կարողանայ մի տեղից պարտք անել և պահանջած հարկը վճարել։

Այս րոպէիս էլ իմ մարմնի վրայ դող է ընկնում, երբ մտաբերում եմ այն սարսափելի գիշերները… Ֆէրրաշները գալիս էին միշտ գիշերով, ինչպէս չար երեխաները միշտ

գիշերային մթութեան ժամանակն են քանդում խեղճ ծտի բոյնը, և գիշերով են բռնում նրան, որովհետև գիտեն, որ ողորմելի թռչունը այն ժամանակ մի ուրիշ պատսպարան չունի բացի իր օթևանը։

Զարհուրելի գիշերներ… Ո՜րքան արտասուքի և ո՜րքան տանջանքների պատճառ էին դառնում նրանք մօրս… Նա գիշերային այն մթին խաւարի մէջ, մենակ դուրս էր գալիս տնից, առնում էր իր հետ մի պղինձ, կամ մի ուրիշ բան, և տանում էր գինետուն, որ գրաւ դնէ և նրանց համար ըմպելիքներ բերէ։ Նա մորթում էր մեր հաւերը և նրանց համար կերակուրներ էր պատրաստում․ բայց անողորմ հիւրերի ուտելուն և խմելուն չափ չկար։

Այսպիսի դէպքեր պատահում էին համարեա միշտ, որովհետև հարկերը վերջ ու սահման չունէին։ Ամեն բանի համար պահանջվում էր՝ թէ ցանքի համար, թէ անասունների համար և թէ մեր ընտանիքը կազմող հոգիների համար։ Հաշիւ չկար․ հաշիւը կախված էր պահանջողի կամքից միայն։ Վերջապէս հարկերը կարող էին ծագել հազարումէկ հանգամանքներից, և այնքան զանազան միմեանցից, որ շատերի անունները մոռացել եմ։ Ո՞րտեղից պէտք էր վճարել։—Պէտք էր տնից մի բան ծախել, մի բան գրաւ դնել։ Բայց մեր տանը ոչինչ չէր մնացել․ մեր տունը նմանում էր մերկ գերեզմանի։ Այդ կարող էր հասկանալ ֆէրրաշը։ Նա ինքն էր ծախել տալիս մեր կովը, մեր եզը և մեր գոմէշը, ամենևին չմտածելով, թէ վաղը մեր արօրը կըդադարի գործելուց և մի ամբողջ ընտանիք կըզրկվի ապրուստի միջոցներից։

Հայրս վերջին ժամանակներում բոլորովին թողեց իր հողերի մշակութիւնը, որովհետև ստացած արդիւնքը մինչև անգամ չէր լրացնում հարկերի վճարը։ Բայց այսպիսով

նա դարձեալ չազատուեցաւ ֆէրրաշներից, նրանց այցելութիւնները դարձեալ շարունակւում էին։

Ինչո՞վ պէտք էր ապրել։—Մնում էր մի բան, որ սոված չմեռնենք՝—միշտ պահք և պահք անել... Բայց որքան ծանր էին տոկոսները... Մեր վաշխառուն գրել-կարդալ չէր իմանում և ոչ տուած փողերի համար պարտամուրհակ էր պահանջում։ Նրա պարտամուրհակը իր խղճմտանքն էր, իսկ ամսաթիւը կամ տարեթիւը հաշւում էր եղանակների փոփոխութեան վրայ։ Նա մի տոպրակի մէջ իր հետ ման էր ածում փայտի բանազան կտորներ, երկայն և կարճ, բարակ ձողերի նման, որոնց վրայ նշաններ էին արած գոյնզգոյն դերձաններով,—դրանք նրա հաշուեմատեաններն էին։ Ձողերի վրայ կային շատ և փոքր թւով խազեր, որ նշանակում էին գումարների որքանութիւնը, իսկ գոյնզգոյն դերձանները պարտականների անունները էին որոշում։

Ես դեռ յիշում եմ անգութ վաշխառուի խօսքերը, երբ նա տոկոսները առնելու համար մեր տունն էր գալիս։ —«Ահակ, ասում էր նա իմ հօրը,—գիտե՞ս որքան է անցել. տե՛ս, այս ծառը դեռ նոր էր տերև բացել (նա ցոյց էր տալիս մեր բակի ընկուզենին). հիմայ կրկին կանաչել է նա, ուրեմն, անցել է մի բոլորակ տարի։ Թէ գլուխքը չես կարող տալ, գոնէ կաթը (տոկոս) տուր, թէ չէ...»։

Ահա՛ այսպէս էին անցնում մեր սև օրերը։

Հայրս, չկարողանալով հայրենի երկրում իր ընտանիքը պահել, ստիպվեցաւ դիմել դէպի պանդխտութիւն, օտար աշխարհներում բախտ որոնելու։ Մենք տարանք նրան մինչև գիւղից դուրս ճանապարհ դնելու։ Ես և քոյրերս շատ ուրախ էինք, երբ նա գնում էր, կարծում էինք, թէ բազարն է գնում, որ մեզ համար չամիչ կամ խուրմայ բերէ։ Բայց մայրս լաց էր լինում։ Տխուր էր և

հայրս, մահուան չափ տխուր էր նա։ Ես մինչև այսօր չեմ մոռացել այն խօսքերը, որ բաժանման րոպէին ասաց նա մօրս.—«Ամանաթ քեզ որդիքս, Նիգար. եթէ կենդանի կըմնամ, թող չեմ տայ, որ նրանք սոված մնան...»—«Շուտ եկ, շո՛ւտ, հայրիկ, կանչում էինք ես և քոյրերս նրա ետևից,—մեզ համար չամիչ և փշատ բեր։»

Բայց նա գնաց, էլ չվերադարձաւ...

Տարի չանցած՝ հօրս մահուան լուրը մեզ հասաւ։ Այդ ցաւալի մահը ամենասաստիկ ներգործութիւն ունեցաւ մեր դժբախտութեան վրայ։ Այն ժամանակ յայտնվեցաւ Հաջի-Բաբան (մեր վաշխառուն), տիրեց մեր բոլոր կայքերին և մեզ մերկ ու ոտաբոբիկ դուրս արեց հայրենական տնակից։ Մայրս, բռնելով իմ և քոյրերիս ձեռքից, գնաց քեռուս տունը, այնտեղ ապրելու։ Միակ ժառանգութիւնը, որ մնաց մեր հօր հարստութիւնից, էին՝ Մըրօն—մեր ահագին շունը և Նազլուն—տատիս մտերիմ կատուն. դրանք չբաժանվեցան մեզանից։

ՐԱՖՖԻ

76. ՀԱՅՐԵՆԻՔ

Պարսկաստանի Ատրպատական կոչված նահանգի ամենահարուստ գաւառներից մէկն է Սալմաստը։ Նա բռնում է Ուրմիոյ ծովակի արևմտեան ափերը և, շրջապատած լեռների ալիքաւոր բարձրութեամբ, կազմում է մի գեղեցիկ, բոլորակ հովիտ, որ ոռոգվում է Սօլայ գետով։ Այդ գետը Սալմաստայ Նեղոսն է, որի բազմաթիւ ճիւղերի վրայ, մինը միւսի մօտ, շարված են մեծ և փոքրիկ գիւղերը, որոնց գեղեցիկ երևոյթը ամենևին չէ համապատասխանում աղքատ բնակիչների անմխիթար վիճակին։

Սալմաստը որպէս հին ժամանակներում եղել է Հայաս-

տանի բազմամարդ գաւառներից մէկը, և այժմ նրա բնակիչների մեծ մասը բաղկացած էին հայերից։ Մնացեալ ազգաբնակութիւններին պատկանում էին Թուրքերը, հրէաները, ասորիները և քրդերը.— այդ բոլորը միասին վեր առած, հազիւ թէ հայերի կէս մասին էին հաւասարվում։

Ամեն դար, սկսեալ խորին հեթանոսական ժամանակներից, թողել էր այդ գաւառում իր տիրապետութեան հետքերը։ Այստեղ դեռ տեսնվում էին հին Զարեհաւանի հետքերը։ Այստեղ ահագին մոխրաբլուրներ դեռ յիշեցնում էին մոգական ատրուշանները և սրբազան կրակի հազարաւոր տարիներով լափած նիւթերը։ Այստեղ բարձր մինարէթներ իրանց գեղեցիկ մօզայիկներով ցոյց էին տալիս արաբացոց տիրապետութիւնը և յիշատակը այն ազգի, որը ուր և իշխում էր, տարածում էր արհեստ, գիտութիւն և արիւն։ Այստեղ դեռ մնացել էին բեկորները այն ամրոցի, ուր մեծ Հուլաւուն պահում էր իր գանձերը։ Այստեղ զանազան լեռների և բլուրների բարձրաւանդակի վրայ դեռ մնում էին փլատակները մեծամեծ բերդերի, որպէս փշրանք աւատական իշխանների խորտակված փառքի, որոնք իրանց բռնակալութեան ներքոյ ճնշում և խեղդում էին ամեն կենդանի զօրութիւն։— Իսկ այդ բոլոր հնութիւնների մէջ իմ ուշադրութիւնը գրաւում էր մէկը. դա Փիրչաուշ լեռան ժայռերից մէկի վրայ քանդակած պատմական մի անցքի տխուր նկարագիրն էր։ Գարգաձև ժայռի հարթած մակերևոյթի վրայ դուրս էին բերված մի քանի ձիաւորներ հնադարեան հագուստով և նոյնպէս նախնական զէնքերով։ Մէկին գերի էին տանում։ Նա Թագաւոր էր։ Ոչ մի արձանագրութիւն չէր ցոյց տալիս դրանց ով և ինչ ժամանակի մարդիկ լինելը։ Միայն հայ ժողովրդի մէջ պահված էր մի ցաւալի աւանդութիւն. գերին Արշակունեաց վերջին Թագաւոր Արտաշէսն էր, որից յետոյ

Հայաստանը ընկաւ պարսիկների իշխանութեան ներքոյ և կորցրեց իր Թագաւորներին։ Կարծես, այդ պատկերը, որպէս մշտական նախատինք, իր քարաժայռի բարձրութիւնից յանդիմանում լինէր հայերին, ասելով. «Ահա, ինձ նման միշտ գերի և ստրուկ կմնաք դուք, որովհետև ձեր Թագաւորին գերութեան մատնեցիք...»։

Եւ իրաւ, հայ մարդու գերութիւնը և ստրկութիւնը իսկոյն նկատվում է այդ երկրում, երբ մարդ փոքր ինչ խորին կերպով ծանօթանում է ժողովրդի կենցաղավարութեան հետ։ Երկրի արտաքին կերպարանքը խաբուսիկ է, կարող է մինչև անգամ սխալանքի մէջ ձգել անփորձ հետազօտողին։ Երբ ջերմ, ամառնային օրերում մարդ հեռուից նայում է Սալմաստայ պայծառ՝ արեգակի ճառագայթներով լուսաւորված հովտին, տեսնում է՝ դաշտերը, մշակված աշխատասէր ձեռքով, խոստանում են առատ հունձք.— տեսնում է՝ ցորեանը, գարին, բրինձը, բամբակը և ընդեղէնների ամեն տեսակները, իրանց բեղմնաւորութեամբ, ներկայացնում են խիստ գոհացուցիչ առատութիւն.— տեսնում է՝ մրգաբեր այգիները լիացած են պտուղների ամենաազնիւ տեսակներով.— տեսնում է խոտաւէտ արօտամարգերի վրայ արածում են տաւարների նախիրներ և ոչխարների հօտեր,— մի խօսքով, նա տեսնում է, որ բնութիւնը անխնայ առատութեամբ թափել է այստեղ իր հարստութիւնները։ Նա սկսում է մտածել. «որքան բախտաւոր ապրում են այստեղ մարդիկ...» Իսկ այդ ճոխութիւնները, բնութեան այդ պարգևները չեն պատկանում այն բիւրաւոր աշխատող ձեռքերին, որոնք դաշտերի վրայ, արևի կրակոտ բոցերի մէջ, քրտինք են թափում։

Ահա գիւղերում այստեղ և այնտեղ բարձրանում են ամրոցներ, որոնք իրանց հպարտ աշտարակներով և ատամնաւոր պարիսպներով իշխում են շրջակայքի վրայ. նրանց

մէջ բնակվում են «աղաները» իրանց ախտերով և մոլութիւններով,—ահա նրանցն է պատկանում երկրի բոլոր բեղմնաւորութիւնը, նրանք են շռայլում մշակ մարդու աշխատաւոր ձեռքի վաստակը։

Երեխայութեանս ժամանակ, երբ ես որևիցէ անկարգութիւն էի անում, տատս և մայրս ամեն մէկն իր առանձին եղանակն ունէր ինձ սաստելու, որ վախենամ և հանգիստ կենամ։ Տատս ասում էր. «Սո՛ւս, սո՛ւս, մարդագէլը եկաւ, քեզ կըտամ, կուտի»։—Մայրս ասում էր. «Ջէնդ կորի, թէ չէ, ֆէրրաշին կըկանչեմ...» Թէ առաջին և թէ վերջին սպառնալիքը իմ վրայ միօրինակ ազդեցութիւն էին գործում. ես ֆէրրաշից նոյնքան էի վախենում, որքան գայլից։ Բայց երբ փոքր ինչ մեծացայ, «մարդագայլից» այլ ևս չէի վախենում, որովհետև հասկանում էի, թէ մարդը գայլ չի դառնայ, բայց ֆէրրաշի երկիւղը երբէք դուրս չեկաւ իմ սրտից...» Ինձ թւում է, որ այս րոպէիս էլ լսում եմ նրա մորակի ձայնը, ինձ թւում է, թէ իմ ականջին զարկում են գիւղացու ցաւալի հառաչանքները, և ես տեսնում եմ նրան թուլացած, ուշաթափ եղած հարկապահանջի անգութ գանահարութիւնից։

Քեռուս տունը, ուր տեղափոխուեցանք մենք մեզ հասած դժբախտութիւնից յետոյ, գտնվում էր Քեօհնայ-Շահարում։ Քօհնայ-Շահար նշանակում է հին քաղաք. այսպէս կոչում էին նրան Սալմաստայ նոր քաղաքից որոշելու համար, որի անունը Դիլիման էր։ Հին քաղաքը կորցրել էր իր անունը։ Շատ հաւանական է, որ դա լինէր մեր Զարեհաւանը կամ Զարևանդը, որի անունով մի ժամանակ կոչվում էր ամբողջ գաւառը։

Այս քաղաքում բնակվում էին չորս ազգութիւններ՝ հայ, թուրք, ասօրի և հրէայ. իւրաքանչիւր ազգութիւն զետեղուած էր առանձին թաղերում։ Հայերը ունէին երկու

եկեղեցի, իսկ ասօրիները՝ մէկ։ Հին քաղաքը արժանի էր իր կոչմանը. այստեղ, կարծես, միքանի քաղաքներ շինված էին մինը միւսի վրայ։ Նոր շէնք կառուցանելու համար նիւթեր պէտք չէին. քանդում էին գետինը և հողի տակից դուրս էին բերում անհագին քանակութեամբ աղիւս, կոփածոյ քարեր, և շատ անգամ բացվում էր մի ընդարձակ, ստորերկրեայ բնակարան։ Ո՜րքան փորձանքներ, ո՜րքան յեղափոխութիւններ պէտք է կրած լինէր այդ քաղաքը. ո՜րքան ազգեր այնտեղ բնակվել և անհետացել էին. իսկ հայը, նրա նախկին բնակիչը դեռ մնում էր։ Արաբներից մնացել էր մի լայնատարած գերեզմանատուն միայն, գեղեցիկ զարդարած տապանաքարերով։

Քաղաքի մի անկիւնում էր գտնվում քեռուս տունը, մեծ հեղեղատի ափի մօտ։ Այդ հեղեղատը գարնան անձրևների ժամանակ յորդանում էր, և քանդելով աւերակները, բերում էր իր հետ զանազան հնութիւններ։ Ես շատ ուրախ էի լինում, երբ հեղեղը փոքրանում էր, որովհետև մեր դրացի երեխաների հետ գնում էինք գետի ափերի մօտ և աւազների միջից գտնում էինք հին դրամներ, կանանց զարդեր, և վաճառելով հրէայ ոսկերիչներին, փող էինք ստանում։

Հայերի տները թէև փոքրիկներ էին, բայց հովանաւորված պարտէզներով և ծառերով, գեղեցիկ տեսք ունէին։ Բնակարանը, ասում են, խիստ խորին կապ ունի մարդու կեանքի և բնաւորութեան հետ։ Այս մտքով, հայերի տների ձևը և նրանց ներքին ու արտաքին դիրքը, ոչ միայն մեծ նշանակութիւն ունէին բնակիչների ճաշակի մասին, այլ առաւելապէս արտայայտում էին նրանց վիճակը և հասարակական դրութիւնը։ Տները շատ սերտ և անմիջական կերպով կցած էին մինը միւսի հետ, այնպէս որ, տանիքների վրայով կարելի էր հայոց թաղի մի ծայրից մինչև

միւսը գնալ։ Բոլոր տները ունէին գաղտնի հաղորդակցութիւն։ Այդ հաղորդակցութիւնը պահպանվում էր զանազան ծակերի միջոցով, որ բացված էին մի տանից միւսի մէջ։ Ծակերը բացված էին աննկատելի տեղերում։ Նրանցից շատերը այնքան նեղ էին, որ մի ձեռք միայն կարելի էր անցկացնել և ծառայում էին աւելի բանաւոր հաղորդակցութեան համար։ Երբ պատահում էր մի անսովոր դէպք, մի քանի րոպէի մէջ թաղի միւս ծայրում արդէն գիտէին։ Ամեն մի լուր, ամեն մի խօսք, ծակերի միջով, կայծակի արագութեամբ տարածվում էր ամբողջ թաղի մէջ, առանց մի մարդ իր տանից դուրս գալու։ Ծակերից շատերը այնքան մեծ էին, որ կարելի էր, մանաւանդ վտանգի ժամանակ, մի տան կայքը թագցնել կամ տեղափոխել միւսի մէջ, և կամ հարևանի մօտ ապաստան գտնել։ Թագստի համար իւրաքանչիւր տան մէջ կային ստորերկրեայ մառաններ, որոնց գաղտնի մուտքը միայն տան տիրոջն էր յայտնի։

ՐԱՖՖԻ *)

---

*) Րաֆֆին (որի ուղղագրութիւնը մեզ զբաղեցնող խնդրի վերաբերութեամբ պահպանել ենք), որպէս և նրան ժամանակակից գրողները, կրաւորական ձևերի մէջ ւ տառը չեն գործածում. Նրանց համոզմունքով վ հնչիւնի իսկական նշանագիրը վ տառն է և ոչ ւ, որի գործածութիւնը պայմանական է, այսինքն ւ երբեմն ձայնաւոր է, երբեմն բաղաձայն։ Միւս կողմից պէտք է նկատել, որ ւ նշանագիրը որպէս բաղաձայն վ երբէք գործածութիւն չի ունեցել հին հայերէնի մէջ։ Այն պատճառաբանութիւնը, որպէս թէ ու տառի մի բաղադրիչ մասը՝ ո-ն բառերի մէջ դուրս է ընկնում, բոլորովին հիմք չունի, որովհետև ու, որպէս պարզ հնչիւն, կարող է ածանցուիլ, բայց ոչ զրկուիլ այն մասից, որ նա չունի։ Այլ խնդիր է, թէ ածանցուելիս՝ ւ և վ տառերից որը պիտի փոխարինէ ու-ին։

Րաֆֆին գործ է ածում՝ «կըվերկենայ», «չըբաց անէինք», փոխանակ՝ «վեր կըկենայ», «բաց չանէինք»...

77. ՎԻՊԱՍԱՆԻ ՄՐՄՈՒՆՋԸ [1])

Կրեսոս թագաւորն Լիդացւոց [2])՝ երբ Կիւրոս [3]) բոլոր աշխարհքի տիրեց, նրա երկիրն էլ առաւ, կուռմը ղօշուն [4]), սիրելի, բարեկամ, զօրապետ՝ նրան թողեց [5]) ու էն անգին մարգարտի ու ջաւահրէ ամարաթներում [6]) մե-

---

[1]) «Վէրք Հայաստանի»-ի հեղինակը իւր յառաջաբանի մէջ, որ մենք քաղուածօրէն առաջ ենք բերում, պատկերացնում է այն հոգեկան տանջանքները, որին նա ենթակայ է եղել իւր վէպը գրելու նախօրեակին։ Սրտառուչ և յուզիչ բառերով նկարագրում է նա այն ներքին պատերազմը, որ առաջ են բերել նրա մէջ մի կողմից գրաբար լեզուի դարևոր գերիշխանութիւնը, իսկ միւս կողմից աշխարհաբարի անբռնաբարելի պահանջները։ Աշխարհաբարի ու գրաբարի այս անողոք մրցութիւնը Խաչատուր Աբովեանի համար անհամեմատ աւելի զգալի պիտի լինէր. նա հմուտ գրաբարագէտ էր. կլասիկ լեզուի ճոխութիւնները գրաւում, ոգևորում էին նորան։ Միւս կողմից՝ օժտուած լինելով եւրոպական կրթութեամբ, սնուած լինելով կենդանի մայրենի լեզուով, նա աշկարայ կերպով զգում էր, որ իւր մէջ պատերազմ առաջացնող մրցակիցներից մինը, թէև հարուստ ու ճոխ, զառամեալ է, իսկ միւսը, թէև աղքատ ու անպաճոյճ, բայց ունի անբռնաբարելի երիտասարդական թարմութիւն, աճելու ամենատեսակ ունակութիւններ և որ՝ ապագան նորան է պատկանում։ Այդ րոպէից մրցութեան հետևանքը հեղինակի համար ամենայն տարակուսանքից դուրս լինելով, իրաւունք է տալիս նորան բանալ իւր լեզուն (ինչպէս բացուեց Կրեսոսի համր զաւակինը), հայ գրականութիւնը գրաբարի կապանքներից ազատելու համար։ Եւ ժամանակակից նոր սերունդը յաւիտենական երախտապարտութիւն ունի դէպի մայրենի լեզուի Նոր-Մեսրոպը, դէպի մեր ժողովրդական վիպասանութեան նահապետը—Խաչատուր Աբովեանը։

[2]) Գրաբար ոճ է. փոխանակ՝ Լիդացոց Կրեսոս թագաւորը։

[3]) Կիւրոս պարսից թագաւորը, ժամանակակից և դաշնակից հայոց Տիգրան Երուանդեանի։

[4]) Զօրք։ [5]) Թողեցին։ [6]) Պալատներում։

ծացած Կրեսոսը, որ իրանից բախտաւոր աշխարհի երեսին էլ մարդ չէր համարում, ընկած մէկ պարսիկ զօրականի առաջ, շունչը բերնին հասած, փախչում էր, որ իր գլուխն էլայ[1]) պրծացնի. պարսիկը ետեւիցը հասաւ. սուրը գլխին պպզաց. աչքերը սեւացաւ. դեռ գլուխը չըռված, հէնց իմացաւ թէ մահն էնայ[2]) հոգին առաւ. հէնց ուզում էր, որ իր թուրը իր սիրտը կոխի, որ թշնամին չսպանի, զօրականը որ թուրը չբարձրացրե՛ց, թագաւորի միամօր որդին, որ հօրը մահը չտեսած առաջին, քսան տարուայ փակ լեզուն իսկոյն կապը կտրեց, բաց էլաւ, ու քսան տարուայ լուռ սիրտը իր առաջին ձէնը[3]) տվեց. «Անօրէն, էդ ո՞ւմ ես սպանում, քաշի՛ր թուրդ եդ, չե՞ս տեսնում, որ առաջիդ Կրեսոսն է, աշխարհի տէրն է»։ Զօրականի ձեռները թուլացան. թագաւորն իր գլուխն ազատեց. քսան տարեկան լալ[4]) որդին իր հօրը պրծացրեց։ Էնքան տարի ողորմելի թագաւորագնը իր կեանքն անց էր կացրել, ո՛չ ծնողաց էնքան սէրը, էնքան գութն ու փափագը, որ նրա ձէնը մի լսեն, մի սիրտները հովանայ, ոչ էն փառքն ու մեծութիւնը, ոչ էն գանձն ու թուչնոց անուշ եղանակը՝ էնքան վախտ նրա սրտին էն ներգործութիւնը չէին տվել, որ մէկ ծպտայ էլայ, ու[5]) իր հօր, իր ազիզ հօր մահը որ առաջին տեսաւ, սիրտն էլ իր խուփը յետ գցեց, պապանձած լեզուն էլ իր կապը կտրեց, փակ բերանը իր կսկիծը յայտնեց, կարօտ՝ վերջին թելն ընկած հէրը[6]) իր որդու ձէնը լսեց։ Որդիական սէրն էր, որ բնութեան դրած զնջիլը[7]) էսպէս ջարդեց ու փշրեց։

II

Ո՛չ[8]) քսան-երեսուն տարուց աւելի է, իմ ազի՛զ հէր, իմ սիրելի՛ ազգ, որ սիրտս կրակ է ընկել, էրվում,

1) Գոնէ։ 2) Այն է։ 3) Ձայնը։ 4) Համր։ 5) Բայց։ 6) Հայրը։ 7) Շղթան։ 8) Ո՞չ ապաքէն, չէ՞ որ։

փոթոթվում է, գիշեր, ցերեկ լացն ու սուգը իմ աչքիցս, ա՜խն ու ո՜ւխը իմ բերնիցս չի պակասում, ա՜յ իմ արիւնակից բարեկամք, որ մէկ միտքս ու մուրազս[1]) ձեզ պատմէի ու յետոյ հողը մտնէի։ Ամէն օր գերեզմանս առաջիս տեսնում էի, ամէն սհաթ մահուան հրեղէն սուրը գլխիս պտտում էր, ամէն րոպէի ձեր սիրտն ու դարդը[2]) հոգիս էրում, մաշում էր. լսում էի ձեր քաղցր ձէնը, տեսնում էի ձեր սիրուն երեսը, իմանում էի ձեր ազնիւ միտքն ու կամքը, վայելում էի ձեր ազիզ սէրն ու բարեկամութիւնը, մտածում էի ձեր կորցրած փառքն ու մեծութիւնը, մեր առաջի՝ էն հիանալի թագաւորաց, իշխանաց գործքն ու կեանքը, մեր Հայրենաց, մեր սուրբ աշխարհի առաջուան սքանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի աննման բնութիւնն ու արած քաջութիւնները։ Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցոյց էր տալիս, թէ ինչ աշխարհի ծնունդ եմ, ղըալխտը մտքումս էր կենդանի, որ ինձ, երազում թէ լուրջ, միշտ մեր երկրի անունն ու պատուականութիւնը իմ առաջս էր բերում. Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսաւորիչ... քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրանց որդին եմ. Եւրոպայ թէ Ասիայ ինձ անդադար ձէն էին տալիս, թէ Հայկայ զաւակն եմ ես, Նոյեան թոռը, Էջմիածնայ[3]) որդին, դրախտի բնակիչը. դաշտում թէ ժամում[4]), չոլում[5]) թէ տանը՝ էն քարերն էլ ուզում էին, որ սիրտս պոկեն, հանեն-տանեն՝ որտեղ որ իմ ազգի ոտը կոխել է ու էսօր էլ կոխում է. շատ անգամ մէկ Հայ տեսնելիս, ուզում էի էլած շունչս էլ հանեմ, նրան տամ։ Բայց ա՜խ, լեզուս փակ էր, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս. գանձ չունէի, որ գործով ցոյց

1) Փափագս։ 2) Հոգսը։ 3) Հայկայ, Նոյեան, Էջմիածնայ— փոխանակ Հայկի, Նոյի, Էջմիածնի։ 4) Եկեղեցում։ 5) Դուրսը, վայրի տեղերում։

տալի ուզածս, անունս մեծ չէր, որ ասածս տեղ հաներ. մեր գրքերն էլ գրաբար, մեր նոր լեզուն էլ անպատիւ, որ սրտիս հասրաթը[1]) խօսքով յայտնէի. հրամայել չէի կարող, խնդրէի, աղաչէի, լեզուս մարդ չէր իմանալ, չունքի[2]) ես էլ էի ուզում, որ ինձ վրայ չծիծաղեն, չասեն՝ կոպիտ է, յիմար է, քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն չգիտէ. ես էլ էի ուզում որ ասեն. «Օ՜հ, էնպէս խորը, խրթին շարադրել գիտէ, որ սատանէն էլ միջիցը մէկ բառ չի կարող հասկանալ»։ Ով մէկ լեզու գիտէ, ես միքանիսը գիտեմ. ինչ գիրք ասես, որ չեմ սկսել թարգմանել ու կիսատ թողել. ոտանաւոր, շարադրութիւն հօ էնքան եմ գրաբար գլխիցս դուրս տուել, որ մէկ գիրք էլ էն կըդառնայ։ Այս միջոցին Աստուած ինձ մէկքանի երեխայք էլ հասցրեց, որ պէտք է կարդացնէի։ Սիրտս ուզում էր պատռվի, որ էս երեխանց ձեռքը ինչ գիրք տալիս էի, չէին հասկանում։ Ռուսի, Նեմեցի, Ֆրանցուզի լեզւով ինչ բան որ կարդում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին այդպիսի բաները դուր գալիս։ Ուզում էի շատ անգամ մազերս պոկեմ, որ էս օտար լեզուքը աւելի էին սիրում, քան մերը։ Բայց պատճառը շատ բնական էր. էն լեզուներում նրանք կարդում էին երևելի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու ասածները,—կարդում էին էն բաները, որ մարդի սիրտ կարող է գրաւել, չունքի սրտի բաներ էին։ Ով չի ուզիլ լսել, թէ սէրը, բարեկամութիւնը, հայրենասիրութիւնը, ծնողը, զաւակը, մահը, կռիւը ինչ բան են. բայց մեր լեզւում թէ այսպիսի բաներ լինին, թո՛ղ աչքս հանեն։ Էլ ինչո՞վ երեխային քո լեզուն սիրել տաս...

Թո՛ղ լողը չհաւատայ, ամա էս ցաւն էնպէս էր

1) Կարօտը։ 2) Որովհետև։

սիրտս առել, որ շատ անգամ գժուածի պէս ընկնում էի սար ու ձոր, ման էի գալիս, մտածում, էլի սիրտս լիքը տուն գալիս... Բանը հէնց էս էր, որ ասում էի մտքումս՝ թէ նստեմ, ինչքան խելքս կըբերի, մեր ազգին գովեմ, մեր երևելի մարդկանց արած քաջութիւնները պատմեմ. էլի մտածում էի, թէ ո՞ւմ համար գրեմ, երբ ազգը լեզուս չի հասկանում... Ախր որ ազգը էն լեզուովը չի՛ խօսում, էն լեզուն չի՛ հասկանում, սաքի[1]) հէնց բերնիցդ էլ ոսկի վէր ածա. ո՞ւմ պէտք է ասես։ Ամէն մարդ իր սրտի խարջ բան կուզի։ Ում հետ էլ խօսում էի, էն էին թանխայ[2]) տալիս, թէ մեր ազգը ուսումնասէր չէ, կարդալը նրա համար գին չունի. բայց տեսնում էի, որ էս մեր կարդալ չսիրող ազգը Րօբէնսօնի պատմութիւնը, Պղնձէ քաղաքի յիմար գիրքը ձեռնէ-ձեռ ման էր ածում։ Այսպէս մտքիս հետ ընկած, շատ անգամ որ ղօնաղ էի գնում կամ քաղաքում անց էի կենում, ուշ ու միտքս հաւաքում էի, թէ տեսնեմ՝ խալխը խօսալիս, քէֆ անելիս, ինչ բանից է աւելի հազ[3]) անում։ Շատ անգամ տեսնում էի, որ մէյդանում[4]), փողոցում, մէկ քոռ աշըղի[5]) այնպէս էին հայիլ-մայիլ[6]) մնացել ու ականջ դնում, փող բախշում, որ բերանների ջուրը գնում էր։ Մէջլիս[7]) ու հարսանիք հօ առանց սազանդարի[8]) երբ հաց կուլ կ՚երթար։ Միտք արի, միտք արի, մէկ օր էլ ասեցի ինձ ու ինձ. արի՛ քո քերականութիւն, ճարտասանութիւն, տրամաբանութիւն ծալի՛ր, ղրաղ դի՛ր[9]) ու մէկ աշըղ էլ դու դա՛ռ, ինչ կըլինի, կըլինի. խանչալիդ քարը հօ վէր չի ընկնիլ...

III

Մէկ բարիկենդանի, աշակերտներս որ բաց թողի,

1) Դիցուք։ 2) Թանխայ—հիմք։ 3) Համակրութիւն։ 4) Հրապարակ։ 5) Ժողովրդական երգիչ, գուսան։ 6) Հայիլ-մայիլ—զմայլուած։ 7) Խնճոյք։ 8) Նուագող։ 9) Մի կողմ դիր։

սկսեցի, ինչ որ երեխայութիւնիցս լսած կամ տեսած բան գիտէի, տակ ու գլուխ անել։ Վերջը իմ ջիւան [1]) Աղասին միտս ընկաւ. Նրա հետ հարիւր քաջ հայի տղերք էլ իրանց գլուխը բարձրացրին ու ամենքն էլ ուզում էին, որ իրանց ոտը գնամ։ Միւսները մեծամեծ մարդիկ էին. շատերը դեռ կենդանի. Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին ղուրբան [2])։ Ասեցի՝ կեղծաւորութիւն չանեմ, նրան ընտրեցի։ Սիրտս եկել էր, բերնիս հասել։ Տեսնում էի, որ էլ հայի գիրք ձեռն առնող, հայի լեզուն խօսող քիչ է գտնվում։ Մէկ ազգի պահողն էլ լեզուն է ու հաւատը. թէ սրանց էլ կորցնենք, վայն եկել է մեր օրին։ Հայոց լեզուն առաջիս փախչում էր Կրեսոսի նման. երեսուն տարուայ փակ բերանս Աղասին բաց արեց... Էլ հաց, կերակուր միտքս չեկան։ Ճանճը առաջովս անց կենալիս, ուզում էի սպանեմ, էնպէս էի վառվել։ Հայաստանը հրեշտակի պէս առաջիս կանգնել, ինձ թև էր տալիս։ Ծնող, տուն, երեխայութիւն, ասած-լսած բաներ էնպէս էին կենդանացել, որ էլ աշխարհ միտքս չէր գալիս։ Ինչ կորած-մոլորած մտքեր ունէի, բոլորը բացվել, եդ էին եկել։ Նոր էի իմանում, որ գրաբար և ուրիշ լեզուներ միտքս փակել, բխովել [3]) էին։ Ինչ որ ասում էի կամ գրում էի մինչև էդ ժամանակը, գողացած կամ հնարած բաներ էին. էնդուր համար՝ հէնց մէկ երես գրում էի թէ չէ, կամ քունս էր տանում, կամ ձեռներս էին բեզարում։ Գիշերուան մինչև սահաթի հինգը ոչ հացի մտիկ արի, ոչ չայի. չիբուխն էր իմ կերակուրը, գրիչն—իմ հացը։ Տանըցոնց խնդրելուն, նեղանալուն, խռովելուն չէի մտիկ անում։ Երեսուն թաբախէն [4]) էն է լցվելով էր, որ բնութիւնը իր պարտքը պահանջեց, աչքերս գնաց։ Սաղ գիշերը

1) Մատղաշ։ 2) Մատաղ։ 3) Շղթայել, կապել։ 4) Թերթ։

ինձ էնպէս էր երևում, թէ նստած գրում եմ։ Երանի կըլինէր ինձ, թէ էն մտքերը ցերեկն էին միտս ընկել։

Թող ինձ այսուհետև տգէտ կանչեն. լեզուս բաց է եղել, իմ ընտիր, իմ սրտիս սիրեկան ազգ. թող տրամաբանութիւն գիտեցողը իր համքեարի [1]) համար գրի. ես, քո կորած շվարած որդին՝ քեզ համար... Քանի բերնումս լեզու կայ, փորումս սիրտ, ես լեղապատառ ձայն կըտամ. «էդ ռում վրայ էք թուր հանել, Հայոց մեծ ազգին չէք ճանաչում»։ Թաք լինի [2]) դու, իմ պատուական ազգ, քո որդու խակ լեզուն սիրես, ընդունես, ինչպէս հայրը իւր մանուկի կըմկըմալը, որ աշխարհի հետ չի փոխիլ։ Երբ-որ կըմեծանամ, խրթին լեզուով էլ կըխօսանք։ Աղասին քո որդին է. սրանից աւելի մեծ, աւելի անուանիքը շատ ունիս. ինձ մի սիրտ տուր, արևիդ մատաղ գնամ, տես՝ թէ ինչ ձևով եմ գնում, նրանց բերում, առաջիդ կանգնացնում, որ դու էլ զարմանաս, թէ էնպէս որդիք ունեցողը էլ ինչ դարդ կանի, երեսս ոտիդ տակը։ Տուր էդ սուրբ ձեռդ էլ մի համբուրեմ, որ ինձ ներես, ու գնանք մեր սիրուն Աղասու մօտ։

78. ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Է՛ս սիրտը, էս հաւատը, էս հոգին, էս սէրն ունէր Հայ ազգը, որ թշնամու, գազանի ձեռի՝ երկիր, աշխարհ, ազատութիւն, թագաւորութիւն, իշխանութիւն, մեծութիւն, բոլորը, բոլորը կորցրեց, իր հաւատին մատաղ տուեց, աղքատութիւն, նոքարութիւն [3]), գերութիւն, ղարիբութիւն [4]), տանջանք, չարչարանք, սով, մահ յանձն առաւ, որ իր սուրբ եկեղեցին, իր լիս [5]), լուսաւորչադաւան

1) Համայնք. 2) միայն թէ. 3) նոքար—ծառայ. 4) ղարիբութիւն—օտարութիւն. 5) լիս—լոյս։

օրէնքը ամուր, հաստատ ու անխախտ պահի։ Ի՛ս է հսկայութիւն, սրտապնդութիւն, մեծահոգութիւն, քաջութիւն, կամաց հաստատութիւն, հոգու կարողութիւն ու զօրութիւն, որ աշխարհքիս վրայ ջրհեղեղից դէսը մէկ ազգ էլայ [1]) մինչև էս օր չի՛ կարացել ու չի՛ էլ կարող ցոյց տալ։ Սար լինէր՝ փուլ կըգար, երկաթ լինէր՝ կըհալէր, կըմաշուէր, ծով լինէր՝ կըպակսէր, կըցամաքէր. բայց աստուածասէր Հայ ազգը մինչև էսօր գերօրինակ հսկայութեամբ տարաւ բոլորը ու իր անունը պահեց։

Էսքան բաները լսեցիր, սիրելի կարդացող, բաս ի՞նչպէս չի սիրտդ վառուիլ որ դու էն ազգի որդին ես, որ էսքան տանջանք քեզ համար քաշեց, ինքը նահատակուեց, քո կաթդ ու արիւնդ ուրիշ ազգի հետ չխառնեց։ Ինչպէս կարծում ես, քի՞չ բան է, հազար տարով էս օրը քաշիլ, էլի ազգ պահիլ, որդի մեծացնիլ, անուն, լեզու, հաւատ ունենալ։ Ա՜խ, էս միտք անողը, էլ ի՞նչ սիրտ պէտք է ունենայ, որ իր լեզուն, իր ազգը չսիրի։ Ասենք բլբուլի լեզուն քաղցր է, վէրու հաւին [2]), սիրամարգին Աստուած գեղեցիկ գոյն, սիրուն թևեր ու բմբուլ է տուել. ասենք վարդը շատ գովելի է, բաս ընչի՞ չի մանուշակը իր ռանգը, իր հոտը նրան տալիս։ Մի՞թէ վարդին տեսնողը, մանուշակին չի՛ սիրիլ։ Սարի անհոտ ծաղիկն էլ իրան տեղը, իրան փառքը վարդի հետ չի՛ փոխիլ։ Մի՞թէ բլբուլի լողը՝ դեղձանիկին [3]) էլ չպէ՞տք է պահի։ Ամեն բան իր գինն ունի. շաքարեղէնը քաղցր է, ամա հացի տեղը ո՞րը կըբռնի՝ շամպանսկի գինին անուշ է, ամա ի՞նչ անես, որ մեր երկրումը չի՛ դուրս գալիս, մեզ թանդ է նստում։ Ասենք ջաւահիրը, ալմազը շատ ջուհար ունի, շատ մեծ գին, ի՞նչ անես, որ նրանով տուն շինել չի՛ կարելի, ամեն մարդի

1) էլայ—գոնէ. 2) վէրու հաւ—վայրի հաւ, կաքաւ. 3) դեղձանիկ—կանարեյկա։

ձեռք չի՛ ընկնում։ Ասենք հարևանդ հարուստ է, օրը տասը տեսակ կերակուր է ուտում, ձեռդ որ չի՛ հասնի, պէտք է քո հացն է՞լ դէն գցես։

Ա՜խ, լեզո՜ւն, լեզո՜ւն... լեզուն որ չլինի, մարդ ինչի՞ նման կըլինի։ Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն է ու հաւատը։ Լեզուդ փոխեցի՛ր, հաւատդ ուրացար. էլ ընչո՞վ կարես ասիլ, թէ ո՞ր ազգիցն ես։ Ինչ քաղցր, պատուական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մօր կաթը նրա համար շաքարից էլ է անուշ, մեղրից էլ։ Մեր կաթն էլ որ ծախենք, առնող չի՛ լինիլ։ Մեր աչքը որ հանենք, ուրիշին տանք, ուրիշը կարելի՞ է դնել տեղը։ Մեր օրօրոցի վրայ մեր լեզուով մեզ նանիկ ասեցին. էն էլա մեր միտքը չի՞ պէտք է ընկնի։ Ասենք նոր ապրանք շատ ես առել, հինը պէտք է դէ՞ն ածած։ Էն վայրենի ազգերն էլ իրանց սոպռ [1]) լեզուն աշխարհի հետ չեն փոխիլ։ Ինչպէս մարդ կայ, տասը-տասնըհինգ լեզու գիտի, ամա նա իր լեզուն միշտ ամենից լաւ աշի [2]), իր ազգի հետ խօսալիս, ամօթ է համարում կամ ուրիշ լեզուով իր միտքն ասի, կամ ուրիշ բառ հետը խառնի։

Ձեզ եմ ասում, ձեզ, Հայոց նորահաս երիտասարդք, ձեր անունին մեռնիմ, ձեր արևին ղուրբան [3]). տասը լեզու սովորեցէք, ձեր լեզուն, ձեր հաւատը դայիմ [4]) բռնեցէք։ Մէկ դարդակ լեզուն ի՞նչ է, որ մարդ չկարենայ սովորիլ։ Բաս չէ՞ք ուզիլ, որ դուք էլ գրքեր գրէք, ազգի միջումն անուն թողաք, ձեր գրքերն էլ օտար ազգեր թարգմանեն, ձեր անունը յաւիտեանս յաւիտենից մնայ անմահ։ Ինչ կուզէ ֆրանցուզերէն, նեմեցերէն գիտենանք, մենք չենք կարող էնպէս բան գրիլ, որ նրանց միջումն անուն ունենայ, չունքի [5]) նրանց միտքն, նրանց սիրտն ուրիշ է, մերն

1) սոպռ—կոպիտ. 2) լաւ աշի—լաւ է համարում. 3) ղուրբան—մատաղ. 4) դայիմ—պինդ. 5) չունքի—որովհետև։

ուրիշ. մէկ էլ որ նրանց միջումն էնքան գրող կան, որ ոչ թիւ կայ, ոչ հէսաբ [1]: Բաս ձեր սիրտը չի՞ ուզիլ, որ դուք էլ ոտանաւոր գրէք, ձեր միտքը, ձեր խորհուրդը յայտնէք, որ այլազգք [2]) իմանան, թէ մեր միջումն էլ է էլել երևելի գրող ու մեր լեզուն էլ աւելի սիրեն։

79 ***

Վա՜յ էն ազգին՝ որ աշխարհումս անտէր է,
Վա՜յ էն երկրին՝ որ թշնամու գերի է,
Վա՜յ էն խալխին՝ որ ինքն իր կեանքն, աշխարհքը
Չի՛ պահպանիլ ու հարամու [3]) ձեռ կըտայ։

Ո՛վ որ սարեր կ'երթայ, իրան հորսն անի,
Ո՛վ որ կ'ուզի, տեղը նստած, մուլք դատի,
Անտէր ազգին նրա գիւղէն կըդիպչի,
Անտէր գլուխն նրա քիսէն կըլցնի։

Հաւատ, օրէնք, տուն, ընտանիք, սրբութիւն,
Հողի, քարի հետ կըքսվին, կըփչանան,
Թէ մէկ ազգ իր ջիլաւն [4]), եախէն [5]) թշնամուն
Իրան իրան կըտայ, կըմնայ անվաթան [6]):

Կատաղած ծովն ի՞նչ կըհարցնի լաց, շիվան [7]).
Նրա ֆըրթնէն [8]) ոչ սիրտ ունի, ոչ հոգի։
Թէ ճար ունիս, մի՛ տար նաւիդ գլուխն իրան.
Աչքդ թեքեցիր, ծովի տակին կըբացվի։

[1]) Հէսար—հաշիւ. [2]) այլազգք—օտարազգերը (այս և սրա նման գրաբար ոճեր հեղինակը շատ է գործածում)։
[3]) Հարամի—աւազակ, գազան. [4]) Ջիլաւ—սանձ. [5]) եախայ—օձիք. [6]) անվաթան—անհայրենիք. [7]) շիվան—սուգ. [8]) Ֆըրթնայ—ալիք, փոթորիկ։

Դառած [1]) արջը փնչացնելով դուրս պըրծաւ,
Սարեր, ձորեր սասանում են ձէնից ը,
Անմեղ գառը, ուր ես կանգնել դու անցաւ,
Քեզ կըքըքըրի, փախի՛ր նրա ձեռից ը։

Դաշտ ու գետին դըմբդըմբում են, դըղըրդում.
Ամպի գոռոցն աշխարհքն իրար գլխով տալիս։
Անցւորական, ի՞նչ ես ճամփիդ մնկտում,
Գնա՛ էլա մէկ քարի տակ, որ պըրծնիս։

Ա՛խ, արեգակ, բարի՛ հրեշտակ, մէր մոր,
Ի՛նչ ես կանգնել, սիրուն աչքերդ բաց արել.
Հայի համար որ դուս էլ չգաս դու՝ խսկի
Դարդ չի՛ անիլ, վաղուց է նրա աստղը թեքուել։

Թախթ, ապարանք, զէնք, զարդարանք փըչացան.
Թագաւորներ, իշխանք, քաղաքք հող մտան։
Էլ ո՞վ նրանց էթիմներին [2]) խեղճ կըգայ.
Մէկ թշնամու սրտումն մըգեամ [3]) Աստուած կա՞յ։

Խ. ԱԲՈՎԵԱՆՑ

80. Խ Ա Յ Ը

I

Ցուրտ էր, ձմեռ, բուք-բորան. գիշերն էլ այնքան խաւար էր, այնպէս սարսափելի, որ լեռնային Օ... գիւղում մարդիկ այն ժամին էլ չէին յիշում, թէ իրենք երբ և իցէ օր ու արև, լոյս ու ջերմութիւն, պարզ երկինք տեսե՞լ են, թէ ոչ։ Քամի էլ կար, բայց ի՛նչ քամի, ասես թէ մահու աշխարհից էր փչում, որ իր վըզվըզոցի մէջ

[1]) դառած—կատաղած. [2]) եթիմ,—որբ. [3]) մըգեամ—արդեօք. միթէ։

ինչ որ սարսուռ ազդող, չարագուշակ բան ունէր. ձիւնի հետ խաղում էր, և այդ խաղը գիւական էր. լիզում էր առարկաները, և իր շունչը մահացու էր։ Խօմ մենակ մարդիկ չէին, որ մրսում էին, այլ ամբողջ Օ... գիւղը ասես իր բոլոր խրճիթներով, իր խոտի դէզերով, իր աթարի կոյտերով դողում, սըրթսըրթում էր այդ թանձր խաւարի մէջ այդ դժոխային քամու առաջ. և դժուար էր գիտենալ թէ այդ դողը միայն ցրտի՞, թէ նաև երկիւղի դող էր։ Ախր գիւղը վախենում է բնութիւնից, և ինչպէս է վախենում, նա սարսափում է. ամպրոպն ու կայծակը, քամին ու փոթորիկը նրա համար խօմ բնութեան անմիտ, անխորհուրդ խաղեր չեն, հապա նրանք գալիս են որոշ զարհուրելի նպատակներով. այդ գիտէ գիւղացին, ինչպէս չդողայ։ Դեռ լաւ որ կայծակի դէմ՝ խաչի նշանը կայ. իսկ բուք-բորանի դէմ, տաք գոմը կայ, սաքուն կայ։

Վո՜ւ, վո՜ւ, վո՜ւ,—ոռնում էր քամին և ամեն անգամ այդ զարհուրելի կաղկանձոցի հետ Մէլիք-Շահէնի սաքուի երկու կողմի բազմականները դադարում էին խօսելուց, ցած էին առնում բերաններից չիբուխները, իրար երես էին նայում և նոյն իսկ մի ներքին պահանջ զգում իրար աւելի մօտ գալու, աւելի կուչ գալու։

—Ա՛հ, դժոխք է դուրսը, ասաց նստողներից մէկը խօսած լինելու համար. դուշմանս հիմա սարում չլինի։

—Սարո՜ւմ, պատասխանեց մի ուրիշը հեգնութեամբ. սաքի թէ դու ջան կ'անես հիմա մինչև մեր այգիները գնալ, որ սարերից ես խօսում. չե՞ս լսում ձայները... երկինք-գետինք իրար են դիպել է՜...

Կրկին լռութիւն տիրեց, խօսել չէր լինում, մտածելու շատ բան կար։

Գոմի դուռը հանդարտ ճռռաց. ամենքը դէպի այն կողմը նայեցին. խաւարի մէջ գծագրուեց մի մարդու

հասակ, որ եափունջու մէջ կոլոլուած ներկայացնում էր մի ձիւնակոյտ. պարզ էր, որ մարդը երկար ժամանակ բքի տակ էր մնացել։

—Բարի երեկոյ, ասաց նորեկը, թափ տալով եափունջու վրայից ձեան հաստ շերտը։

—Աստուծոյ բարին. վա՜յ խեղճ Խայ, արի՛, արի՛, առաջ անցիր, տնաշէն, փէտացար—ձայն տուին այս ու այն կողմից նստողները սրտացաւ եղանակով—Խային տեղ տուէք, թող նստի։

—Հա՛, վայլահ փէտացայ, ասաց նորեկն առաջանալով, էլ դուրսը մնալու ճար չկայ, ասես թէ երկինքը փուլ է գալիս, գիւղի մէջ էլ մարդ խեղդւում է. ձիւն ու քամի. ճ, ինչ բուք. ասացի՝ մտնեմ սաքուն, տաքանամ, դուրս ելնեմ։

Մարդը նստեց։

Գիւղի պահապանն էր նա, վարձուած գիշերապահը։ «Խայ»-եր շատ կային Ք... գիւղում, գնացին. այս մէկը մնաց ուշացած կռունկի պէս. մուրալ չուզեց, պահապան եղաւ. տեղացիք անունը լաւ չգիտէին, Նախօ կանչելու տեղ ոմանք Մխօ կանչեցին, ոմանք էլ Մկօ ասեցին, բայց վերջ-իվերջոյ՝ խօսքերը կարծես մէկ արած՝ սկսեցին պարզապէս «Խայ» կանչել։ Այսպէս լաւ էր, հեշտ էր, համ էլ՝ իրաւ որ նա «խայ» էր, որովհետև Հայաստանցի էր, Ոզմ գիւղացի։ Ահա այս «Խայ»-ն էր, որ մի անկիւնում պատի տակ տեղ գրաւեց, կծկուեց, տագ արեց. սաքուն տաք էր։

Բուքը շարունակւում էր, կատաղի քամին վիրաւոր գազանի պէս մռնչում, ոռնում էր։

—Էսպիսի գիշերուայ է ուստ եկել խեղճ ողորմելին հա՜—ասաց ռէս Գէվօն—էլ ինչ հողը տար գլխին։

Խօսքը մի գիւղացու մասին էր, որ մի քանի օր առաջ լեռներում բքի բռնուելով՝ խեղդուել էր։

—Քանի՜ ասինք մի՛ գնար, էս ձիւն ու ձմրանը չօլերը մի՛ ընկնիր, կնիկ, երեխայի տէր ես,—վրայ բերեց միւսը։

—Է՜, ինչ ես անգէտ անգէտ խօսում, մարդի ճակատին էն էր գրուած, ասաց Մէլիքը. նա պիտի գնար, նա պիտի խեղդուէր. ճակատագրից ո՞վ կարող է փախչել։

—Իրա՛ւ է, իրա՛ւ, Մէլի՛ք, ասացին մի քանի հոգի. ճակատի գրածը չի ջնջուի։

Ճակատագի՜ր, ամենազօր ճակատագի՜ր... Գիշերուայ այս զարհուրելի ժամին, կիսախաւար, գետնափոր սաքւում, քամու այս անձոռնի գոռոցի տակ դժուար էր խօսակցութեան աւելի յարմար նիւթ գտնել։ Իւրաքանչիւրն իր դիտողութիւններն արեց այդ մասին. ամենքն էլ հասան այն եզրակացութեան, որ մարդը խաղալիք է ճակատագրի քմահաճոյքին, որ նրա առաջ անզօր են մարդկային բոլոր հնարքները, նրա բոլոր խելքը, եռանդը, աշխատանքը։

—Ես ճակատագրին չեմ հաւատում, ասաց մի ձայն սաքուի մի անկիւնից։

Ամենքի հայեացքները դարձան դէպի այն կողմը... Զարմանքն ընդհանուր էր։

—Ո՞վ է այդ «աժդահան», ասաց Մէլիքը հեգնութեամբ։

—Ծառա՛դ եմ, ես եմ, Մէլի՛ք. ես ճակատագրին չեմ հաւատում, կրկնեց նոյն ձայնը յամառութեամբ։

Մարդիկ չգիտէին ծիծաղե՞ն, թէ զարմանան. ճակատագրի ամենակարող ուժին չհաւատացողը ողորմելի «Խայն» էր։

—«Էծերի քոսոտը կըկատաղի», սուտ չէ ասած, մրմռաց Մէլիքը կէս հեգնութեամբ, կէս բարկացած։

Իսկապէս ամենքն էլ զայրացած էին։ Եւ ինչպէս չզայրանային. Մէլիքը, հարուստ, զօրեղ Մէլիքը՝ հաւատում էր ճակատագրին, վախենում էր նրանից. ռէս Գէվօն, որի ճիպոտի առաջ բոլորը դողում էին ինչպէս ուռի տերև-

ներ, սարսափում էր ճակատագրից. տէրտէրը խօ՝ ինչ քարոզէր, վերջը ճակատագիրն էր. ամենքն էլ ընկճուած էին այդ աներևոյթ զօրութեան առաջ, ամենքն էլ սոսկում էին նրանից. մենակ այս ողորմելի Խայը ճակատագրին չէր հաւատում, չէր վախենում նրանից։

—Այո՛, ես չեմ հաւատում այդ ձեր ճակատագրին, կրկնեց Խայը—այս անգամ աւելի յանդուգն ձայնով, երբ տեսաւ իր վրայ ուղղուած արհամարհական հայեացքները։ Եւ ես ձեզ հէնց այս րոպէիս կարող էի ցոյց տալ, որ իրաւունք ունիմ, բայց ափսո՜ս, որ պիտի դուրս գամ գիւղը շրջելու։ Եւ նա վեր կացաւ, պատրաստուելով դուրս գալ։

—Մնա՛, մնա՛, Խայ, գոռացին մի քանի ձայներ հետաքրքրուած. ռէս, ասա՝ թո՛ղ մնայ. հիմա գիւղը չթալանեցին։

Ռէսի ցանկութեամբ Խայը կրկին նստեց իր տեղը։ Ամենքի հայեացքները դէպի նա դարձան, ամենքը սպասում էին, թէ ինչ պիտի պատմի այս մարդը, որ այդպէս յանդուգն յամառութեամբ արհամարհում է ճակատագիրը։

II

—Էն տարին—այսպէս սկսեց Խայը—տասը հոգի էինք, տասը գժեր, տասը բոց ու կրակ ունէինք կրծքերիս տակ, միատեսակ կրակ, միևնոյն կայծից բռնկուած, որ վառում, փոթոթում էր մեզ։ Միատեսակ անվախ սիրտ ունէինք, բայց ինչ սիրտ... ծո՜վ էր, վշտերով ալէկոծ ու ամօթից կապտած, խարոյկ էր՝ վրէժով վառուած... Ամիսներ էր, ինչ թափառում էինք չօլից՝ չօլ, սարից՝ սար, ձորից՝ ձոր. օձերի հետ էինք ջուր խմում, քարէ անկողնի մէջ րոպէներով հանգիստ առնում։ Դէ, ինչ անէինք. շատ երկար կուլ տուինք մեր անարգանքը. համբերութիւններս անհագին էր,

բայց մեր դուշմանի անաստուածութիւնը, նրա անսիրտ անամօթութիւնը անսահման էր. էլ ապրել չէր լինում. հաց չկար, եղածն էլ կուլ չէր գնում, թոյն ու լեղի էր դարձել։ Մենք էլ ամեն բան թողինք, տուն ու ընտանիք, մալ ու միւլք և մեր պատուի թուք ու մուրը սրբելու համար մի մի հրացան առանք, սարերն ընկանք։ Այսպէս լաւ էր... ազատ էինք...

Քիւրդերն ու թիւրքերը մեզ ասում էին «ֆէդայի», իսկ հայերն ասում էին «վրէժառու ոգի»։ Մեր առջևից սարսափն էր գնում, մեր յետևում մահն էր փռւում։ Սարերի միակ տէրը մնացինք մենք ու արծիւները. մի քիչ նման էլ էինք իրար. միատեսակ էինք յարձակւում մեր որսերի վրայ։ Շատ անգամ մեզ փնտրում էին, բայց մենք դարձել էինք աներևոյթ դևեր, ամեն տեղ էինք և ոչ մի տեղ. ֆէդայիին գտնելը հեշտ չէր, հանդիպելն էլ զարհուրելի։ Այսպէս էինք մենք, և սպասում էինք մեր ճակատագրին. մենք հաւատում էինք նրան։

Մի օր Սիմ լեռան կատարին էինք, որ մեր պաշարը վերջացաւ։ Ինձ վիճակուեց պաշարի գնալ։ Ես գիւղերը ճանաչում էի. բայց շէ՞ն էին, թէ՞ աւերակ, բնակիչներ կա՞յին, թէ գաղթել էին,—այդ ես չգիտէի. ինչ և լինէր, պիտի գնայի, ինչպէս և լինէր, պիտի պաշար ճարէի։ Ես ցած իջայ մեր որջից օրը ցերեկով, առանց զէնքի, առանց նոյնիսկ ձեռնափայտի. մտածում էի, թէ թշնամու չեմ պատահի, եթէ պատահեմ էլ, անզէն լինելս գուցէ ինձ փրկի. իսկ եթէ չեմ փրկուի, երևի ճակատագիրս այդպէս է։ Եւ այսպէս ես գնում էի... Բաւական ժամանակ շուրջս մեռելութիւն էր, ոչ ոք չկար. առջևս մի սար էր, պէտք էր բարձրանալ և ապա վար իջնել յաջորդ ձորը։ Բարձրացայ. հէնց կատարին առջևս ցցուեց մի քիւրդ, մի համիդիէ, ոտից գլուխ զինուած։

—Բարև քիրվա՛, ասացի ես անհոգ եղանակով։

—Բարև ֆլա՛, պատասխանեց քիւրդը, բայց չանցաւ, կանգ առաւ՝ նայեց ինձ։

Ես կանգ չառայ, այլ առաջ անցայ, շարունակեցի ճանապարհս. բայց զգում էի, որ քիւրդը տակաւին կանգնած հետևում է ինձ հայեացքով։ Ես չէի շտապում՝ կասկածի առիթ չտալու համար։

—Հէյ ֆլա՛, կա՛ց, լսեցի յանկարծ քիւրդի ձայնը, յետ նայեցի, կանգ առայ։ Ճակատագիրս է, մտածեցի ես. և ճիշտ որ ճակատագիրը հէնց այս քիւրդի կերպարանքը կարող էր ունենալ. հրացանն ուսին, կեռ թուրը կողքին, սպիտակ փղոսկրէ կոթով մի դաշոյն գօտիկը խրած, դէմքը զզուելի, աչքերը կատաղի, իսկ և իսկ քաղցած գայլի աչքեր։ Նա մօտեցաւ ինձ։

—Էս օրերում, էս տեղերում ոչ մի ֆլա սիրտ չէր անի երևալ, ասաց քիւրդը. դու բարի պտուղ չես երևում. ո՞վ ես, ո՞ւր ես գնում։

—Քիւրդ, ասացի, ժամանակները վատացել են, բայց մի՛ մոռացիր, որ մենք հարևաններ ենք. քեզ իբր հարևանի ասում եմ, որ ես խուլթեցի եմ, մեր կողմերում սով է, այդ խօմ գիտես. Դերջան եմ գնում երեխաներիս համար մի քիչ հաց ճարեմ. թո՛ղ ինձ հանգիստ անցնեմ, գնամ։

—Չէ՛, ֆլա, խաբել չես կարող ինձ, դու բարի պտուղ չես։

—Քիւրդ, Աստուած ունիս, ինչպէս տեսնում ես՝ վրաս զէնք չունեմ, գրպանումս դանակ չկայ. թէ գազան էլ դառնամ, երկու ձեռով ինչ կարող եմ անել. աղաչում եմ քեզ, թո՛ղ անցնեմ, գնամ։

—Առա՛ջ անցիր, քեզ գայմագամին պիտի տանեմ։

Գայմագամին... Այս արդէն սարսափելի էր, որովհետև մեզ վաղուց փնտրում էին։

—Քի՛ւրդ, գայմագամին մի՛ տար ինձ. թէև դրանից իմ անձին վնաս չկայ, բայց կ՚ուշանամ, երեխաներս մեղք են, սովից կըմեռնեն. Աստուծու սիրուն, քի՛ւրդ, բրա՛*), թող ինձ երթամ:

Քիւրդն անողոք մնաց: Ճակատագիրս է, մտածեցի ես, և գլուխս քաշ արած, առաջ անցայ: Ի՞նչ կարող էի անել, ուժը նրանն էր, հրացանը նրա ուսին էր, դաշոյնը՝ նրա գօտկումն էր, թուրը՝ նրա կողքին. ի՞նչ անէի երկու ձեռքով: Ճակատագիրս էր:

Գնացինք:

III

Շուրջս ամեն բան գեղեցիկ էր. արևը պայծառ, երկինքը պարզ, լեռները կանաչ, ծաղիկներն անուշահոտ, օդը թռչուններով լի, ամեն կողմ կեանք, խնդութիւն: Վերև, շա՜տ վերև՝ օդի մէջ ճախրում էր մի արագիլ, ազատ, համարձակ: Ես, չգիտեմ ինչո՛ւ, իմ վիճակի բոլոր սարսափը մոռացած, նայում էի այդ թռչունին անթարթ, երկա՛ր: Նախանձո՞ւմ էի արդեօք, թէ ուրիշ մի բան կար, որ գրաւում էր ինձ, ես այդ չգիտէի, բայց նայում էի: Երկար ճախրում էր արագիլը՝ մէկ էլ յանկարծ սկսեց պտոյտներ անելով դէպի վար իջնել և շեշտակի թափով ձգեց իրեն մեզանից շատ մօտիկ մի բլրի վրայ: Ես հետևում էի. այնտեղ մի մեծ օձ կար, որին նշմարել էր արագիլը: Թռչնի թևերի շփշփոցից սողունը կծկուեց, գլուխը թագցրեց մարմնի օղակների տակ: Սկսուեց մի սարսափելի կռիւ: Մենք երկսով էլ կանգ առանք:

—Տեսնո՞ւմ ես, ասաց քիւրդը, ֆլան որ կայ՝ օձ է, այսպէս պէտք է ջախջախել նրան:

*) «Բրա»—եղբայր:

Ես պատասխան չտուի. ես դիտում էի: Արագիլն իջնում էր, կտցով հարւածում օձին և վրայից անցնում. այդ ժամանակից օգտուելով՝ օձն աշխատում էր փախչել, բայց հազիւ մի քանի օղակ արած, սարսափելի թշնամին սաւառնում էր նրա գլխին, օձը կրկին կծկւում էր, կրկին ծածկում իր գլուխը: Իրաւունք ունէր քիւրդը, իմ և օձի վիճակի մէջ մեծ նմանութիւն կար: Օձի էլ ճակատագիրը հասել է, էլ փրկութիւն չունի, մտածեցի ես: Այս միտքը նոյնիսկ ինձ մի փոքր մխիթարում էր: Կամաց-կամաց արագիլն աւելի յանդըգնեցաւ, հարուածներն աւելի յաճախ և մահացու դարձան. վերջ-իվերջոյ օձին արդէն բաւական թուլացած համարելով՝ նա ցած իջաւ նրա կողքին և արդէն շուրջը քայլելով՝ երկար կտցով վերջին հարուածներն էր տալիս: Օձը շարունակում էր գլուխը թագցրած պահել, շարունակում էր ըստ երևոյթին թոյլ-թոյլ պաշտպանուել: Արագիլը խիստ մօտ էր նրան այժմ: Մէկ էլ յանկարծ մի զարմանալի բան պատահեց: Այդ կիսամեռ սողունը վերջին ճիգերը հաւաքեց, դուրս հանեց գլուխը, բացեց իր օղակները, պոչի վրայ ցցուեց, ձգուեց ինչպէս մի խարազան և մահացու օղակներով արագիլի երկար վզին փաթաթուեց: Իզուր անցան արագիլի բոլոր ջանքերը դուրս կորզելու իր վիզը այդ մահաբեր օղակներից. նա թևերը թափիթափ էր տալիս, կտուցը գետնին քսում, յետ-յետ էր քաշւում. առաջ անցնում, գետնին թաւալւում, փորձում էր վեր բարձրանալ, թռչել փախչել,—ապարդիւն ջանքեր... Օձի յուսահատ կատաղութիւնը զարհուրելի էր. նրա օղակները սղմւում էին ու սղմւում, և վերջիվերջոյ թռչունը փռուեց բլրի կրծքին անկենդան... Օձը քաշուեց, անյայտացաւ:

IV

Քիւրդը լուռ էր այժմ։ Նա ինձ նայեց, մեր աչքերն իրար հանդիպեցին և մի քանի վայրկեան մենք անկարող եղանք հեռացնել իրարից մեր հայեացքները։ Մեզանից իւրաքանչիւրն աշխատում էր հասկանալ, թէ ինչ է մտածում իր հակառակորդը այդ րոպէին։ Ոչ մի կասկած չկար, որ երկսիս գանգերի մէջ եռացող մտքերն էլ միմեանց վերաբերմամբ ահաւոր էին։ Այդ մենք հասկանում էինք, կարդում էինք իրար աչքերում փոխադարձաբար. չէ՞ որ աչքերը մտքի ակամայ դաւաճաններն են։ Ես հասկացայ, որ այդ գազանը օձի անակնկալ յաղթանակով կատաղած, որոշել է ինձ սպանել։ Այդ ես շատ լաւ կարդացի նրա աչքերում, որոնց արտայայտութիւնը այժմ աւելի չարագուշակ էր. ճ, ես ճանաչում էի քիւրդի աչքերը։ Բայց ես էլ էի մտածում։ Օձի և արագիլի կռիւը իմ մէջ էլ մի փոփոխութիւն առաջ բերեց։ Ես դեռ երբէք չէի լսել, թէ օձը արագիլին կարող է խեղդել. յայտնի է, որ արագիլն է օձի մահաբեր թշնամին, նրա մարմնացած ճակատագիրը. այդ ինչպէս պատահեց, որ այսօր այդ ճակատագիրը սխալ դուրս եկաւ։ Աստուած, որ չի թոյլ տալիս օձի նման զզուելի սողունն անգամ անարդար զոհ դառնայ արագիլին, նոյն Աստուածը մի՞թէ պիտի թոյլ տայ, որ այս քիւրդը, օձից տասն անգամ զզուելի այս արարածը, իմ ճակատագիրը տնօրինէ։ Չէ՛, ճակատագիրը սխալ է, մտածեցի ես... պիտի ճար տեսնել։

Եւ ես սկսեցի մտածել երկա՜ր, երկա՜ր... Հնարք էի փնտրում. բայց ինչ հնարք. մի դանակ էլ չունէի։ Այդ րոպէին աչքս ընկաւ քիւրդի այն սիրուն դաշոյնին, որ խրել էր իր գօտին...—Ախ, գոնէ այն իմ ձեռքում լինէր, միա՜յն այն։

—Գնա՛, որոտաց քիւրդը. ինչ ես կանգնել։

Ես շարժուեցի. մենք մտանք մի ձոր, խուլ, ամայի ձոր։ Քիւրդն սկսեց իր շուրջը նայել. Նրա շարժումները անհանգիստ էին. երևի չարագործն էլ իր անմեղ զոհի առաջ վճռական րոպէին գէթ մի փոքր դողալ գիտէ։ Նա յաճախակի ցած էր առնում հրացանն ուսից, կրկին ուսն էր ձգում։ Ես զգացի, որ մօտ է վախճանս, բայց այլևս չէի ուզում մեռնել. երբ օձն ապրելու իրաւունք ունի, մարդը, այն էլ հայ-քրիստոնեան, չի կարող այդ իրաւունքից զրկուած լինել։ Ես կամաց-կամաց քայլերս նուազեցրի։ Ես անելիք ունէի. ինձ համար անհրաժեշտ էր, որ քիւրդի առջևը չլինեմ. դա վտանգաւոր էր։

—Շո՛ւտ, շո՛ւտ գնա, շտապեցնում էր քիւրդը։ Նա աշխատում էր անդադար, որ ես իր առջևը լինեմ. այդ ես գիտէի. իսկ ես աշխատում էի նրա հետ հաւասար գծով ընթանալ։

Կարծես թէ մենք հասկանում էինք իրար. մենք լուռ կռւում էինք, կեանքի ու մահու կռիւ, որ ահաւոր էր մանաւանդ իր դաւաճան խորհրդաւորութեամբ...

Ես կանգ առայ յանկարծ. պէտք էր տրեխիս թելը պնդացնել։ Քիւրդը հասաւ ինձ, նոյնպէս կանգ առաւ։ Ես առանց գլուխս բարձրացնելու վարից դիտեցի նրա դիրքը. նա իմ աջ կողմն էր ցցուած. դաշոյնի սպիտակ կոթը երևում էր գօտկի միջից։

—Շո՛ւտ արա, պրծի՛, ֆլա, կոչեց նա զայրացած, տեսնելով իմ դանդաղութիւնը։

Ես յանկարծ գլուխս բարձրացրի, քրդի գօտկից վայրկենապէս դուրս քաշեցի դաշոյնը, և մինչև որ նա ապշած ու սարսափած պաշտպանուելու որ և է փորձ կ'անէր, փայլուն դաշոյնը մինչև կոթը ահագին թափով նրա կուրծքը մխեցի։ Վայրենին ոռնաց և գետին գլորուեց... Ես փրկուած էի։ Ահա այն փրկարար դաշոյնը...

Խայը դուրս քաշեց իր գօտուց մի փղոսկրէ կոթով դաշոյն ու դրեց բազմականների առաջ։ Ճրագի առաջ փայլուն պողպատը պաղ-պաղ փայլ էր արձակում։ Ամենքը՝ ծնկների վրայ ընկած, լուռ դիտում էին այդ ահաւոր գործիքը, որ մարդկային անզօր ձեռներում լուծել էր ճակատագրի բարդ հանգոյցը։ Փոքրիկ, կորած, ողորմելի Խայը հսկայ դարձաւ ամենքի աչքին. Նա «աժդահայ» էր. Նա իշխում էր իր ճակատագրի վրայ, ծաղրում էր իր բախտը։ Նա իրաւունք ունէր։

—Ես ճակատագրին չեմ հաւատում, կրկնեց վերստին Խայը վեհ յամառութեամբ. բայց այդ բառերն այս անգամ ծիծաղ ու զայրոյթ չառաջացրին, այլ պատկառանք ու ու մտքե՜ր, մտքե՜ր, փրկարար մտքե՜ր, ազատի՜չ մտքեր, սրբազա՜ն խորհուրդներ։

Խայը վերցրեց իր դաշոյնը, գօտիկը խրեց, դուրս գնաց զոմի դռնից. բազմականները մնացին լուռ...

ԱՀԱՐՈՆԵԱՆ

81. Մ Շ Ա Կ

Շլինքն արևառ, քըրտինքն երեսին, բեռը շալակած,
Ղարիբ մըշեցին մայդանի [1]) միջին կանգ առաւ յոգնած.

Կոշտացած ձեռքը երեսին տարաւ, քըրտինքը սըրբեց,
Բայց երբ-որ աչքը չորս կողման դարձուց՝ ծանըր ա՜խ քաշեց։

Տեսաւ նա շըքեղ մեծ-մեծ դարբասներ, գոյնըզգոյն ներկած,
Պատշգամբի վըրայ գօզալ [2]) Հայ կանայք շար-իշար նստած.

Ղումաշ հովհարով մարմառ թըշերին հով ու զով տալիս,
Փըրփուր շորերը թեթև քամիէն փըրփըռան գալիս։

[1]) Մայդան—հրապարակ. [2]) գօզալ—գեղեցիկ։

Զուխտակ արտասունք ջուհար ակի [1]) պէս աչքին ցոլացին.
«Մըշակ չիլե՞ թէ միտքըդ բերիր քո կարօտած եարին [2])»։

Մըշակը լուռ էր, նա ինձ չի տըւեց ոչինչ պատասխան,
Դարբասը թողած՝ աչքերը դարձուց նա դէպի մայդան.

Երկլուծ կառքի մէջ տեսաւ թեք ընկած մէկ նիհար տըղայ,
Չաշմակը [3]) աչքին, բերնին նարգիլէ [4])՝ զինչ թուրքի աղա.

Մըշակի շըրթին աննշմարելի մէկ ժըպիտ խաղաց։
«Մըշա՛կ, այդ ի՞նչ էր, որ սիրտըդ խօսեց՝ ծա՞ղըր, թէ՞ նախանձ»։

Մըշակը ինձի պատասխան չի տուեց, ասես թէ լալ [5]) էր.
Բայց հոգեբանը իսկոյն կ'իմանար՝ հոգին ի՞նչ հալն [6]) էր։

Մայդանը թողած նա աչքը դարձուց լայն մեծ փողոցին,
Ոչ-ոք չիմանալ թէ այն րոպէին ի՞նչ խօսեց հոգին.

Գունդ-գունդ գալիս էր ձիով ու հետի սպառազէն լաշքեար [7]),
Առջևը առած հարիւր ու հազար թըմբկահար, փողհար.

Ցընծալիր երգով զօրքը տօնում էր իր յաղթութիւնը.
Վա՜յ քեզ, խեղճ... քանդել էր քու ազգի տունը...

Մըշակը լուռ-մունջ մէկ դի քաշուեցաւ, դողդոջուն ոտքով
Իր ճամփան գընաց՝ ծանըր տընքալով, կամաց երգելով.

Բահարն [8]) էկաւ՝ ծառը ծիլ-ծիլ ծաղկեցաւ,
Ձիւնը փախաւ, երբ արևը ծագեցաւ.
Երնե՜կ արևն կամ բահարը մեր Հային
Խելք, միտք, նոր բարք, եաքի նոր վարք շնորհէին։

Հա՜յ, բա՜ց աչքըդ, քու կորուստը մօտիկ է,
Զիմանաս, որ տըրին-տարին [9]) զատիկ է,
Եալփաղանը, ղումաշ շորը քու եարին
Զանգուլներէդ շատ հազարներ դուս տարին։

[1]) Ջուհար ակ—թանկագին քար. [2]) եար—սիրուհի, ամուսին. [3]) չէշմակ—ակնոց. [4]) նարգիլէ—ծխախոտ քաշելու համար պատրաստած յատուկ գործիք. [5]) լալ—մունջ, համր. [6]) հալ—դրութիւն. [7]) լաշքեար—զօրախումբ. [8]) բահար—գարուն. [9]) տըրին—տարին—ամբողջ տարին։

Աս ի՛նչ տեսնամ,—սեւլաւ կուգայ հիւսիւէն...
Հա՛յ մարդ, թէզով ժողվէ՛ քու փաս ու փուսէն,
Ա՛ռ գըլուխըդ, քոչէ դէպի քու աշխարհ,
Քանի օրէն ունըդ բունըդ չես ճանչնար։

82. ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՆՔԸ

Մայր-Արաքսի ափերով քայլամոլոր գընում եմ, հին-հին դարուց յիշատակ ալեաց մէջը պըտրում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ, պըղտոր ջրով եզերքին, զարկ-զարկ խփելով փախչում էին լալագին։

—Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ պար չես բռնում մանկական, դու դեռ ծովը չի հասած սըգւոր ես ինձ նըման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են քու սէգ, հըպարտ աչերից, ինչո՞ւ արագ փախչում ես այդ հարազատ ափերից։

Մի՛ պըղտորիլ յատակըդ, հանդարտ հոսէ խայտալով. մանկութիւնը քու կարճ է, շուտ կըհասնիս դէպի ծով։

Վարդի թըփեր թո՛ղ բըսնին քու հիւրընկալ ափի մօտ, սոխակները նոցա մէջ երգեն մինչև առաւօտ։

Մշտադալար ուռիներ սառ ծոցի մէջ քու ջըրին ճկուն ոստն ու տերև թո՛ղ թաց անեն տապ օրին։

Ափերիդ մօտ երգելու հովիւք թո՛ղ գան համարձակ, գառն ու ուլը քու վճիտ ջուրը մըտնին միշտ արձակ։—

Մէջքը ուռցուց Արաքսը, փրփուր հանեց իր տակից, ամպի նըման գոռալով էսպէս խօսեց յատակից.

«Խիզա՛խ, անմիտ պատանի, նիրհըս ինչո՞ւ դարևոր վըրդովում ես, նորոգում իմ ցաւերը բիւրաւոր»։

«Սիրելիի մահից յետ երբ ես տեսել, որ այրին ոտքից գըլուխ պըճնուի իր զարդերով թանկագին»։

«Որի՞ համար զարդարուիմ, որի՞ աչքը հրապուրեմ,— շատերն ինձ են ատելի, շատերին ես օտար եմ»...

«Կար ժամանակ, որ ես էլ՝ շըքեղազարդ հարսի պէս հազար ու բիւր պըչրանքով փախչում էի ափերէս։»

«Յատակս պարզ ու վճիտ, կոհակներս ոլորուն, լուսաբերը մինչև այդ ջըրիս միջին էր լողում։»

«Ի՞նչըս մընաց էն օրից, ո՞ր ջըրամօտ դեղերըս, ո՞րը իմ չէն քաղաքից, ո՞ր բերկրալի տեղերըս։»

«Տուրքը ջըրի ամեն օր իր սուրբ ծոցէն Արարատ մայրախընամ ինձ սնունդ պարգևում է լիառատ»։

«Բայց ես այն սուրբ ջրերով Սուրբ Ակոբի աղբիւրին պիտի ցօղեմ արտորայքն իմ ատելի օտարին»։

Կամ՝ կենսատու իմ ջրով, ափերիս մօտ կըկըզած, իւր նամա՛զը կատարէ Թուրքը կամ պարսիկը հոտած»։

«Մինչ իմ որդիք,—ո՜վ գիտէ—ծարաւ, նօթի, անտէրունչ օտար աշխարհ յածում են թոյլ ոտքերով կիսաշունչ»...

«Հեռո՛ւ, հեռո՛ւ քըշեցին բընիկ ազգըն իմ հայկեան, նորա տեղը ինձ տուին ազգ անկըրօն, մոլեկան»։

«Դոցա՞ համար զարդարեմ իմ հիւրընկալ ափերը, և կամ դոցա՞ հրապուրեմ ճըպռոտ, պըլշած աչերը»։

«Քանի որ իմ զաւակունք այսպէս կումըռան պանդուխտ, ինձ միշտ սըգւոր կըտեսնէք, այս է անխաբէմ սուրբ ուխտ...»։

Էլ չի խօսեց Արաքսը, յորձանք տուեց ահագին, օղակ-օղակ օձի պէս առաջ սողաց մոլեգին։

83. ԲԱԺԱԿ ՓՐԿՈՒԹԵԱՆ

Ահա մթնեց արեւմուտքը Հրէաստանի աշխարհին,
Պայծառ օրը տեղի տըւեց երեկոյեան խաւարին.
Արեգական վերջին լուսով դեմ կըփայլէր վառ-վառ
Գրկած պատած այգիներով Ելէօնին սուրբ կատար։

Երուսաղէմ—փառք հնութեան՝ լերանց վերայ հանգչում էր,
Կարկաչելով Յորդանանը ափերի մէջ թաղչում էր,
Մեռեալ ծովը քընաթաթախ աչերն ի վեր ամբարձած,
Համարում էր անթիւ աստղեր՝ երկնից տեսքին ըղմայլած։

Մութը իջաւ... տարածուեցաւ գերեզմանի լըռութիւն.
Ծագեց լուսինն ու լոյս տըւեց Գեթսեմանի այգւոն,
Ձիթենիի ծառերի տակ՝ հողի վերայ տարածուած,
Երեք հոգի խոր քնել են՝ դարդն ու հոգսը մոռացած։

Բայց ուրիշ քուն կաշկանդել էր համայն ազգը մարդկութեան,
Խըրուած, թաղուած մինչի կոկորդ ճահիճի մէջ մոլութեան.
Միայն Մինի սուրբ աչերից քունը հեռի էր փախչում,
Ո՛չ խայթ խըղճի, ո՛չ աշխարանք նորա հոգին էր տանջում։

Նա անմեղ էր. մոլութենին նա միշտ մընաց անհաղորդ,
Լոկ մարդկութեան համար թափեց այնօր արցունք աչքից յորդ.
Մահագուշակ սասսուռ ընկաւ նորա տըկար մարմինին,
Երբ փրկութեան մարդկան ազգի բաժակ տեսաւ առաջին։

«Հա՛յր, գոչեց նա, վիշտը հոգին իմ ճընշում է չարաչար,
«Քանի որ գամ, պըսակ ու փուշ աչքէս անցնում են շար-շար.
«Կուգայ ժամը, ես այդ գիտեմ, գառը կ'լինի ողջակէզ,
«Չի տրտնջալ իւր վիճակէն, կըխոնարհէ գլուխը հեզ։

«Միակ որդիդ պիտի մեռնի, որ ազգ մարդկան ազատէ,
«Անգոհ մարդը նորա գլխին հայհոյանքներ կըթափէ.
«Հա՛յր, Հա՛յր, ինձնից թո՛ղ հեռանայ այս բաժակը դառնութեան,
«Որոց համար ես պիտ՛ մեռնիմ՝ ընաւ չ'արժեն փըրկութեան.
«Բայց թէ Որդուդ դառըն մահը ազգիդ կուտայ նոր մի կեանք,
«Նոցա անթիւ մեղաց համար լիցի արիւնն իմ փրկանք»։

Ռ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

84. ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

«Հայրի՛կ, ասաց դուստրը հօրը, կապոյտ երկնքի վըրայ որքան աստղեր փայլում են վառ, անես համար, թիւ չըկայ.

Ասում են, որ ամենայն մարդ աստղիկ ունի երկնքում. ճշմարի՞տ է, ասա, հայրիկ, իմը ո՞րտեղ է փայլում»։

—«Այո՛, դստրի՛կ, այդ աստղերը ունին հաշիւ ու համար, և մեզանից իւրաքանչիւրն մի աստղ ունի իւր համար»։

Հայրիկ, տե՛ս, տե՛ս, աստղ թըռաւ, հետքից պայծառ գիծ թողեց, աստղիկն ընկաւ երկնքից, միւս անգամ այլ չերևեց»։

—«Ո՛վ իմ դստրիկ, հանգիստ կացիր, դա մեծատան մի աստղ էր, որ իւր օրում, իւր կեանքումը խիղճ ասածը չըգիտէր. աղքատները նրա դռնից գիշեր-ցերեկ հալածուած, մի մարդ չըկար նրան ծանօթ, որ չըլինէր վշտացած»:

«Հայրիկ, տե՛ս, տե՛ս, աստղ թըռաւ, հետքից պայծառ գիծ թողեց, աստղիկն ընկաւ երկնքիցը, միւս անգամ այլ չերևեց»:

—«Ո՛վ իմ զաւակ, մի՛ վրդովուիր, դա աղջըկայ մի աստղ էր, որ խրատը իւր հօր ու մօր իւր կեանքումը յարգած չէր. նա փախել էր իրանց տնից... մուր էր քըսել տան վըրայ... իւր ծընողքը լացացըրել, ինչքը վատնել անխըղճայ»:

«Հայրիկ, դարձեալ թըռաւ մի աստղ, վայր ընկաւ նա երկնքից. հայրիկ, ո՞րի աստղն էր արդեօք, որ գլխուեցաւ իւր տեղից:

—«Ո՛հ, դստրիկս, հանգիստ կացիր, կեղծաւորի դա աստղ էր, որ իւր օրում ուղիղ մի խօսք մարդու երբէք ասած չէր: Փարիսական իւր ձևերով աշխարհ խաբեց, զարմացրեց, այդ պատճառով Աստուած նրա աստղի լոյսը խաւարցրեց»:

«Հայրիկ, տե՛ս, տե՛ս, մի՛ աստղ թըռաւ և գիծ անգամ չըթողեց, աստղիկն ընկաւ երկնքիցը, միւս անգամ այլ չերևեց»:

—«Ո՛հ, սիրուկան, խաղա՜ղ մնա, բռնակալի դա աստղ էր, որ աշխարհը իրան գերի ծնած օրից կարծել էր: Շատ հալածանք, շատ նեղութիւն պատճառեց նա իւր կեանքում. շատ տուն քանդեց, շատ մարդ գրկեց, գութ չունեցաւ իւր սրտում»:

«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ, որ այնպէս պարզ վառւում է, նրա մաքուր պայծառ լոյսը չորս կողմը բռնել է»:

—«Ո՛հ, իմ դստրիկ, աղօթք արա, դա ծերունու մի աստղ է, որ իւր կեանքում երբէք մարդու ոչինչ վընաս տուած չէ: Այն լուսաւոր բակն է նրա առաքինի գործերը. աղօթք արա, որ երկարին նրա կեանքի թելերը»:

85. ԱԶԱՏՆ ԱՍՏՈՒԱԾ

Ազատն Աստուած այն օրից,
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին
Կենդանութիւն պարգևել.
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եւ իմ անզօր թևերով
Ազատութիւնն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ
Օրօրոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած,
Խնդրում էի նորանից
Բազուկներս արձակել.
Ես այն օրից ուխտեցի
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապեր
Արձակվեցան, բացվեցան,

Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,
Նախկին խօսքն, որ ասացի,
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ․
«Ազատութի՛ւն» դուրս թռաւ
Իմ մանկական բերանից։

«Ազատութի՛ւն», ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից․
«Ազատութեան դու զինուոր
Կամիս գրվիլ այս օրից։
Ո՛հ, փշոտ է ճանապարհ,
Քեզ շատ փորձանք կըսպասէ․
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ է»։

Ազատութի՛ւն,—գոչեցի,—
Թող որոտայ իմ գլխին՝
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թո՛ղ դաւ դնէ թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ, պիտ՚ կրկնեմ
Անդադար՝ ազատութի՛ւն։

86. ԻՏԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՅ ԵՐԳԸ

«Մեր հայրենիք, թշուառ, անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ»։

«Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատված»։

«Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ․
Արտասուքով լուացի»։

«Նայի՛ր նորան, երեք գոյնով,
Նուիրական մեր նշան,
Թո՛ղ փողփողի թշնամու դէմ,
Թո՛ղ կործանվի Աւստրիան»։

«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը
Ջանց չարեցի քո սիրուն»։

«Ահա՛ իմ գործ, առ՛ա դրօշ,
Շուտ ձի հեծի՛ր քաջի պէս,
Գնա՛ փրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս»։

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՚ մեռնէ․
Բայց երանի՜, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհվի»։

«Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգի սէրը քաջալեր,
Գնա՛, թէև չեմ կարող գալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր»,

«Գնա՛ մեռի՛ր դու քաջի պէս,
Թո՛ղ չտեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է Իտալացին»։

Ասաց, տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ուր երեք գոյն կան որոշ:

Եղբայրն առաւ և ողջունեց
Իւր սիրական քնքուշ քոյր,
Առաւ զէնքը, սուր, հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր:

—Քուրիկ,—կանչեց քաջ պատանին,—
Մնաս բարեաւ, սիրական,
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակ իտալեան:

Նա սուրբ է ինձ, երբ մկրտած
Արտասուքով ու կնքած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրված:

Թէ մեռանիմ, դու մի՛ սգար,
Իմացի՛ր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն,
Իմ հետ քանի թշնամի:

Ասաց, վազեց դէպի հանդէս
Աւստրիացոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէժ,
Ազատութիւն իտալեան:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

87. ԳԻՒՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Աչքներդ լոյս լինի, սանահէր Բաբկէն, ասաց Գարեգինը. ախպէր, լաւ թաքուն-թաքուն բաներ ունիս:

«Դէ, քաւոր ջան, մէկէլ չուզեցի քեզ նեղութիւն տամ, պատասխանեց Բաբկէնը:

—Շատ ուրախ եմ, ասեց Գարեգինը. շատ լաւ էք արել: Ո՞ւմ աղջիկն է:

«Մանդակունենց Արմենակի:

—Ես ու իմ Աստուածը արժան է, ասաց Գարեգինը. Աստուած շնորհաւոր անի. դէ բերէք նշանը տեսնենք:

Այն րոպէին մէջտեղ բերին մի մատուցարան, լիքը քաղցրեղէնով՝ չորացրած մրգեղէն, չորս գլուխ Իսպահանու շաքար, միքանի հատ լաւ նուռը, մի կարմիր չաղրաթ [1]), մի դեղին Բաղդադի աղլուխ, ոսկի մատանին ըրտնումը կապած, տասներկու հատ էլ պաճախլու [2]):

—Աստուած շնորհաւոր անի, մօտ քաշելով ասաց Գարեգինը. յետոյ աղլուխները ձեռն առնելով, աւելացրեց. սանահէր Բաբկէն, երկու աղլուխն էլ նո՞ր ծէս է:

«Չէ, քաւոր ջան, ասաց Բաբկէնը. էդ նորա համար եմ դրել, որ հրամանքդ ինչպէս կարգադրես, էնպէս անենք. եթէ երեսը կալ պիտի պակենք, չաղրաթը տանենք, իսկ եթէ բաց՝ Բաղդադի աղլուխը. ես միքիչ ուզում եմ, որ մեր հին օրէնքումն երթամ, բայց սանամէրդ համաձայն չի. երբ-որ տեսաւ թէ իրան խօսքին ականջ չեմ անում, ասաց՝ թո՛ղ քաւորիս կամքովը լինի:

—Հեռացրէք չաղրաթը, ասաց Գարեգինը. Աստուած պատկեր է տուել, որ երեւայ. երես ծածկելը ոչ մի երկրում չկայ. ինչո՞ւ պէտք է հէնց մեր հայերիս մէջ լինի. դա Թուրքից մնացած սովորութիւն է:

Չաղրաթը յետ դրին: Այնուհետև մի ջահէլ տղայ մատուցարանը դրեց գլխին, գաւը ձեռն առաւ և գնացին նոր խնամոնց տունը:

Նրանք էլ իրանց բարեկամներին հաւաքած սրանց էին սպասում:

—Բարի իրիկուն ձեզ, ներս մտնելով ասացին սրանք:

«Ա՛յ, Աստուածու բարին ձե՛զ. դուք բարի՛, հազար բարի. վերև համեցէք, առաջ գալով ասաց աղջկայ հայրը:

Յետոյ բարեկամները նստոտեցին ընդունուած կարգով. պատուաւոր տեղը բռնեցին տղայի բարեկամները. նրանցից յետոյ նստեցին աղջկայ բարեկամները. քաւոր Գարեգինը բազմեց ամենքից վերեւը դօշակի վրայ, իսկ երկու նոր խնամիքը ամենքից ներքև տեղ բռնեցին:

---

[1]) Չաղրաթ—մետաքսէ մեծ թաշկինակ, հարսի գլխին գցելու. [2]) պաճախլու—պարսկական ոսկէ դրամ:

— Արմենակ ապէր, ձայն տուեց Գարեգինը. մենք ուզում ենք, որ իրար հետ բարեկամութիւն հաստատենք. դու ինչպէս ես կամենում։

«Ես իմ կամենալուցը պրծել եմ, պատասխանեց Արմենակը։

—Բաս որ այդպէս է, Աստուած շնորհաւոր անի, ասաց Գարեգինը ու մատուցարանի երեսը բաց արեց։

—Աստուած շնորհաւոր անի, ձայն տուին ամենքը։

—Մեր ադաթումը [1]) չկայ, որ բերենք հարսնացուին էլ հարցնենք ու այնպէս նշանը մատը դնենք, ասաց Գարեգինը. մեր աղջիկները ուրիշների պէս չեն, իրանց հօրն ու մօրը հնազանդ են. սրա համար էլ միտք անել պէտք չի՝ թէ աղջկայ սիրտը ինչպէս է։ Այ լսեցէք՝ մեր նշանը սա է. մի ոսկէ մատանիք (ասեց, վեր կալաւ, ցոյց տուեց ու վեր դրեց). մի Բաղդադի աղլուխ, տասներկու էլ ոսկի. Աստուած շնորհաւոր անի։

Յետոյ իրանց բերած գինուցը մի թաս ձեռն առաւ ու ասաց. «Սանահէր Բաբկէն, աչքդ լոյս լինի, Աստուած քեզ բաշխի, իրար հետ ալևորին, իրար հետ պառաւին, մի բարձի ծերանան, հնազանդ լինին, սէր-միաբան ապրին, հող են՝ ոսկի դառնան։ Սանահէր Արմենակ, քո աչքդ էլ լոյս, Աստուած փեսիդ էլ, աղջկանդ էլ քեզ բաշխի։ Բարեկամներ, ողջ լինիք. Աստուած այս ուրախութիւնն ամեն մարդի տան էլ հանդիպեցնի... Ասաց ու խմեց։

—Անուշ, անուշ, քաւոր Գարեգին. քու աչքն էլ լոյս. այս ուրախութիւնը քոնն է. կարմիրդ կապենք. մի օր այս ուղտը քո դռանն էլ չոքի, ձայն տուին այստեղից, այնտեղից։

Յետոյ ամենքն էլ մի-մի թաս գինի խմեցին ու աչքալոյս խօսեցին։

Նշանից յետոյ հացը քաշեցին [2]). լաւ պատրաստութիւն էին տեսել խնամիքը։ Ամեն թասի վրայ բացի աչքալուսից ու բարեմաղթութիւններից ուրիշ բան չկար։

Հացից յետոյ Գարեգինը հարցրեց Արմենակին. Երբ էք կամենում որ գանք, բարկը [3]) բարիշենք։

—Երբ ուզում էք եկէք, պատասխանեց Արմենակը։

---

[1]) Ադաթ—սովորոյթք. [2]) հացը քաշել—սուփրա գցել, սեղան պատրաստել. [3]) բաշկ—այն դրամը, որ փեսայի հայրը տալիս է հարսի հօրը բաժինքի պատրաստութիւնները հոգալու համար։

—Լաւ, ասացին, էգուց իրիկուն կըգանք, բարկը կըվերջացնենք։

Միւս առաւօտ, լուսաբացին, սանահօր տանիցն եկան Գարեգնին կանչեցին, որ գնան, աղջկայ տիրոջ դռանը աչքալոյս խմեն։ Վեր առան մի քիչ մազայ [1]), մի շիշ արաղ ու գնացին, աղջկայ հօր շէմքումը մի-մի թաս աչքալոյս խմեցին։

Երեկոյին Գարեգինը միքանի բարեկամների ու տղայի հօր հետ գնացին խնամոնց տուն։

—Սանահէր Արմենակ, սա մեր պապերից մնացած կարգ է և դուք, ինչ որ կամենաք, պէտք է պահանջէք մեզանից. ինչ էք ուզում. մի վախենաք, փառք Աստուծու, տեղը լիքն է. ողջ լինի սանահէրս, այնքան աշխատել է, որ ձեզ էլ է բաւական, մեզ էլ։

—Ձեր ողջութիւնն եմ ուզում, պատասխանեց Արմենակը. ես իմ փոխարէն հաւատարմատար եմ նշանակում մեր Ներսէհին. նա ինչ կարգադրութիւն անի, ինձ ընդունելի է։

—Որ այդպէս է, ասաց Գարեգինը, Ներսէհ եղբայր, հրամայիր, տեսնենք. բանը քեզ վրայ մնաց. մենք ուզում ենք էգուց բազար գնալ, որ տակի շաբթին [2]), թէ Աստուած յաջողի, հարսանիք անենք. ինչ ես կամենում։

—Քաւոր Գարեգին, պատասխանեց Ներսէհը. շատ լաւ ես հրամայում, քեզանից կ'ուզեմ քսան մանէթ փող, մի ծիրանի ղանաւուզ [3])՝ մօրը կաթնագին, մի մահուդ չուխացու՝ հօրը, տասը լիտր միս, հինգ լիտր բրինձ, մի լիտր իւղ, մէկ էլ ձեր սաղութիւնը. եթէ հարսանիքը պասի նստացնէք՝ հինգ լիտր միս, երեք լիտր ոսպ։

—Շատ լաւ, ասաց Գարեգինը. փողն աչքներիս վրայ, կըտանք, խալաթներն էլ հետը. բայց մնացած բաները չենք տալ. հիմի դրանք վերացել են. մեզ համար ամօթ է, որ զուռնաչին ածելով ընկնի գեղի մէջը, թէ ես բախու [4]) եմ տանում. եթէ կամենաք քսանըհինգ մանէթ փող կըտանք, իսկ այդ բաները չէ։

—Թող քո ասածը լինի, համաձայնուեց Ներսէհը, և բաժակը լցնելով, ասաց. Աստուած շնորհաւոր անի, ու խմեց։ Ամենքն էլ,

---

[1]) Մազայ—օղու հետ բերուող չոր միրգ, շաքարեղէն, քաղցրաւենիք. [2]) տակի շաբթին—եկող շաբթին. [3]) ղանաւուզ—մետաքսէ կտորի մի տեսակը. [4]) բախու—փեսայի հօր կողմից հարսի հօրը տուած հարսանիքի ուտելիքը։

նրան հետևելով, մի-մի բաժակ գինի խմեցին։ Բարկէնը հանեց քսանուհինգ մանէթը և տուեց Արմենակին։

Միւս օրը խնամին ու քաւորը գնացին Երևան ճոթն առան և ինչ որ հարկաւորն էր՝ բերին. հարսանիքի շորերն էլ տուին այնտեղ կարելու։

Պ. ՊՌՕՇԵԱՆ

88. ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՐՍԱՆԻՔ

I

Տակի շաբթի չորեքշաբթի օրը սանահէր Բարկէնը իմաց տուեց քաւոր Գարեգինին, որ էգուց իրիկուն հարսանիքի տաշտադրէքն [1] է. պատրաստ լինի, որ խաչեղբայր գայ։

—Շատ բարի, ասաց Գարեգինը. մենք խաչից փախչող չենք, միամիտ լինէք։

Միւս օրը տղի բարեկամները Գարեգնի ու նրա եղբօր հետ գնացին տաշտադրէքի։ Հէնց որ նրանք ներս մտան, տէրտէրը համեցէք արեց, իրա կշտին նստացրեց ու հացը քաշիլ տուեց։ Բողբաշի վրայ տէրտէրը մի թաս գինի առաւ ձեռը ու ասաց. «Օրհնեալ լինիք, Աստուած շնորհաւոր արասցէ. պարոն Բարկէն, աչքդ լոյս եղիցի. բարեկամնէր, ձեր աչքն էլ լոյս եղիցի. գիտէք ինչ կայ, որդիք. ձեր բարի սովորութիւնն է, որ այս երեկոյ տաշտադրէք էք անում, այսինքն թէ կամենում էք իմաց անել, որ էգուց իրիկուն հարսանիք է։ Ի հարկէ պարոն Բարկէնի գլուխը խառնուած կլինի, չի կարող մեզ կառավարել. մի ձեռը ծափ չի տալ. պէտք է որ միքանի բարեկամներ օգնական լինիք նորան և մեզ էլ այս քանի օրս կառավարէք։ Պարոն Բարկէն, ո՞ւմն ես ուզում, որ կառավարիչ նշանակենք»։

Բարկէնը ցոյց տուեց կառավարիչի համար իւր փեսայ Գուրգէնին, նրան օգնական իւր հօրեղբօր տղայ Վաղարշին. մուճուր (տնտես) ընտրեցին Արամին և նրան տուին երկու օգնական.

[1]) Տաշտադրէք ասում են այն երեկոյին, որի միւս օրը հարսանիքը պէտք է սկսի. որովհետև այսօր են թխում հարսանիքի հացը, որի ալիւրը մաղելիս՝ եօթը տանից ազապ աղջիկ են կանչում, որ նրանք ամենքը մի-մին մաղ մաղեն տաշտի մէջ։ Սրա համար ասում են այս երեկոյին տաշտադրէք։ Այս երեկոյին ընտրում են հարսանեաց բոլոր կառավարողներին և ծառայողներին իրանց մերձաւոր բարեկամաց խորհրդատուութեամբ։ Ծան. հեղին.

բացի սորանցից նշանակեցին և մարդ հրաւիրողներ։ Յետոյ տէրտէրը վեր առաւ բաժակն ու ասաց. «Էս մէկ թասը խմենք պարոն Գուրգէնի կենացը՝ բարով կառավարի»։ Յետոյ կարգով խմեցին մուճուրի ու օգնականների կենացը և հացը վեր քաղեցին։

Միւս օրը, արևը որ միքիչ բարձրացաւ, հարսանիքի տանից եկան խաչեղբօրը կանչեցին, որ գայ մացուն մորթելիս ներկայ լինի։ Երբոր եկաւ, մէջտեղ բերին մի մեծ եզը, վայր գցեցին և զուռնաչուն հրամայեցին, որ մորթելու եղանակն ածի։ (Արիւնը գալիս՝ Գարեգինը մի բաց կողպէք թաթախ արեց մէջը, կողպեց, բանալիքը ջէբը դրեց [1] ու վերադարձաւ տուն)։

Իրիկնապահին, արևը որ միքիչ կախ ընկաւ, փեսան միքանի ազապների հետ, ձի նստած, եկաւ խաչեղբօր տունը, դափ ու զուռնէն առաջին ածելով։ Այդտեղ պատրաստած էր տաք ջուր լողանալու համար։ Լողանալուց յետոյ՝ հագաւ թագաւորական զգեստը և Գարեգնի ու միւս ազապների հետ ձի նստեցին, դափ ու զուռնէն առաջներին ածիլ տալով, գնացին Մողնի ուխտ անելու։ Զուռնաչիքը սրբատեղից հեռու մնացին, իսկ նրանք գնացին վանքը, համբուրեցին և այնտեղ նստող հայր-սուրբին համեցէք արին հարսանիքին. նա էլ շնորհակալութիւն արեց, օրհնեց և ասաց, որ իր բաժինը իրանք քէֆ անեն։

Վերադարձին տղայքը, հէնց որ Աշտարակին մօտեցան, գիւղի գլխին, մի տափարակ տեղ սկսեցին ձի խաղացնել, իրանց շնորքը ցոյց տալ. յետոյ եկան, Գարեգնենց դուռը վեր իջան։ Եկան, նստեցին, խաղն ու տաղը չաղ արին։

Դեռ հացը չքաշած, դալլաքն եկաւ՝ փեսայի ու մնացած ազապների երեսը վեր արեց։ Յետոյ հացը քաշեցին։ Դէ արի հիմիկ ու տես թէ մեր ազապները ինչ քէֆի են. մեծ մարդ չկայ մէջները, բոլորը հասակակից տղայք են, ոչ-ոքից չեն ամաչում. այնպէս են իրար բերնից խաղն ու տաղը առնում ու երգում, այնպէս են լեզգի և ուրիշ զանազան պարեր պարում, որ կասես թէ այս տղայքը միշտ պարապ ու հանգիստ են եղած, յոգնածութիւն չեն տեսած։

Հացից յետոյ մեղրամոմը բաժանեցին ազապներին. բոլորը ոտի կանգնեցին, մոմերը վառեցին. զուռնաչին ածեց։ Գարեգնի

[1]) Այս կողպէքը խաչեղբայրը բաց է անում նարօտը յետ անելու ժամին։

քոյր Անուշը մի Բաղդադի աղլուխ ձեռին դուրս եկաւ, պարեց, յետոյ մօտեցաւ փեսային, գլուխ տուեց, երկու անգամ կրծքին խաչմերուկ քաշեց և աղլուխը կապեց փեսայի պարանոցը. աղլուխի մի տուտը ամրացրեց աջ ուսի վրայ, միւս տուտը ձախ գօտկատակին։

Սա եղաւ փեսի առաջին ուսակապը (յուսբանդը), որ է նշան նորափեսայութեան։

Յետոյ փեսան խնդրեց Սօսին, որ այս երեք օրը նեղութիւն կրի, իրան փեսեղբայր լինի։ Նա էլ յանձն առաւ ու Թուրը կապեց մէջքը, մի գաւ գինի, մի Թէփշով չոր մրգեղէն ձեռն առաւ ու դուրս գնացին։ Առաջից գնում էին ազապները՝ տաղ ասելով և Թմբուկ ածելով. նրանց յետևից—փեսեղբայրը, յետոյ խաչեղբայրը, ապա փեսան. սա էր ընդունուած կարգը։ Գնում էին եկեղեցի։ Ճանապարհին որքան ազապ ընկերներ էին պատահում, փեսայի հետ պռօշտի էին անում և ասում. վաճառքդ շնորհաւոր լինի, և միանում էին գնացողների հետ։ Եկեղեցու դռանը դափ ու զուռնէն կտրեցին, ներս մտան, ուխտ արին, նորափեսին պարզերեսութիւն խնդրեցին։ Վերադարձին գնացին գիւղի աղաների և իրանց հիւանդ բարեկամների տները. նրանց էլ հարսանիք հրաւիրեցին։ Նրանցից շատերը մի-մին յուսբանդ էին կապում փեսայի շլնքին։

Հարսանիքը այս երեկոյ նստեց (սկսուեց)։ Փեսեղբայրը խաչեղբօրն ու փեսային ներս տարաւ մեծ տունը, նրանց համար առանձնապէս պատրաստած պատուաւոր Թախտի վրայ կանգնացրեց։ Տունը լիքն էր հիւրերով։ Մեծ տուն էր. կըտանէր մինչև երկուհարիւր հոգի։ Մի կողմը կարգին նստած էին տղամարդիկը. միւս կողմը խռնուած էին կանայք իրանց երեխաներով։ Աղմուկը քանի գնում՝ սաստկանում էր։ Խեղճ տէրտէրը ճարահատուած ձայն տուեց. «պարոն կառավարիչ, Գուրգէն եղբայր, հաց բերէք»։

—Տէրտէր ջան, աջիդ մեռնիմ, միքիչ համբերիր, պատասխանում է Գուրգէնը։

Վերջապէս հացը քաշեցին։ Տէրտէրը սեղանն օրհնեց և ամենքը սկսեցին վայելել։ Նորափեսան իրան երկու ընկերներով բարձի վրայ կանգնած է. մինչև հացկերոյթը չվերջանայ, մեծամարդը դուրս չգնայ, նրանց նստել չկայ։

Ուրախութիւնը քանի գնաց՝ սաստկացաւ։ Փլաւը մատուցա-

նելիս խաչեղբօր տանից խոնչայ եկաւ դափ ու զուռնով, խոնչի հետ էլ խաչեղբօր ընտանիքը. մի պօղնոց լիքը քաղցրեղէն էր, մի Թղթով հինայ, հարսի ու փեսի ձեռները ներկելու համար, երկու գլուխ շաքար, մի գաւ էլ գինի. պօղնոցի չորս անկիւնում չորս մոմ կար վառած։ Բերին՝ տէրտէրի առաջին վեր դրին։ «Շէն կենայ մեր խաչեղբայրը», ասաց տէրտէրը։ Երկու փոքրիկ ափսէի վրայ քաղցրեղէն ածեց, բաժակը մէջը դրեց, խաչեղբօր գինուցը լցրեց և դորանով խմեց նորափեսի ու խաչեղբօր կենացը։ Հիւրերը հետևեցին տէրտէրի օրինակին։ Գարեգինը փեսայի կողմից շնորհակալութիւն արեց։ Հացկերոյթը վերջացաւ. զուռնաչին ածեց դուրս գնալու եղանակը և մարդիկ ցրուեցան իրանց տները։

Մարդկանցից յետոյ կանայք հացի նստեցին։ Թող սրանք էստեղ հաց ուտեն, մենք գնանք հարսի տունը։

III

Հարսի հայրն էլ իւր բարեկամներին էր կանչել. մի մեծ հացկերոյթ էլ նա էր պատրաստել։ Հէնց որ զուռնէն եկեղեցուց փեսային իրանց տուն հասցրեց, գնաց հարսի քեռու տունը։ Հարսնացուն, ըստ սովորութեան, այդ երեկոյ պէտք է իրանց տանը չլինի. բարեկամի տանից հանդիսաւոր կերպով նրան պէտք է իրանց տուն հասցնեն. զուռնէն հասաւ Թէ չէ, քեռու աղջիկը բերեց մի գլխաշոր, մի-քանի քսակ, մի տուլի լաչաք, դրեց հարսի առաջ իբրև ընծայ. յետոյ ինքը մնացած աղջիկների հետ, դափ ու զուռնէն ածելով, գնացին հարսի հօրանց տուն։ Յետոյ զուռնէն ուղարկեցին փեսանց տուն, որ խաչեղբօր խոնչան բերի։ Այնուհետև զուռնէն ամբողջ երեկոյ պէտք է մնար հարսի հօրանց տանը։ Փեսի տանը եղած ազապ տղաներից շատերն էլ զուռնի հետ հարսնատուն գնացին։ Ուրախութիւնը երկու տան մէջ էլ քանի գնում՝ սաստկանում էր։ Այնտեղ հարս ու աղջիկ զուռնի տակ տեսակ-տեսակ պարեր էին պարում. այստեղ տղայք ու աղջկերք, կուռ կռան տուած, «լէ-լէ» կանչելով, եալլի էին տալիս. ամեն կնիկ իւր աղջկանը հրապարակ էր հանում։ Եալլիբաշի Սօսը «լէ-լէ» կանչելով, մի ձեռով հարևանի կուռը բռնած, միւս ձեռին մի մետաքսէ աղլուխ պտոյտ տալով, երբեմն-երբեմն էլ որ մտիկ չէր տալիս եալլու մէջ մտած Վարդիթերին, էշխիցը խելացնոր էր դառնում։ Վարդիթերն էլ, ճշմարիտ է, պարի մէջն

էր, բայց միայն ոտներն էր ժաժ տալիս՝ աչքն ու միտքը Սօսի վրայ էր։ Ուրախութիւնը շարունակուեց մինչև կէս գիշեր։ Աքաղաղները երեք բերան կանչել էին, սրանք դեռ աղջիկ էին խաղացնում։ Վերջապէս կառավարիչը ձայն տուեց, որ հինէն բերեն։ Նոյն ժամին մի ազապ տղայ գնաց հինի տեփուրը գլխին դրեց և խաղալով բերեց փեսայի առաջը։ Տեփուրի միջին խաչաձև փռած էր երկու լաւաշ. լաւաշների վրայ դրած էր մի աման հինայ, մի աման էլ մաթ (բաքմազ)։ Այդ րոպէին բոլոր պսակուած մարդիկ հեռացան, իսկ ազապները հաւաքուեցին, փեսի առաջին չոքեցին։ Սօսը մօտ եկաւ, թևերը յետ ծալեց և փեսի երկու մատը բռնեց։ Համեցէք, ձայն տուեց նա, նորափեսան ինչքան բարեկամներ ունի, բոլորդ եկէք՝ հինէն դնում ենք։

Առաջ եկաւ փեսի պառաւ տատը, կանգնեց, օրհնեց. որդի, Սիմոն ծերունի դառնաս այս տանը, հայր Աբրահամի օրհնանքը քեզ վրայ լինի. քո գործին արի լինես. իմ տարիքը հասնես. հող բռնես՝ ոսկի դառնայ, լեռ գնաս՝ կանաչի. ճամբիդ փունջ մանիշակ բռնի. էտոցդ սուր լինի. բահդ սարքին լինի. շատ դատես՝ էլ շատ ուտես։

Պառաւը գնաց. յետոյ եկաւ հայրը, հօրեղբարքը... օրհնեցին ու գնացին։

Օրհնանքը որ պրծաւ, Սօսը պինդ հուպ տուեց փեսի երկու մատը ու ասեց. խաչեղբայր, ցնծայ. այս ազապները քո պարտականը չեն, որ փեսի առաջին ծառայութիւն են անում։

Գարեգինն էլ, ինչպէս իրանց սովորութիւնն էր, պատասխանեց. բարեկենդանին մի լաւ ոչխար կ'առնեմ, փեսի հետ միասին կ'երթանք, քէֆ կ'անենք։—Շէն կենայ խաչեղբայրը, ձայն տուեց Սօսը. յետոյ մատը թաթախ արեց հինի մէջ, փեսի աջու ձեռը հինայ դրեց. իսկ ձախ ձեռը թողեց. հարսի ձեռները հինայ դնելուց յետոյ, այդ ձեռն էլ հինայ կըդնեն։

Նորափեսի մի ձեռը որ հինայ դրին, վեր կալան ու դափ ու զուռնով գնացին հարսի ձեռն էլ հինայ դնելու։ Գնացողների հետ էին փեսի քոյրը, խաչեղբոր քոյրը, մէկ էլ միքանի բարեկամ տղայք։ Հարսանքատունը դատարկուեց։ Այդ ժամանակ միայն բերին, փեսի ու խաչեղբոր առաջը հաց դրին։ Սրանց համար լաւ-լաւ բաներ էին պատրաստել՝ գաթայ, հալուայ, հաւի միս, խորոված սուկի ու անուշեղէններ...

IV

Միւս օրը, լուսաբացին, կառավարիչն եկաւ հարսանքատուն և տեսաւ, որ իրան հրամանի համեմատ բոլոր կերակուրների պատրաստութիւնը տեսնուած է։ Ինքն էլ իւր կողմից սկսեց նոր կարգադրութիւններ անել. պատուիրեց զարթեցնել փեսին ու խաչեղբօրը. տղայք ուղարկեց որ գնան հիւրերին հարսանքաճաշի հրաւիրեն. զուռնաչուն էլ հրամայեց սհարի ածել, այսինքն առաւօտեան եղանակը, որ ամենքն իմանան թէ այդ տանը հարսանիք կայ. ինքն էլ Բաբկէնի հետ մտաւ մառանը, գինու կարասների ծեփերը պոկեց, համերը տեսաւ՝ թէ ո՞րն է լաւը. տէրտէրին էլ ապսպրեց, որ գնայ հարսի տունը. ինքն էլ մսի լաւ-լաւ տեղերից միքանի թիքայ խորովիլ տուեց, Բաբկէնի հետ նհար (նախաճաշիկ) արին. դրանից յետոյ հաց ուտելու ժամանակ չէին գտնիլ։

Արևը քիչ-քիչ սկսեց բարձրանալ. պատուելի հիւրերը հաւաքուեցան. մէջ բերին քթէթը (հալաւը, հանդերձը), երեսի շորը հետ քաշեցին, մոփկ տուին, մաշիկների մէջ չամիչ լցնիլ տուին, մին-մին թաս արաղ խմեցին ու վեր կացան դէպի խնամոնց տունը։ Ամենից առաջ գնում էր դափ ու զուռնէն. յետոյ մի տղայ քթէթը գլխին գնում էր պար գալով. դրա յետևից փեսեղբայրը խաչեղբօր ու փեսի հետ՝ փեսեղբօր ձեռքին մի սինու վրայ երկու հատ մեղրամոմ կանաչ ու կարմիր նարօտով փաթաթած, իսկ դրանց յետևից մնացած հիւրերը։

Հարսի հօրանց տանը սիրով ընդունեցին նոր բարեկամներին, վերև նստացրին և տէրտէրը հալաւն օրհնեց։

Զուռնէն ածեցին. մինչև որ հարսը կըհագնուէր, սկսեցին աղջկերանց պար ածել։ Յետոյ բերին փեսի համար նշանակուած ընծաները։ Տեփուրի մէջ դրած էր երեք ջուխտ նախշուն գուլպայ՝ փեսին, խաչեղբօրը ու փեսեղբօրը, երկու կարմիր փաս՝ փեսին ու խաչեղբօրը, երկու էլ երեսսրբիչ։

Կանանց շոր հագնիլը ինչքան շուտ լինի, մի ժամ կըքաշի, ուր մնաց որ հիմի պստիկ հարսին են զարդարում... Երկու ժամից յետոյ միայն եկան, խաչեղբօրը կանչեցին, որ գնայ, հարսի գօտիկը կապի։ Գարեգինը գնաց, հագցնողներին սովորական տուրքը վճարեց. յետոյ առաւ գօտիկը ու, պինդ կապ տալով հարսի մէջքին, ասեց. նշանածիդ հետ այսպէս պինդ սէր ունենաս։

Հարսի ծնողքն եկան, վերջին օրհնանքը տուին. յետոյ նրան կանգնացրին երդկի տակը ալ լաչաքը երեսը քաշած: Տէրտէրը մօտ եկաւ հարս ու փեսին ձեռ-ձեռի տուեց և ճանապարհ ընկան դէպի եկեղեցի: Տարանին (եղանակը) ածեցին. բարեկամների սիրտը փուլ եկաւ. մի կողմը տղայի տէրերը ծափ են տալիս, ուրախանում, միւս կողմը աղջկայ տէրերը, Թաշկինակները աչքներին, հառաչում են ու հեծում: Տարանք, ձայն են տալիս տղատէրերը ու աղջկատիրոջը ծաղրում: Շէմքից դուրս տանելիս զուռնաչին ոտը դէմ արեց ու ամենայն ուժով տարանին պլեց: Հարսի հայրը մի ջուխտ գուլպայ բերեց, կոխեց զուռնաչու ջէբը, որից յետոյ նա փոխեց ածելու եղանակը ու առաջ գնաց: Եկեղեցու մօտ զուռնաչին սուս կացաւ: Այստեղ էլ ժամհարն է կատաղել. ժամի դուռը բաց չի անում: Գարեգինը միքանի սև փող տուեց, նրան ու ներս մտան:

Պսակը վերջացնելուց յետոյ, տէրտէրը բերանացի էլ օրհնեց նրանց, վառեց մոմերը, մինը Թագաւորին տուեց, մինն էլ խաչեղբօրը, խաչն էլ դրեց Թագաւորի գդակածալը:

Ժամի դռնից դուրս գալիս, փեսեղբայրը Թուրը հանեց, դռան գլխին բռնեց, նորապսակներն անցկացան. միևնոյն բանը նա պիտի անէր ամենայն անգամ, երբ նորապսակները ներս մանելու լինէին որևէ դռնից: Զուռնաչին ածեց «արեգական արդարութեան» շարականի եղանակով և ամենքը դիմեցին դէպի Թագաւորի տունը: Հանդիսաւոր գնացքի ժամանակ ում դռնով անց էին կենում, տանտէրը դուրս էր բերում մի աման ձուաձեղ ու մի գաւ գինի, ժամաւորին բաժանում, մի-մին պատառ էլ խաչեղբօրն ու Թագաւորին ուտացնում: Բայց խաչեղբայրն ու Թագաւորը իրարից շատ մօտիկ պէտք է գնային, որ արանքներից մարդ չանցկենայ. եթէ, Աստուած մի՛ արասցէ, ոքմին անցկացաւ, էլ երեխայ չի լինիլ նրանց:

Այսպէս քէֆեր անելով եկան-հասան Թագաւորի հօր տունը: Փեսայի հայրը, հօրեղբայրը, բարեկամ մարդիկ առաջ եկան, համբուրեցին ու պարելով ներս տարան բակը. պարում էին նմանապէս այդտեղ եղած բոլոր ազապ տղայքը: Այստեղ էլ մօտ բերին աւանդական ձուաձեղը. տափուրի վրայ դրած էր մի ամանով կրակ, որի մէջ ծխում էր անուշահոտ խունկը. մուճուրը երեք անգամ պտտացրեց նորապսակների գլխովը ու ներս տարաւ տուն: Յետոյ

առաջ եկան բարեկամ կանայք, համբուրեցին նորապսակներին, մի-մի կտոր շաքար դրին բռները, իրանց խալաթը գցեցին հարսի գլխին ու մէջտեղ անցան պար գալու: Թագաւորի հայրն ու մայրն էլ կուռ-կուռի տուած պարեցին, խնդացին, պաչպչորեցին իրար: Ուրախութիւնը ընդհանուր կերպարանք ստացաւ:

Վերջապէս ներս տարան Թագաւորին ու Թագուհուն, որ Թախտի վրայ կանգնացնեն. բայց այստեղ էլ մի կրակ ու պատիժ կար. մի ութ տարեկան սիրուն տղայ նստել է բարձի վրայ ու վեր չի կենում: Քիչ բան չկարծէք. երեխան նստել է որ նորապսակների աչքը առաջին անգամ տղայ տեսնի, նրանց առջընեկը տղայ լինի: Խաչեղբայրը հանեց մի-երկու սև փող դրեց երեխայի բուռը ու վերկացրեց: Զուռնէն կտրեցին: Տէրտէրը վերջացրեց պահպանիչը: Թագաւորի մեծ քոյրը մի խումբ ջահել աղջիկների հետ պարելով մօտեցաւ նորահարսին, կուռը բռնեց ու ներս տարաւ նրա համար պատրաստած սենեակը՝ Թախտի վրայ կանգնացնելու: Մի փոքրիկ սիրուն աղջիկ էլ այստեղ էր նստել հարսի բարձի վրայ: Սա էլ ուզում է ասել, Թէ ամենքն էլ որ տղայ բերեն, ո՞ւր կըհասնի. առաջ տղայ տեսար, Թո՛ղ առջընեկդ տղայ լինի, ինձ էլ տես, որ աղջիկ էլ ունենաս: Հարսնեղբայրը ջէբից մի քսակ հանեց, տուեց երեխային, վերկացրեց ու հարսին կանգնացրեց իրան տեղը. ինքն էլ նստեց նրա կողքին. մինչև հարսանիքի վերջանալը նա պէտք է մ՛նայ աղջկերանց մէջ:

Հարսին Թախտի վրայ կանգնացնելուց յետոյ, մօտիկ ազգական կանայք եկան, մի-մի ընծայ տուին և առաջարկեցին նստել. առաջ եկաւ քաւորամէրը, հարսի ձեռը մի փարայ դրեց ու առաջարկեց նստել: Յետոյ եկաւ սկեսուրը. որդի ջան, ասեց, տունս քոնն է, տեղս քոնն է, քունջ ու պուճախս քոնն է, դու իմն ես, ես էլ քոնն եմ. մի՛ ամաչիլ, նստի՛ր, ասեց ու մի ջուխտ արծաթէ քորոց դրեց բուռը,—Թուշը պաչեց յետ դառաւ: Յետոյ եկան միւս կանայք, համբուրեցին, մի-մի բան ընծայեցին ու իրաւունք տուին, որ նստի. նա էլ նստեց:

V

Հարսանիքի պսակաճաշն է. բարեկամներից զատ, գիւղումն ինչքան լաւ մարդիկ կան՝ կանչուած են: Տունը մինչև դուռը երեք շարք նստոտած են: Վերի գլխին նստած է Ստեփան աղան. նրա

խօսքը Թրի պէս կտրուկ է, ինքն էլ մարդի սիրտ բաց անող, ուրախութիւն սիրող։ Բա՛րկէն, շնորքդ կտրուի, ժողովրդին նստացրել ես այստեղ մալահա՛թի. չո՛ւտ արա, հա՛ց բեր։ Կառավարի՛չ, քու կառավարութիւնդ գլխովդ դիպչի. որ այսպէս պէտք է ուշացնէիր, ընչո՞ւ չէիր մեզ ասում, որ առաջ մեր տներումը հաց ուտէնք, յետոյ գանք։

—Ամա՛ն, աղա՛յ ջան, միքիչ էլ համբերիր. խնամիքը դեռ չեն եկել, ասում է կառավարիչը. ա՛յ տղայ, մի՛ն էլ վազեցէք։

Միքանի րոպէից յետոյ հարսի հայրը իւր մօտիկ բարեկամների հետ ներս են մտնում և բռնում են իրանց համար պատրաստած տեղը։

—Դէ, քու քրդի կողքդ քեզ խռո՛վ, ասում է Ստեփան աղէն Արմենակին. ըսկի ամաչում էլ ես. Թագաւորը Թախտին, խաչը գլխին կանգնած է, էս րոպէիս էլ քո փեսեդ է. խանչալիդ քարը վէր կընկնէ՞ր, որ գլուխ տայիր. դէ, վե՛ր կաց, գլուխ տուր էս սահաթիս, շո՛ւտ։ .

Խեղճ Արմենակը ամաչելով տեղից վեր կացաւ, գլուխ տուեց ու նստեց։

—Դէ, պրծէք, հացը քաշեցէք, ձայն տուեց աղէն։

—Այ, ջանիդ մատաղ, աղայ. դու որ չլինիս, մենք կըկոտորուինք. ոչ պակսիս մեր գլխիցը. հաստատ լինիս էս գիւղումը. քո շուաքը մեր վրիցը անպակաս լինի, ձայն տուին ամեն կողմից խալխը։

Կանգնաւորները հացը քաշեցին. ամեն մի բան բերելիս «Աստուած շնորհաւոր անի» խօսքը հետն էր։ Տէրտէրը հացն օրհնեց ու սուս կացաւ։ Ստեփան աղէն ներկայ էր. որտեղ նա լինի, տէրտէր չէ, շահն էլ համարձակութիւն չունի բերան բանալու։

—Աստուա՛ծ շնորհաւոր անի, ձայն տուեց այս պատուելի մարդը. Բա՛րկէն, աչքդ լոյս, մէկէլ տղերանցդ պսակն էլ տեսնես. բարեկամաց աչքը լոյս լինի։ Հա՛ց կերէք, ուրախութիւն արէք, խմեցէք, փչացրէք. պարո՛ն Արշակ, էդ քո շարքի մարդկանց ուրախութիւնը քեզ եմ յանձնում. Թէ լաւ չես քէֆ անիլ, ինձնից պրծնիլ չես. պարո՛ն Տիգրան, քու շարքինն էլ քեզ եմ տալիս. պարո՛ն Սահակ, դու էլ այդտեղ կառավարիր. մի լա՛ւ, մի լա՛ւ ուրախութիւն անենք, Բարկէնի գեօրը քանդենք։

—Աչքներիս վրայ, աղայ, ձայն տուին այս մարդիկը. գլխներիս վրայ. քո հրամանը կըկատարենք։ Յետոյ ամենքը դարձան իրանց կարգի նստածներին. «աղէն հրամանք արեց, քէֆ արէք, տղայք ջան, մի լաւ ուրախութիւն արէք»։

Խորովածի վրայ Ստեփան աղան Թասն առաւ ձեռն ու ասաց. «Օրհնեա՛ խտէր. այս մի Թասը խմենք նոր խնամիների կենացը. նրանց սիրտը սրանով շահենք. խաբեցինք, աղջիկը ձեռներիցը խլեցինք. Արմենա՛կ, քու կենացը՝ քու բոլոր բարեկամներով. Աստուած ձեր բարեկամութիւնը հաստատ պահի»։ Ասաց ու խմեց։ «Արշա՛կ, դիմեց նա իւր օգնականին. լսեցի՞ր՝ ինչ որ ասի, Թէ ականջներդ բուրդ էր մտել. աստուածատո՛ւր, քո շարքի մարդկանցը խմացրու»։

Արշակը պատասխանեց. «վայելիր և տուր. աչքիս վրայ, աղայ»։ Յետոյ դարձաւ իւր շարքի մարդկանցը. «աղէն հրամայել է, որ նոր խնամիների կենացը խմենք»։ Ինքն էլ աստուածատուր գնաց Տիգրանի մօտ, նա էլ՝ Սահակի, և ամենքը խմեցին։

Միքանի Թասից յետոյ աղան դիմեց կառավարչին. «հաստագլո՛ւխ Գուրգէն, միայն լեզուիդ ես զոռ տալիս, էլ չես մտածում, Թէ այսքան խալխ լցրել եմ տուն ու ճոռ (վատ) գինին փորները կապել. դէհ, անշնորք. հասարակութիւն, հաւա՛ն էք այս գինուն»։

—Չէ, աղա՛յ ջան, գլխիդ մատաղ, շատ վատ գինի է։

—Այս րոպէիս, ա՛ղայ, ձայն տուեց կառավարիչը. դէ, պէտք է դու հրամանք անես, որ մենք էլ գլխներիս վրայ կատարենք. Փառք Աստուծու, մառանը լիքը գինի է. մի մարդ ուղարկէ՛ր, ում որ ուզում ես, գայ, որը կըհաւանի, նրանից բերենք։

—Ես քեզ իմ փոխանակ հաւատարմատար եմ նշանակում, ասաց աղէն. դու՝ քու մարդկութիւնը։

—Գաւերը վեր կալէք, ձայն տուեց կառավարիչը կանգնածաւորներին ու գնաց մառանը։

Նոր բերած գինին առաջուանից լաւն էր. խմեցին մինչև փլաւի գալը։

Տօլմի վրայ Թագաւորի հօրն ու մօր կենացը խմեցին։ Շնորհակալութիւնի ժամանակ աղայ Ստեփանը հրամայեց, որ Բարկէնը ու իր կնիկը մէջտեղը գան, անձամբ շնորհակալութիւն անեն։ Բարկէնն ընդդիմացաւ. Թագաւորի մայրը չէր կարող մարդկանց առաջը դուրս գալ՝ քաւորները ներկայ էին։

Երկար չարչարանքից յետոյ խեղճ կնիկը, քափ ու քրտինք

կոխած, գլուխը քաշ գցած, պինչը քթկալի տակովը խոր կալած խուշուշը մինչև աչքերը ներքև բերած, եկաւ, գլուխ տուեց առաջ քաւորներին, յետոյ հասարակութեանը ու, աչքերը գետին գցած, կանգնեց։

Ստեփան աղէն մօտիկ տուեց Թագաւորմօրն ու ասաց. այս հասարակութիւնը մարդիդ ու քու կենացդ խմել է. պէտք է շնորհակալութիւն անես. առ այդ թասը, մարդիդ հետ պռօշտի արա ու խմիր։

Կնիկը բացասաբար շարժեց գլուխը։

—Է՜հ, որ այդպէս է, ընդունո՞ւմ ես որ մարդդ քո տեղակ շնորհակալութիւն անի։

Կինը գլխով արեց։

Բաբկէնը շնորհակալութիւն արեց։

Տօլմից յետոյ եկաւ փլաւը։ Այդ ժամին աղէն թասը բարձրացրեց ու ասեց. հասարակութիւն, ականջ արէք. այս ուրախութիւնը որ վայելում ենք Թագաւորի, Թագուհու, միքին էլ խաչեղբօր պատճառով է. մենք պէտք է նրանց կենացն էլ անուշ անենք. Թագաւոր, դարձաւ նա դէպի նորապսակը. քու և Թագուհու կենացը, Աստուած ձեզ մի բարձի տիրացնի, ալևորիք, ծերանաք, թոռան, ծռան տէր լինիք. խաչեղբայր, խաչի զօրութիւնը քու բանին, գործին յաջողութիւն տայ, բարով էս օրս դու էլ արժանանաս՝ քու հարսանիքին էլ քէֆ անենք։ Ամա դու մի մղդսի մարդ ես՝ վախում եմ ուշացնես։ Արշակ, աստուածատուր։

Ամենքը բարձրացրին իրանց թասերը և խմեցին նորապսակների ու խաչեղբօր կենացը։

Գարեգինը, փառք Աստուծու, գիտենք, թէ ինչ շնորքի տէր է. բերանը բաց արեց ու շատ քաղաքավարի կերպով շնորհակալութիւն արեց երեքի փոխարէն։ Զուռնաչին ծուանին զլեց. բազմութիւնը, ձեռները բարձրացրած, երեք անգամ կեցցէ ձայն տուեց ու սուս կացաւ։

Կառավարչի ու ծնողների հրամանով Թագաւորը, որ մինչև այդ ժամին կանգնած էր, նստեց հաց ուտելու, բայց չկերաւ։

Դու ուզում ես առանց բերան-բացուկի հա՞ց ուտացնել, ասաց աղէն Արմենակին. մեր գիւղի սովորոյթքը գիտես ո՞չ։

—Հաց կեր, որդի, ասաց Արմենակը ծիծաղելով. ծակ քարափիցը վերև ինչքան մացառուտներ կան՝ քեզ. Ղազի դուզը, Վար-

դանաբակի աւերակները, քարակոյտները, մեր մեծ այգու խխարկէնի ընկուզի ծառը, շուտ հասնուկ խաղողի թուփը, լօդ դեղձի ծառը, մեր քուրսու վերի կողքը, մեր եզի բղուղը, մաթի պուլիկը, մածնի սերը, սերթ-վերթ ձուերը, անուշ պատառները—բոլորը քեզ (դիփ որ սուտ լինի, այս վերջինները հօ զոքանչդ Թագուն քեզ ուտացրած կըլինի). հերիք չէ՞, որդի, էլ ի՞նչ ես ուզում, դէ հաց կեր, հոգիս հօ հանելու չե՞ս։

Թագաւորի առաջը բերին այն ձուաձեղը, որ բակը մտնելիս գլխովը պտոյտ էին տուել։ Նա էլ մի պատառ վեր կալաւ, բերանը դրեց. մի երկու պատառ էլ խաչեղբայրն ու փեսեղբայրը վերկալան. մնացածն էլ գինի խմողները անուշ արին։

Սուփրի վերջում տէրտէրը վեր կալաւ, հացն օրհնեց, բարեմաղթութիւններ արեց ու վերկացաւ։ Վերկացան և մնացած հիւրերը։

Տղամարդկանց հեռանալուց յետոյ՝ հացի նստեցին կանայք, նրանց հետ նաև Թագաւորը իր երկու ընկերներով, և իրանց կարգին լաւ ուրախութիւն արին։

Հացից յետոյ Թագաւորը միքանի մականներով գնաց գերեզմանատուն, մօտիկ ազգականների գերեզմանը օրհնել տուեց ու հետ դարձաւ իրանց կտուրը նորս անելու*։

ԳՌՕՇԵԱՆՑ

---

*Այդ երեկոյ, հացից յետոյ, սկսւում է աղջկապարը, որ գրաւում է մեծ բազմութիւն ազապ տղաների ու աղջիկների։ Պարի ժամանակ երիտասարդները բացարձակ կերպով ցոյց են տալիս իրանց համակրութիւնը և սէրը ազապ աղջիկներին շաբաշի պատրուակով։ Մայրերը մեծ իրարանցման մէջ են լինում. ամեն մէկը հանդէս է բերում իր աղջկայ առաւելութիւնները պարի միջոցով։ Գիւղական փակ կեանքի մէջ, ուր աղջիկները տարեկան երկու-երեք անգամ միայն համախմբուած եկեղեցի գնալու արտօնութիւն ունին, հարսանիքի վերջին երեկոն հասարակական ակումբի և պարահանդէսի դեր է կատարում։

89. Փ Ն Ջ Ի Կ

Հայկակ, Սուրէն, Արամ, Ցոլակ,
Եկէք, երթանք դաշտ ու ձորակ,
Քաղենք ծաղիկ տեսակ-տեսակ,
Համեստ շուշան, վարդ, մանուշակ.

Անցնենք հովիտ, պոկենք նարգիզ,
Խնկածաղիկ[1]) տեսքով ազիզ,
Աւլուկ և ուրց ու պախրախոտ[2])
Մետաքսաթել՝ որպէս նարօտ:

Անտառ մտնենք մենք հովասուն,
Մանգանք, պլտրենք անդ օրն-իբուն
«Օխտը աղբօր մի պուտ արին»[3]),
Որ բերում է մեզ նոր գարուն:

Գանք, ծաղկանոց մտնենք կանուխ,
Քաղենք, յափրուկ, վարդ, անանուխ,
Ցասմիկ, կակաչ, ռեհան, մեխակ
Եւ այլ ծաղկունք բազմատեսակ...

---

[1]) Խնկածաղիկ—անթառամ ծաղիկ, դեղին փնջազլխով, նուրբ և անոյշ հոտով:

[2]) Պախրախոտ—ковыль (տես 91 յօդուածը):

[3]) «Օխտը ախպօր մի պուտ արին»—եօթը եղբօր մի կաթիլ արիւն, адонисъ կոչուած ծաղիկը: Մեր յարգելի բուսաբան պ. Բիշմիշեանը այս ծաղկին «աղբրաց արին» է անուանում և թարգմանում է՝ „кровь ручейковъ": Հայր Սրուանձտեանն անուանում է աղբրանց արին, որ նոյնպէս եղբայրների արիւն է նշանակում:

Քաղենք, ժողովենք մենք միատեղ,
Նըստենք, հիւսենք խրձիկ[1]) շքեղ,
Հիւսենք խըրձիկ, փընջենք բարդ-բարդ
Մեր վարպետին ճակատի զարդ:

90. Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

Համբարձման նախընթաց օրն էր: Փոքրիկ գիւղը անսովոր կենդանութիւն էր ստացել. հին, կիսախարխուլ մատուռի շուրջը հաւաքուել էին գիւղի հարսներն ու աղջիկները. Նրանք մեծ իրարանցման մէջ էին. սովորականից աւելի համարձակ խօսակցութիւն, ծիծաղ, խնդութիւն տիրում էր նրանց մէջ: Տղամարդիկ չկային. բացակայում էին և հասակաւոր կանայք:

Ահա գալիս է դէպի այդ խումբը մի բարձրահասակ կին, նուրբ կազմուածքով, ցամաք տեսքով: Ամենքը վազում, շրջապատում են նրան: Եթար նանն է,—միակ կինը գիւղի մէջ, որի հետ բոլոր հարսները խօսում են: Անխօսութիւնը Եթար նանի համար գոյութիւն չունի: Գիւղի կանայք դժգոհ են այդ բանից, բամբասում են Եթարին, բայց բացարձակ բողոքել չեն համարձակւում. ամենքն ակնածում և մինչև անգամ վախենում են նրանից, որովհետև նա համարձակ է նոյնիսկ տղամարդկանց առաջ, որոնց բռնութեան դէմ շատ անգամ բողոքում է:—Մի երջանիկ բացառութիւն է Եթար նանը բռնութեան տակ ճնշուած կանանց հասարակութեան մէջ, եզակի բացառութիւն:

Եթար նանը խօսում է. նա կարգադրութիւններ է անում, հրամաններ է տալիս: Եւ ահա աղջիկներն ու հարսները խմբերի են բաժանւում և ուրախ-ուրախ վազում են դէպի ձորերը, այգիները, արտերն ու արօտատե-

---

[1]) Խրձիկ—ծաղիկներից, խոտերից և հացաբոյսերից հիւսած փունջ:

դերը։ Հրաշալի տեսարան. գիւղի շրջակայքը մի առանձին կենդանութիւն է ստացել. գարնանային ծաղիկների վրայ ոստոստող մեղուներին նոր ախոյեաններ են դուրս եկել—մի նոր տեսակ մեղուներ, որոնք իրանց աւանդական փեթակներից—գիւղական խրճթի նեխուած շրջապատից—դուրս սողալով՝ կարծես նոր կեանք, նոր ոգի են առել՝ խնդում են, երգում, թռչկոտում... ծաղիկ են քաղում...

Ժամեր են անցնում, երջանիկ ժամեր, որոնք երանի թէ երբէք վերջ չունենային։ Հարս ու աղջիկների գոգնոցները լցւում են ծաղիկներով։ Ահա նրանցից մէկը ձայն տուեց. զանազան կողմից արձագանք տուին այդ ձայնին։ Ահա մեր փափկասունները—ա՜խ, որքան չի յարմարւում այս քնքուշ ածականը մեր գեղջուկ չարքաշներին—կամաց-կամաց ժողովւում են, խումբեր են կազմում և դիմում են դէպի մատուռը, ուր Եթար նանը միքանի հարսների հետ սպասում է նրանց։ Գալիս են, հաւաքւում և Եթար նանի շուրջը այնքան ծաղիկ են թափում, որ, կարծես, ուզում են նրան ծաղկի մէջ թաղել։

Իսկոյն Եթար նանը կարգադրում է, որ միքանի շնորհալի օրիորդներ նստեն, ծաղկամէրը հիւսեն. Մնացած ծաղիկներից միւս մասնակցողները պէտք է փոքրիկ փնջիկներ կապեն, տնէ-տուն բաժանելու համար։ Ծաղկամէրը մի մեծ խաչաձև խրձիկ է, հմտութեամբ հիւսած փոքրիկ փնջիկներից. Նա պէտք է սաստիկ խնամքով պահուի, որ ազապ տղաները չգողանան և ծաղկաքաղի հանդէսը հարամ չանեն։

Ծաղկամէրը փնջելիս Եթար նանը բաց է անում «Ջան-գիւլումի» համերգը հետևեալ չորս տողով.

Իմ գիւլումը քաղած ա (խումբը՝ ջա՜ն գիւլում, ջա՜ն, ջա՜ն).
Բարձր սարին կեաղած ա (խումբը՝ ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն).
Ով որ սըրա տեղն ասի, ջա՜ն գիւլում, ջա՜ն, ջա՜ն,
Հէրն-աղպէրը թաղած ա, ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն։

Յետոյ փնջող խմբերը փոխ առ փոխ սկսում են երգել.

1. խումբ. Համբարձումին մոնենք պար, ջա՜ն գիւլում, ջա՜ն, ջա՜ն,
Ես քեզ, դու ինձ ասենք եար, ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն.
Ես ջան ասեմ, դու գիւլում, ջա՜ն գիւլում, ջա՜ն, ջա՜ն,
Ուրախանանք միալար, ջա՜ն ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն։

2. խումբ. Համբարձում օրն ա գալում,
Աղպէրըս մընաց սարում.
Եա՜ր-ջան, նըշան կըդնենք
Այս համբարձման սուրբ օրում։

1. խումբ. Նստել ես պատիկ-պատիկ,
Աչքերդ նռան հատիկ.
Ամեն քեզի տեսնելիս,
Հա՜մ համբարձում, հա՜մ զատիկ։

2. խումբ. Ա՛յ օրօ՜ն-օրօ՜ն ծաղիկ,
Կարմիր ու տըրոն ծաղիկ.
Տարէնը մի հետ կըգաս,
Կամ քեզ օրօն, ա՜յ ծաղիկ։

1. խումբ. Բլբուլ, արի՜ մեր բաղը,
Ասա՜ ընկերիս խաղը.
Խաղի միջով բարևս
Հասցրու եարիս թաղը։

2. խումբ. Ա՛յ տղայ, սև չուխաւոր,
Սաղմոսը ծոցիդ սաւոր,
Էրնակ կըտամ էն օրին,
Մեր տունը գաս թագաւոր։

1. խումբ. Կիւրակի էլ պաս կըլնի՞,
Արծաթից լաւ թաս կըլնի՞.
Որդիդ մեռնի, վարդապետ,
Սիրածը չըհաս կըլնի՞։

2. խումբ. Տանըս տակը շըլորի,
Ճղները ետ ոլորի.
Էրնէկ կըտամ էն քըւոր՝
Օխտն աղբոր թագ ոլորի։

— Ամենքը. Ծաղիկ ունեմ նարընջի,
Ա՛յ տղայ, վէր արի, փընջի.
Իմ մէր քեզ աղջիկ չի տալ,
Քանի սիրտըդ մրմընջի։

Ծաղկամէրը գովելուց յետոյ՝ Եթար նանը մի կողմ է կանչում միքանի օրիորդներ, որոնց աչալրջութեան վրայ ինքը վստահ է և նրանց առանձին պատուէր է տալիս. դրանք պէտք է գնան նշանակած տունը և ամբողջ գիշեր ծաղկամէրը պահեն իրանց աչքի լուսի պէս։ Ապա նա ջոկում է միքանի ջահէլներ և հրամայում է, որ փոքրիկ ծաղկափնջերը դարսեն խոնչաների վրայ ու ման ածեն գիւղում. ամեն մի տան պիտի տան մի փնջիկ և ծաղկամօր փայն ուզեն՝ բրինձ, կաթ, իւղ, ձու, հաց, պանիր... որ միւս օրը հացկերոյթ սարքեն։

Յետոյ Եթար նանը հրամայում է, որ մօտ բերեն գիւլումի բղուղը։ Սա մի նախշուն հողէ քիլայ էր, որի մէջ Եթար նանը գցեց միքանի փոքրիկ ծաղկափնջեր, մանրիկ քարեր, աւազ, և առաջարկեց, ով որ կամենում է՝ իր կողմից մի նշան գցի նրա մէջ։ Ազապ աղջիկները անձամբ կամ իրանց հարսների ձեռքով երկիւղածութեամբ մօտեցան բղուղին և մի-մի նշան գցեցին մէջը՝ մատանիք, օղեր, ակնահուլունք, մատնոց, դրամ, դանակ և այլն։ Այդ բղուղն էլ զգուշութեամբ պիտի պահէին մի առանձին տեղ, մինչև միւս օրը։

Այս բոլոր կարգադրութիւններն անելուց յետոյ՝ Եթար նանը ամենքին արձակում է իրանց տները, պատուիրելով, որ նշանակած ժամին հաւաքուեն այնտեղ, ուր պիտի կատարուի ջանգիւլումի հանդէսը։

Նոյն օրուայ երեկոյին, երբ գիւղը բաւականին խաղաղւում է, երբ ծերերն ու պառաւներն անկողին են մտնում, գիւղի երիտասարդութիւնը, աղջիկ ու տղայ, հաւաքւում են մի ընդարձակ սրահ, ուր առաջուց բերած են լինում ծաղկամէրը, և կատարում են ջան-գիւլումի հանդէսը։ Աղջիկ ու տղայ խումբ-խումբ նստոտում են սրահի այս ու այն կողմը, իսկ Եթար նանը բաց է անում հանդէսը, աղջկանց խմբի ձայնակցութեամբ.

Խնձոր ունեմ կծած ա, (խումբը՝ ջան, գիւլում, ջան, ջան)։
Զորեք կողմն արծաթած ա, (ջան ծաղիկ, ջան, ջան)։
Աղպերս ուզեց, տըւի ոչ,
Ասի՝ եարիս ղրկած ա։

Յետոյ աղջիկների կողմից սկսում են երգել, և տղայոց կողմից պատասխանել.

Աղջ. Այ տղայ, դու հո՞ւր ես, մո՞ւր ես.
Ես ծարաւ եմ, դու ջուր ես.
Իմ աղուորիկ Թռչնակըս,
Համբարձում գիշերն ո՞ւր ես։

Տղ. Քորոցդ լիք-լիքը,
Աղջի՛կ, առայ քու միտքը.
Ձեռով կանեմ, արի՛, տես,
Ոսկէ մատնիք բերեմ քեզ։

Աղջ. Կանգնել ես, կանչում էլ չես,
Բոյիցդ ամանչում էլ չես.
Եկայ, կշտովդ անց կացայ,
Տէր ես, ճանանչում էլ չես։

Տղ. Շատ մի՛ անիլ վեր ու ցած,
Ես քեզ վաղուց եմ տեսած.
Մենք իրարու նման ենք—
Մէկ խնձոր՝ երկու կիսած։

Աղջ. Ամպեր, միքիչ հո՛վ արէք,
Անձրև թափէք, ծո՛վ արէք.
Վատ մարդու օրն ու կեանքը
Սև հողի տակով արէք։

Տղ. Վրադ եօրղան ես քաշել.
Սիրտս, հոգիս ես մաշել.
Աստուած անէ՝ լաւանաս,
Մեր տան պստիկ հարս դառնաս։

Աղջ. Բեաքիւլիդ կալլին մեռնեմ,
Երեսիդ խալլին մեռնեմ.
Լսել եմ՝ կարդացող ես,
Գրքերիդ ծալլին մեռնեմ։

Տղ. Սիպտակ ձին նալն ի՞նչ կանի,
Սիրունը խալն ի՞նչ կանի,
Քեզ տեսնող կտրիճ տղան
Աշխարքի մալն ի՞նչ կանի։

Աղջ. Ծառիս տակը մանուշակ,
Իմ ընկեր քանց քեզ շիշակ.
Ութ թումանից անց կենամ,
Քեզ կանեմ նըրան մշակ։

Տղ. Աղջի, նըստել ես կարի,
Ալ արխալուխ մի՛ կարի.
Ընկերիդ սալդաթ տարան,
Պիտ՛ սպասես չորս տարի։

Աղջ. Մեր տուն, ձեր տուն մին պխտէր,
Միջի պատը չըպխտէր.
Միջի պատը ի՞նչ անի,
Պառաւ տատը չըպխտէր։

Տղ. Սաղ տարին ծում ու պաս եմ,
Քեզ համար ոսկէ թաս եմ.
Սրտիս միջի դարդերը
Ծաղկազարդին քեզ կասեմ։

Հանդէսը երկար, շատ երկար շարունակուեց։ Գիւղական թեւաւոր ժամացոյցները վաղուց արդէն իմաց էին արել, որ կէս գիշերն անցել է։ Եթար նանը առաջ անցաւ և փակեց հանդէսը հետևեալ համերգով.

Կապել էք քիրման գօտիկ, (բոլորը միասին՝ ջա՛ն, գիւլում, ջա՛ն, ջա՛ն)։
Մարդ չէք թողնում ձեզ մօտիկ, (բոլ. ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն)։
Համ տեսքով էք, համ համով, ջա՛ն, գիւլում, ջա՛ն, ջա՛ն,
Քանըղ ծաղիկ խորոտիկ, ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։

Միւս առաւօտ գիւղացի աղջիկներն ու թազայ հարսները ծաղկամէրը տարան մատուռը և, միքանի ջան-գիւլում երգելուց յետոյ, ծաղկափունջը դրին սեղանի վրայ։ Այդ միջոցին դրսում ջահէլները կերակուր էին եփում, գլխաւորապէս կաթնեղէն. շատ տներից էլ, որոնց նորահարսները մասնակցում էին հանդէսին, խոնչայ էին ուղարկել՝ կաթնահունց, գաթայ, խաշած ձու, փլաւ, եղուշոր և այլն։ Եւ ահա մատուռի պատի տակ, կանաչ խոտի վրայ փռում են նահապետական կապոյտ սուփրէն, դարսում են նրա վրայ Աստուծու տուած բարիքը և հարս ու աղջիկ շարւում են նրա շուրջը։ Եթար նանը կառավարում է սեղանը. տղամարդ չկայ. բացակայում են նաև սկեսուրները. բոլորը խօսում են ազատ, ուրախ, սրտանց... Եւ ճաշակերոյթը ձգւում է երկա՜ր, շատ երկար։ «Ախ, երանի թէ նա երբէք վերջ չունենար»... Անկասկած այսպէս էին մտածում այն մատղաշ արարածները, որոնք դեռ տասնևչորսը չլրացած ամուսին էին դարձել և, որպէս սորուկ աւանդական սովորութիւնների, փականք էին դրել իրանց լեզուին։ Բայց երբ է կատարուել ճնշուածների ու հարստահարուածների ցանկութիւնը, որ այս անգամ կատարուէր։ Ահա լսւում է Եթար նանի այրական ձայնը և մատղաշ հարսները ցնցւում են. «աղջկե՛րք, հա՛րսներ, դէ՛, բաւական է, ինչքան կերաք-խմեցիք, ինչքան խօսեցիք-ծիծաղեցիք. վե՛ր կացէք, գնացէ՛ք ձեր տանի՛ն-տեղի՛ն մօտիկ արէք. հիմի ձեր սկեսուրները կգնուել, մեծս ուտում են, թէ ինչո՛ւ եմ էսքան ձեզ ետացնում. գնացէ՛ք, Եթար նանը

ձեզ մատաղ, գնացէք, հնազանդ ու խոնարհ կացէք ձեր մեծին, փոքրին, զգաստ՝ ձեր բանին, գործին… իրիկունն էլ, երբ բանից կըպրծնէք, ձեր մեծերի հետ եկէք, որ վիճակի ջան-գիւլումը քաղենք»։

Նախընթաց գիշերը, դեռ երգող խումբերը չարձակած, Եթար նանը երկու աղջիկ ծածուկ ուղարկել էր աղբիւրը, որոնք անխօս գնացել էին, ջուր բերել և ածել գիւլումի բղուղի մէջ. յետոյ այդ բղուղը տարել, պահ էին տուել մի այնպիսի տան, որտեղ տարուայ ընթացքում ոչինչ ձախորդութիւն չէր պատահել։

Այսօր, երեկոյին, տնային գործերը վերջացնելուց յետոյ, գիւղի աղջիկները իրանց մօր կամ մեծ հարսի առաջնորդութեամբ հաւաքւում են այդ տունը, վիճակահանութեան հանդէսը կատարելու։ Եթար նանը բերում, նստացնում է մի մատղաշ աղջիկ, ծածկում է նրան թանձր քողով, բղուղը դնում է նրա առաջ և յայտարարում է հանդէսը բաց արած։ Ըստ սովորականին հանդէսը բացւում է ջան-գիւլումով. երգում են մի տուն «ջան-գիւլում», որից յետոյ փոքրիկ աղջիկը ձեռքը տանում է բղուղը և հանում է այնտեղ գտնուած նշաններից մինը, որ՝ նայելով գիւլումի բովանդակութեանն ու իմաստին, նշանի տիրոջն ու բարեկամներին ուրախացնում կամ տրտմեցնում է։ Հաւատը դէպի գիւլումի գուշակութիւնը այնքան մեծ է, որ շատ անգամ, նշանի տիրոջ վիշտը թեթևացնելու համար, ստիպուած են լինում միևնոյն նշանը երկու-երեք անգամ գցել բղուղը և նրա բաղդը նորից ու նորից փորձի ենթարկել, և եթէ երկրորդ ու երրորդ անգամ էլ բաղդը դաւաճանում է «խեղճ աղջկան», ապա նա արտասուքն աչքերին հեռանում է հանդէսից…։

Այս գիշեր ամենից անբաղդը Ջաւահիրն էր, այն երկու աղջիկներից մինը, որոնք մէջ գիշերին գնացել էին աղբիւրը՝ ջուր բերելու։ Ահա նրա համար դուրս եկած գիւլումները.

Բանաքեռ բարձր գեղ ա,
Ջուրը հիւանդին դեղ ա,
Սիրածը սիրածին չէն տալ,
Էս ինչ անիրաւ գեղ ա։

Հընձողներին հաց տարայ,
Եարիս տեսայ, ետ դառայ.
Էս ի՞նչ անբաղդ աղջիկ եմ՝
Խընձոր տըւեց, ես չառայ։

Կեանքիս խաղաղ օրերը
Ընկել եմ խոր ձորերը.
Սիրտըս, հոգիս վըրդովուած
Ման եմ գալիս չոլերը…

Վերջին տունը երգելիս՝ Ջաւահիրը քաշուեց տան պուճախը և աչքերը լցրեց։ Մի քանի ջահել հարսներ շրջապատեցին և սկսեցին մխիթարել նրան։—«Հողեմ գիւլում հնարողի գլուխը, ասաց նրանցից մինը. անցեալ տարի էլ ինձ համար այդպէս անյաջող դուրս եկաւ. պակա՞ս բաղդաւորուեցի. իմ Կարօի թայը չկայ մեր շէնումը»։ Բայց հարսիկը դիտմամբ ստում էր. Կարօն գիւղի ամենաանպէտք ու անշընորք երիտասարդներից մինն էր։

Այդ միջոցին աղջկերքը շարունակում էին երգել.

Ես մի աննըման զուշ եմ,
Թայերիս մէջ նմուշ եմ.
Ինչ հարս, աղջիկ որ տեսնես,
Ես բոլորից անուշ եմ։

Ջեռներդ ծափ ես տալի,
Մազերդ թափ ես տալի.
Էսօր-էգուց ցցելով
Ամեն օր խաբ ես տալի։

Դու ինձ համար լուսնեակ ես,
Գոհարից անգին ակ ես։
Աստծու պատուհասին գաս,
Թէ դուռըդ դէմս փակես։

Կանգնել ես, կաղ կըմանես,
Արեգակի նըման ես.
Վե՛ր կաց, այստեղից գը՛նա,
Շատ մարդ գըլխից կըհանես։

Ճախարակ, մանի, մանի,
Բուռըս անուշ կըտանի.
Ազբերս սարում, քօլում,
Իմ քուռը ո՞նց կըտանի։

Ես աղջիկ եմ, հէր չունեմ,
Մի սըրտացաւ տէր չունեմ.
Հօրից ու մօրից զրկուած,
Աշխատող ազբէր չունեմ։

Եթար նանը հէնց որ նկատեց, թէ «գիւլումը» տխուր է անց կենում, մօտ կանչեց մի քանի գիտակ աղջիկներ և պատուիրեց, որ աւելի ուրախ գիւլումներ ասեն։ Աղջիկները երգեցին.

Պարտէզ ունեմ, դրախտ ա,
Ծաղիկ-ծաղկունքի վախտ ա.
Գէշ աղջիկ, սիրուն տղայ,
Էս էլ մի ուրիշ բախտ ա։

Ծաղկազարդը գալիս ա,
Ծաղիկս ցընձալիս ա.

Ծաղկի պէս սիրուն տըղայ,
Ջայնդ ծըլվըլալիս ա։

Գետ ա գալիս լափ տալէն,
Ջուխտ խընձորին ծափ տալէն.
Հրէս եկաւ իմ ազբէր՝
Սև ձին տակին խաղալէն։

Ա՛յ տղայ, դու բաղի միջին,
Ոտներդ շաղի միջին.
Երգէ, երգելուդ մեռնեմ,
Ես եմ քո հաղի միջին։

Երբ որ բոլոր վիճակները հանուած պրծած էին, Եթար նանը տեղից կանգնեց, երգիչներին իւր շուրջն առաւ և խմբովին երգեց.

«Արազը հեշտացել ա, ջա՛ն, գիւլում, ջա՛ն, ջա՛ն,
Ճամպէքը կօշտացել ա, ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն.
Խաբար տարէք իմ նանին, ջա՛ն, գիւլում, ջա՛ն, ջա՛ն,
Մուշտարիս շատացել ա, ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։

Այսօր վիճակ հանեցինք, ջա՛ն, գիւլում, ջա՛ն, ջա՛ն,
Լաւ-լաւ գիւլում քաղեցինք, ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն.
Հազար ու մի ցանկութիւն, ջա՛ն, գիւլում, ջա՛ն, ջա՛ն,
Գիւլումներով յայտնեցինք, ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն։

Դէ, իմ փոքրիկ ընկերներ, ջա՛ն, գիւլում, ջա՛ն, ջա՛ն,
Ելէք երթանք մեր տներ, ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն.
Մինչ ծաղկազարդ միւս տարին, ջա՛ն, գիւլում, ջա՛ն, ջա՛ն,
Բարով հասնենք այս օրին, ջա՛ն, ծաղիկ, ջա՛ն, ջա՛ն*)։

Ն. Տ.-Ղ.

*) Գիւլումների մեծագոյն մասը քաղել ենք Գ. Տէր-Աստուածատրեանի ժողովածուից։

81. ՊԱԽՐԱԽՈՏ

(Աւանդութիւն)

Երիտասարդ իշխանի պալատը շինած էր ընդարձակ սարահարթի վրայ, որտեղից երեւում էին նրա լայնածաւալ կալուածքի բոլոր սահմանները: Սա մի հոյակապ շինութիւն էր, բաղկացած բազմաթիւ բաժանմունքներից, որոնցից իւրաքանչիւրը ունէր իւր բացառիկ պաշտօնը: Շինութեան կենդրոնական մասը բաղկացած էր երկյարկանի տնից, որի ներքին մասը իշխանի բնակարանն էր, իսկ վերին յարկը յատկացրած էր այն բազմաթիւ հիւրերի համար, որոնք ամարային ամիսներին անպակաս երթեւեկում էին նրա մօտ: Պալատը, որ արտաքուստ արքայավայել տեսք ունէր, ներքուստ կահաւորած էր տարբեր կերպով. վերին յարկի զառ ու զարդարանքները, կահ-կարասիների ճոխութիւնն ու բազմազանութիւնը ապացոյց էին տանտիրոջ ճաշակի նրբութեան և ձեւական փառասիրութեան. սենեակները բարձր ու ընդարձակ, պատերը իւղաներկ, գահոյքները արքայավայել՝ ընկողմարանները, բազմոցները, գահաւորակները, բազկաթոռները... բոլորը գունաւոր թաւիշով ծածկած. մահճակալների պարագաները՝ ներքնակներն ու վերմակները կարած էին մետաքսաթել գործուածքներից, բարձերը լցրած մաքուր աղուամազով: Մի խօսքով՝ երիտասարդ տանուտէրը այնպիսի խնամքով կահաւորել էր հիւրասենեակները, որ կարող էր բաւականութիւն տալ իւր պայազատ հիւրերի ամենանուրբ փափկասիրութեանը:

Բայց որքան ճոխ էին ու զարդարուն հիւրերի սենեակները, այնքան պարզ ու անշուք էր իշխանի իրան կացարանը: Շինութեան ստորին յարկում նա վերցրած ունէր երկու ընդարձակ սենեակներ՝ մինը որպէս ննջարան, միւսը—առանձնարան. Ննջարանի մէջ դրած էր մի մահճակալ կաղնէ փայտից, որի վրայ տարածած անկողինը և սպիտակեղէնը կարած էին մաքուր, բայց հասարակ կտորներից. Մնացած կահ-կարասիքը, մի սեղան և մի քանի աթոռներ, նոյնպէս կաղնի փայտից էին. մահճակալի վերեւը, պատի վրայ, առաստաղից մինչև յատակը՝ կախած էր մի թանկագին գորգ, որ ամբողջապէս ծածկուած էր զէնքերով: Իշխանի առանձնարանը աւելի ևս անշուք էր. ընդարձակ սենեակի մէջ դրուած էր մի խոշոր սեղան և մի տասնեակ աթոռներ ընկուզի

փայտից. սենեակի յատակը կաղնէ տախտակներից. պատերը իւղաներկ. ուրիշ ոչ մի զարդարանք: Բայց առանձնարանի չորս անկիւններում դրուած էին չորս հատ պահարաններ, որոնք բարձրանում էին յատակից մինչև առաստաղը և պռունգէ-պռունգ լիքն էին որսորդութեան պարագաներով: Առանձնարանից դէպի աջ բացւում էր մի դուռը, որտեղից հետաքրքիր այցելուն մտնում էր մի ընդարձակ դահլիճ տանտիրոջ առաջնորդութեամբ: Առաջին նուագ դու կըկարծէիր, թէ սա մի գազանանոց է. շարէ-շար կանգնած էին պատերի մօտ զանազան տեսակ գազաններ և սպառնալի կերպով նայում էին դէպի քեզ. պատերին ցցած փայտերի վրայ թառ էին եղած գիշատիչ թռչունների խոշոր ներկայացուցիչներ, իսկ յատակի վրայ, այս ու այն կողմը, կարծես մրափած էին վայրենի խոզերի, արջերի և վագրների ներկայացուցիչներ: Սոքա բոլորը երիտասարդ իշխանի որսորդական քաջութեան արգիւնքներն էին, որ նա խնամքով ժողովել, լցրել էր ծղօտով և դրել իւր թանգարանում:

Այսպիսով ուրիշների համար այս հարուստ ու փափկասէր մարդը, որ սովոր էր հիւրասիրութեան պահանջներին շռայլ բաւարարութիւն տալ, անձամբ մի սպարտացի էր, մի սակաւապէտ որսորդ, որ վարժեցնում էր իւր մարմինը բնութեան արհաւիրքներին և իւր սիրած զբաղմունքի փորձութիւններին դիմադրելու:

II

Իշխանի կալուածքները կազմում էին մի ամբողջ նախարարութիւն. Նոքա տարածւում էին հայկական լեռնաշղթայի ձիւնապատ գագաթներից դէպի հիւսիս՝ մինչև մայր գետի եզերքը: Երեք լեռնային գետակներ անցնում էին այդ կալուածքների միջով հարաւից դէպի հիւսիս. բայց հազիւ էր պատահում, որ նրանց ջրերը հասնէին-թափուէին մայր գետի ծոցը. արհեստական ջրանցքների ամբողջ ցանցեր տանում-բաժանում էին այդ ջրերը իշխանի լայնածաւալ դաշտերին ու ընդարձակ հովիտներին, ուր հողին էր յանձնած աշխատասէր երկրագործի ձեռքի վաստակը. ցորենի, հաճարի, գարու, վարսակի ու կորեկի արտերը յաջորդում էին միմեանց թէ ջրովի և թէ անջուր տեղերում. բամբակի ու բրնձի ընդարձակ ցանքերը, խաղողի այգիները, պտղատու ծառաստան-

ները, սեխի, ձմերկի ու միւս բանջարեղէնների բնէգները (բոստան) փոխանակում էին միմեանց։ Իշխանի ժիր ու չարքաշ հպատակները մշակում ու շահագործում էին ոչ միայն երկրի արգաւանդ վայրերը, այլև մաքրում էին քարքարուտները և նրանց տեղ վազներ տնկում, այգի շինում։ Եւ պատահական ճանապարհորդը, այդ երկրի նեղ-նեղ ձորերից անցնելիս, հաճութեամբ նկատում էր, թէ ինչպէս աշխատաւոր մարդու ձեռքը կարողացել է այդ մերկ սարալանջերը գեղածիծաղ կանաչով ծածկել և ամբողջ ձորակին միապաղաղ պարտէզի տեսք տալ։ Այո՛, ամեն մարդ այստեղ մի կտոր հող ունէր, որի վրայ արիւն քրտինք թափելով՝ վայելում էր իւր աշխատութեան պտուղը, սահմանած տուրքը միայն վճարելով տիրոջը։ Ամեն մարդ իրաւունք ունէր մտածելու, որ աշխատութիւնն ու հանգիստը երկու զուգակից ընկերներ են, որոնք կանոնաւորապէս գործադրուելով՝ հասցնում են մարդուս այն բարօրութեանը, որ երկրային բախտաւորութիւն է կոչւում։

III

Իշխանի բոլոր գետակները ոսկեբեր էին. վարպետ ոսկեհանների մի ամբողջ խումբ, որոնք շատ լաւ ճանաչում էին այն վայրերը, ուր դուրս էին մղում գետակները սարերից բերած ոսկեխառն աւազը, զբաղուած էին այդ աւազը լուանալով և ոսկին նրանից զատելով։ Բացի ոսկուց, իշխանի լեռները հարուստ էին պղնձի, արծաթի և երկաթի հանքերով, որոնց մշակութեամբ պարապած էին հազարաւոր մարդիկ. կային նաև նիկելի և կոբալտի հանքեր, որոնց շահագործելու վերաբերութեամբ աւանդութիւնը մեզ ոչինչ յիշատակութիւն չի բերել։

Բայց իշխանի առանձին հոգացողութեան առարկան կազմում էին այն անտառները, որոնք ծածկում էին նրա երկրի լեռնային մասերը։ Հրաշալի էին այդ անտառները իրանց վայրենի վեհութեամբ, բազմազանութեամբ և անձեռնմխելի կուսութեամբ։ Բնութիւնը զարմանալի կերպով դասաւորել էր ծառերի տեսակները, որոնք խումբ-խումբ բռնած ունէին սարալանջի այս կամ այն կողմը։ Եւ բնութեան հրաշալիքներին աւելի կատարեալ ձև տալու համար մարդկային ձեռքն էլ օգնութեան էր հասել. ճոպրուտ, խնձորուտ, հաճարկուտ, թխկուտ, հացուտ, կաղնուտ... անունով

ահագին ծառախմբեր կազմում էին այդ ընդարձակ ծառաստանի մասերը։ Սակաւ չէին և խառն անտառները, ուր պտղատու ու անպտուղ ծառեր, թփեր ու մացառներ մճճւում էին միմեանց հետ և անհնարին դարձնում մարդկային անցուդարձը։

Անտառապահների մի ամբողջ լէգէոն աչալուրջ պահպանում էր բնութեան այս ճոխ զարդարանքը կողմնակի մարդկանց շահատակութիւններից. առանց իշխանի հրամանի ոչ ոք իրաւունք չունէր մտնել այդ անտառները, ոչ ոք չէր կարող մի ճիպոտ անգամ կտրել այդտեղից։

IV

Բայց անտառների մասին ունեցած հոգացողութիւնը պէտք չէր վերագրել իշխանի սիրոյն դէպի բուսականութիւնը։ Նա չէր կարող հասկանալ նմանապէս, թէ ինչ հրաշալի դեր է կատարում անտառը բնութեան մէջ, որքան բարեխառնում և նպաստում է նա օդի մաքրութեանը, որպիսի անփոխարինելի ծառայութիւն է մատուցանում այն գետերի ստորերկրեայ ջրամբարներին, որոնք անցնում և կենդանութիւն էին տալիս նրա ամբողջ կալուածքին։ Ոչ. անտառի մասին նա հոգում էր բոլորովին ուրիշ տեսակէտից. անտառը նրա որսերի բնակարանն էր, նրա որսորդութեան հրապարակը։ Եւ ինչպէս որ նա հոգս էր քաշում իւր երիվարների մասին, որպէսզի նրանցով պարծենայ իւր բազմաթիւ հիւրերի առաջ, նոյնքան և աւելի ևս հոգացողութիւն էր անում այն վայրենի կենդանիների վերաբերութեամբ, որոնք բաւարարութիւն էին տալիս նորա որսորդական ձգտումներին։ Իւր անտառապահների շարքում նա ունէր հմուտ նետընկեցներ, որոնց պարտականութիւնն էր կոտորել վնասակար գազաններին, որպէսզի նրանք արգելք չլինեին միւս կենդանիների բազմանալուն։ Վնասակար գազաններն էին՝ գայլը և բորենին (քաւթառը)։ Արջը և յովազը (փալանգը) վնասակար կենդանիների շարքը չէին մտած նախ այն պատճառով, որովհետև այդ գազանները սիրում են ապրել առանձնացած, աւելի խիտ և անանցանելի ծմակներում, ուր միւս խոտաճարակ վայրենիները այնքան էլ մուտք չունին և երկրորդ՝ ինքը իշխանը հիւրերի ուղեկցութեամբ կամ լոկ իւր զինակիրների հետ սիրում էր որսի գնալ իւր անտառների այդ ամենա-

վտանգաւոր բնակիչների դէմ։ Օ՜, այդ ժամանակ պէտք էր տեսնել երիտասարդ իշխանին. նա, ոտից գլուխ զրահաւորուած, մի քանի ծառաների ուղեկցութեամբ, որոնց պարտականութիւնն էր նիւթ մատակարարել նրա լայնալիճ աղեղին, նետում էր իրան ամենավտանգաւոր տեղերը և շատ անգամ մի կողմը ձգելով աղեղը, սուրը մերկացրած, արշաւում էր կատաղած գազանի վրայ։ Նրա երիտասարդ ընկերները այդպիսի վտանգաւոր րոպէներին, կանգնած մեկուսի, սպասում էին, թէ ինչով կվերջանայ մրցութիւնը զայրացած գազանի և գազանացած մարդու մէջ։ Եւ դեռ դէպք չէր եղել, որ ընկերները ստիպուած լինէին օգնութեան գնալ իրանց անվեհեր առաջնորդին. ամեն անգամ պարտութիւնը գազանների կողմն էր մնում։ Իսկ դուք պիտի գիտենաք, որ վիրաւորուած արջը և կինճը (վարազը) ամենակատաղի և ամենավտանգաւոր հակառակորդներ են, ուր մնաց յովազը, որ արիւնարբու վագրի հարազատ եղբայրն է։

V

Որսորդութեան փառաւոր հանդէսը սկսուած էր արդէն։ Սա այն հազուադէպ հանդէսներից մինն էր, երբ իշխանի հրաւէրով մասնակցում էին նրան հարևան երկիրների բոլոր կալուածատէրերը։ Հանդէսի նախօրեակին իշխանը իւր հմուտ վերակացուների խորհրդակցութեամբ, որոնց ծանօթ էին նրա ընդարձակ անտառների բոլոր ել ու մուտը, կազմել էր որսորդութեան մանրամասն ծրագիրը։ Հանդիսականները բաժանուած էին խմբերի և ամեն մի խմբի տեղն ու անելիքը որոշուած էր։ Խմբապետները պէտք է բռնէին որոշ դիրքեր. նրանց օգնականները պատրաստ պիտի լինէին երկրորդական դիրքերում՝ թէ խմբապետներին օգնութիւն հասցնելու և թէ որսի ճանապարհը կտրելու համար, եթէ նա ենթադրած ուղղութիւնից շեղուելու լինէր։ Ամեն մի խումբ ունէր իւր որսարարը, որ անտառ պիտի մտնէր նշանակած տեղից և վարժեցրած շների օգնութեամբ դուրս պիտի քշէր որսը դէպի չարաբաստիկ դիրքերը։

Հանդէսը սկսուել էր լուսաբացին, երբ ադամայ մութը նոր էր յետ գցել իւր թանձր վարագոյրը երկրի երեսից։ Հանդիսապետի փողը հնչելուն պէս՝ շներն ու որսարարները սկսել էին

իրանց գործը։ Մի քանի րոպէ ևս՝ և բոլոր անտառը դղրդման ու իրարանցման մէջ էր։ Անտառի չորքոտանի բնակիչները, այս անակնկալ արշաւանքից շշկլուած, սլանում էին դէս ու դէն. շների կլանչոցը, մարդկանց աղաղակը, վիրաւոր անասունների գոռոցն ու բառաչիւնը դղրդացնում էին ամբողջ անտառը… Իշխանը գտնւում էր ամենավտանգաւոր վայրերից մինում. նա, մի քանի թեթև արկածներից յետոյ, կանգնած էր մի դժուարին և անբացատրելի հանելուկի դիմաց։ Նրա հաւատարիմ շները, Զանգին ու Զրանգին, կանգ էին առել մի թանձր մացառուտի առաջ և կամենում էին դուրս մղել այնտեղից անտեսանելի որսը։ Խիտ էր մացառուտը, շները ներս մտնելու ճանապարհ չունէին, իսկ որսը ուշք չէր դարձնում նրանց հաչոցին։ Երիտասարդ իշխանի յուզմունքը րոպէ առ րոպէ սաստկանում էր. նա պատրաստ էր անձամբ նետուել մացառուտի մէջ. բայց փշերն այնպէս մճճուած էին, որ անհնար էր կատարումն տալ այդ յանդուգն ցանկութեան։ Իշխանը խորհրդաւոր հայեացք գցեց իւր զինակիրների վրայ։ Այս հայեացքի մէջ նկատւում էր բարկութիւն, անհամբերութիւն ու կատաղի վճռականութիւն. պարզ երևում էր, որ նա ճամբայ պիտի բանայ դէպի մացառուտի խորքը, առանց իմանալու, թէ ո՛վ է իւր հակառակորդը։ «Պտըտի՛ր, Զանգի, և գտի՛ր, թէ որտեղից է մտել գազանը մացառուտի մէջ. մտի՛ր և դո՛ւրս հանիր որսը», գոռաց որսարարը։ Շունը մի երկու պտոյտ արեց և, մի ճեղք գտնելով, ներս սողաց։ Ամենքը վազեցին այն կողմը։ Մի րոպէից յետոյ շունը կլանչեց և դուրս սողաց նոյն ճեղքից։ Նրա ետևից երևեցաւ վիթխարի վարազի փրփրապատ դունչը։ Նոյն վայրկենին իշխանի նետը սլացաւ դէպի ահռելի կենդանին։ Կինճը յուսահատական ճռինչ արձակեց և մի պտոյտ արեց դէպի յետ։ Համարեա միաժամանակ մացառուտի միջից լսուեցաւ մի ուրիշ գազանի որոտագին մռնչոցը և ամենայն ինչ լռեց։ Մի րոպէ իշխանը և նրա զինակիրները չկարողացան հասկանալ, թէ ինչ է կատարւում իրանց շուրջը։ Զանգին արիւնաթաթախ ընկած էր իշխանի ոտների առաջ. վարազի կատաղի հարուածը ճղել-թափել էր նորա փորոտիքը. խեղճ կենդանին մի անգամ էլ բացեց աչքերը, լիզեց իւր տիրոջ ոտները և շունչը փչեց։ Իշխանի դաժան դէմքը աւելի ևս մռայլուեցաւ. նա հրամայեց, որ հեռացնեն շանը, իսկ ինքը ուղղեց իւր քայլերը դէպի մացառուտի խորքը։ Ծառաները, սրերը

հանած, կտրատում էին մացառները և ճանապարհ էին պատրաստում իրանց տիրոջ համար։ Եւ ահա նրանց առաջ բացուեցաւ մի անակնկալ տեսարան. մացառուտի խորքում ընկած էր վայրենի վարազը, իշխանի նետը կռնատակին մխուած. նրա կողքին վայր էր ընկած մի արջ՝ ահագին մեծութեան։ Երկուսն էլ արդէն անշնչացած էին։ Այս անսպասելի երեւոյթը բացատրւում էր հետեւեալ կերպով. անկասկած արջը և կինճը, անտառային խրախճանքից փախչելով, մացառուտի մէջ ճակատ առ ճակատ հանդիպել էին միմեանց և, չկամենալով կամ չկարողանալով ճանապարհ տալ մէկ-մէկու, պատրաստուել էին կռուելու։ Հարկաւ գազանները միմեանց դէմ կանգնած րոպէին ներս է սողացել Ջանգին և, անկարող լինելով թռչել վարազի մէջքը, որ նա կանէր, եթէ մացառները չխանգարէին, բռնել է նորա յետին ազդրից։ Կինճը դարձել է դէպի շունը և ածելու նման սուր ժանիքով ճղել է նորա փորը։ Նոյն րոպէին իշխանի նետը ցցուել է նորա կռնատակը։ Զայրացած կենդանին կարծել է, թէ հարուածը եկաւ արջի կողմից, պտոյտ է արել և ամենայն թափով զարկել է արջին... Եւ այսպէս անտառային դրամայի չորքոտանի մասնակցողները երեքն էլ մահացած ընկել են որսորդների հաճոյքի համար...

VI

Որսորդութիւնը վերջացել էր. հանդիսապետի փողը փչել էր սովորական ազդանշանը... Իշխանը դանդաղ ու մտախոհ բարձրանում էր ձորամիջից։ Ջրանգին տխուր ու գլխակախ հետեւում էր իւր տիրոջը։ Տխուր էր իշխանը, շատ տխուր էր. այսօրուայ որսորդութիւնը նրա փառասիրութեանը գոհացումն չէր տուել։ Ճշմարիտ է կինճը և արջը ամենախոշոր տեսակներից էին, բայց նա զգում էր, որ նրանց մահացնելում ինքը քիչ դեր է խաղացել. նա կըցանկանար, որ ամեհի վարազը, փոխանակ յետս դիմելու, յարձակուէր իւր վրայ, վէրք տար, վէրք առնէր. նա դժգոհ էր մանաւանդ որ արջը, որի նմանը հազիւ թէ միւս անգամ պատահէր, մահացել էր առանց իւր մասնակցութեան. ձեռնակռիւը մի այդպիսի խոշոր գազանի հետ իշխանին մեծ հաճոյք կըպատճառէր. բացի այս՝ չկար և Ջանգին, իւր հաւատարիմ շունը, որին չէր փոխիլ կէս թագաւորութեան հետ։ Մռայլ ու մտախոհ առաջ էր գնում նա նեղ շաւիղն ի վեր... Յանկարծ Ջրանգին մի երկու ոստիւն արեց, անցաւ իւր տիրոջ առաջը և, ականջները խլշած, ետի ոտը ձգեց-կանգնեց։ Իշխանը հասկացաւ որ շունը որսի հոտ է առել, բայց իւր հրամանին է սպասում։ «Ի՞նչ կայ, Ջրանգի, ասաց նա. դէհ գնա, դո՛ւրս հանիր որսը»։ Շունը առաջ վազեց. զինակիրները պատրաստեցին զէնքերը. իսկ իշխանը կանգնեց և անտարբեր սպասում էր։ Այդ րոպէին խիտ ծառաստանի ետեւից նշմարուեցաւ մի խոշոր կենդանու ուրուապատկերը։ «Դո՛ւրս մղիր, Ջրանգի», հրամայեց իշխանը սաստութեամբ։ Շունը միքանի քայլ էլ առաջ վազեց հաչելով։ Բայց նա հաչում էր անտարբեր. գազանային զայրոյթի ոչ մի նշոյլ չէր երեւում նրա վրայ։ Իշխանը հասկացաւ, որ շունը մի անվտանգ կենդանու հետ գործ ունի։ Այդ ժամին որսը ամբողջապէս դուրս երեւեցաւ ծառերի ետեւից։ Սա մի փառահեղ եղջերու էր, որ փոխանակ փախչելու, ինչպէս պէտք էր սպասել, միքանի քայլ արեց դէպի շունը. կարծես նա այդ րոպէին արհամարհում էր թէ շանը և թէ հեռուից երեւցող որսորդներին։ Իշխանի մէջ զարթեց րոպէապէս մարած որսորդական կրակը. նա առաւ նետը և ուղղեց կենդանու բարկութիւնից օրօրուող ճակատին։ Նետը վրիպեց. նա անցաւ կենդանու եղջիւրների միջով և միայն կոտրեց նրա ճղներից մինը։ Եղջերուն տեղից չշարժուեցաւ. նա թափահարեց գլուխը և դունչը ցածրացնելով, դուրս ցցեց իւր ծառանման եղջիւրները. կարծես պատրաստւում էր մի ուրիշ կենդանու հետ զարնուելու։ Մի վայրկեան իշխանը զարմացած էր եղջերուի անսովոր համարձակութիւնից։ Ջրանգին ևս զգաց, որ կենդանին կատակ չի անում. նա ծկլթաց և ցատկեց դէպի եղջերուի ուսամէջը. բայց վերջինս բարձրացրեց գլուխը և շանը առնելով իւր եղջիւրների ծայրը՝ դէն շպրտեց դէպի ձորը։ Միաժամանակ իշխանի երկրորդ նետը խրուեցաւ խեղճ կենդանու կուրծքը և նա մահացած վայր ընկաւ... Վիթխարի ցուլի կանգնած տեղը երեւեցաւ նրա ընկերուհին՝ մի քնքուշ եղնիկ, որ ամբողջ մարմնով դողում էր։ Քարասիրտ մարդը նկատեց այդ և փոխանակ մեղքանալու, մի նետ էլ ուղղեց դէպի խղճուկ կենդանին։ Նա էլ վայր ընկաւ... Իշխանը մօտ վազեց և ի՜նչ տեսաւ. անշնչացած մօր առջեւը չոքած են երկու նորածին հորթուկներ և ծծում են նրա արնաշաղաղ ծծերը... Իշխանը ծածկեց աչքերը... Այդ րոպէին լսուեցաւ լեռնային ոգու որոտագին ձայնը. «Դու սպանեցիր հօրը, երբ նա պաշտպանում էր իւր

ընկերին ծննդաբերութեան ժամին. դու մահացրիր մօրը, երբ նա խնամում էր իւր նորածին հորթուկներին. թող արդարադատ երկինքը արժանաւոր հատուցումն տայ քո արարմունքին»... Լեռնոգին լռեց: Սաստիկ փոթորիկը արձագանք տուեց նրա ձայնին: Բարձրացաւ «սատանի քամին», պտըտեց վիշապի պէս, աւելի ու աւելի փոքրացրեց իւր շրջանը, մի վիթխարի օդային ձագառ կազմեց և իւր մէջն առնելով մեղապարտ որսորդին, երկինք բարձրացրեց և այնտեղից պատառ-պատառ ցած թափեց... Փոթորիկն անցաւ: Աստուծոյ հրամանով հողը բուսցրեց մի տեսակ կակուղ մետաքսանման խոտ նորածին հորթուկների համար, որով նրանք կերակրուեցան իրանց մօտ կաթի փոխանակ: Այդ օրից խոտը կոչուեցաւ պախրախոտ, իսկ ձորակը—պախրաձոր:

Ն. Տ.-Դ.

92. ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՒԻԹԸ

(Դիւցազնական աշխարհ)

Ա. Շատ դարեր առաջ Սասուն քաղաքում ապրում էր մի մարդ, անունը Մհեր. Նա չէր հասարակ մի խեղճ հպատակ, այլ երկրի տէրը, իշխան անվեհեր: Ինչպէս առիւծը մեծ է անտառում, ինչպէս արծիւը տիրող վերեւում, այնպէս էր Մհեր բոլոր պետերի, իշխանների մէջ: Ոչ-ոք չէր կարող դէմ կանգնել նրան՝ ոչ միայն մարդիկ, այլև դև, գազան... Դեռ նա մանուկ էր տասը-տարեկան, երբ Սասուն տանող լեռնուղու վրան՝ առիւծ երևաց.—գազան մարդակեր, որ ճամփէն կտրած կ՚ուտէր, կլլափէր, ով կըյանդգնէր Սասուն ներս մտնել, կամ ում Սասունից դուրս գալ պէտք լինէր:—Մանուկ Մհերը իւր հօրից ծածուկ գնում է անտառ, վիշապի վրայ: Քաղցած գազանը նրան տեսնելով, սաստիկ գոռում է, վեր կենում տեղից: Դիպչում են իրար: Գազանի բաշից Մհերը բռնում, կատաղի թափով գետին է զարկում և, շունչ չտալով ահեղ կենդանուն, ձախով բռնում է ներքի ծնօտը, աջով վերինը քաշում, պատառում, երկու կէս անում:

Բ. Երկար տարիներ Սասուն, իւր Տանը, թագաւորում էր Մհեր իշխանը: Հարևան երկրի պետեր ու տէրեր, այրերում ապրող ահռելի դևեր նրա անունից սարսափում էին: Խաղաղ էր Սասուն. հպատակները հանգիստ, երջանիկ. միայն Մհերը իւր վիճակից անգոհ էր սաստիկ. Նա ժառանգ չունէր: Մհերն աղօթքով Աստուծուն դիմեց, որ մի որդի տայ: Տիրոջ հրեշտակը երազում ասեց. զաւակ կ՚ունենաս դու մի քաջ, հսկայ. բայց երբ նա ծնուի, նրա ծնողաց կեանքը պիտ՝ կարճուի: Մանուկը ծնուեց: Հայրը շտապով նրան մկրտեց: Նրա անունն Դաւիթ դրեցին... Խեղճ ծնողներն էլ երկար չապրեցին:—Մի տարօրինակ տղայ էր Դաւիթ. մանուկ հասակում նա ծիծ չկերաւ. մեղրով ու կաթնով սնուեց, զօրացաւ. ով կըմեծանար ամսով ու տարով, նա մեծանում էր ժամով ու օրով:

Գ. Մանուկ օրերին Դաւիթն ապրում էր Մսուր քաղաքի մելիքի տանը: Սա Դաւթի հօրը, Մհեր իշխանին, մօտ ազգական էր, թէև կռապաշտ: Զէնով-Օհանը, մեռնող Մհերի կամքին հնազանդ, Դաւիթ մանուկին տարաւ նրա տուն, Իսմիլ խանումի խնամքին յանձնեց: Խանումը նրան հարազատ որդուց չէր զանազանում. բայց հոգեորդու գերբնական ույժը շատ փորձանքներ էր խեղճ կընկան բերում: Սիրում էր Դաւիթ կատակներ անել, բայց ոչ մի կատակ աժան չէր նստում միւս մանուկներին, խաղակիցներին. մէկի կռնակն էր ծռւում, դուրս ընկնում, միւսի ոտները տեղահան լինում, մէկը կաղ ոտով, միւսը թեւագուրկ տուն վերադառնում:

Մի օր խանումը մանկանը փակեց իւր սենեակի մէջ—տանից դուրս գնաց: Դաւիթը ելաւ, դուռը կոտրատեց, դուրս վազեց փողոց, տղայոց կանչեց, պարտէզ ժողովեց: Այստեղ մեր քաջը ձեռքը մեկնում է, մի բարդի ծառի

բընիցը բռնում, ցած կըռացնում. «դէհ, ընկերներս, եկէք ծառ հեծնենք, ձիախաղի տանք»: Տղայքը վազում, հեծնում են ծառը: Դաւիթը դարձեալ կատակ է անում՝ ծառը բաց թողնում: Ծառը ուժգնապէս վերև է ձգւում և մանուկներին դէս ու դէն գցում. որը մեռնում է, որն էլ կիսամեռ գետին է ընկնում:

Ի. Այս դէպքից յետոյ Մսրամելիքը մարդիկ է վարձում և պատուիրում է, որ Դաւթին տանեն ու ճանապարհին, գետից անցնելիս, կամրջից ներքև գցեն, սպանեն: Քաջերն առնում են Դաւթին ու գնում, իբրև թէ Սասուն, հօր տունն են տանում: Բայց երբ հասնում են Մուրադչայ գետին, կամրջի կիսին, երկու քաջերը, մինը առաջից միւսը յետևից, Դաւթին բռնում են, որ գետը գցեն: Բայց մեր մանուկը երկու քաջերին իբրև հաւի ճուտ տակըն է կոխում, դաշոյնը հանում, վզներին դնում: «Ես ձեզ կարող եմ մորթել իբրև ուլ, կամ գետը ձգել որպէս մի փետուր, բայց Իսմիլ մօրս բարի խնամքին բաշխում եմ ես ձեզ ձեր կեանքը չնչին»: Ասում է Դաւիթ, նրանց արձակում ու ինքը Սասուն հէրբօր մօտ գնում:

Ե. Մհերի մահից յետոյ նրա երկիրը կառավարում էր նրա եղբայր Ձէնով-Օհանը: Սա բարի մարդ էր, բայց իւր հանգուցեալ եղբօր չափ քաջ չէր: Սորա փոխարէն Օհանը շատ զօրեղ ձայն ունէր, այնքան զօրեղ, որ ամպի գոռոցին կամ կայծակի ճայթիւնին էր նմանում: Երբ որ Օհանը կամենում էր ձայն տալ—կանչել, նրան փաթաթում էին եօթը գոմշի կաշուի մէջ, որ, կանչելիս, ինքը չճաքի, չպատառուի:

Զ. Երբ որ Օհանը տեսաւ ոըղայքին փարթամ, զարգացած, շատ ուրախացաւ: «Մհերի որդին քիչ էլ մեծանայ,

իւր հօր երկիրը կըկառավարի. այժմ թո՛ղ մի քիչ հորթերը գնայ, տաւարը պահի, մտածում էր նա. Թո՛ղ դեռ սովորի հովուական լինել, որ երբ տէր դառնայ, հպատակների ցաւը հասկանայ»: Բերաւ պողպատէ ոլեր հագցրեց, ձեռքին պողպատէ գաւազան դրեց, տաւարն ուղարկեց: Բայց տաւարածը մեր քաջ Դաւիթն էր՝ իւր կատակները դարձեալ միտ բերեց. մի օր սարերում ինչ որ գազան կար՝ արջ, առիւծ, վագրեր, վարազներ ու գայլ, մի տեղ ժողովեց, նախրի հետ արեց ու քաղաք բերեց: Քաղաքացիքը սաստիկ վախեցան, դռներ, երդիկներ ամուր կողպեցին, տանը թագկացան: Դաւիթը կանչեց. «Բարերար Աստուած, թո՛ղ իմ տաւարը անվընաս մընան, իսկ գազանները սարերը գընան»:

Է. Տաւար պահելիս՝ Դաւիթը ունէր մի համեստ ընկեր, որ միշտ բերում էր՝ խառնում տաւարը Դաւթի նախրի հետ ու կշտին մընում: Դաւիթն էլ հանգիստ իւր համար քընում: Մի օր Դաւիթը քնից վեր կացաւ և իւր ընկերից վատ լուր իմացաւ. քառասուն վիշապ, ամեհի դևեր, վրայ են տուել, քառասուն տաւար վեր առել, տարել:

Դևերի հետքը Դաւիթը բռնեց, սրտնեղած գնաց, մի քարայր գտաւ: Դևերի տունն էր գետնի տակ փորած,—դռան առջև էլ մի ժայռ գլորած: Քարայրի դռան աներկիւղ տղան կանգնեց ու կանչեց. «Է՛յ, դուք, տմարդի, կանացի քաջեր, քնած ժամանակ երբ էք իմացել, որ տղամարդը յարձակւում անի, միւսի տաւարը առնի ու տանի: Դուք քառասուն էք, իսկ ես միայնակ, ձեռքիս էլ ունիմ մի փայտէ մահակ. թէ տղամարդ էք, այրից դուրս եկէք. դռանը կանգնած ձեզ եմ սպասում»:—Դևերի մեծն էլ, քըմծիծաղ տալով, ներսից է կանչում. «Քաջասիրտ տղայ, փոքր ինչ սպասիր, շատ մի գայրանալ ու մեզ մի՛ պատժիր. իսկոյն դուրս կըգանք. քեզ յարգանք կըտանք և քո տաւարի փոխը

յետ կըտանք»։ Ասում է, հրում, ժայռը գլորում, այրից դուրս ելնում։ Բայց դուրս գալուն պէս Դաւթի հարուածը իջնում է ուժգին։ Անհեղ վիշապը փչում է հոգին։ Նրա յետևից միւսն է դուրս գալիս. Դաւթի հարուածից հոգին է տալիս։ Այսպէս նա կարգով ամենքին զարկում ու նորանց լէշը ձորն է գլորում։ Յետոյ մտնում է քարայրէ բունը, անթիւ գանձ գտնում, բերում իւր տունը։ Բայց գանձը ոչինչ՝ այրի խորքումը կապած կար մի ձի, մի քուռակ սիրուն, սև-ինչպէս սաթը, ուժեղ, գնացկան, ինչպէս Ղռա-աթը*)։ «Հօրեղբա՛յր Օհան, այս քուռակն ինձի, իսկ այն գանձերը վեր առ, քեզ լինի»։

Ը. Լուրջ էր Դաւիթը, կատակ չէր անում. տղայութիւնը մի կողմ էր դրել. ուրիշ մտածմունք, նորանոր հոգսեր ըսկսել էին նրան պաշարել. Մսրամելիքը հօր մահից յետոյ զօրով եկել էր, Սև սարին տիրել,—Մհերի սարին, ուր առիւծ հսկան որսի էր գնում, որը Սասունի մի մասն էր կազմում։

Դաւիթը գնաց Ձէնով-Օհանին՝ «հօրեղբայր, ասաց, թէ Աստուած սիրես, մի ասա, տեսնեմ. ինչպէս է եղել, որ հօրս սարը Մսրամելիքի ձեռքն է ընկել»։

«Որդի, երբ հայրդ դեռ կենդանի էր, այդ սարը ամբողջ մեզ կըպատկանէր։ Նրա չորս կողմը պարիսպ էր քաշած, վերան Մարութայ սուրբ վանքը շինած։ Բայց երբ որ մեռաւ քո հայրդ, Մհեր, Մսրամելիքը տիրեց այդ սարին, պարիսպը քանդեց, վանքը աւերեց. այդ օրից սարը մնաց իւր ձեռին»։

—«Ես պիտի երթամ, սարը գրաւեմ, վանքը նորոգեմ,

*) Ղռա-աթը այն առասպելական ձին է, որի վրայ Քեօռ-Օղլի անունով մի ժողովրդական հերոս բազմաթիւ քաջագործութիւններ է կատարել։

իմ հողին տիրեմ. Թող թէ մելիքը քաջասիրտ մարդ է, զօրով այնտեղից ինձ դուրս վռընդէ։ Եւ դու ինձ, հէրբար, այս բանում պիտի օգնական լինես. ինչ որ ինձ պէտք գայ՝ վարպետ, նիւթեղէն, ոսկի, ակնեղէն—ամենը պիտ' տաս, բան չըխնայես»։ Ասաց Դաւիթը ու սարը ելաւ, հին վանքը գտաւ, նրան կարկատեց, նոր ու փառահեղ մի վանք էլ շինեց, Մսրամելիքի անունը իսպառ այնտեղից ջընջեց։

Թ. Լուրը տարածուեց. համբաւը հասաւ Մսուր քաղաքը. Մելիքն իմացաւ Դաւթի արարքը... Գոռոզ իշխանը սաստիկ բարկացաւ. սաստիկ բարկացաւ, փըրփըրեց, ասաւ. «Կուխ պիտ՝ գնամ Սասունի վըրան, Սասունի վըրան. այն լկտի մանկան պիտի խողխողեմ, Սասունն աւերեմ,. աւերեմ, գերեմ, ինչ որ կայ-չկայ կոխտամ, տրորեմ...»։

«Թող ժողովուին հարիւր հազար տըղայք նորատիք.
«Թող ժողովուին հարիւր հազար բեղով պատանիք.
«Թող ժողովուին հարիւր հազար Թուխ-մօրուս մարդիկ.
«Թող ժողովուին հարիւր հազար կայտառ ծերունիք։

Ժ. Դաւիթն էլ երբ որ այս բանն իմացաւ, գնաց հէրբօր մօտ, այսպէս խօսեցաւ. «Տո՛ւր ինձ, հօ՛ր-եղբայր, իմ հօր զըրահը, տո՛ւր որ պահպանեմ ես մեր սուրբ գահը. տուր նոյնպէս կապեմ մէջքիս այն սուրը—կայծակից զօդած իմ հօրս թուրը. խաչը զօրաւոր աջ թևիս կապիր, Ջալալ քուռակը ինձ համար թամքիր։ Սև լեռան գլխին շինած սուրբ վանքը, աղաչիր՝ պահի իմ մանուկ կեանքը»։ Տասը տարեկան հերոս մանուկին Ձէնով-Օհանը ուզածը տուեց։ Մանուկը հեծաւ Ջալալ քուռակը և շուրջը կանգնած մարդկանցը դիմեց.

«Ո՛վ քոյրեր, մընաք բարով, ինձ քոյրութիւն էք արել.
Ո՛վ մայրեր, մընաք բարով, ինձ մայրութիւն էք արել.
Ե՛ղբայրներ, մընաք բարով, մընաք բարով, մեծ ու փոքրով»։

Ասաց Դաւիթը և իր ձին քշեց, Կաթնաղբիւրի մօտ նրան կերակրեց, բայց երբ Մելիքի բանակին հասաւ, անթիւ, անհամար վրաններ տեսաւ: «Ի՞նչ անեմ, Աստուած. թէ գաղտուկ գնամ, կ'ասեն՝ Դաւիթը գողի պէս եկաւ. թէ արձակ գնամ, այդքան զօրքերին ես ո՞նց դիմանամ»:

Միայն մի բոպէ տատանուեց քաջը, աջ ձեռքին եղած յիշեց սուրբ խաչը, առաջ արշաւեց, բարձրաձայն կանչեց.

«Հ՜յ, ո՛վ քնած էք, շուտով զարթեցէք,
Իսկ ով զարթուն էք, տեղից վեր կացէք.
Ով որ կանգնած է, վրան կապէ,
Ով որ կապել է, թո՛ղ իր ձին թամքէ,
Ով որ թամքել է, թո՛ղ շուտով հեծնէ:
Դէհ պատրաստ կացէք,
Ձեզ պահպանեցէք,
Որ յետոյ չասէք՝ մեր քնած ժամին
Գողի պէս եկաւ Դաւիթ պատանին»:

Ասաց ու քշեց, զօրքի մէջ մտաւ, մէկ կողմից տըւեց, միւս կողմով ելաւ. կայծակի թուրը կրակ էր թափում. Թրից պրծածը ձին էր կոխոտում:

ԺԱ. Տրտունջ բարձրացաւ Մսրամելիքի բանակի միջից. ձայներ լսուեցան ամենայն կողմից. «Անվեհեր տղայ, դու մեղք մի՛ գործիր. գտիր թշնամիդ, նրա հետ կռուիր»: Զօրքի տրտունջը Դաւիթը յարգեց, Մսրամելիքի վրանը դիմեց... Եւ երբ իշխանի դուռը հասաւ, պահապաններին բարձրաձայն ասաւ. «Ո՛վ թիկնապահներ գոռոզ մելիքի, մտէք, յայտնեցէք իսկոյն ձեր տիրոջ, որ միակ որդին Մհեր իշխանի՝ զօրքըդ ջարդելով, դուռըդ է եկել. մեն-մենակ քեզ հետ կամք ունի կռուել... Մարդիկը մեղք են, ինչի՞ կոտորենք. մենք, իշխաններս, էկ միմեանց զարկենք»:

Մսրամելիքը նոյնպէս հսկայ էր, հսկայի նման դիտէր

քաջ կռուել. Դաւթի հրաւէրը սիրով ընդունեց և գոռոզաբար նըրան հարց տըւեց. «Կռիւը զօրո՞վ, թէ հերթով անենք... եթէ հերթով է ընդունուած կարգը, ապա դու փոքրն ես՝ առաջ ես պիտի ըսկսեմ զարկը: Ուրեմն գնա՛, մէջտեղը կանգնիր և իմ մահաբեր զարկին սպասիր: Պայմանը սա է՝ ես երեք անգամ կերթամ ու կըգամ և երեք անգամ քեզ հարուած կըտամ. եթէ հարուածիս դու լաւ դիմանաս, կամ թէ հրաշքով կենդանի մնաս, ապա ես պիտի մէջտեղը կանգնեմ և քեզնից նոյնքան հարուած ընդունեմ»:

—«Ես համաձայն եմ», Դաւիթը ձայնեց. անցաւ հրապարակ, մէջտեղը կանգնեց: Մսրամելիքն էլ այդ էր ցանկանում. գնաց ու եկաւ, իր գուրզը զարկեց. դարձեալ հեռացաւ, նորից յարձակուեց և առաջուանից սաստիկ զարկ տըւեց... Դաւիթն անվրդով զարկերն ընդունեց և երեք զարկն էլ անփաս կրեց. ապա յետ դարձաւ, մելիքին ասաւ. «Մսուր քաղաքի դու իշխան հզօր, բոլոր զօրքերիդ առջևը այսօր սուրբ պայման արինք. խօսքըդ կատարիր, էկ, մէջտեղ կանգնիր: Իմ իրաւունքս է երեք հարուած տալ. բայց ես առաջին հարուածը մօրս—Խալիմ խանումին պիտի նուիրեմ. երկրորդ հարուածը—անուշ քրոջս, որի հետ սիրով քո տանն ապրել եմ. քեզ համար, ուրեմն, մի հատն է մնում. եթէ այս մինին դու լաւ դիմանաս, կամ զարկից յետոյ կենդանի մնաս, ապա Սև լեռը քեզ է պատկանում»: Ասաց ջէտ ու ջէտ գնաց մեր քաջը, յիշեց աջ կռան հրաշագործ խաչը, ապա յառաջեց և սաստիկ թափով կայծակի սրով մելիքին զարկեց, երկու կէս արեց:

Բոլոր զօրքերը «կեցցէ» կանչեցին, Դաւթին Մսուրի տէր ճանաչեցին:

ԺԲ. Սասունից հեռու, մի ուրիշ երկրում, Կապուտկող կոչուած մի մեծ քաղաքում, Խանդուդ անունով մի

Թագուհի կար, մի գեղեցկուհի, հօրը մինուճար։ Շատ պահլաւաններ, շատ հսկայ մարդիկ ցանկանում էին նրան կին առնել։ Բայց նա գոռոզ էր, մեծամիտ, հպարտ, ամսով ու տարով նրանց տանջում էր, իւր դըռան պահում, չարչարում անպարտ։

Դաւթի քաջութեան համբաւը ելաւ, Խանդութ խանումի ականջին հասաւ։ Եւ գեղեցկուհին ինքն իրան ասաւ. «Կամ ես Դաւիթին պիտի կին լինեմ, կամ առանց նորան գերեզման մտնեմ»։ Վարձեց աշուղներ, ուղարկեց Սասուն, խիստ պատուէր տուեց իւր հօրից թաքուն. «Գտէք Սասունի հըսկայ իշխանին, քաջերից էլ քաջ Դաւիթ պատանին, իմ գովքը արէք, սիրտը շահեցէք և, կախարդելով, Կապուտկող բերէք»։

Վարձուած աշուղներն գալիս են Սասուն, գտնում են Դաւթին, Օհանից թաքուն, իրանց տիրուհուն գովում են երգով և նըրա սիրտը վառում, բորբոքում.

«Նա ըսպիտակ է, որպէս ձիւն գարնան.
Գեղեցիկ՝ որպէս վարդը մայիսուան.
Ունքերը կամար, վըրձինով քաշած.
Աչքերը խումար, սեւուկ, ամօթխած.
Ճակատը լայն է, գանգուրներով պատ.
Մազերը շքեղ, ծամերով առատ.
Իրանը ճկուն, որպէս կիպարիս.
Կազմուածքը փարթամ իբր հայոց Մասիս։
Ամբողջ աշխարհից կարիճ իշխաններ
Նըրա դռանն են կանգնած օր-գիշեր.
Բայց նա ոչ ոքի ուշք չի դարձնում։
Դաւթին է սիրում, Դաւթին ըսպասում»։

Դաւիթը պատասխանում է.

«Երբ ձեր տիրուհին այդպէս սիրուն է,
Երբ որ նա այդքան արժանիք ունէ,
Սասունի տէրը, Մըհերի որդին,
Յօժար է գալու, ասէք, իւր կոչին»։

ԺԳ. Մի քանի ժամանակից յետոյ Դաւիթը ճանապարհ է ընկնում դէպի Կապուտկող։ Գնում է, գնում, շատ ու քիչն Աստուած գիտէ, տեսնում է, որ զուլթանաւորը վար են անում։ «Տղայք, ճանապարհորդ մարդ եմ, քիչ հաց տուէք»,—ասում է։ Մաճկալը պատասխանում է. «Մենք վեց օրուայ պաշար ունինք. նստիր, կեր, ինչքան սիրտդ ուզում է»։ Դաւիթը նստում, միանգամից բոլոր պաշարն ուտում է։ «Տօ, տնաւեր, ասում է մաճկալը. դու մի րոպէում մեր վեց օրուայ հացը կերար. մենք սոված ինչպէս պիտի վար անենք»։ Դաւիթն ասում է. «Եզն ու գոմէշ բաց թողէք եւ զուլթանի շղթան ինձ տուէք»։ Ասում է, հեծնում քուռակը եւ մի ժամում վեց օրուայ վարը վարում, վերջացնում։

ԺԴ. Դաւիթը անփորձ հասաւ Կապուտկող։ Եւ ճանապարհին ով էլ պատահեց՝ վիշապ, պահլաւան, աւազակ թէ գող, ամենքին ջարդեց. պալատի առաջ ձին քշեց, կանգնեց... Իշխանի դռան, Թոփուզը ուսին, մի պահապան կար, որի հայեացքը ժանգոտ էր ու չար։ Ոչ մի եկողի նա չէր բարևում և ոչ մի մարդուց բարև չէր առնում։ Դաւթին որ տեսաւ, ոչ առանց ահի դէպ՝ նրան նայեց։ Նա էլ երկիւղով սրան բարևեց. «Անունդ ի՞նչ է, եղբայր», հարցըրեց։

—«Ուզում ես, կ՚ասեմ քեզ իմ անունը, քեզ՝ որ եկել ես իմ տիրոջ տունը. ինձ այստեղ մարդիկ Համդօլ են կոչում։ Իսկ դու, ինձ ասա, ո՞վ ես կամ ինչո՞ւ եկել ես այստեղ աշխարհից հեռու... Եթէ եկած ես որպէս փեսացու, տիրուհուս ուզիլ, ապա լաւ կանես, որ ձիդ ետ շուռ տաս և եկած տեղըդ սուս ու փուս երթաս։ Մեղք ես, պատանի, այս սըրահի մէջ ոչինչ լաւ բանի դու չես պատահիլ. ուրիշ աւելի հսկայ փեսացուք քեզ հում-հում

կուտեն, մօտ էլ չեն թողնիլ, որ դու խանումի երեսը տեսնես, կամ ձայնը լսես»։

—«Կատակ ես անում, Համդօ՛լ բարեկամ, բայց ես կատակը վաղուց եմ թողել. Խանդուդ խանումի յատուկ հրաւէրով հեռու աշխարհից այստեղ եմ եկել. բա՛ց արա դուռը, ձիս էլ գոմը տար. հիւրասիրութեան պարտքդ կատարի՛ր. քանի կռնիս է խաչը փրկարար՝ ոչ մարդ, ոչ հրէշ, վիշապ, պահլուան ինձ վնաս չեն տալ. Դաւթի անունը հարկաւ չես լսել. նրան յաղթողը մօրից չի ծնուել»։

Երբ իւր անունը Դաւիթը տըւաւ, նստած տեղից Համդօլ վեր թռաւ. կանչեց ծառաներ, նրա ձին առան և գոմը տարան։ Ինքն էլ սրահի դռները բացեց և ակնածելով Դաւթին ներս կանչեց։ Եւ երբ Դաւիթը մտնում էր շէմքից, մի կարմիր խնձոր ձգեցին բարձրից, որ նա վեր առաւ, նայեց, համբուրեց,—ծոցումը դրեց։ Սրահում նստած բոլոր հսկայքը, երբ Դաւթին տըւած տեսան յարգանքը՝ խանումի կողմից, սաստիկ բարկացան, նորեկ պատանուն խեթիւ նայեցին և իրանց մտքում հաստատ վճռեցին, որ նրան մորթեն,—խանումին պատժեն։

Կէս օր էր արդէն։ Մէջտեղ փռուած էր ճաշի լիք սուփրէն։ Բոլոր հարսնախօսք սուփրի շուրջ նստած, բոլոր փեսացուք բարձերին կռնած։ Դաւիթն էլ եկաւ, մի կողմը նստեց, սուփրի մի ծայրից կամացուկ բռնեց—դէպ իրան քաշեց, ինչ որ կար-չկար լաւ մաքրագործեց։ Յետոյ վեր կալաւ գինով լիք կուժը և մի շնչումը խմեց, դատարկեց. «Համդօ՛լ բարեկամ, դու դուռը պահիր. ես այս ճուտերին պիտ՛ մէկ-մէկ մորթեմ, Խանդուդ խանումին խընձորի տեղակ սրանց գլուխներն ընծայ ուղարկեմ»։ Բայց մեր փեսացուք իրանց հաշիւը շուտով վեր առան՝ դեռ խօսքը կիսատ՝ միմեանց յետևից պուկ-արին, կորան։

ԺԵ. Միւս օրը Կապուտկողի թագաւորի մօտ գալիս են Համզայ պահլուանի խնամախօսները. «Մեր տէրը մեզ ուղարկել է, ասում են. կամ պէտք է աղջիկդ տաս, տանենք, կամ դուրս գաս, նրա հետ կռիւ անես»։—«Համիզօլ, ասում է թագաւորը, յայտնի՛ր այն քաջերին, որոնք զանազան երկիրներից եկել են խանումին ուզելու. ով որ կըգնայ եւ Համզայի գլուխը կըբերի, աղջիկս նրան կըտամ»։

«Ոչ մի պահլուան չի մնացել, բոլորը փախել են. մնացել է Սասունցի Դաւիթը. տեսնենք նա ինչ կասի», պատասխանում է Համիզօլը։ Կանչում են Դաւթին։

Թագաւորը հարցնում է. «Դո՞ւ ես Դաւիթը»։

—Ես եմ։

«Կարող ես Համզայ պահլուանի գլուխը բերել»։

—Հաց եւ գինի, Տէր կենդանի. կըբերեմ։

«Եթէ Համզայի գլուխը բերես, Խանդուդ խանումը քեզ կըտամ», վճռում է թագաւորը։

ԺԶ. Խանդուդ խանումը իւր նաժիշտներով սրահից ելաւ, դռանը կանգնեց. երբ որ Դաւիթը ճամպայ էր ընկնում, նրան ողջունեց. «Դա՛ւիթ, քեզ պահիր. Համզայ հրէշից դու զգոյշ կացիր. մինչև այս օրս դեռ ոչ մի կորիճ նրան չի յաղթել և ոչ մի կռուող—նրանից փրկուել»։ Ասաց, արտասուեց։ Դաւիթը անխօս խոր գլուխ տուեց և իւր ձին քշեց։ Քշեց ու գնաց. քիչ թէ շատ գնաց, այդ գիտէ Աստուած. վերջապէս հասաւ Համզայի տունը, ներս նայեց, տեսաւ՝ հրէշը նստած ապուր է ուտում. մէկ չարխի կաթսայ առաջը դրած, ահագին շերեփ իւր ձեռին բռնած. երբ որ շերեփը բերանն էր տանում, կարծես մի հորի բռեխ էր բացւում։ Ինքն էլ սոված էր. ձիուց վեր եկաւ, դռանը կապեց, յետոյ անխօսիկ վրանը մտաւ, Համ-

գայ հսկային բարև չտուած, կաթսան վեր առաւ ու գլխին քաշեց, մի շնչում դարտկեց։

—Է՜յ, դու ի՞նչ մարդ ես, Համզան հարցըրեց։

«Խանդուդ խանումի կողմից եմ եկած, որ քո անունից մի նշան տանեմ»։

—Լա՛ւ, ա՛ռ մատանիս։

«Այդ չնչին քարը ես կըկորցնեմ։ Աւելի մեծ բան, քո գլխի նման, որ տաս, լաւ կանես»։

—Է՜յ, լակոտ, ո՞վ ես։ Բայց ով էլ լինես, փա՛ռք տուր Աստուծուն, որ ներս ես մտել իմ վրանի տակ. մենք մե՛ր տներում մարդկանց չենք պատժում. գնա՛ հրապարակ։

Դաւիթը ելաւ։ Համզան կատաղած նոյնպէս դուրս եկաւ։ Միմեանց բռնեցին։ Որպէս երկու դօչ՝ գնում են գալիս, և միմեանց սաստիկ հարուած են տալիս. կամ որպէս երկու կենդանի լեռներ, ուզում են միմեանց փըշրել, կլանել։ Մինչև երեկոյ այսպէս կռուեցին։ Իրիկնապահին Դաւիթը կանչեց. «Ով հաց ու գինի և Տէր կենդանի»։ Կայծակի Թուրը մէկ էլ պսպղաց, աշխարհը թընդաց։ Համզայի լէշը գլորուեց, ընկաւ։ Օրը մթնեցաւ։

ԺԷ. Կապուտկողումը տօն էր կատարւում. ամբողջ քաղաքը շարժւում էր, խնդում։ Բոլոր աշխարհից հաւաքուած հիւրեր քէֆ էին անում եօթն օր, եօթ գիշեր։ Դաւթի պսակն էր՝ պսակ, հարսանիք, ճաշկերոյթ, ընթրիք. քառասուն քաջեր զանազան երկրից մակառ են եկել. քառասուն կուսանք, մէկը միւսից լաւ, հարսնաքոյր ջոկուել. Խանդութի հայրը փեսայի պատուին մրգի փոխանակ ոսկի է բաժնում. Ձէնով-Օհանը իւր հարսի գլխին մարգարիտ ցանում։ Անձրև՛ էր, անձրև և ոչ թէ պարգև, որ ամբողջ շաբաթ թափւում էր առատ։

Եօթն օրից յետոյ հարսանքաւորը Սասուն գնացին.

այնտեղ նոյն կարգով եօթն օր, եօթ գիշեր խնջոյք արեցին, կերան խմեցին և ամեն մինը մի պարգև առած, իւր տունը գնաց։

ԺԸ. Մի տարի անցաւ։ Խանդուդ խանումին Դաւիթը ասաւ. «Ես պիտի գնամ, մի պըտոյտ անեմ, երկիրներ տեսնեմ։ Դու այդ միջոցին զաւակ կ՚ունենաս. թէ տղայ լինի, ապարանջանս թևին կըկապես. թէ աղջիկ լինի, դու այն կըծախես և աղջըկանըդ զար ու զարդ կանես։ Տղադ կըլինի հսկայ, զօրաւոր. աղջիկդ սիրուն, շքեղ, փառաւոր։ Տըղայ որ լինի, Մհեր կանուանես, իմ հօր անունը նրան կըդնես. թէ աղջիկ լինի, ինչ սիրտդ ուզի, այն անունը տուր՝ Անահիտ, Աստղիկ, Անոյշ, Շուշանիկ, Լուսիկ, Արուսեակ, Նազիկ, Վարսենիկ»։

Ասաց ու գնաց։

Խանդուդ խանումը մենակ չմնաց, մի ամսից յետոյ մի մանուկ ծնեց, պապի անունը Թոռանը դրեց, ապարանջանը կռնիցը կապեց։

Մհերը աճեց, աճեց, զօրացաւ և մի վիթխարի մանկամարդ դարձաւ։

ԺԹ. Օտարութեան մէջ շատ երկար մնաց մեր Դաւիթ հսկան. գնաց Գիւրջիստան, Պարսից աշխարհը, նաև Չինաստան։ Եւ ամենայն տեղ նոյն բանն էր անում՝ հաւաքում շուրջը տեղացի քաջեր, թոյլերին օգնում, չարերին պատժում. Բայց ամենից շատ Դաւիթ բարկացաւ Ադրբէջանում... Դաւիթը մենակ քաղաք է մտնում. ամբողջ քաղաքը ոտի է կանգնում, զէնք, զրահ առնում, Դաւթին կալմէջում. ուզում են բռնել, սաղ-սաղ խորովել։

—«Ով հաց ու գինի և Տէր կենդանի», կանչում է քաջը և Թուրը հանում, բոլոր քաղաքը քանդում, կործանում։

Վերջը մի աղջիկ, սիրուն ու չքնաղ, Դաւթի առաջն է գալի, աղաչում է ու խնդրում, որ միւսներին խնայի։ «Ադրբէջանի տիրոջ՝ ես աղջիկն եմ մինուճար. հայրս ընկաւ քո սրից. ինձ էլ վեր ա՛ռ, հետդ տար»։

Ի. Գալիս է Դաւիթ, աղջիկը թարքին և ինքն իրան խօսում առանձին։ «Եօթը տարի է, որ ես Սասունից հեռու եմ ապրում. այս եօթը տարում ինչ է պատահել արդեօք իմ երկրում. Ջէնով-Օհանը գուցէ ծերացած. Խանդուդ խանումը տխուր մնացած. արդեօք ինչ ունիմ ես ինձ յիշատակ. արդեօ՞ք ապրում է իմ միակ զաւակ»։ Այսպէս տխրադէմ Դաւիթ իշխանը առաջ էր գնում. Ջալալի քուռակն էլ հայրենի հողը հանդարտ կոխոտում... Յանկարծ մի մանուկ դէմն է դուրս գալիս և մեր ճամբորդին խրոխտ ձայն տալիս։ «Է՛յ, օտարական, ո՞վ ես, ո՞ր երկրից և ո՞ւր ես գնում, կամ այդ աղջիկը ինչի՞ ես տանում. դու երևում ես ինձ կասկածելի. մեր հողով անցնել քեզ թոյլ չեմ տալի»։

Դաւիթը ապշեց... Ոչ մի հողածին դեռ չէր յանդգնել նրա երեսին համարձակ նայել, ուր մնաց նրա առաջը կտրել... Մի սարսուռ անցաւ նրա ողջ մարմնով։ Դշխոյ աղջկան կամաց ցած դրեց և մանկան վրայ թափով յարձակուեց։ Խիզախ մանուկը ժայռի պէս կանգնեց։ Միմեանց զարկեցին։ Սկզբում Դաւիթ մրցում էր յաջող. բայց երբ կռիւը սաստիկ երկարեց, ծերունին յոգնեց. մինչդեռ մանուկը, քանի գնում էր, ոյժ էր ստանում. նրա արիւնը նոր էր տաքանում։ Վերջապէս Մհեր հօրը տապալեց։ Դաւիթը ձայնեց. «Զգո՛յշ կաց, տղայ, եթէ որ որդիս այդ բանն իմանայ, քեզ սոսկապատիկ խիստ պատիժ կտայ»։

«Ո՞վ է քո որդին»։

—Մըհեր պատանին։

«Որևէ նշան»։

—Մի ապարանջան աջ թևի վերան։

«Ա՛խ, հա՛յր իմ, ներիր», Մհերը ձայնեց, հօր առաջ մեղմով նա ծունկ խոնարհեց. «Մհերը ես եմ. ներումն եմ խնդրում, որ անպատուեցի ես քո ծերութիւն»։

—Ես պարծենում եմ, որ ինձ յաղթեցիր, դրանով, որդեակ, հօրդ պատուեցիր։ Եւ՝ ես գիտէի, որ իմ ժառանգը, Մհերի թոռը, Դաւթի զաւակը, հօրից պիտ՚ անցնի, անյաղթ պիտ՚ լինի։

Ադրբէջանի դշխոյին Մհերի հետ պսակեցին և Հայրենիք ուղարկեցին։ Դաւիթն ասաց. «Երբ որ քո հայրդ սաստիկ ծերանայ, երբ որ մեր երկրին մի փորձութիւն գայ, հէրբար Օհանը ուժգին ձայն կտայ։ Ձայնը կլսես, Սասուն կհասնես և Հայրենիքիդ տէրութիւն կանես»։

Ն. Տ.-Ղ.

93. ՄԵԼԻՔ-ԻՒՍՈՒՓ

(Պատմական պօէմ 1728—1750)

I. Քաջ Մելիք-Աբով [1]) իր մահուան օրը
Կանչեց հարազատ Թամրազ եղբօրը,
Յանձնելով նորան ղեկը վարչութեան՝
Պետ նշանակեց իր մելիքութեան։
Կտակեց, որ նա խնամատար լինի,
Գիւլիստան աշխարհն անփորձ պահպանի.
Միշտ հովիւ լինի սուրբ հայրենիքին
Ու իշխանական որբ ընտանիքին,
Մինչև որ Իւսուփ որդին մեծանայ,
Հօրը յաջորդի ու մելիք դառնայ։

[1]) Դեռ 1701 թւին Ղարաբաղի մելիքները դիմել էին Պետրոս Մեծին և խնդրել նրա հովանաւորութիւնը, որ կարողանային ապահով պատերազմելու Թուրքերի դէմ։ Ծ. Հ.

II. Իսկ իր պատանի միակ զաւակին
Աբով համբուրեց ջերմ ու կաթոգին,
Նուիրեց նրան՝ օղերն արծաթի
Մի սիրուն հրացան, կոթը սադափի.
«Ահա սա այն է, որով Կաղ-Աբով [1])
Պահեց Գիւլիստան ազատ, ապահով.
Սա այն սուրբ զէնքն է՝ անեղ, մահաբեր,
Որից սոսկացին մեր թշնամիներ,
Որով պաշտպանուեց մեր եկեղեցին,
Որով հայերը փառք վաստակեցին։

III. «Արիւնհեղութեան րոպէին դաժան՝
Սա եղել է իմ ընկերն անբաժան.
Սա եղել է միշտ իմ աչքի լոյսը,
Իմ ապաւէնը, իմ ազգի յոյսը.
Հայրենիքիս պէս՝ սրան պահպանել,
Պաշտել եմ, սիրել ու միշտ խընամել…
Ա՛ռ, ուսըդ գցի՛ր այս անապական,
Անբիծ, անարատ զէնքը հայրական.
Փոքրոգութեամբ մի՛ գուցէ պղծես,
Անարգես սրան, ցեխի մէջ գցես…»

IV. «Շունչըդ բերանիդ եթէ այս զէնքը [2])
Գցես գարշելի թշնամու ձեռքը,
Օ՜, այն ժամանակ հողը կըճեղքեմ,
Շիրմիս խորքերից անէծք կըթափեմ
Ստո՛ր, անարժան ժառանգիս գլխին.
Անէծքըս անեղ՝ հանելով երկին,
Կըրակ կըթափի բարձունքից անհուն,
Շանթամահ կանի իմ անմա՛րդ որդուն…»
Եւ Մելիք-Աբով հառաչեց ուժգին,
Աչքերը փակեց, աւանդեց հոգին։

[1]) Մելիք-Աբով II ունէր «Կաղ» մականունը. այդպէս էր կոչւում, որովհետև նրա մի ոտը գնդակի հարուածից կաղ էր։

[2]) Մելիք-Աբովի այդ հրացանը, որ Մելիք-Բէգլարեանների ժառանգները հազար ռուբլով ծախեցին գեներալ Երմոլովին, այժմ գտնւում է Պետերբուրգի Արուժէյնի պալատում։ Ծ. Հ.

V. Եւ ժողովուրդը ողջ Գիւլիստանի՝
Սգալով մահը հզօր իշխանի,
Համբուրեց սառած նըրա այն աջը,
Որով իր հողը պահում էր քաջը,
Պաշտպանում մեր կրօնն այլազգիներից,
Պաշտպանում հային չար փորձանքներից։
Եւ քառասուն օր գիշեր ու ցերեկ՝
Ազգը լալիս էր դառը, վշտաբեկ.
Ամբողջ մի տարի լեռների լանջում
Ոչ նըւագարան, ոչ երգ էր հնչում։

VI. Երկինքը յուզուած՝ որպէս հրեղէն ծով՝
Վաղ առաւօտեան բռնկւեց բոցով.
Լեռան կատարից բընութեան արքան
Իր ցոլքը պայծառ թափեց Գիւլիստան։
Բարձր գմբէթը Հոռեկայ վանքի
Ու կամարները վեհ ապարանքի
Արեգի շողքից ոսկեզօծւեցան,
Ասուն, անասուն քնից արթնացան.
Դալար անտառի նախշուն հաւքերը
Երգեցին իրանց անուշ երգերը։

VII. Իսկ Մելիք-Թամրազ գեղ ապարանքում,
Բազմած սիւնազարդ շքեղ պալատում,
Իր նախաճաշիկն արդէն վայելած՝
Ղալեան էր ծխում. իսկ հեռու կանգնած,
Գօտկի մէջ խրած ոսկէ ունելիք,
Ձեռները խաչած՝ կար մի մանկլաւիկ.
Ղալեանը հէնց որ հանգչում էր, մարում,
Նա հեզիկ գնում, կրակ էր բերում.
Եւ ոլոր-մոլոր կապոյտ քուլաներ
Նորից բարձրանում, գնում էին վե՛ր։

VIII. Տրտմութեան մռայլ ամպը ճակատին՝
Նայում էր անթարթ Թամրազը գետնին,
Նայում էր, տանջւում դաժան մըտքերից,
Անհանգիստ լինում ծանր հոգսերից.

Իր եղբօր մահն էր նա մտաբերում
Ու ինքըն իրան մորմոքում, տխրում.
Թէ՛ մի բօթաբեր լուր էր տխրագին
Վրդովում նըրան, ջլատում հոգին.
Գուցէ վտանգ էր ազգին ըսպառնում,
Իշխանի սիրտը վեր ու վայր հանում։

IX. Ո՛չ... Այդ Իւսո՛ւփն էր, Իւսո՛ւփն ահաւոր,
Որ վրդովում էր, տանջում հօրեղբօր.
Իւսուփն աճո՛ւմ էր, Իւսուփ մեծանում—
Ժամը հասնում էր, ժամը մօտենում,
Երբ Թամրազ պիտի յանձնէր ժառանգին
Վարչութեան ղեկը, իսկ ինքը նախկին
Իր փառքից զրկուէր, զրկուէր անունից
Ու հրաժարուէր իշխանութիւնից...
Ա՜խ, ինչո՞ւ, ինչո՞ւ Թամրազը յաւէտ
Չըմնայ մելիք, ինքնիշխան ու պետ...

X. Երկնակամարում գիշերուայ կիսին՝
Ամպերի միջին լողում էր լուսին.
Ալօտ շողքերը թափել էր նա ցած,
Աշխարհին նայում դէմքով տխրամած։
Ամեն ինչ լուռ էր, ամեն տեղ խաղաղ.
Քնած էր հանգիստ ամբողջ Ղարաբաղ։
Բայց Գիւլիստանի բերդում՝ դեռ անքուն՝
Նստած էր Ղամար-Սօլթանը զարթուն,
Նայում իր Իւսուփ՝ քընած զաւակին,
Անձնատուր մռայլ, սև մտածմունքին։

XI. Ամուսնու մահուան դառը կսկիծը
Դեռ չէր փարատել նըրա սրտից,
Երբ նենգ, ընչաքաղց Թամրազը դաժան՝
Երկրի սնափառ մելիքն անարժան՝
Յափշտակել էր, կողոպտել բոլոր
Բարիքն ու գոյքը հանգուցեալ եղբօր,
Հալածանքների մատնել Իւսուփին,
Հարստահարում, ընկճում էր որբին.

Իւսուփի կեանքը հօրեղբօր համար
Մի օր կըստեղծի չարիք անհամար...

XII. Պէտք է վե՛րջ դնի Թամրազ այդ կեանքին.
Պէտք է չքացնի՛ Թամրազ ժառանգին.
Նա մի յարմար օր՝ սարում կամ դաշտում,
Կամ թէ գիշերով Գիւլիստան բերդում,
Մարդկանցից ծածուկ՝ կըսպանի որբին
Ու դին կըձգի անդունդը մթին...
Կամ թէ կը խաբի, կըտանի ձորը
Ու իր կեռ թուրը կըխըրի փորը...
Գաղտնիքն ահաւոր կըմնայ գաղտնիք,
Թամրազն էլ առ միշտ կըմնայ մելիք...

XIII. Բայց Ղամար-Սօլթան՝ հովւի պէս արթուն՝
Գիշեր ու ցերեկ հսկում էր որդուն.
Անգութ Թամրազի սիրտը նենգաւոր
Կարդում էր հեռուից այրին սգաւոր,
Կարդում էր հեռուից—սոսկում, սարսափում,
Մըռայլ մտքերից տանջւում, կեղեքւում...
Իւսուփն էր միայն մօր վերջին յոյսը,
Հանգած օջաղի ապագայ լոյսը.
Իր մօր աչքերից նա՛ պիտի սրբէր
Դառնագին, աղի ու ջերմ արցունքներ...

XIV. Բարձր, սեպացած ժայռի գագաթին,
Սրընթաց ու յորդ Ինջայի ափին,
Կանգնած էր տխուր, սակայն ահաւոր,
Գիւլիստան երկրի բերդը սգաւոր։
Իսկ այնտեղ հեռու՝ պալատի միջում՝
Խրախճանքի ուրախ աղմուկ էր հնչում.
Թմբուկ ու փողեր, երգ ու կատակներ
Թնդացնում էին շրջակայ լեռներ...
Լսում էր հեռուից ամբոխը յուզւած,
Թամրազի վըրայ տրտնջում՝ զզւած։

XV. Թամրազը շքեղ հանդէս էր սարքել—
Թուրք հարկահան էր նըրա մօտ եկել.

Գիւլիստան երբէք դեռ մինչև այսօր
Հարկ չէր վճարել Թուրքին նենգաւոր.
Արձակ-համարձակ, սուրը միշտ ձեռքին,
Զարդել էր, վանել հայ ազգը Թուրքին.
Դեռ Կաղ-Աբովի աշխարհում երբէք
Ոտքը չէր դրել հարկահան ոչ մէկ.
Ազատ ու անկախ իր հայրենիքը
Պահպանել էր միշտ հզօր մելիքը։

XVI. Իսկ այսօ՜ր... Այսօր Թամրազը դաժան՝
Հայրենի հողի իշխանն անարժան,
Եղբօր յիշատակն ոտնատակ տըւած,
Թուրքի առաջին դուռը բաց արած,
Նրան ընդունել, սարքել է հանդէս,
Ոտների տակին սողում որդնի պէս.
Ազգի քրտինքով վաստակած ոսկին
Տալիս է այսօր Թշնամի պարսկին,
Հայի անունը ծաղրում, ծանակում,
Անարգում նըրան արար-աշխարհքում։

XVII. Այսօր Թամրազը շողոքորթելով,
Պարսից արքայի ծառայի գլխով՝
Թիթեռի նման՝ պտոյտ է գալիս,
Մեծարում նըրան ու պատիւ տալիս...
Այսօր Թամրազը՝ գինեթւած իր փառքով,
Շահում էր Թուրքին ազգի բարիքով.
Ուզում էր նըրան իր կողմը գրաւել,
Նըրա օգնութեամբ առ միշտ հաստատել,
Նըրա միջոցով միշտ մընալ մելիք,
Թէկուզ կործանւի ամբողջ հայրենիք։

XVIII. Պարսից հարկահանն՝ ոսկով շլացած,
Թամրազի ուսը ծեծելով ասաց.
«Մա՜շալլա, Թամրա՜զ. դեռ ո՜չ մի մելիք
Չի տըւել երբէք մեզ այսքան բարիք...
Ա՛յ հալալ լինի քո կերած հացը,
Ալլահըն օրհնի քո ծծած կաթը.

Խընամքը հզօր, ողորմած շահի
Պաշտօնիդ միջին քեզ հաստա՜տ պահի.
Մեծ փէյղամբարը կեանք տայ մեր շահին.
Հընազանդ լինիս միշտ նըրա գահին...»։

XIX. Թամրազ խոստացաւ մինչև իր մահը
Սրբութեամբ պաշտել Պարսկական գահը,
Շահին միշտ լինել հընազանդ, հըլու
Ու հաւատարիմ խոնարհ հարկատու։
Եւ կամենալով հիւրին նենգաւոր
Նըւիրել ընծայ մի արժանաւոր,
Մելիքը լպիրշ, ստոր, շողոքորթ,
Ազգի անարժան որդին Թուլամորթ,
Զար, գժոխային ժպիտը բերնին,
Բծնելով՝ ասաց Թուրք հարկահանին.

XX. «Մեռնելուց առաջ՝ իմ եղբայր Աբով,
Որ ատում էր ձեզ իր բոլոր հոգով,
Յանձնեց իր որդուն մի Ղրիմի հրացան,
Հազւագիւտ մի զէնք, չըտեսւած մի բան։
Կոթը սադափից, զարդարւա՜ծ սիրուն,
Մէջը շողշողո՜ւն, յղկա՜ծ, ոլորո՜ւն.
Խողովակն ամո՜ւր, կա՜րծր պողպատից,
Օղերը փայլո՜ւն, մաքո՜ւր արծաթից.
Զարկում է գնդակն իր նպատակին,
Ծակում է լեռը, ալանում երկին...

XXI. «Սակայն ափսո՜ս որ այդ անգին զէնքը
Տըւել են անմիտ պատանու ձեռքը.
Նա լաւ կըսազի Պարսից արքային
Կամ նըրա գերարգ, ազնիւ ծառային...
Թէ բարեհաճես, կարող ես կանչել,
Ձեռքիցը խլել կամ թէ պահանջել...
Թէ ընդդիմանայ, հակառակ խօսի—
Այնպէս պատժի՛ր, որ արիւն հոսի.
Նա էլ իր հօր պէս գող է, յամառ,
Միշտ վըտանգաւոր Թուրքերիդ համար...»։

XXII. Արդէն կատարուե՛ց... Յափշտակեցի՛ն...
Զէնքը սրբազան արդէն խլեցի՛ն.
Հայրական անգին աւանդը ամբիծ
Խլե՛ց թշնամին ժառանգի ձեռքից.
Խլե՛ց թշնամին առանց յաղթութեան,
Առանց արիւնի, առանց քաջութեան:
Իւսուփի օրը սևացա՜ւ գլխին,
Խաւարե՛ց աշխարհ, մռայլե՛ց երկին:
Իւսուփ ողբաձայն լալիս է, գոչում,
Ջահել վագրի պէս կատաղած մռնչում:

XXIII. Զրկուե՛ց հայրական նա սուրբ աւանդից,
Զրկուե՛ց իր սիրած, փայփայած զէնքից.
Ամեն օր նրան սրբում, խընամում,
Միշտ իւղ էր քսում, մաքրում, պահպանում,
Որ երբ մեծանայ, երբ մելիք դառնայ—
Ջնջի Թամրազին, երկրին տիրանայ,
Իր սրբանուէր զէնքով հայրենի
Պահի իր ազգը, հողը մայրենի...
Այժմ ի՞նչ անի Իւսուփ անպաշտպան,
Ո՞ւմ մօտ նա գտնի արդար դատաստան:

XXIV. Եւ յուսակտուր, մռայլ ու տրտում,
Արտասուքն աչքին, կսկիծը սրտում՝
Եկաւ Գիւլիստան բերդը սգաւոր,
Նետուեց խանդավառ գիրկը նա իր մօր,
Որ առնի հանգիստ մայրական կրծքին,
Տայ թեթևութիւն իր սրտի վէրքին.
Որ իր սիրառատ ծընողը բարի
Ամոքի նրան ու մխիթարի.
Որ մայրը գթիչ խօսքով իր հզօր
Ըսփոփի, սիրտ տայ իր որդուն անզօր:

XXV. Բայց Ղամար-Սոլթան խիստ ու զայրագին՝
Գոչեց կատաղած, հրեց զաւակին.
«Հեռո՜ւ ինձանից, հեռո՜ւ, դու ըստո՛ր,
Վախկո՛տ, անարժա՛ն որդի դու քաջ հօր...

Լաւ էր, որ եթէ բերէին ինձ մօտ
Անզգայ, անշունչ քո դին արիւնոտ
Ու ինձ ասէին՝ մեռաւ քո որդին,
Հօր նուիրական աւանդը ձեռքին...
Գնա՛, հեռացի՛ր, զարշելի՛ էակ.
Էլ այսուհետև ես չունի՛մ զաւակ...»:

XXVI. Այն ո՞վ է տխուր ու լալահառաչ՝
Գիշերով նստած այն շիրմի առաջ.
Այն ո՞վ է սգում, անվերջ հեծկլտում
Ու գերեզմանի հանգիստը խախտում.
Այն ո՞վ է գլուխը թեքած անընդհատ
Տապանաքարին, ողբում յուսահատ...
Իւսո՞ւփն է նա հէգ, Իւսո՞ւփը թշուառ,
Արտաքսուա՜ծ մօրից, հալածուա՜ծ իսպառ:
Բայց կէս գիշերին ինչո՞ւ էր ողբում
Հօր շիրմի առաջ—ինքն էլ չէր գիտում:

XXVII. Ուռենու զալար ճիւղի արանքից
Գցել էր շողքը լուսինն երկնքից,
Նախշել Արովի սառ գերեզմանը.
Լուռ էր Հոռեկայ սուրբ մենաստանը:
Տանջւում էր Իւսուփ դառը վշտերից,
Տանջւում սոսկալի, դաժան մտքերից...
Կարծես՝ սառ հողից հայրը զայրագին
Անիծում է իր անարգ զաւակին.
Կարծես՝ մամռապատ հողը ճեղքելով՝
Իր գերեզմանից ելնում է Արով...

XXVIII. Ահա՛ նա, ահա՛... Այն ուռենու տակ
Կանգնած է ահե՛ղ, դէմքը դժնդա՜կ.
Կանգնած է՝ ծածկուած ճերմակ պատանքով
Ու նայում անթարթ, խոժոռ հայեացքով...
Սոսկում է Իւսուֆ, դողում սարսափից.
Ո՞ւր փախչի նա հօր ահաւոր տեսքից...
Անէծքը բերնին՝ ահա մօտենում,
Ահա գալիս է, մահ է ըսպառնում...

Տես, կմախքացած ձեռներով դաժան
Ուզում է խեղդել որդուն անարժան...

XXIX. «Ա՜հ, ների՛ր ինձ, հա՛յր... Ների՛ր հալածուած,
Նողկալի՛, սո՛ր որդուդ անարգուած.
Քո սուրբ պատուէրը տուի ոտնատակ,
Անկատա՛ր թողի քո վերջին կտակ.
Ես անարգեցի՜ վաստակած փառքըդ,
Նշաւակեցի՜ անունըդ, յարգըդ...
Խընայի՛ր ինձ, հա՛յր... Օ՜, թո՛ղ ինձ գնամ,
Իմ սև ամօթը արնով լըւանամ...»։
Ուրւականն անհետ յանկարծ չքացաւ։
Այգը բացւում էր։ Իւսուփ հեռացաւ։

XXX. Եւ ահա Իւսուփ արտասուքն աչքին,
Եկաւ մայրենի ամրոցը կրկին.
«Մայրի՛կ, Իւսուփը բնաւ չի խնդրում
Յանցանքի համար քեզանից ներում.
Նա արժանի չէ որդիդ կոչւելու,
Իրաւունք չունի ներում խնդրելու։
Եկել եմ այստեղ, իբրև մի զինւոր,
Ու աղաչում քեզ, իբրև ազգի մօր,
Որ տաս դու ինձ զէնք, գնամ, մաքառեմ,
Իմ հօր կորուսած փառքը յետ բերեմ...»։

XXXI. Եւ մօր ծանրացած սրտից ցաւագար
Կարծես՝ գլորւեց, ընկաւ մի մեծ քար.
Յուսոյ առաջին նշոյլը փայլեց.
Այրին յուզւեցաւ, սիրտը այլայլեց...
Էլ նըրա առաջ նախկին թոյլ, անզօր
Իւսուփ չէր կանգնած, այլ մի քաջազօր,
Կատաղի կորիւն, որի աչքերում
Առիւծ-Աբուլի հուրն էր բորբոքւում.
Իբրև մարմնացած անվեհերութիւն՝
Նա զէնք էր խնդրում՝ որ թափէ արիւն։

XXXII. Բայց Ղամար-Սոլթանն էլ ոչինչ չունէր,
Որդու համար զէնք որտեղից գտնէր.

Թամրազը խարդախ, ագահ, նենգաւոր
Խլել էր արդէն բարիքը բոլոր.
Յափշտակել էր եղբօր կալւածներ.
Կողոպտել սպառ նըրա տան իրեր.
Հէգ իշխանուհուն թողել էր կարօտ,
Ամէն բանից զուրկ ու սիրտը եարոտ։
Նայեց Իւսուփին Ղամարը թշւառ,
Նայեց սրտատրոփ ու մընաց շըւար...

XXXIII. Եւ ձեռքը յանկարծ տարաւ դէպի վեր,
Պոկեց ճակատից իր ոսկէ շարքեր,
Իր իշխանական զարդը թանկագին՝
Վեհ ու մեծապանծ՝ շպրտեց գետին.
«Ա՜յս է մընացել... Տա՛ր, իմ ո՛րբ զաւակ,
Տա՛ր, իմ այս վերջին բարիքը միակ.
Տա՛ր, զէնքեր գնի՛ր, կուռի՛ր անվեհեր,
Հօրըդ կորուսած աւանդը յետ բեր.
Օջա՛ղիս հանգած ճրագը վառի՛ր,
Քո որդիական պարտքը կատարի՛ր...»։

XXXIV. Միւս առաւօտեան, երբ որ արևը
Արար-աշխարհին տըւաւ բարևը,
Ոսկով-արծաթով ջորիքը բարձած,
Ապարանքի մօտ, նժոյգը հեծած՝
Կանգնած էր պատրաստ թուրք հարկահանը,
Ուսին Իւսուփից խլած հրացանը։
Թամրազն էլ այնտեղ՝ քաղցր ժպտալով,
Առօք ու փառօք ճանպայ գցելով՝
Երկուտակւում էր, գլուխ վէր բերում,
Թանկագին հիւրին բարի երթ մաղթում։

XXXV. Եւ երբ մէկմէկու հրաժեշտ տըւին,
Իր նօքարների խումբը յետևին՝
Թուրք հարկահանը՝ ժողւած հարկերով՝
Ճանապարհ ընկաւ լեռան լանջերով։
Հսկայ, սեպացած ժայռի կատարից,
Մռայլ ամրոցի պարըսպի վերից,

Նայում էին լուռ աստղերը,
Նայում դէպի այն հեռու լեռները,
Ուր անյայտացաւ թշնամին անհետ,
Տանելով հայի պատիւը իր հետ:

XXXVI. Մռայլ, ահաւոր ձորի անդընդում
Թարթառն անդադար գոչում է, թնդում.
Հսկայ վիշապի նման կատաղած՝
Առաջ է վազում յուզուած, փրփրած.
Առաջ է վազում նա գալարուելով՝
Գետնի ապառաժ կուրծքը ճեղքելով.
Բարձր մռնչում, գոչում է ուժգին,
Իր ահեղ ձայնով տատանում չորսդին.
Շարժւում է տեղից լեռնոտ գետափը:
Ծեծում ու քերում ժեռ ու քարափը:

XXXVII. Նեղուած ափերից դաժան, անողոք՝
Գետը զայրացած բառնում է բողոք.
Բայց այնտեղ ահա ծառերը գալար
Երկու ափերից կազմել են կամար
Ու խոնարհուելով՝ կարդում են յորդոր,
Որ հանգստանայ գետը ահաւոր.
Արևն էլ շողքը կապոյտ երկնքից
Գցել է ներքև ճիւղի արանքից,
Ջուրը փայփայում, հետը խաղ անում...
Սակայն նա դարձեալ աղմուկ է հանում:

XXXVIII. Եւ անդնդախոր ձորի եզերքին,
Ուր ամբառնում են ծառերը երկին,
Նեղ օձապտոյտ շաւղի վրայով,
Տես, կարաւան է ընթանում ահով:
Ջորը բաց արած ահեղ բերանը՝
Ուզում է կուլ տալ ողջ կարաւանը.
Մի թեթև՛ շարժում, անզգո՛յշ մի քայլ—
Նա կըգլորւի անդունդը մռայլ.
Զայրագին յուզուած Թարթառը այնտեղ
Խեղդամահ կանի իր զոհին անմեղ:

XXXIX. Եւ ահա ձորի բարձր եզերքին,
Կապոյտ երկնքի կամարի տակին,
Իբրև մի արծիւ՝ յանկարծ երևաց
Սեովի որդին ըսպառազինուած...
Քաջ ու անվեհեր նա ձայնեց [1]) վերից—
Եւ յանկարծ ահա կանաչ թփերից
Հայոց հրացաններն ուժգին թնդացին,
Ծխի քուլաներն երկինք ղրկեցին...
Տատանուեց, շարժուեց Թարթառի ափը.
Թշնամին սոսկաց... Տիրեց տագնապը...

XL. Եւ գիւղերը արնով շաղախուած՝
Գլորւում էին ձորից դէպի ցած,
Զքանում անհետ մռայլ անդընդում,
Որտեղ Թարթառն էր զայրագին թնդում,
Ձի ու ջորիներ պաշարուած ահով՝
Վազվզում էին զառիվայրներով.
Ներքևում ջուրն էր մոլեգնած գոռում,
Վերևում կռիւն էր բորբոքուած եռում.
Գնդակ էր տեղում ամենայն կողմից,
Կածանը ներկւում կարմիր արիւնից:

XLI. Հարկահանն ահա՛ դողալով ահից՝
Ուզում է փախչել մօտալուտ մահից.
Բայց Իւսուփ ճարպիկ եղնիկի նման՝
Վազում է ահա նըրան յանդիման...
Ժայռի կատարից նա թուրը ձեռքին
Ահա թռաւ ցած ու հասաւ թուրքին.
Թուրը շողշողաց, փայլեց ահաւոր,
Խրեց թշնամու կուրծքը նենգաւոր—
Արիւնը ցայտեց Իւսուփի դէմքին.
Թուրքը մռնչաց, աւանդեց հոգին...

XLII. Անցաւ տագնապը: Հօր սրբանուէր
Աւանդը փրկեց որդին անվեհեր:

---

[1]) Յարձակման պայմանական նշանաբանն էր «ծկըռ», իսկ դադարմանը —«մկըռ»: Ծ. Հ.

Չինակիցները եկան, ժողւեցին,
Ջահել իշխանին շրջապատեցին.
Գագեցին նըրա զէնքը հայրական,
Երգեցին իրանց երգը յաղթական։
Եւ երբ թեքւեցաւ արևը պայծառ,
Ջորի ետևում մայր մեռաւ խպառ,
Թշնամուց խլած բարիքներն առան,
Ընկնելով ճանպայ՝ Գիւլիստան տարան։

XLIII. Դեռ աչքը ճանպին՝ Սօլթանը Ղամար
Տանջւում էր երկմիտ իր որդու համար։
Երբ յանկարծ մտաւ դէմքով յաղթական
Նա իր հայրենի բերդը սեփական.
Բերաւ նա իր հօր հրացանը փրկւած…
Չինակիցներին շուրջը բոլորած.
Մայրը սրտատրոփ գրկեց Իւսուփին,
Խանդավառ սիրով սեղմեց իր կրծքին
Եւ իշխանուհու վիրաւոր սրտից
Փարատւեց խկոյն բիւրաւոր կսկիծ։

XLIV. Գիւլիստան բերդի պարըսպէ տակին
Խռնըւում էին թէ մարդ ու թէ կին.
Իրար էր անցնում ամբոխը ժողւած,
Ծիծաղում, խնդում, ագմըկում յուզւած
Իւսուփը կանգնած այնտեղ՝ վերևում,
Ուր բերդի դուռն էր հեռւից երևում,
Բաժնում էր ազգին յետ խլած ոսկին,
Վշտահար հային ըսփոփում կրկին.
Փոքրիկ դիւցազնին ամէն մարդ օրհնում,
Գովում էր անվերջ ու փառաբանում։

XLV. Ամբոխը դիւթւած ջահէլ մելիքից,
Դիւթւած, հմայւած նըրա վեհ գործքից՝
Ալեկոծւում է, բորբոքւում, յուզւում,
Լպիրշ Թամրազին անվերջ նզովում։
Եւ ժողովրդի անէծքը դաժան
Լսում էր հեռւից իշխանն անարժան։

Լսում էր, սոսկում իր ճակատագրից,
Սարսափում մռայլ ու սև մտքերից…
Օ՜, մի՞թէ շուտով Թամրազ յանցաւոր
Հրաժեշտ պիտ՚ տար փառքին անցաւոր…

XLVI. Սև-Ջրի ափին՝ հարթ դաշտավայրում,
Ուր միշտ արևը կիզում է, այրում,
Կանգնած էր մխուր, իբրև սգաւոր,
Ղանլու-Չինարի [1]) ծառը դարաւոր։
Նըրա հաստ ճիւղին՝ բարձր եթերում՝
Դիակ էր նեխւած ճօճւում, օրօրւում.
Գարշելի հոտը չորս կողմը սփռում…

XLVII. Մեռաւ չարանենգ Թամրազը դաժան,
Մեռաւ հայի զեղխ իշխանն անարժան…
Մեռաւ նա ոչ թէ արիւնոտ դաշտում,
Կամ ազգի համար մարտնչող վաշտում—
Այլ կախւեց սօսի ծառին դարաւոր,
Իբրև մահապարտ, իբրև մեղաւոր.
Կախւեց նա ոչ թէ իր խղճի խայթից,
Այլ քաջ Իւսուփի արդար վայրոյթից…

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆ *)

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библ…
7/XI 1922
имени А. Мясники…
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

---

[1]) Ղանլու-Չինարը (=արիւնոտ չինար[illegible] Գիւլիստանի[illegible] Չրաբերդի սահմանի վրայ. այժմ մնացել են միայն նրա կոճղները։ Նրա մօտ է գտնւում Աղջաղալա գիւղը, որ կոչւում է նաև Ղարաչինար (=Սև չինարի)։
Ծ. Հ։

*) Հեղինակի ուղղագրութիւնը ւ-ի վերաբերութեամբ պահպանել ենք։ Գ. Յարութիւն Թումանեանը ու-ի համոզւած հակառակորդներից է. ուր որ ու-ն սուղ պիտի կարդացուի, այնտեղ նա ւ-է դնում։ Առհասարակ ու-ի և ւ-ի խընդիրը մեր գրականութեան մէջ ներկայումս ամենասուր կերպարանք է ստացել. բոլոր յեղափոխական թերթերը իրանց ւ-ապաշտպան են յայտարարել և վ հընչիւնի խակական նշանագիրը դուրս են մղել նաև այն տեղերից, ուր ւ-ն մուտք գործելու իրաւունք չպիտի ունենար։

Ն Ի Ւ Թ Ե Ր Ի   Ց Ա Ն Կ Ը

Այն նիւթերը, որոնց հանդէպ հեղինակողի ազգանունը չիդրած, յօրինուած կամ փոխադրուած են աշխատասիրողի ձեռքով։

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

1. Տանից դէպի ուսումնարան . 3
2. Թռչնիկներ*. Վ. Հիւգ. (Րաֆֆի) 5
3. Արմինէ 6
4. Մանկանը* Շահազիզ 8
5. Ֆրիդերիկոս Թագ. սպասաւորը. Թ. Ղուկասեան. 9
6. Զարդ տանեմ*. Ցակոբեան . 10
7. Մի հոգի երկու մարմնի մէջ. Նազարեանց 12
8. Արեւ*. Առ. Նալբանդեան . . 13
9. Հացը. (ֆրանսերէնից) . . . 15
10. Հասոյի երգը. Րաֆֆի. . . . 16
11. Բարեխիղճ խափշիկը. Թ. Ղ. 17
12. Աւետարան*. Յովհաննիսեան —
13. Ապահութեան պտուղը. . . . 18
14. Գիւղական եւ մշակ*. Կրիլովից 20
15. Հօր խրատը՝ Տօլստոյից. . . 21
16. Կապիկ եւ ակնոց. Կրիլ. . . 22
17. Քամին եւ արեւը. Թ. Ղուկ. 23
18. Կանաչ տերեւով*. Ցակոբեան 25
19. Նրբամիտ ջուլհակ. Սրուանձտ. 26
20. Նամուս ու ղէյրաթ*. Ցակոբ. 29
21. Վեհանձնութիւն. Մ. խօսք . 30
22. Մարդը եւ հրէշը (հէքեաթ). Գ. Բարխուդարեան 32

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

23. Գարնան սկիզբը. Պռօշեանց. 42
24. Գարնանամուտ*. Նալբանդ. . 43
25. Սար գնալը. Աբովեանց . . . 44
26. Գարուն*. Պէշիկթաշլեան . . 45
27. Դաշտումը . . . . —
28. Վարդի ոստ*. Ջալալեան . . . 47
29. Անտառը եւ նրա օգուտները . 48
30. Երբոր ճնշում է քո սիրտը*. Թարգմ. Բարխուդարեանց . . 49
31. Երաշտ. Պռօշեանց . . . . . —
32. Գարնան անձրեւ*. Ծատուր. 52
33. Ամպ. Թարգմ. Րաֆֆի 53
34. Ամպեր. Կ. Մելիք-Շահնազ. . 56
35. Ամառն Երեւանում. Աբով. . 57
36. Ծառ եւ ագռաւ*. Առ. Նալբանդեան 60
37. Կարկուտ. Կ. Մ. Շահնազ. . 62
38. Աղօթք*. Յովհաննիսեան . . 64
39. Այգեկութ. Պռօշեանց 65
40. Աշունք. Պռօշեանց 66
41. Ձմեռ. Աբովեանց 67
42. Սառնամանիք*. Աղայեանց . 71
43. Իմ հարեւանները. Հրատ. . 69
44. Մարդու մարմնի անդամները. 74
45. Կարապը, ձուկը եւ խեցափառը*. Կրիլովից 75
46. Արամ (արտ. զգայարանք) . 76
47. Փարեզինը (գլուխը) 78
48. Մանուկին*. Կրասիլնիկեան . 80
55. Արշաւիրը (ներք. գործար.) . 81
56. Հետաքրքիր*. Կրիլովից . . 84
57. Հրաշալի տնակ. 85

ՀԱՏՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

58. Երգիչներ. Ծատուրեան . . 86
59. Կապիկի եղբայրը 87
60. Կապիկները*. Կրիլովից . . 89
61. Ոչխար 91
62. Ձի 93
63. Էշն ու սոխակը*. Աբովեան 94
64. Փիղ 96
65. Առիւծն ու վագրը 98
66. Վանի կատուն. Փափազեան. 99
67. Կենդանիների լեզուն . . . 101
68. Թռչուններ. 102
69. Ձուկը 109
70. Հօտ 111
71. Մեղու. . . . . —
72. Շերամ 115
73. Խեցեմորթը եւ Արծիւը . . 119
74. Բոյսերի մասին. 121

ՀԱՏՈՒԱԾ ՉՈՐՐՈՐԴ

75. Ընտանիք. Րաֆֆի 126
76. Հայրենիք. « 135
77. Վիպասանի մրմունջը. Խ. Աբովեան. 141
78. Մայրենի լեզու. Խ. Աբովեան 147
79. Վայ էն ազգին. « « 150
80. Խայը. Ահարոնեան 151
81. Մշակ. Պատկանեան 162
82. Արաքսի արտասուքը. Պատկանեան 164
83. Բաժակ փրկութեան. Պատկ. 166
84. Վայր ընկ. աստղեր. Նալբ. 167
85. Ազատն Աստուած. Նալբ. . 169
86. Իտալացի աղջ. երգը. Նալբ. 170
87. Գիւղական նշանադրութիւն. Պռօշեանց 172
88. Գիւղական հարսանիք Պռօշեանց 176
89. Փնջիկ Ն. Տ.-Ղ. 188
90. Ծաղկաքաղ Ն. Տ.-Ղ. . . 189
91. Պախրախոտ « « . . 200
92. Սասունցի Դաւիթը. Ն.Տ.-Ղ. 208
93. Մելիք Աբով. Ցար. Թումանեան 223

ՀՀ Ազգային գրադարան
NL0243452

9848